


ՅԱԼՈԽՈՎ

ՀԵՐԿԱՅ
ԽՈԴԱՆ



ՊԵՏՀՂԱՏ 1937






Մ. ՇՈԼՈԽՈՎ

ՅԵՐԿԱԾ ԻՆՊԱՆ

Վ Ե Պ

A 2143

Թարգմանեց
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՆՐԵՎՄ Ա.Ա. ԿԻՑ ՄԱՆԵԿԱԳԱՅԱՆԵԿԱՅԱ
Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՅԱՆ ԲԱԺՄԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1937

ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՇ
ԿՐՃԱՏ ՎԵՐԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵՇՍՀԱՍՏԱ
ՅԵՐՆԵԱՆԵՐԻ ՅԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

Գ Լ Ո Ւ Խ Ա

1930 թվին հունվարյան մի յերեկո, տափաստանի յեղբէ շավիղով Գրեմյաչի լոգ դյուղակը մտավ մի ձիավոր։ Գետակի մոտ նա կանգնեցրեց հոգնած ձին ու ցած իջավ։ Շավիղի յերկու կողմերում փոված արդիների գլխին բարձր կանգնած եր նվազ լուսինը։ Ճանապարհը մուժ եր ու խաղաղ։ Գետակի մյուս ափին, ինչ վոր մի տեղ, բարձր վունում եր մի շուն և դեղնին եր տալիս մի աղոտ կրակ։ Զիավորն աղաւորեն ներշնչեց սառն ողը, առանց շտապելու ձեռնոցը հանեց, ծիսախոտ վառեց, ասկա ձիու փորքաշը ձգեց, մասները կոխեց թամբի քրտնաքաշի տակ և ձիու մեջքի տաք քրտինքի խոնավությունն զգալով՝ ճարպելորեն թամբի վրա գցեց իր խոչոր մարմինը։ Ծանծաղ, նույնիսկ ձմեռը չառչող այդ գետակը նա անցավ ձիով։ Զին պայտերը զնդացնելով ճալաքարերին՝ կռացավ, վոր ջուր խմի, սակայն ձիավորը խթանեց և նա դուրս ցատկեց զառիվայր ափով։

Իր առաջ խոսակցություն և սահնակի ճռչոց բնելով՝ ձիավորը նորից կանգ առավ։ Զայնի վրա ձին ականջները սրեց ու շուռ յեկավ։ Կազակային

թամբի կըծկալն ու արծաթասլատ դլուխը լուսնի չո—
ղերի տակ ընկնելով՝ շավիղի խավարի մեջ հանկարծ—
վայլատակեցին շմեցնող ճերմակ փայլով։ Զիավորը
սանձը դցեց թամբի դլուխը, շտապ դլսին քաշեց
մինչ այդ ուսերին ընկած ուղտի բրդեց պատրաստած
բաշուղը, դեմքը փաթաթեց և ձին արագ չափ դցեց։
Սահնակից առաջ անցնելով՝ նա նորից ձիու ընթացքը
դանդաղեցրեց, սակայն բաշուղը չհանեց։

Գյուղակը մտնելուն պես նա առաջին իսկ հանդի—
պած կնոջը հարցրեց։

— Մի առես ինձ, մորաքույր, վո՞րտեղ ե աո—
րում Յակով Ռստրովնովը։

— Յակով Լուկիչը։

— Հա՛։

— Ա՛, են բարդենու հետեւ ե նրա տունը,
կղմինդրով ծածկած։ Տեսնո՞ւմ ես։

— Տեսնում եմ։ Ենորհակալ եմ։

Զիավորը կղմինդրով ծածկված խոշոր խրճիթի
առաջ ցած իջավ, բակի դոնաւկով ձին ներս քաշեց և
մտրակի կոթով լուսամուտը կամացուկ թակելով՝
կանչեց։

— Տանտե՛ր, Յակով Լուկիչ, մի դուրս յեկ։

Տանտերը զլխաբաց, սերթուկն ուսերին դուրս
յեկավ սանդուխքի դլուխը, նայեց յեկվորին ու ցած
իջավ։

— Ես ո՞ւմ ե բերել չար սատանան, — սպիսուակա—
խառն բեխի տակ ժամալով հարցրեց նա։

— Զե՞ս ճանաչում, Լուկի՛չ։ Գիշերելու տեղ
տուր ինձ։ Զին քաշելու մի տաք տեղ կլինի՞։

— Զե՛, ընկեր ջան, չեմ կարողանում ճանաչել:
Շրջուրծկոմից չե՞ք յեկել, հողբաժնից չե՞ք: Ինչ
վոր... ձայնդ կարծես ծանոթ ե թվում ինձ...

Յեկվորը ժպտալով ու սափրված շրթունքները
կնճռելով՝ բայուղը հետ քաշեց:

— Պոլովցեխն հիշո՞ւմ ես:

Յեկ Յակով Լուկիչը հանկարծ վախեցած շուրջը
նայեց, զունատովեց ու շշնջաց.

— Զերդ բարեծնություն... դուք եղ վո՞րտե-
ղից.... պարոն յեսառուլ...*) Զին հենց հիմի կտե-
ղավորենք... Մենք նրան ախոռ...—Ախր քանի՛ տա-
րի յե անցել...

— Դե՛, դե՛, կամա'ց: Ժամանակ շատ և անցել...
Զիու մեջքին դցելու բան ունե՞ս: Տանդ ոտար մարդ
Հո չկա՞:

Յեկվորը սանձը հանձնեց տանտիրոջը: Զին
ծուլուեն յենթարկվելով ոտար ձեռքի շարժմանը՝
հետեւ վոտքերը քարշ տալով շարժվեց դեպի ախոռ:
Նա զնդոցով ամբակը խսիեց փայտե հատակին և ո-
տար ձիու հոտ դգալով՝ վինչացրեց: Ոտար մարդու
ձեռքը կպավ նրա մոռութին, մատները հմտորեն ու
խնամքով աղանեցին տրոլված լնդերը քաղցրահամ
յերկաթից և ձին գոհունակությամբ հարձակվեց խոտի
վրա:

— Յես նրա վորկասկները թուրացրի, թող թամ-
րած կանդնի, յերբ քրոլինքը կցամաքի, թամբը վար

*) Յարական կառավարության ժամանակ կազակներից
կազմված գորամասի ավագ սպան կոչվում եր յեսառուլ:

ձլունեմ, —ասաց տանտերը՝ հողատարությամբ ձիու
վրա գցելով սառն ծածկոցը։ Իսկ ինքը թամբը ածքը
տնտղելով՝ բարձատակի փորկապի ձգվածությունից
և ասսանդակի փոկերի կապերը չափազանց թուլա-
ցած լինելուց արդեն կարողացավ վորոշել, վոր հյու-
րը հեռվից և յեկել և այդ որը քեզ ճանապարհ չե-
կտրել։

— Իսկ կեր կճարվի՞ քեզ մոտ, Յակով Լուկիչ։

— Մի քեզ կա։ Կջրենք, կեր ել կտանք։ Դե՛,
պնանք խրճիթ... ի՞նչպես կոչեմ ձեզ հիմի, ինքս ել
չդիտեմ. առաջվանը հետ եմ սովորել և մի տեսակ
անհարմար ել ե... — Խալարի մեջ յերկչոտությամբ
ժողովականց առաջ տանտերը, թեև գիտեր, վոր նա իր
ժպիտը չի տեսնի։

— Տուր անուն-հայրանունս։ Զե՞ս մոռացել, —
պատասխանեց հյուրը՝ առաջինն ինքը դուրս գալով
ախոռից։

— Ի՞նչպե՞ս կարելի յե... ամբողջ գերմանական
սաղմաճակատը միասին վոտի տակ տվինք և հան-
կարծ... Յես ձեզ հաճախ եյի հիշում, Ալեքսանդր
Անիսիմիչ։ Այն ժամանակից, յերբ Նովորոսիյսկում
բաժանվեցինք իրարից, ձեր մասին իսկի Ծուր ել չու-
նեյինք։ Յես կարծում եյի, թե դուք կաղակների հետ
թյուրքիա յեք անցել։

Երանք մտան խոհանոց, վոր խիստ տաք եր։
Յեկուրը բաշլուղն ու ճերմակ փափախը հանելով՝
բաց արավ իր խոչոր, անկյունակոր գլուխը, վոր
ծածկված եր սպիտակախառն ցանցառ մազերով։ Նա
իր դայլատիալ, ճաղատացող ճակատի տակից մի թը-.

սուցիկ հայացք զցեց սենյակին, ժպտալով կկոցեց
իք բաց- կապտավուն աչքերը, վորոնք տամուկ չո-
ղսամ եցին խոր խոռոչների մեջ և դլուխ տվեց յեր-
կար նստարանին նստած կանանց— տանտիրուհուն ու
հարսին :

— Բարով, կնանիք, վո՞նց եք :

— Փառք աստծու, — զսլված պատախանեց տան-
տիրուհին, սպասողական ու հարցական հայացքով
նայելով ամուսնուն, կարծես հարցնելով՝ «Այս ի՞նչ
մարդ ես բերել և ինչպես վարվել նրա հետ» :

— Հաց զցե՞ք, — կարճ հրամայեց տանտերը՝ հյու-
րին հրամիրելով հյուրասենյակ՝ սեղանի մոտ :

Հյուրը խողի մտով արուրն ուտելով՝ կանանց
ներկայությամբ խոսում եր միայն յեղանակի ու իր
պաշտոնակիցների մասին :

Նրա ահապին ներքին ծնոտը, վոր կարծես քարից
միներ հղկված, դժվարությամբ եր շարժվում։ Նա
ծամում եր դանդաղ, հոգնած, ինչպես ուժասպառ
յեղը՝ պառկած վիճակում։ Ընթրիքից հետո նա վեր
կացավ, աղոթեց թղթե ծաղիկներով շրջանակված
փոշոտ սրբազատկերներին և իր հնամաշ, ուսերը
սղմած վերնաշապկի վեշերից հացի փշրանքը թափ
տալով ասաց.

— Շնորհակալ եմ ազուհացի համար, Յակով
Լուկիչ; Այժմ արի զբույց անենք :

Տանտիրոջ հոնքերի շարժմանը յենթարկվելով՝
հարսն ու տանտիրուհին սեղանն շտապ հավաքեցին
ու քաշվեցին խոհանոց :

Գ Լ Ո Ւ Խ Ա

Կուսակցության շրջկոմի քարտուղարը սեղանին
մոտ նստեց, աչքի տակով Դավիդովին նայեց և
սկսեց նրա փաստաթղթերը կարդալ:

— Նշանակում ե դու Ռուսովում հետ ընկար հի-
վանդության պատճառով։ Դե, ի՞նչ արած։ Մնացած
ութ հոգի քսանհինդհազարականները յերեք որ ա-
ռաջ յեկան։ Մարդիկ են հարկալոր։ Զա՛-վա՛-զա՛նց։
Կոլտնտեսությունները քառասուններեք բանվորի պա-
հանջ են ներկայացրել, այնինչ ուղարկել են միայն
ձեղ՝ իննիդ։

Շրջկոմի քարտուղարը կրկին անդամ յերկար ու
քննական հայացքով նայեց Դավիդովին բիթերին,
կարծես ցանկանալով պարզել, թե ինչի յե ընդունակ
այդ մարդը։

— Նշանակում ե, սիրելի ընկեր, դու փականա-
գործ ես։ Շա՛-ա՛տ լավ։ Իսկ Պուտիլովում վաղո՞ւց
ես աշխատում։ Ծիսի՛ր։

— Զորացրվելուց հետո, ինը տարի։

Դավիդովը ձեռքը մեկնեց ծխախոտին և քարտու-
ղարը նրա դաստակին նկատելով գունատ կապտա-
վուն դաճը՝ ժալտաց կախ շրթունքի ծայրով։

— Գեղեցիություն ե հզարտությո՞ւն։ Նախ-
տորմում ես յեղել ուրեմն։

— Այս՝ :

— Տեսնում եմ ախօր, խարիսխս ունես թևելող... .

— Դե... ջահել եցի, դիտես. խա՛կ, մի քիչ ել հիմար և ահա, դաճեցի...

Քարտուղարը լոեց, ապա ովհմքի ժայռուը ցրելով ասաց.

— Դու, ընկեր, հենց այսոր, իբրև շրջկոմի լեազոր կդնաս համատարած կողեկտիվացում անցկացնելու: Յերկրային կոմիտենցի վերջին վորոշումը կարդացե՞լ ես, ծանոթ ես: Դե, ուրեմն, կդնաս Գրեմյաչի գյուղխորհուրդ: Հանդստանալը՝ հետո. հիմա դրա ժամանակը չե: Շեշտը հարյուր տոկոսով կուկուխիվացման վրա: Այնուհեղ կա մի պստիկ արտել. բայց մենք պեսոք ե ստեղծենք հսկա կոլտնտեսություններ: Հենց վոր ագիտ-խումբ կազմակերպեցինք՝ ձեզ մոտ ել կուղարկենք: Իսկ այժմ զնա և կուտնտեսություն ստեղծիր: Տես, վոր գյուղի բոլոր չքայլուներն ու միջակները կոլտնտեսության մեջ պիտի լինեն: Հետո արդեն համայնական սերմֆոնիդ կատեղծեք կոլտնտեսության 1930 թվի ամբողջանքի համար: Զգույշ յեղիր այնուհեղ: Միջակի հետ՝ զգույշ: Գրեմյաշխում կուսակցական բջիջ կայերեք կոմունիտով: Բջջի քարտուղարն ու դյուդիսորհրդի նախագահը լայլ տղերք են. անցյալում կարմիր սպարտիզան են յեղել՝ այսունղից բլիսող բոլոր հետեւթյուններով: Հասկանալի՞ յե: Քաղաքականապես կիսազրադես են, կարող են վրիպումներ ունենալ: Դժվարություններ ծագելու դեպքում շրջան արի: Ե՞ս, հեռախոսային կապ դեռ չունենք,

ահա թե ինչն և վարտ : Հա՛ր , ելի ինչ . բջջի քարտուղարն այնտեղ — կարմրադրոշ նազուլնովլը մի քիչ խստաբարո յե , կրպիստ , բայց տուր , կտրուկ :

Քարտուղարը մատներով թմբկահարեց պորտֆելի կողագեղին և տեսմնելով , վոր Դավիթովլը վեր և կենում , աշխուժորեն ասաց .

— Այդպէս ուրեմն , քշիր կոլեկտիվացումը մինչի հարյուր տոկոս : Տոկոսի համաձայն եւ կղնահատենք քո աշխատանքը : Տասնութ գյուղխորհրդից կստեղծենք մի հմկա կոլտնտեսություն .— գյուղատնտեսական կարմիր սլուտիլովեց . հը՞ , վոնց և , — և քարտուղարը ժպտաց՝ հայտնելով իր համեմատությանը :

Դավիթովլը վազեց «կազակի և Գյուղացու տումն» , վերցրեց իր ճամբրուկը և հիշելով , վոր բայցի յերկու զույր սպիտակեղենից , գուլալաներից ու այլ հագուստից , իր հիմնական բեռը ստուտակահաններն են , ակցանները , տուլիքը , կրեյցմենելլը , կարկէնը , չվեղական բանալին և այլ սպարզ զործիքներ , վորոնք իրեն են պատկանում և Լենինքրադից վերցրել ե իր հետ , — ժպտաց : «Գրողը տանի , ինչիս են սկսուք : Կարծում եյի , թե մի վորեւ կոլտնտեսությունում վհայմանավորվեմ և կարիք ելլինի մի վորեւ տրակտոր նորոգել , իսկ այստեղ տրակտորներ եւ չկան : Այսպէս ուրեմն , ինչպէս յերեւամ ե , ամբողջ շրջանում պիտի թափառեմ իրբեւ լիազոր : Կնիքեմ մի վորեւ կոլտնտեսական դարբնի » , — վճռեց նա՝ սպայուտակը նետելով սահնակի մեջ :

Շրջործնկոմի կուշտ , վարսակ կերած ձիերը գյուրսւթյամբ քաշ տվին թիկունքամոր սահնակը ,

վոր ներկրված եր վառվուսն, խայտաբղետ գույներով:

Դեռ հաղիսլ եյին դուրս յեկել դյուղից, վոր Դաւ-
վիդովն սկսեց սառել: Ի դուր եր նա դեմքը թագը-
նում վերարկույի մաշված մորթե ոձիքի մեջ, աչքե-
րին քաշում կեպին. քամին ու սառնամանիքը թա-
փանցում եյին նրա ոձիքի, թևքերի մեջ և սարսուց-
նում վողջ մարմինը: Առանձնաբետ սառում եյին
վոտքերը՝ հնամաշ թեթև կոչմեների մեջ:

Շրջանային կենտրոնից մինչև Գրեմյաչի Լոդ-
քսանութ կիլոմետր ճանապարհ է անմարդաբնակ
տափաստանով: Շուրջդ, ինչքան աչքով կտրի՝ ձյուն-
ե կուսարկան: Զյան չերտի տակ կծկմել են արտեմիսի
ու փշաբույսերի կառարները: Հեղեղատների կողե-
րից և միայն հողն աշխարհին նայում իր կավոտ
աչքերով: Քամին այնտեղից ձյունը քչել, ցցրել և
հեղեղատների խոռոչները, վորոնք պոռւնկե-պոռւնկ
լի յեն ամուր նստած ձյան կույտերով:

Փորձելով տաքացնել իր վոտքերը՝ Դավիդովը
յերկար վաղեց սահնակի ճաղից բռնած, հետո ցատ-
կեց սահնակի մեջ, կծկեց ու սկսեց նիրհել:

Նա արթնացավ ստակալի ցրտից, վորը կծկել եր
նրա սիրտը և աչքերը բանալով՝ ծիածանի բազմե-
րանգությամբ փայլվող արցունքի հատիկի միջից
տեսավ պաղ արեվը, անձայն տափաստանի վեհ
լայնարձակությունը, գորշ կապարագույն յերկինքը
հորիզոնում և կարմրադեղնավուն կրանքե փայլով մի
աղվես՝ մոտակա կուրողանի սպիտակ գլխարկի վրա:
Աղվեսը ցատկուսում, ծառս եր լինում յերկու վտանե-
րի վրա, թուչում վեր և առջեի թաթթերի վրա շնկ-

նելով՝ փորփրում ձյունը, ծածկվում արծաթա-
փայլ փոշու մեջ, իսկ նրա պոչը՝ փափուկ ու սահուն՝
սողում եր ձյունի վրա՝ ինչպես բոցե կարմիր լեզու:

Դավիդովը Գրիմյաչի Լոդ հասալ իրիկնասպա-
հին: Գյուղիսորհրդի ընդարձակ բակում դատարկ
կանգնած եր յերկծի մի սահնակ: Սոխախիլի մոտ
յոթ կաղակ խմբված՝ ծխում ելին:

Քրտնքից սառած ու փշաքաղած ձիերը կանդ-
առան կազակների մոտ:

— Բարե՛, քաղաքացիներ: Վո՞րաեղ և այստեղ
ախոռը:

— Բարի առողջություն, — բոլորի փոխարեն
սպառասխանեց մի հասակավոր կազմակ, ձեռքը մո-
տեցնելով նապաստակի մորթուց կարած իր փափա-
խին: — Ախոռը, ընկերս, ա՛յ, են ե, վոր յեղեղով և
ծածկված:

— Քչիր այստեղ, — հրամայեց Դավիդովը կա-
ռապանին, վար ցատկեց սահնակից և այտերը ձեռ-
նոցով շփելով՝ քայլեց սահնակի հետևից:

Ախոռի դոներից տաք հորձանքով դուրս եր
փչում գոմաղբի գոլորշին:

Շրջգործկոմի կառապանը ձիերը կանգնեցրեց:
Դավիդովը վստահորեն սկսեց արձակին լծափայտի
ողը: Նրա շուրջը խմբված կազմակներն իրար նայե-
ցին: Կանացի սպիտակ մուշտակ հաղած ծերուկը
բեխի սառուցը քերելով՝ խորամսնեկորեն կկոցեց
աչքերը.

— Կամաց, շնկե՛ր, քայի կտա:

Դավիդովը ձիու պոչի տակից անրափոկը դուրս
քաշելով շուր յեկալ դեպի ծերունին և ժպտաց, վո-

քեց նրա կապտած շրթումնեները հետ քաշվեցին ու
յերեաց, վոր առջևի ատամներից մեմլը պակաս (ե):

— Յես, պապաչա, գնդացրողդ եմ յեղել. այս-
պիսի՞ ձիերի հետ եմ գործ ունեցել:

— Իսկ ատամդ պակաս ե. պատահաբար հո մազ-
յանը^{*)}) չի ջարդել, — հարցրեց աղօսիլի պես սև մի
մարս, վորի մինչեւ քթածակերը ծածկված եյին դան-
դուր բեխ ու մորուքով:

Կաղակները մեղմ ծիծաղեցին:

Դավիդովը կաղակներին հյուրասիրեց ծխախո-
տով, ինքն ել մի հատ վառեց և ուղղվեց դեպի զյուղ-
խորհուրդ :

— Ենտեղ ե, նախաղահն ենտեղ ե, արի՛: Մեր
կուսակցության քարտուղարն ել ե Ենտեղ, — ասում
եր ծերունին՝ կրնկակոխ հետեւելով Դավիդովին:

Կաղակները յերկու չնչում ծխախոտները կլանե-
լով, քայլեցին նրանց հետեից: Նրանց շատ դուք յե-
կավ, վոր յեկվորն այնպիսին չե, ինչպես սովորաբար
լինում են շրջանային ղեկավարությունից յեկողները,
վորոնք սահնակից վար ցատկելով՝ պորտֆելը թեփ
տակ սեղմած՝ մարդկանց մոտով անցնում են դեպի
դյուղխորհուրդ: Այս մեկն ինքն սկսեց ձիերն արձա-
կել, կառապանին ողնել և ցույց տվեց, վոր
վաղուց հմուտ և ձիերի հետ վարդելու գործում:
Սակայն, այդ նրանց շատ զարմացրեց:

— Եղ վո՞նց (ե, ընկեր, — չհամբերելով հարցրեց
սկսամորուք կաղակը, — վո՞նց ե, վոր դու չես խոկում

*) Զամբիկ:

ձիերից . ձին արձակելը ծառայող մարդո՞ւ բան և ,
բա կառապտնն ինչի համար ե :

— Եղ , ճիշտ վոր , շատ զարմանալի յէ , — ան-
կեղծորեն խոստովանեց ծիրունին :

Դավիեղովը պատասխանելու ժամանակ չունե-
ցավ :

— Ա՛խ , սա զարբի՞ն ե՞ . . . — Հիասթափածած
ցականչեց մի յերիտասարդ շիկագեխ կազակ , ցույց
տալով Դավիեղովի ձեռքերը , վորոնց ամենը մետաղի
հետ շմփելուց ծածկվել ելին կատարադույն մաշկով ,
իսկ յեղունդների վրա յերեւմ ելին հին սպիներ :

— Փականագո՞րծ , — ուղղեց Դավիեղովը : — Դէ ,
իսկ դուք ինչի՞ յիք դալիս գյուղխորհուրդ :

— Հետաքրքրվելուց , — բոլորի վոխաբնն սկա-
տասխանեց պատը՝ կանդ առնելով սանդուխքի առա-
ջին աստիճանի վրա : — Ուղում ենք իմանալ՝ ի՞նչ դոր-
ծով ես յեկել մեղ մոտ : Գուցե թէ ելի հացամթեր-
մա՞ն . . .

— Կոլտնտեսության գործով :

Պապը յերկար ու արտօհայտիչ սուլեց (և առա-
ջինն ինքը յետ դարձավ սանդուխքից) :

Յածրիկ սհնյակից վոչխարի կլսամուշտակների
ու վայտի մոխիրի սուր հոտ եր վիշում : Սեղանի
մոտ , յերեսը Դավիեղովի կողմն արած , կանդնած եր
մի բարձրահասակ , թիկնեղ մարդ և լամպի պատ-
րույղն եր պտտեցնում : Նրա կանաչավուն վերնա-
շապկի վրա կարմրին եր տալիս կարմիր դրոշի
շքանշանը : Դավիեղովը դուշակեց , վոր հենց դա յէ
Գրեմյաչիի կուսակցական բջջի քարտուղարը :

— Յես Արջկոմի լիազորն եմ։ Դու բջջի քարտուղարն ես, ընկեր։

— Հա՛, յես բջջի քարտուղարն եմ, Նազուլովը։ Նստեցե՛ք, ընկե՛ր, խորհրդի նախագահը հիմա կզա։ Նազուլովը բոռնցքով պատը թակեց, մոտեցավ Դավիդին։ Նա ուներ լայն կուրծք և հեծելակի պես ծուռ վոտներ։ Նրա խոշոր, գեղնավուն աչքերի վրա աճել ելին կուպրի պես ու հոնքերը։ Նա կարող եր գեղեցիկ համարիլել իր տաղավորիչ, առնական արտահայտությամբ, յեթե չիներ նրա վոքքը քթի քթածակերի խիստ լայնությունը և աչքերի պղտոր փայլը։

Հարեան սենյակից դուրս յեկավ ամրակազմ մի կաղակ, մոխրագույն այժի փափախը ծոծրակին թեքած, հարդին չինելի մահուդից կարմած մի սերթուկ, յերկու կողմից ժապավենակոր կազակային շալվարով, վորի փողքերը հավաքված ելին բրդե սպիտակ դուլպաների մեջ։

— Ահա, հենց սա յե խորհրդի նախագահը — Անդրեյ Ռազմյոտնովը։

Նախագահը ժպտալով ու իր սպիտակավուն, դանդուր բեխերը շոյելով՝ արժանապատվության զգացմունքով ձեռքը մեկնեց Դավիդովին։

— Իսկ դուք ո՞վ կլինեք։ Շրջկոմի լիազո՞րը։ Հա՛ : Զեր փաստաթղթերը . . . դու տեսե՞լ ես, Մակար։ Դուք, յերեկի, կոլտնսեսության դործո՞վ։

Նպանեց Դավիդովին միամիտ համարձակությամբ, հաճախակի թարթելով սմառային յերկնքի պես վճիտ իր աչքերը։ Նրա թուխ, վազուց չսամփառ։

ված զեմքի վրայով, վորի ճակատին լեզակի մի կապույտ նշան կար, վորոշակի կերպով անցավ անհամբեր սպասողականությունը:

Դամինդովը սեղանի մոտ նստեց, պատմեց այն խնդիրների մասին, վոր դրեւ և կուսակցությունը՝ համատարած կոլեկտիվացում անցկացնելու յերկամսյա գրոհի կապակցությամբ և առաջարկեց վաղն և յեթ չքավորության ու ակտիվի ժողով գումարել:

Նազուկնովը դրությունը պարզաբանելավ խոսեց Գրեմյաշիի հոգագործական ընկերության մասին:

Ուաղմյառնովը նրան ևս լսեց նույնալիսի ուշադրությամբ, յերբեմն-յերբեմն միայն մի վորեւե քան առելով, առանց ավելը հեռացնելու իր այտերից, վորոնք շաղանակի գույն եյին ստացել:

— Այստեղ մենք ունենք հողը միատեղ մշտկող ընկերություն կոչված մի բան: Բայց յես կասեմ, քննիկեր բանվոր, վոր այդ մի ծաղը և միայն մոլեկտիվացմանը և խոչոր վնաս խորհրդացյին իշխանությանը, — առում եր Նազուկնովը նկատելիորեն հողվելով: — Այստեղ կան տափնություններ, բոլորն եւ դառն չքավորներ: Յեվ ի՞նչ և դուրս դամիս դրանից: Անայաբման ծաղրանք: Միացել են նրանք և տափնությունները համեմ չորս ձի, մի դույդ յեզ, իսկ ուտողները՝ հարյուր յոթ են: Ելինչորս նրանք կարող են ովուխ գուրս հանել: Իհարկե, նրանց յերկարատե վարկեր են տալիս մեքենա ու լծկան գնելու համար: Նրանք վարկը միեցնում են, բայց հետ տալ չին կարողանում, նույնիսկ յնրկար ժամանակից հետո: Իսկույն բացառ-

թեմ, թե ինչու։ Յեթե նրանք տրակտոր ունենային ուրիշ բան։ Բայց նրանց տրակտոր չտվին, իսկ յեզ-ներով շուտ հարատանալ չես կարող։ Են ել ասեմ, վոր նրանք փչացած քաղաքականություն են տա-նում. և յես նրանց վաղուց պիտի ցըեցի նրա հա-մար, վոր դարձ հորթի պես ընկել են խորհրդային իշխանության տակը, ծծում են ու ծծում, իսկ հա-սակ՝ չեն առնում։ Յեվ նրանք այսպես են մտա-ծում. «ԵԵՇ», միենույն ե, մեղ կտան, իսկ պարտքի դիմաց մեզնից վերցնելու բան չեն դանի»։ Այսաե-շից ել նրանց մոտ գիտցիպիկնան ընկել ե և վաղը-մյուս որն այդ ընկերությունը հոգին կավանդի։ Այդ շատ լավ միտք ե— բոլորին հայլաքել կոլտըն-տեսություն։ Այդ հիմնալի բան կլինի և վոչ թե կյանք։ Բայց, ձեղ պետք ե ասեմ, կաղակը համառ ժողովուրդ ե, հարկավոր կլինի կոտրել...

— Զեզանից վորեւ մեկը կա՞ այդ ընկերության մեջ, — զրուցակիցներին նայելով հարցրեց Դավիդո-վը։

— ԶԵՇ, — ուստասիսանեց Նաղուլնովը։ — Քոան թվին յես կոմունա մտա։ Բայց մորթեպաշտության պատճառով այդ կոմունան քայքայվեց։ Յես հրա-ժարվեցի սեփականությունից։ Առում եմ սեփակա-նությունը, դրա համար ել յեղներն ու գործիքները հանձնեցի հարկան № 6 կոմունային (նա մինչեւ հիմա մէ մա), իսկ յես ու կինս վոչինչ չունենք։ Ռազմյունություն այդպիսի որինակ տալ չեր իլարող. նոտ այրի յե, միայն մի պառավ մայր ունի։ Նա վոր մտնի, կնախատեն, բամբաստնքից ել փրկվել չե լի-

նիւ. «Պառավին զցեց մեր վզին, — կասեն, — իսկ
ինքը դաշտում չի աշխատում» : Խնդիրն այստեղ
նուրբ է : Իսկ մեր բջջի յերրորդ անդամը միանգա-
մից ազատ է — կոնսալտ է . կալսիչը կտրել է նրա
թևը : Դե, նա ել խղճի դեմ բան է համարում այր-
տել մտնելը . առանց ինձ ել, — ասում է, — այնտեղ
ուսող բերաններ չատ կան :

— Դրուստ է, մեր հողադործականը վորձանք
է, — հաստատեց Ռազմյուտնովը : — Նրա նախազահանք՝
Արկածիկա Լուսելիք վատ տնտես է : Մա՞րդ են գտել
ընտրելու . . . Դրուստն ասած՝ մենք այդ բանում ու-
խալվեցինք : Զպետք է թողնելինք, վոր նա գործի
դլուխ անցնի :

— Ինչի՞ վոր . . . — հարցրեց Դամիլովը՝ աչքի
անցկացնելով կուլակային տնտեսությունների գույ-
քացուցակը :

— Նրա համար, վոր հիվանդ մարդ է, — Ժըտ-
տալով պատաժանեց Ռազմյուտնովը : — Նրան կսա-
զեր վաճառամկանությունը . հենց եղ ցավով ել տա-
ռապում է նա : Ամեն ինչ փոխիշում ու ծախծիսում
է : Քայլայեց ընկերությունը : Ցեղական ցուլ գնե-
ցին — խելքին փչեց փոխել մոտոցիկլետի հետ :
Մենք ախ քաշեցինք, դլուխներս ծեծեցինք : Դե, քե-
րեց մոտոցիկլետը, իսկ քշել՝ վոչ վոք չի իմա-
նում : Յեկ, ախը նրանց ինչին եր հարկադրությունի՞ համար | Եկ լացի : Ստանիցա*) տարտի :
Բանիմաց մարդիկ նայում են այնտեղ ու ասում :

*) Քաղաքատիպ խոշոր գյուղ :

«Ներկի փողն ել չարժի, ես ի՞նչ քոսոտ բան ե»,
Նրա միջից պակասում ելին այնպիսի մասեր,
վոր միայն գործարանը կարող ե շնոր: Այս, նրանց
նախադահը Յակով Լուկիչ Աստրովնովը պիտի լի-
ներ... Գլուխ եմ ասում ե՛... Կրասնոդարից ինչ-
պիսի ընտիր ցորեն բերել տվեց, վոր ամենաչոր հո-
գումն ել բուսնում ե: Զյունը շարունակ կուտակում
ե իր հողերի մեջ և միշտ ել լավ բերք ե տտանում:
Ցեղական անասումներ և պահում: Թեև մի քիչ փընթ-
փընթում ե, յերբ մենք հարկիր գծով հուալ ենք տա-
լիս, բայց լավ տնտեսատեր ե, դովասանադիր ունի:

— Նա ել, վոնց վոր վայրի սագ. լինի տանու
սաղերի մեջ. միշտ զրադ ե քաշվում, — կատկածա-
մտորեն դլուխն որորեց Նագուլնովը:

— Այդ արդեն վո՛չ. նա մեզ հարազատ մարդ
ե, — համոզված կերպով հայտարարեց Ռազմյոտնովը:

Գ Լ Ո Ւ Խ

Այն դիշեր, յերբ Յակով Լուկիչ Ոստ-
ըռմանովի մոտ յեկատի Նրա նախկին հարյուրապետ յե-
սառուլ Պոլովցելը, նրանք յերկարատեւ զրույց ունե-
ցան: Յակով Լուկիչը դյուղակում համարվում եր
մեծ խելքի տեր մարդ, աղվիսի բնավորությամբ ու
զգուշությամբ, բայց ահա, նա չկարողացավ հեռու
մնալ դյուղերում կատաղորեն բռնկած սայքարից,
չըջապատճեր դեսպերի մեջ քաշեց նրան: Այդ որ-
դանից ել Յակով Լուկիչի կյանքն սկսեց ընթանալ
վտանգավոր սահմանքով:

Ընթրիքից հետո Յակով Լուկիչը ծխախոտի քս-
սակը հանեց, ծալապատիկ նստեց սնդուկի մլա և
սկսեց խոսել— դուրս հորդել այն ամենը, ինչ տա-
րիների ընթացքում դառնորեն յեռացել եր նրա սըր-
տում:

— Ախր, ի՞նչ ասեմ, Ալեքսանդր Անիսիմի՛չ:
Կյանքում զվարճալի, ուզախալի բան իսկի չկա:
Այ, քեզ որինակ, կաղակները մի քիչ սկսել են տըն-
տեսություն իրար զցել, հարստանալ, իսկ հիմի ա-
մեն ինչ շուռ ե դալիս: Իսկ ձեր դյուղո՞ւմ ինչուս
ե. կոլեկտիվացման մասին ձեն կա՞ թե չե:

— Կա,— կարճ պատասխանեց հյուրը, թուղթը
թքոտելով և ուշագիր նայելով տանտիրոջը:

— Ասել ե թէ՝ եղ ցավն ամեն տէ՞ղ ե տարած-
ված։ Այ, հենց իմ մասին յես ձեղ ասեմ։ քսան
թվին յես նահանջից վերադարձա։ Այդ որվանից
գիշեր-ցերեկ աշխատում եմ։ Իմ հողով ինքս ել եյի
կերտկրում, ուրիշներին ել եյի ապրեցնում։ Ասենք
քիչ չեն իմ մորթին ողովել, բայց յես ելի մորթակա-
լել եմ։ Ամենից առաջ յերկու մողի ձեռք բերի, մե-
ծացրի։ Մեկը հանձնեցի պետությանը՝ մսացու։
կնկանս կարի մեքենայով մի ուրիշն առա։ Ժամա-
նակ անցավ. մինչեւ քսանհինդ թիվը մի զույգ ել
իմ կովերից հասավ։ Ռւնեցա յերկու զույգ յեզ,
յերկու կով։ Ինձ ձայնազուրկ չարին. հետո հաշվե-
ցին ուժեղ միջակ։

— Իսկ ձի սւնե՞ս զու, — հետաքրքրվեց հյուրը։

— Սուսափիր մի քիչ, ձիերի մասին ել կասեմ։ Հա-
րիանիցս մի տարեկան մի քուռակ առա, Դոնի զտար-
յուն մտակից (ամբողջ դյուղակում այդ մեկն եր
անացել), մեծացավ ձիս, վոնց վոր իսկական յերեխա։
Ծրջանում դյուղական կյանքի ցուցահանդեսում յես
նրա համար նվեր ստացա ու գովասանադիր, իրրև ցե-
ղական ձի պահող։ Յես սկսեցի դյուղատնտեսին ա-
կանջ դնել, կանոնավոր ցանքափոխություն կատարել,
հողը խնամել, վոնց վոր հիվանդ կնկանդ կիսնամես։
Իմ սիմինդի⁴⁾ ցանքը դյուղում առաջինն ե, բերքս՝
բոլորից բարձր։ Յես սերմացուն ել զտեցի, Ճնակալ-
ներ ել պատրաստեցի։ Գարնան ցանքս միայն աշնան
ցելումն արի, իսկ իմ ցելը միշտ առաջինն ե լինում։

*.) Ցեղիպացորեն։

Մի խոսքով կուլտուրական տնտեսատեր դարձա և
դրա մասին դովասանքի դիր ել ունեմ հողբաժնից : Ա-
հա , տեսե՞ք :

Հյուրը թեթևակի նայեց Յակով Լուկիչի մատի
ուղղությամբ , զմուռի կնիքով թղթին , վոր փայտի
շղանակի մեջ առած՝ կախված եր սրբապատկերների
մոտ , Վորոշիլովի նկարի կողքին :

— Ձեզ մոտ կոլտնտեսություն գրվո՞ւմ են , —
հարցրեց հյուրը : Նա կանդնել եր վառարանի մոտ ,
ձեռքերը մեջքին դրած , լայնաթիկունք , ամբակազմ ու
մեծ գլխով , ինչպես հացահատիկով լի մի պարկ :

— Կոլտնտեսություն : Դեռ չառ զահլա չեն տա-
րել , բայց ա՛յ , եզուց չքավորության ժողով ե լինե-
լու : Մութն ընկնելուց առաջ շրջեցին , տեղեկացրին :
Ասում են ես իրիկուն ինչ վոր բանվոր ե յեկել շրջա-
նից ու բոլորին կոլտնտեսություն պիտի քշի : Մեր
վերջը գալիս ե : Քրտինք ես թափել , բուռդ վշտաց-
րել , մեջքդ ծռել , իսկ հիմի՝ աչքդ բաց ամեն ինչ
լցրու հասարակի ամանը — անասունդ ել , հացդ ել ,
հավդ ել , տունդ ել , դե՛ պարդ ե : Ախր դուռ ասա ,
Ալեքսանդր Անիսիմիչ , յես կոլտնտեսություն կտանեմ
մի դույդ յեղ (մի զույգը վրա հասցրի ծախել) , ճիռ
իր քուռակով , բոլոր գործեքներս , հացս , իսկ մյուսը՝
վողլոտ խոնչանը*) : Երա հետ պիտի միանամ ու ո-
գուտն ել համասար բաժանեմ : Ախր վո՞նց չցավեմ
ե ... Ախր նա ամբողջ կյանքում վառարանի կողքին

*) Թելից գործած դուսի , վորով հնում գյուղացիք իրենց անդ-
րավարտիկն եյին կապում :

պառկել ե ու յերազում անուշ պատառ տեսել, իսկ
յես... դե ել ի՞նչ ասեմ... Յես ա՛յ,— և Յակով Լու-
կիչն իր կոչտապատ թաթի կողը քսեց իր կոկորդին:
—Դե, սրան վերջ տանք: Դո՞ւք վոնց եք ապրում:
Ծառայում եք մի հիմնարկությունում, թե արհեստով
եք դրադմում:

Հյուրը մոտեցավ Յակով Լուկիչին, նստեց աթո-
սին, նորից սկսեց ծխախոտ փաթաթել: Նա աչքերը
հառել՝ եր ծխախոտի քսակին, իսկ Յակով Լուկիչը՝
նրա հնամաշ վերնաշապկի նեղ ոձիքին, վոր խրվել եր
սրճադույն, ամուր սեղմված վղի մեջ, վորի յերկու
կողմերում լարվել և ուռել եյին մկանները:

— Դու, Լուկիչ, ծառայել ես իմ հարյուրա-
կում... Հիշո՞ւմ ես քի անդամ, կարծեմ Յեկատե-
րինողարում, նահանջի ժամանակ յես խոսեցի կաղակ-
ների հետ Խորհրդային իշխանության մասին: Դեռ
այն ժամանակ յես նախազգուշացնում եյի կաղակնե-
րին, հիշո՞ւմ ես. «Դառնորեն ախալվում եք դուք,
աղերք, ասում եյի:— կսեղմեն ձեղ կոմունիստները,
կվոլորեն վոչխարի պողի պես: Ուշքի կղաք դուք,
բայց ուշ կլինի:— Նա լուց, կապտավուն աչքերում
սեղմվեցին մանրիկ, քորոցի դվիսի չափ բիբերը և նա
մեղմ ժպտաց.

— Հո յեղա՞վ իմ ասածիս պես: Նովորոսիյսկից
յես մերոնց հետ չպնացի. չհաջողվեց: Այն ժամանակ
մեղ դավաճանեցին, դեն շպրտեցին մեղ կամավորներն
ել, դաշնակիցներն ել: Յես մտա կարմիր բանակ,
և կաղընի հրամանառար դարձա: Լեհական ճակատ

Դաստիարակության մեջ այսպիս ասած՝ մի զտող հանձնաժողով ունելին—նախկին սպաներին ստուգէլու համար... Այդ հանձնաժողովն ինձ պաշտոնիցս զբկեց, ձերբակիալեց և ուղարկեց Հեղափոխական տրեքունալ: Դե՛, պարզ բան եւ — կթրիսկացնելին ինձ ընկերները, կամ թե ճամբար կուղարկելին: Յեվ, դլխի ընկնում ես, թե ինչի համար. մեր գյուղացիներից մեկը մատնել եր, վոր յես մասնակցել եմ Պողոսելկովի^{*)} սպանությանը: Տրիբունալի ճանապարհից յես վրախա... Յերկար թագնվեցի, ապրեցի ուրիշ աղղանունով, իսկ 1923 թվին վերադարձա մեր գյուղը: Յես կարողացել եյի պահել այն վկայականը, վոր մի ժամանակ եսկադրոնի հրամանատար եմ յեղել: Դե՛, լավ տղերք եւ հանդիպեցին, մի խոսքով կենդանի մնացի: Մկղբում ինձ քարշ եյին տալիս շրջան, Դոնչեկայի քաղբաժին, բայց մի կերպ դուրս պլրծա, սկսեցի ուսուցչություն անել: Մինչեւ վերջերս ել ուսուցչություն եյի անում: Նու, իսկ հիմա... Հիմա ուրիշ բան... Ահա, գործով զնում եմ Ուստիոպերսկ և մտա քեզ մոտ վորպես հին ծանոթի:

— Ուսուցիչ եք յեղել... Այս թե ինչ... Դուք

*). Պողոսելկովը Մ. Շոլտսովի «Խաղաղ Դոն» վեպի հերոսներից մեկն եւ 1918 թվականին Պողոսելկովը յեղել եւ Դողկոմխորհի նախադահու Գլխավորելով մի խումբ կարմիր դվարդիականների, նա Դոնի մարզում զինվորներ եր հավաքագրում հականեղափոխության դեմ կռվելու համար, սակայն ապստամբած կազակները գերի յեն բռնում նրան և իր կարմիր դվարդիականների հետ միասին կռտորում Պոնոմարեվո գյուղակում:

կարդացած մարդ եք, գրքի դիտությունը լավ
կլիմանաք, ի՞նչ պիտի լինի մեր վերջը: Ո՞ւր ենք
զլորվում ևս կուսանտնառություններով:

— Դեպի կոմունիդմ, ախողերս, դեպի նսկականը:
Յես Կարլ Մարքս ել եմ կարդացել, կոմունիստական
կուսանտնառության հոչակալոր մանիֆեստն ել: Գիտե՞ս
վորն ե կուսանտնառության գործի վերջը—սկզբում կու-
տնտեսություն, հետո՝ կոմունա — սեփականության
լիակատար վոչնչացում: Վոչ թե միայն յեզներդ, այլ
յերեխաներդ ել կիսեն քեզանից, վոր պետությունը
զաստիարակի: Ամեն ինչ ընդհանուր կլինի—յերեխա-
ները, կանայք, ամանները, դդալները: Դու կուզենաս
ոադի փորոտիքով ապուր ուտել, իսկ քեզ մախուսով
ելերակըեն: Հողին կապված ճորտ կլինես:

— Իսկ յեթե յես այդպես չեմ ուզո՞ւմ:

— Քեզ չեն ել հարցնի:

— Եղ վո՞նց թե եղալես . . .

— Հենց եղալես:

— Լա՞վ բան ե . . .

— Վո՞նց չեն . . . Այժմ յես քե՛ղ եմ հարցնում.
կարելի՞ յե այսպես շարունակել:

— Փախչելու տեղ ել չկա:

— Դե վոր տեղ չկա, հարկավոր ե գործել, հար-
կավոր ե պայքարել:

— Ի՞նչ եք ասում, Ալեքսանդր Անիսիմիչ, փոր-
ձել ենք, պայքարել ենք մենք . . . Բան չի դուրս գա-
լիս: Մտքովս ել չի անցնում:

— Իսկ դու փորձիր:—Հյուրն աթոռը մոտ քաշեց
խոսակցին, նայեց խոհանոցի ամուր փակված դռանու

և հանկարծ դունաստվելով խոսեց կիսաձայն — Յես
քեզ ուղղակի կամեմ, քեզ վրա հույս ունեմ. մեր
գյուղակում կազակներն ապստամբության են պատ-
րաստվում: Յեզ դու մի կարծիր, թե դա հենց ենապես
անմտաբար: Մենք կապված ենք Մոսկվայի հետ, դե-
մերալների հետ, վորոնք այժմ ծառայում են կարմիր
բանակում, ինժեներների հետ, վորոնք գործարաննե-
րումն են աշխատում և նույնիսկ ավելին — արտասահ-
մանի հետ: Այո՛, այո՛: Յեթե մենք միահամուռ
կազմակերպվենք և հենց հիմա վոտքի յելնենք, ապա
մինչև գարուն ոտար պետությունների ողնությամբ
Դոնը մաքրված կլինի: Գարնան ցանքե դու քո սեր-
մացույով կանես և միմիայն քեզ համար... Սպասի՛ր,
մեր շրջանում մեզ համակրողներ շատ կան: Նրանց
պետք է հավաքել ու միացնել: Հենց այս ուրծով ել
յես Ուստ-Խոպերսկ եմ զնում: Դու կմիանա՞ս մեզ:
Մեր կազմակերպության մեջ արդեն յորեք հարյուրից
ավելի ծառայած կազակներ կան: Դուքրովսկում,
Վոյսկովում, Տուբյանսկում, Փոքր Ոլխովացկում և
մյուս գյուղակներում կան մեր մարտական խմբերը:
Այդպիսի մի խումբ ել ձեր Գրեմյաչիում պիտի ստեղ-
ծել... Դե՛... խոսի՛ր:

— Մարդիկ դժոն են կոլտնտեսությունից ու
հացամթերումից...:

— Սպասի՛ր: Խոսքը մարդկանց մասին չե, քու
մասին ե: Յես քեզ եմ հարցնում. հը՞:

— Եղափիսի դործը միանդամից հո չի՞ վճռվի...
Եստեղ զլուխող կացնի տակ զնելու հարց կա:

— Մտածիր... Հրամանի համաձայն միանդամից
դուրս կդանք բոլոր գյուղերից: Կվերցնենք ձեր շըր-

զանային կենտրոնը, միլիցիայի ու կոմունիստների կարմիրը կքաշենք հենց իրենց տներում, իսկ հետո՝ գործն ինքն իրեն առաջ կդնա:

— Ախր ինչո՞վ:

— Կճարովի: Հենց քեզ մոտ ել կարող ե մնացած մինի:

— Ո՞վ ե խմանում... կարծեմ մի պուճախում մի թրիսկան կա... ավստրիական կարծեմ...

— Մեզ միայն սկսել ե հարկավոր, մի շաբաթ չե քաշի՝ արտասահմանից նավերը թնդանոթ ել կրերեն, հրացան ել: Նույնիսկ ողանավ ել կլինի: Հը...

— Թույլ տվեք մտածել, պարոն յեսառու, միք ստիպի միանդամից....

Հյուրը, վորի դեմքի գունատությունը դեռ չեր անցել, թեքվեց դեպի տանտերն ու խուլ ձայնով ասաց.

— Մենք կոլտնտեսություն չենք կանչում ու վոչ վոքի չենք ստիպում: Քո կամքն ե, բայց լեզուդ... Տե՛ս, Լուկիչ, վեցը քեզ, իսկ յոթերորդը...

Յեվ գրպանում թեթևակի պտտացնելով՝ չըրսիւկաց նաղանի թմբուկը:

— Լեզվիս համար կարող եք չկասկածել: Բայց եդ գործը վտանգավոր գործ ե: Սարսափելի յե եղաւիւսի գործին խառնվելը: Բայց կյանքի գոներն ել են փակված:—Նա քիչ լոեց, առաջ շարունակեց, կարծես ինքն իրեն խօսելով:— Հարուստներին հալածելը չիներ, գուցե թե յես իմ աշխատանքով գյուղակում առաջին մարդը լինելի: Աղաս կյանք լիներ՝ յես կարող ե հիմի ավտոմոբիլ ել ունենայի, — մի բոսե լոելուց

Հետո դառնությամբ շարունակեց տանտերը : — Նորից
մենակ կզնամ դեպի եղ . . . ձեռաց խաթի մեջ կդցեն :
— Ինչո՞ւ մենակ , — վրդովված ընդհատեց հյուրը :
— Դե յես հենց ենակես , խոսքի որինակ եմ ա-
սում , բայց այ , ուրիշնե՞րը վոնց : Աշխարհքը վոնց :
Ժողովուրդը վոտի կկանդնի՞ :

— Ժողովուրդը վոնց վոր վոչխարի հոտ . նրան
պետք ե քշել : Ուրեմն դու վորոշեցի՞ր :

— Պրծնելու հնար չկա , դրա համար ել վորո-
շում եմ : Բայց , դե ելի թույլ տվեք միտք անեմ . վա-
զը առավոտյան վերջին խոսքս կասեմ :

— Դու , բացի դրանից , հուսալի կազմիներին ել
պիտի համոզես : Գտիր ենակխիներին , վորոնք ատամ
ունենան խորհրդային իշխանությանը կծելու , — ար-
դեն հրամայական ասաց Պոլովցելը :

— Ես տեսակ կյանքում ամեն մարդ ել ունի
եղալիսի ատամ :

— Իսկ քո աղա՞ն վոնց :

— Մատը ձեռքից ո՞ւր պիտի բաժանմի : Վորոնից
յես , ենտեղ ել նա :

— Իսկ նա վո՞նց աղա յե . սկի՞նդ ե :

— Լավ կազմակ ե , — թաղնված հոլարտությամբ
պատասխանեց տանտերը :

Հյուրի համար անկողին դցեցին վառարանի մոտ :
Ես ճտկավոր կոչիկները հանեց , իսկ շորերն առանց
հանելու պառկեց և գլուխը փետրահոտ բարձին դնե-
լուն պես քնեց :

Առավոտյան Յակով Լուկիչը հյուրին արթնացրեց
և ասաց :

— Վորոշեցի : Հբամայեցե՛ք :

— Կարդա՛ և ստորագրիր՝ : —Պոլովցել ծոցագըր-
պանից հանեց մի թուղթ :

«Մեղ հետ աստվածն ե : Յես՝ Դոնի ամենազոր
բանակի կազակս , մտնում եմ «Հայրենի Դոնի ազա-
տագրման միության» մեջ , պարտավորվում եմ իս
պետերի Հրամանի համաձայն , մինչև արյանս վիքին
կաթիլը , իմ բոլոր ուժերով ու միջոցներով կովել կո-
մունիստ բոլշևիկների դեմ , վորոնք քրիստոնեական
հավատի յերդվյալ թշնամիներն են և ոռուս ժողովրդ-
դին տանջողները : Պարտավորվում եմ հնազանդորեն
լսել իմ պետերին ու հրամանատարներին : Պարտավոր-
վում եմ իմ ամբողջ ունեցվածքը դոհաբերել սրբազան
հայրենիքիս , վորի մասին և ստորագրում եմ » :

Գ Լ Ո Ւ Խ IV

Յերեսուն յերկու մարդ — Դրեմյաչի ակտիվն ու չքայլորությունը շնչում եյին մի շնչով։ Դավիդովը ճառ ասելու վարպետ չեր, սակայն սկզբում նրան լըսում եյին այնպես, ինչպես չեյին լսի ամենահմուտ պատմողին։

— Յես ինքս, ընկերներ, Կարմիր Պուտիլովց գործարանի բանվոր եմ։ Ինձ ձեզ մոտ ե ուղարկել մեր կոմունիստական կուսակցությունը՝ և բանվոր գասակարդը, վորպեսզի ոգնեմ ձեզ՝ կոլտնտեսություն կազմակերպել և վոչնչացնել կուլակին, իրքև մեր բոլորիս արյունը ծծողի։ Յես կարճ կիսուեմ։ Դուք բոլորդ պետք ե կոլտնտեսություն մտնեք, միացնեք հոգը, ձեր բոլոր դործիքներն ու անսասունները։ Իսկ ինչո՞ւ կոլտնտեսություն։ Նրա հսմար, վոր այսպես շարունակել չի լինի, ուղղակի անհնար ե ասլրել։ Հացի դժվարությունը նրանից ե, վոր կուլակը հացը փուեցնում է հորի մեջ, ստիպված ես լինում հացը նրանից կովով խլել։ Իսկ դուք՝ ուրախությամբ կտաք, բայց ինքներդ ել քեչ ունեք։ Միջակի ու չքայլորի հացով Խորհրդային Միությունը կերակրել չես կարող։ Հարկավոր ե ավելի ցանել։ Բայց արորով, կամ մի խովանի գութանով դու վոնց կարող ես ավելի ցանել։ Այստեղ միայն տրակտորը կարող ե ողնել։

Փաստ ե: Յես չեմ խմանում, թե ձեզ մոտ՝ Դոնում
աշնան ընթացքում մի գութանով ինչքան ցել են ա-
նում....

— Գիշեր ցերեկ, վոր մաճից կախվես, մինչեւ ձը-
մեռ մի տասներկու դեսյատին չուռ կտաս:

— Բոհո՛, տասներկո՛ւ... իսկ թե հողը պինդ
մինի՞...

— Ի՞նչ եք վիճում դուք ել,— հնչեց կանացի մի
սուր ձայն, — գութանին յերեք-չորս գույդ լավ յեղ ե
հարկավոր, իսկ մեզ վո՞րտեղից ե այդքանը: Եղ հա-
րուստների մոտ կլինի. նրանց թեն ե ծվռմ....

— Իսկ տրակտորո՞վ... ի՞նչքան կվարվի:

Դավիդովն սպասեց, վոր բռն, ասլա պատասխա-
նեց.

— Իսկ տրակտորը, հենց թեկուղ մեր Պուտիլո-
վեցի տրակտորը, յեթե դործը հասկացող տրակտո-
րիստ լինի, յերկու հերթի աշխատելով մի որում ելի
տասներկու դեսյատին կվարի:

Ժողովը հառաջեց: Ինչ վոր մեկը զարմացած բա-
ցականչեց.

— Ա՛յ քեզ բա՛-ա՛ն... մարդ եղ տեսակ ձիով
վար անի՞...

Դավիդովը ափով սրբեց հուղմունքից ցամաքած
շրթունքներն ու շարունակեց.

— Այ, մենք դործարանում տրակտորներ ենք շի-
նում ձեզ համար: Զքավորը կամ միջակն առանձին
տրակտոր առնել չի կարող. ուժը չի պատի: Նշանա-

զում ե՝ տրակտոր դնելու համար բատրակը, չքավորն ու միջակը պետք ե միանան կոլեկտիվի մեջ: Տրակտորը, ձեզ հայտնի յե, այն այնպիսի մեքենա յե, վոր փոքրիկ հողակտորում աշխատեցնելն ոգուած չի. նրան մեծ տեղ ե հարկավոր: Փոքրիկ արտելի ոգուածն ել իծի կաթի չափ կլինի:

— Հլա ավելի պակաս, — հետևի շարքերից վինչաց մեկի բամբ ձայնը:

— Ուրեմն ի՞նչ անել, — շարունակեց Դավիդովը՝ ուշադրություն չդարձնելով բացականչություններին, կուսակցությունը մտածել ե համատարած կոլեկտիվացում անց կացնել, վոր ձեզ տրակտորից կազած դուրս բերի կարիքի միջից: Իսկ հիմա անցնում եմ ձեր ընկերությանը: Նա վոքր ե, թույլ, դրա համար ել նրա գործերը վատ են գնում: Մի գլուխ վնասի մեջ ե: Իսկ մենք պետք ե այդ ընկերությունը կոլտնտեսության մեջ առնենք:

— Սպասիր մի, խոսքդ կտրում եմ մի քիչ, — տեղից վեր ցատկելով մեջ ընկավ Դյոմիա Ուշակովը, վոր մի ժամանակ ընկերության անդամ եր յեղել:

— Զայն խնդրի՛ր, հետո խոսի՛ր, — խստորեն ասաց Նազուլովը, վոր նստել եր սեղանի մոտ, Դավիդովի ու Անդրեյ Ռազմյոտնովի կողքին:

— Յես առանց խնդրել ել կասեմ, — ձեռքը թափ ավեց Դյոմիան և աչքերն այնպես շլեց, վոր կարծես միաժամանակ և' նախաբահությանն եր նայում և' հավաքվածներին: — Իսկ եղ ինչի համար, ներող յեղեք, ընկերությունը վնաս արեց ու խորհրդացին իշխա-

նության վզին բեռ դառավլ : Իսկ ի՞նչ պատճառով են
նրանք վարկային ընկերության հաշվին ապրում,
հարցնում եմ ձեղ : Եղ ամենը ընկերության անուշիկ
նախագահի՝ Արկածկա Մենկայի պատճառով :

— Դուքս ես տալիս, վոնց վոր տիալ, — աքլորի
ձայնով կանչեց մեկը հետևի շարքերից և Արկածկան
սրան-նրան հրելով մոտեցավ նախագահության սե-
ղանին :

— Յես կհաստատեմ, — գոչեց գունատված Դյում-
կան և առանց ուշադրություն դարձնելու Ռազմյուտ-
նովի վրա, վոր բոռնցքով սեղանն եր ծեծում, դար-
ձալ դեպի Արկածկան . — դուքս պրծնել չես կարա :
Նրա համար չաղքատացավ մեր կոլտնտեսությունը,
վոր քչվոր եյին, քո փոփոխությունների համար աղ-
քատացավ : Իսկ «տիալ» խոսքիու համար յես քեղ
վոնց վոր պետք ե հուպ կտամ : Ցուլը մոտոցիկլի հետ
չփոխեցի՞ր առանց հարցնելու : Փոխեցի՞ր : Ո՞ւմ խել-
քին փչեց ձու ածող հավերը փոխել . . .

— Նորից ես դուքս տալիս, — առաջ գալով պաշտ-
պանվեց Արկածկան :

— Դու չեյի՞ր վոր զոռեցիր ու յերեք զոչ*) , մի
սուբահը**) փոխեցիր սայլակի հետ : Հենց դո՛ւ :

— Յետ քաշվեցեք : Ի՞նչ եք աքլորակոխվ տալիս, —
համոզում եր նազուլնովը, վորի այտի մկաններն ար-
դեն սկսել եյին խաղալ կարմրած մորթի տակ :

— Խոսք ավեք ինձ վոնց վոր կարգն ե, — խնդրեց

*) Խոյ

**) Սաերը

Արկաշկան, վոր արդեն մոտեցել եր սեղանին: — Յեկ
նա արդեն բուռն եր հալաքում իր չեկ մորուքը, վոր
խոսի, բայց Դավիթովն ընդհատեց նրան:

— Յես կվերջացնեմ հետո, իսկ հիմա՝ ինդրեմ մէ-
խանդարի: Այսպես ուրեմն, ընկերներ, յես ասում
եմ, վոր միայն կոլտնտեսության միջոցով կարելի
յե...

— Դե դու մեղ քարոզ մի կարդա: Մենք մեր ամ-
բողջ ունեցածով կմտնենք կոլտնտեսություն, — ընդ-
հատեց նրան կարմիր պարտիզան Պավել Լյուբիչկինը,
վոր ամենից մոտ որ նստած դռանը:

— Համաձա՞յն եք կոլտնտեսությանը:

— Գեղը կանգնի՝ գերան կկոտրի:

— Մենակ թե՝ հարկավոր ե տնտեսությունը խե-
լոք ղեկավարել:

Աղմուկը խլացրեց նույն Լյուբիչկինը: Նա վեր
կացավ աթոռից, հանեց իր անճոռնի, սև փափախը և
իր բարձր հասակով ու լայն թիկունքով ծածկեց ամ-
բողջ դռուը:

— Դե դու ել մաղակու մարդ ես. ի՞նչ ես մեր
գլխին քարոզ կարդում խորհրդային իշխանության հա-
մար: Մենք եստեղ ինքներս ենք կուլով վուտի կանդ-
նեցրել եղ իշխանությունը, մենք ինքներս ենք մեջք-
ներս դեմ տվել, վոր չդլորմի: Մենք գիտենք, թե ինչ
ե կոլտնտեսությունը ու կմտնենք ենտեղ: Մեքենա տը-
վե՞ք, այ թե ինչ, — նա մեկնեց կոշտապատ թաթը: —
Տրակտորը հնարք ե, խոսք չկա, բայց դուք՝ բանվոր-
ներդ քիչ եք շինել, այ թե ինչի համար ենք մենք
ձեղ հայհոյում: Զեռ գցելու տեղ չունենք, այ թե

ինչն եղած բախտությունը։ Իսկ յեզներով՝ մեկ եղած մի ձեռքով քշել, մյուսով՝ արտասուք սրբել — եղած առանց կոլտնտեսության ել կարելի յե։ Յես ինքս մինչև կոլտնտեսության հեղաշրջումը մտածում եցի համակ գրեմ կալինինին, վոր մեզ՝ հողաղործներիս ոգնեն մի նոր կյանք սկսել։

Լյուրիչկինը մի դաժան հայացք դցեց իր շուրջը և նորից լսելի յեղալ, թե ինչպես մեղմ ճրթոցով վառվում է պատրույդը լամպի մեջ։

— Դուքս եղալիս, վոր յես կաղետների դեմ նրա համար եմ կովել, վոր ելի հարուստները լավ աղբեն։ Վոր նրանք քաղցր պատառն ուտին, իսկ յես՝ սոխ ու հաց, հա՞։ Եղակներ են, ընկեր բանվոր։ Դու, Մակար, ինձ աչքով մի անի. յես տարին մեկ եմ խոսում, ինձ կարելի յե։

— Շարունակիր, — գլխով արեց Դավիթովը։

— Շարունակում եմ։ Ես տարի յես յերեք դեսյատին ցորեն եմ ցանել։ Յերեք յերեխսա ունեմ, մի կաղքույր, կինս ել տկար ե։ Տվել եմ յես իմ հացի պըշանը, Ռազմյուճնով։

— Տվել ես, բայց աղմուկ մի անի։

— Զե, պիտի անեմ։ Իսկ Ֆրու Ռվանին պլանը տվելց։ Զտվեց։

— Դե, դատարանն ել նրան տուգանեց ու հացը վերցրինք, — վրա բերեց Ռազմյուտնովը՝ ակներև բաշականությամբ լսելով Լյուրիչկինին։

— Նա ելի ես տարի Ֆրու Իգնատիչը կլինի, իսկ գարնանը կդա ինձ վարձելու — ասաց Լյուրիչկինը և առ փափախը նետելով Դավիթովի վոտքերի տակ՝ շարունակեց։ Դու ի՞նչ ես պատմում ինձ կոլեկտիվի

մասին : Կուլակի տամարը կտրեցեք, են ժամանակ կը-
դանք : Տվեք մեղ նրա մեքենաները, նրա յեզները, նը-
րա ուժը տվենք մեղ, են ժամանակ կլինի մեր հավա-
սարությունը : Թե չե՛ շարունակ խոսքեր, խոսքեր՝
«կուլակին վոչնչացնել» , իսկ նա տարեց տարի ա-
ճռմ ե , վոնց վոր չիբան ու մեր արեն ել կտրում :

— Մեղ տուր ֆրոլի ունեցածը , իսկ Արկածկա Մե-
նոկը իսկույն ողանակի հետ զփոխի , — վրա բերեց
Դյոմնան :

— Հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ ...

— Եղ տեսակի բանի պատրաստ ե ...

— Հո վեա՞ յեք , վոր վիրավորում ե ...

— Թո՛ւ , լսել ել չես թողնում , լոի՛ր :

— Ի՞նչ սատանա մտավ վորներդ . վերջ չե՞ք տա-
լու :

— Դե , մի լուցե՞ք ...

Գալիղովը հազիվ կարողացավ դադարեցնել աղ-
մուկը :

— Հենց այդ ել մեր կուսակցության քաղաքակա-
նությունն ե : Ել ի՞նչ ես ճղճում , քանի վոր պարզ
ե : Կուլակին վոչնչացնել վորակես դասակարդ , նրա
ունեցվածքը տալ կոլանտեսություններին : Փաստ ե :
Մենք կուլակին ստիպված եյինք հանդուրժում . նա ա-
վելի հաց եր տալիս , քան կոլեկտիվ տեսեսությունը :
Իսկ հիմա՝ հակառակն ե : Բնկեր Ստալինը ճիշտ հաշ-
վել ե թվարանությունն ու ասել . «Վերացնել կուլա-
կին կյանքից : Նրա գույքը տալ կոլանտեսություննե-
րին» : Դու մի գլուխ մեքենա եյիր բղավում ... Հինգ

Հարյուր միլիոն կլոր մանեթ են տալիս կոլտնտեսություններին, վոր նրանք վոտքի կանդնեն: Վո՞նց եւ լսե՞լ ես դու այդ: Ել, ուրեմն, ի՞նչ ես ճղճղում: Առաջ հարկամոր ե կոլտնտեսություն ստեղծել, հետո արդեն՝ մեքենայի մասին հոգալ: Իսկ դու՝ առաջ ու զում ես խամուտը գնել, հետո արդեն այդէլ խամուտին հարմար ձի գնել: Ի՞նչ ես ծիծաղում: Հենց այդպիս ե:

— Լյուբիշկինը հետ ու հետ և քայլում:

— Հա՛, հա՛, հա՛...

— Դե մենք հոգով սրտով կոլեկտիվինն ենք...

— Եղ նա խամուտի որինակից ... մոտեցավ...

— Հենց լիեկուղ ե՛ս գեշեց:

— Գրի'ր հենց հիմա:

— Տարե՛ք մեզ կուլակներին ջարդելու:

— Ո՞վ և կոլեկտիվ գրվում—ձեռք բարձրացնի,— առաջարկեց Նադունովը:

Բարձրացրած ձեռքերը հաշվելիս դուքս յեկավ յըրեսուն յերեք. ինչ վոր մեկը շփոթված յերկու ձեռք եր բարձրացրել:

Տոթը Դավիդովին սոխաց վերարկուն և սերթուկը հանել: Նա վերնաշաղկի ոճիքն ել արձակեց ու ժպտալով սպասեց խաղաղվելուն:

— Զեր գիտակցությունը բարձր ե. վիաստ ե: Բայց դուք կարծում եք, թե կմտնեք կոլեկտիվ և ի՞նը: Վո՞չ: Այդ քիչ ե: Դուք, չքավորներդ Խորհըրդային իշխանության հենարանն եք: Դուք և ինքներդ ոլիտի կոլեկտիվ մտնեք և ձեր հետեւից միջակի տառանլող կերպարանքն ել պիտի քաշեք:

— Իսկ վո՞նց կըտշես դու նրան, յեթե ինքը չի

ուղում : Ի՞նչ ե , նա յեղ ե , վոր պարանը վիզը դցես
քաշես ,—հարցրեց Արկաշկա Մենոկը :

— Համոզի՛ր : Ել դու ի՞նչ մարտիկ ես մեր ճշշ-
մարտության համար , յեթե չես կարող ուրիշին ել
վարակել : Այս , հենց վաղը ժողով կլինի : Ինքու
«կողմ» քվեարկիր և միջակին ել համոզիր : Այժմ
մենք կանցնենք կուլակների հարցի քննությանը , վո-
րոշում կընդունենք , վոր նրանց դուրս քշենք Հյուսի-
սային կովկասի սահմաններից : Վո՞նց կլինի :

— Կատորագրե՞նք :

— Արմատից պիտի կտրել նրանց ...

— Վեհէ , ավելի լավ ե հենց արմատահան անել ու
դեն շալրտել , վոչ թե արմատից կտրել , — ուղղեց Դա-
վիդովը և դիմելով Ռազմյուտնովին՝ ավելացրեց , —
կարդա՛ կուլակների ցուցակը : Հենց հիմա կվորոշենք
նրանց կուլակաթափ անել :

Անդրեյը թղթապանակից մի թուղթ հանեց , հանձ-
նեց Դավիդովին :

— Ֆրու Դամասկով : Արժանի՞ յե նա այդպիսի
ոլորետարական պատժի :

Զեռքերը բարձրացան միահամուռ : Սակայն ձայ-
ները հաշվելիս Դավիդովը նկատեց , վոր մեկը
ձեռնպահ ե :

— Համաձայն չե՞ս , — հարցրեց նա , բարձրացնե-
լով քրտնաթոր հոնքերը :

— Զեռնպահ եմ , — կարճ պատասխանեց ձեռք
չբարձրացնողը , վոր արտաքուստ հանդարտարարու ,
վորեւ բանով աչքի չընկնող կազմակ եր :

— Ինչո՞ւ այդպես , — հետաքրքրվեց Դավիդովը :

— Նրա համար, վոր նա իմ հարեւանն եւ և յես
նրանից շատ բարեք եմ տեսել: Հենց եղ պատճառակ
ել չեմ կարող նրա դեմ ձեռք բարձրացնել:

— Դուքս կորի ժողովից խակույն, — հրամայեց
Նաղուլնովը դողացող ձայնով, տեղից բարձրանալով,
ինչպես ասպանդակների վրա:

— Վո՞չ: Այդպես չի կարելի, ընկեր Նաղուլնով, —
իստությամբ ընդհատեց նրան Դամիդովը: — Մի գնա՛,
քաղաքացի՛: Բացատրիր մեղ քո գիծը: Քո կարծիքով
Դամասկովը կո՞ւլակ ե, թե չե:

— Յես եղքան չեմ հասկանում: Յես անդքաղետ
եմ և փոնդքում եմ ազատել ինձ ժողովից:

— Վո՞չ, դու դեռ մեղ բացատրիր, խնդրեմ, թե
ի՞նչ բարիքներ ես ստացել նրանից:

— Նա ինձ միշտ ոգնել ե. յեզներն ե տվել, սեր-
մացու յե փոխ տվել... քի՞չ քան ե... Բայց յես իշ-
խանությանը դեմ չեմ դնում... Յես իշխանության
կողմն եմ:

— Նա քեզ խնդրե՞լ ե, վոր իր կողմը պահես:
Փող կամ հա՞ց ե բաշխել: Դե դու խոստովանվի՞ր,
մի վախենա, — մեջ մտավ Ռազմյոտնովը: Դե ա-
ռա՛, նա ի՞նչ ե խոստացել քեզ, — և անհարմար զըս-
նելով թե՛ այդ մարդու ամոթալի վիճակը և թե իր
տված հարցերը՝ ժպտաց:

— Դուցե թե վոչինչ. դու ի՞նչ զիտես վոր...

— Փչում ես, Տիմոֆեյ, դու կաշառած ես և
գուրս ե գալիս, վոր կուլակի պոչ ես, — դոչեց մեկը
շարքերի միջից:

— Ասացեք, ի՞նչ ուզում եք, կամքը ձերն և...

Դավիթովիք, կարծես դանակը կոկորդին սեղմելով,
հարցուեց.

— Դու խորհրդային իշխանությամն կողմն ես,
թե կուլակի: Դու, քաղաքացի, մի խայտառակի չը-
քավոր դասակարգը, ուղղակի ասա ժողովում—ո՞ւմ
կողմն ես:

— Ի՞նչ եք դլուխ դնում նրա հետ,—վրդովված
ընդհատեց Լյուբիշկինը, — նրան մի շիշ արագով ել
կարելի յե զնել: Մարդու աչքն ել ափսոս ե, վոր քեզ
նայի, Տիմոֆեյ:

Զեռք չբարձրացնող Տիմոֆեյ Բորչչելը վէրջում
կեղծ հանդարտությամբ պատասխանեց.

— Յես իշխանության կողմն եմ, ի՞նչ եք բկիս
չոքներ... մութ մարդ եմ, շվիթվեցի... —սակայն
յերկրորդ քիեարկությանն ել նա ձեռքը բարձրացրեց
նկատելի դժկանութամբ:

Դավիթովիք իր բլոկ—նոտում կարճ խաղմղեց.
«Տիմոֆեյ Բորչչելը դասակարդային թշնամու կողմից
մոլորեցրած մարդ ե: Վերամշակել»:

Ժողովը միաձայն հաստատեց ևս չորս կուլակային
տնտեսություն: Սակայն, յերբ Դավիթովիք կարդաց.
«Տիտ Բորոդին: Ո՞վ ե կողմ» , ժողովը քայլ լուսություն
պահպանեց: Նաղուլնովն ու Ռազմյոտնովը շվիթված
իրար նայեցին: Լյուբիշկինն սկսեց վարփախով սրբել
իր քրտնած ճակատը:

— Սա ի՞նչ լուսություն ե: Ի՞նչ պատահեց:—Դա-
վիթովիք տարակուսանքով նայեց նստած մարդկանց
շարքերին և վոչ մեկի աչքերին չանդինկելով՝ իր հա-
յացքը դարձրեց նաղուլնովի վրա:

— Այ թե բանն ի՞նչումն ե, — անվճռականու-

թյամբ սկսեց Նաղուլնովը: — Եղ Բորոդինը, վորին
մենք Տիտոկ ամունն ենք կպցրել, տասնութ թվակա-
նին մեղ հետ միասին կամավոր մտավ Կարմիր գը-
վարդիան: Զքավորի ծնունդ լինելով կռվում եր հա-
մառ: Վերջեր ստացավ և պատվանշան — մի արծաթե
ժամացույց՝ հեղափոխական գործերի համար: Դու-
մենկովի ջոկատումն եր ծառայում: Յեվ դու հասկա-
նում ես, ընկեր բանվոր, թե նա ինչպես կտրտնց
մեր սիրու: Տուն վերագառնալուց հետո ատամներով
կպավ տնտեսությանը: և... սկսեց հարստանալ,
առանց ուշը դարձնելու մեր դպրուշացումներին: Գիշեր-
ցերեկ եր աշխատում, վայրենու պես մազակալեց ամ-
բողջապես՝ ամառ-ձմեռ քաթանե շալվար*) եր հազի-
նը: Սկսեց բանվորներ վարձել — յերկուսը, յերեքը:
Զեռք բերեց մի հողմազաց, խել հետո՝ առավ
հինդ ուժանոց մի շողեշարժիչ և սկսեց ձեթ քաշել ։
տառվարի առուտուր ել սկսեց: Ինքը քաղցած եր մը-
նում, բանվորներին ել եր քաղցից կոտորում: Նրանք
թե՛ւ որական 20 ժամ եյին աշխատում, բայց ելի գի-
շերը մի հինդ անդամ պիտի վեր կենային ձիերի կե-
րը խառնեյին, դոմը մաքրեյին: Մենք շատ անգտո՞-
նուան կանչում եյինք բջիջ, խորհուրդ, ամաչեցնում,
խայտառակ անում... .

— Դու մի քիչ կարճ ասա, — անհամբերությամբ
ինդերեց Դավիդովը:

Նաղուլնովի ձայնը դողաց ու մեղմացավ:

— Ես կարճ ասելու բան չեմ... ես ենակես մի ցավ
ե, վոր արյուն ե ծորում... պատահում եր, վոր յերբ

*) Անդրավարտիկ:

պատերազմի ու մեր մասին քաշած դժվարությունների մասին հետը խնսում եյինք, նրա աչքերի մեջ արցունք եր փայլում, բայց նա չեր թողնում, վոր եղ արցունքը շատանա, շուռ եր գալիս, սիրտը հանդարտեցնում ու ասում. «Ինչ վոր յեղել ե, անցած զնացած բան ե»: Յեվ մենք... զրկեցինք նրան ձայնի իրավունքից:

— Իսկ դու, մի քիչ այլելի կարճ...

— Իսկույն վերջացնում եմ: Նրա ձայնը չվերականգնեցին և մինչև հիմա ել եղակես մնում է, թեև, ճիշտ է, բանմիորներին արձակել ե...

— Դե, ուրեմն, ել ի՞նչ փա վոր:— Դավիդովն աչքերը հառեց Նազուլնովի դեմքին: Վերջինս իր արեառարտեվանունքներով աչքերը փակելով պատասխանեց.

— Դրա համար ել ժողովը լուսում ե: Յես միայն բացատրեցի, թե անցած քաղցր ժամանակներն ինչ ելեղել հիմիկլա կուլակ Տիտ Բորոդինը:

Դավիդովը շրթունքները սեղմեց, մոայլվեց:

— Դու դիտե՞ս թե Տրոցկու հետ մենք վոնց վարվեցինք: Ել ի՞նչ ես խղճահարության պատմություններ անում մեղ: Պարտիզա՞ն ե յեղել — այդ պատիվ ե նրա համար, կուլա՞կ ե դարձել՝ մեր թըշնամին ե դարձել — ուրեմն ճգմել: Ել ի՞նչ խռոք կարող ե լինել պյուտեղ:

— Յես նրան խղճալուց չեմ ասում: Դու, ընկեր, ինձ վրա իզուր մեղքեր մի դցիր:

— Ո՞վ ե համաձայն, վոր Բորոդինին կուլակաթափ անենք: — Դավիդովն աչքի անցկացրեց շարքելը:

Զեռքերը՝ բարձրացան, թեև վո՛չ միահամուռ, վո՛չ
միանդամից :

Ժողովից հետո Նագուշնովը Դավիդովին հրավի-
րեց իր մոտ գիշեթելու :

— Իսկ վազն արդեն բնակարան կդանենք ձեզ հա-
մար,—ասաց նա, խարխափելով դուրս դալով խոր-
հրդի մութ նախասենյակից :

Նրանք քայլում եյին կողք-կողքի, փիսրուն ձյու-
նի վրայով : Նագուշնովը կիսամուշտակի փեշելը բա-
նալով՝ կամացուկ խոսեց .

— Յես, սիրելի ընկեր բանվոր, ավելի թեթև եմ
չնչում, յերբ լսեցի, վոր գյուղացիների ամբողջ սե-
փականությունը համատարած կոլեկտիվի մեջ պիտի
քաշենք : Յես փոքր հասակից ատում եմ սեփականու-
թյունը : Ամբողջ չարիքը գրանից ե. ճիշտ են գրել
գիտնական ընկերներ Մարքսն ու Ենգելսը : Թե չե՞-
ինչ ե. խորհրդային իշխանության ժամանակ ել մար-
դիկ, վոնց վոր խողերը լավի տաշտակից, կովում,
ճղղում, հրմշում են իրար եղ անիծված վարակի հա-
մար : Իսկ առաջ ինչպես եր. հին ուժիմի ժամանակ :
Հիշելն ել սարսափելի յէ : Կովի ժամանակ պատահում
եր՝ պառկած ես դիրքում ու խփում ե քեզ գերմանա-
ցին ծանր ոռնմբով : Սև ծուխը գետնից յերկինք ե
բարձրանում : Պառկել ես ու մտածում ես. «ո՞ւմ հա-
մար, ո՞ւմ սեփականության համար եմ յես եստեղ ահ
ու մահի մեջ ընկել» : Գաղերը քթիս հասան, թունա-
վորվեցի : Խենթի պես սարի գլուխն եմ վազում,
բայց շունչը կտրվում ե, արյունը գլուխս ե խփում,
գնալ չի լինում : Խելոք մարդիկ դեռ կովի ճակատում

Հասկացրին ինձ և վերադարձա բոլշևիկ։ Իսկ քաղաքացիական կռային՝ ո՞չ, ջարդում եյի անխնա այն գարշելիներին։ Կաստորնայի մոտ վիրավորվեցի, իսկ հետո ընկնայի որությունը բոնեց ինձ։ Իսկ հիմա, այս նշանը, — Նազուլնովն իր ահազին թաթը դրեց շքանշանի վրա և նրա ձայնի մեջ զգացվեցին նոր, ջերմ հնչյուններ, — առ ինձ ինչպես և տաքացնում։ Յես, սիրելի ընկեր, խսկական, վոնց վոր քսովաքացիական կռվի որերին լինեմ, վոնց վոր դիրքերում։ Թեկուղ գետինն ել անցնենք, բայց բոլորին կոլեկտիվ քաշենք։ Ավելի մոտենանք համաշխարհային հեղափոխությանը :

Գ Լ Ո Ւ Խ 5

Առավոտյան ժամը ութին Դավիդովիը ոչուղիսոր-
հուրդ գալով՝ այնտեղ արգեն հավաքված գտավ տասն
չորս հոգի՝ Գրեմյաչիի չքավորությունից :

— Իսկ մենք ձեզ վազուց ենք սպասում, լուսա-
ծեղից, — ժամալով ասաց Լյուբիշինը՝ իր ահազին
թաթի մեջ առնելով Դավիդովի ձեռքը :

— Համբերել չե լինում . . . — բացարեց՝ Շչուկար
պանը :

Այդ կանացի սպիտակ մուշտակ հագած այն ծն-
րուկն եր, վոր Դավիդովի գալու առաջին որը նրա հետ
կատակներ արեց զյուղիսորհրդի բակում : Այդ որվա-
նից նա իրեն համարում եր Դավիդովի մոտիկ ծանո-
թը և նրա հետ վարվում եր վոչ այնպես, ինչպես
մյուսները, այլ ավելի ընկերական մտերմությամբ :
Նա հենց այդ որն ել, Դավիդովի գալուց առաջ առում
եր. «Յես ու Դավիդովիը վոնց վոր վորոշենք են-
պես ել կլինի : Յերեկ չե, մեկել որը նա ինձ հետ յեր-
կար որույց արեց : Դե, շատ խոսեցինք, հանագներ
ել արինք, ամա ամենից շատ՝ սլան քաշեցինք, թե
վոնց սարքենք կոլեկտիվը : Նա ել ուրախ մարդ ե,
վոնց յես . . . » :

Դավիդովն Շչուկար պանին ճանաչեց սպիտակ

մուշտակով և առանց դիտակցելու խիստ միրավորեց նրան .

— Ա՛, եղ դու յես, պապի : Ա՛յ, տեսնո՞ւմ ես, յերեկ չե անցյալ որը դու կարծես վշտացար, յերբ իմացար, թե յես ինչի յեմ յեկել, իսկ այսոր՝ արդեն կոլտնտեսական ես : Կեցե՛ս :

— Ժամանակ չկար... ժամանակ, դրա համար եւ գնացի, թե չե... — մըմոաց Շչուկար պապը՝ կողքանց հեռանալով Դավիդովից :

Վորոշլած եր յերկու խմբի բաժանվելով՝ գնալ կուլակներին արտաքսելու : Առաջին խումբը պիտի գընար գյուղի վերին մասը, յերկրորդը՝ ներքին :

Նազուլնովն ու Դավիդովը, Լյուբիշինը, Շչուկար պապը և ելի յերեք կաղակ դուրս յեկան գյուղինով՝ բրդից :

— Ումնից սկսենք, — Հարցը Եց Դավիդովը Նազուլնովին :

— Տիտ Բորոդինից :

Փողոցով նրանք քայլում եյին լուս : Կանայք հետաքրքրությամբ նայում եյին պատուհաններից : Յերեխաններն ուզում եյին կպչել նրանց յետեից, բայց Լյուբիշինը ցանկալատից մի ճիպոտ զուրս քաշեց և յերեխանները հասկանալով թե ինչի համար ե այդ, հետ քաշվեցին : Յերբ արդեն Տիտկայի տանը մոտեցել եյին, Նազուլնովն առանց վորեե մեկին դիմելու ասաց :

— Այս տունը պետք ե վերցնել կոլտնտեսության վարչության համար : Մեծ տուն ե : Իսկ սարայները կարելի յե գոմ դարձնել :

Տունն, իսկապես խոշոր եր : Տիտոկն այդ տունը

գնել եր 1922 թվի սովոր տարին՝ մի ամուլ*): Կովովով ու յերեք վութ ալյուրով, հարևան Տուբանսկի գյուղում**): Տան նախկին տիրոջ ընտանիքի բոլոր անդամները մեռել ենին և վոչ վոք չեր մնացել, վոր Տիտովի դեմ դատ բաց անի այդպիսի ստրկացուցիչ առևտրի համար։ Նա տունը փոխադրել եր Գրեմյաչի, կտուրը ծածկել, առանձին առանձին գոմ ու սարայներ կառուցել և իր համար սարքվել ընդ միշտ... Տան կարմիր ներկած ճակատից դեսպի փողոց եր նայում ներկարարի վարպետությամբ պատրաստած մակադրությունը՝ սլավոնական տառերով։

«Տ.Կ. ԲՈՐՈԴԻՆԻՆ : ՔԲ. ԾՆՆ. 1923 թիվ» :

Դասլիովը հետաքրքրությամբ դիտեց տունը։ Բակի դռնակով առաջինը ներս մտավ նազուլնովը։ Փակի չխղոցի վրա ամբարի սակեց դուրս ցատկեց գայլանման, շղթայակասլ ահազին մի շուն։ Նա առանց հաջոցի առաջ նետվեց, ծառս յեղամի հետևի թաթերի վրա և սպիտակամազ փորատակը փայլեցնելով ու կոկորդը սեղմող վզկապից չնչակտուր՝ խուլ ձայնով մոնջաց։ Առաջ ցատկելով ու մեջքի վրա գլորվելով նումի քանի անդամ փորձեց շղթան կտրել, բայց չկարողանալով՝ վաղեց դեսպի դոմը և նրա վերեռում զիւղնդաց շղթայի ողակը, վոր հաղցրած եր մինչև դոմը ձգված յերկաթալարին։

*) Ամուլ—եղ անասուն, վորը սակայն յերբեք չի ծնում։

**) Ռուսական գյուղերում տները մեծ մասամբ շինված են փայտից (գերաններից) և յեթե մեկը մի դյուզում տուն ե առնում, կարող ե քանդել գերանները փոխադրել իրենց գյուղը և տունը նույնությամբ վերակառուց ել։

— Ես մարդակեր դաղան եւ մարդու ձիուց ցած
կըքաշի, — մամռաց Շչուկար պապը և յերկյուղով աչ-
քերը խեթելով չան վրա՝ համենայն դեպս դպուշու-
թյան համար մոտեցավ ցանկապատին:

Նրանք սուն մտնան բոլորը միասին: Տիտկայի
կինը, վոր մի չոր ու բարձրահասակ կին եր, տաշ-
տակով ջուր եր խմեցնում հորթին: Նա չարագուշակ
կասկածով նայեց անսպասելի հյուրերին: Վողջույնին
վորպես պատասխան քթի տակ ինչ վոր վմթփնթաց,
կտրծես ասելիս լիներ՝ «գրողը տանի ձեզ»:

— Տիտը տա՞նն ե, — հարցրեց Նադունովը:

— Զե':

— Ապա ո՞ւր ե:

— Զե'մ իմանում, — կտրուկ պատասխանեց տան-
տիրուհին:

— Դու, Պերֆիլյելինա, գիտե՞ս, թե ինչի յենք
յեկել մենք: Մենք... — խորհրդավոր կերպով սկսել
ուղեց Շչուկար պապը, սակայն Նադունովն աչքերին
այնպես խոժողեց նրա վրա, վոր պապը գողարտվ կուր
տվեց թուքը, կմկմաց և նստեց յերկար նստարանին
ու նեղացած իրար քաշեց իր չլարադած սպիտակ
մուշտակի վեշերը:

— Զիերը տա՞նն են, — հարցրեց Նադունովը, վոր-
պես թե չնկատելով անբարյացակամ ընդունելու-
թյունը:

— Տանն են:

— Իսկ յեզնե՞րը:

— Զե': Իսկ գուք ինչի՞ յեք յեկել:

— Քեղ հետ մենք չենք կարող . . . — Նորից սկսել
ուղեց Շխովկար պապը, սակայն այս անդամ Լյուբիշ-
կինը հետ-հետ գնալով քաշեց նրա փեշից դեպի դռ-
ուը և պապն արագությամբ ընկնելով նախասանյակ՝
այդպես ել չկարողացավ վերջացնել իր խոսքը:

— Իսկ վորտեղ են յեղները:

— Տիտը տարել է:

— Ո՞ւր:

— Քեղ ասացի, վոր չեմ իմանում:

Նազուլնով Դավիթովին աչքով արտավ և դուրս
յեկավ սենյակից: Մոտենալով Շխովկար պապին՝ բը-
ռունցքը տնկեց նրա մորուքի առաջ ու ասաց.

— Դու լոիր, քանի քեղ չեմ հարցնում, — և դառ-
նալով Դավիթովին՝ ավելացրեց — զործերը վատ են:
Պետք է իմանալ ուր են յեղները. մի տեղ թագցրած
չեմի . . .

— Դե մեկ ել առանց յեղների . . .

— Ի՞նչ ես ասում, — բացականչեց Նազուլնովը, —
նրա յեղները դյուղում ամենալավն են: Չեոդ պողերին
չի հասնի: Ինչպես կարելի յէ: Հարկավոր և Տիտին
ել դանել, յեղներն ել:

Լյուբիշկինի հետ փափառով նրանք մտան գոմը,
այնտեղից գնացին սարայը, առաջ՝ կալը: Հինգ բողե
չանցած՝ Լյուբիշկինը մի մահակով դիմուած դամբուին
սորիակեց հետ քաշիկ, քշեց շոեմարանի տակը, իսկ
Նազուլնովը դոմից դուրս բերեց մի բարձրահասակ
ապիտակ ձի, դարձրեց և քաշից բռնելով՝ հեծավ:

— Դու եղ ինչ ե՞ս, Մակար, ուրիշի դոմում կար-
դաղըություններ անում, առանց հարցնելու, — բղամեց

տանտիրուհին, դուրս վազելով սանդուխքների դլուխը և յերկու ձեռքերը դնելով կողերին:—Մարդո կդա հիմի, յես նրան... Նա կխօսի քեզ հետ, վոնց վորպետք ե...

— Մի՛ գոռա՛: Յես ինքա նրա հետ կխօսեյի, թէ վոր տամուլ լիներ: Ընկեր Դավիդով, ապա մի յել եստեղ:

Դավիդովը Նազուլնովի վարմունքից շփոթված՝ մոտեցավ:

— Կալից յեղան թարմ հետքեր են անցնում դեղիճանապարհը, տեսնո՞ւմ ես: Ինչպես յերեւում ե, Տիտը հոտն առել ե ու յեղները մասիցը ծախելու: Իսկ սահնակը՝ սարայի տակն ե: Կնիկը գուրս ե տալիս: Դուք դնացեք դեռ կոչետովի հետ վերջացրեք, իսկ յես կվազեմ վերեւ— Տուբյանակ: Բացի դրանից նա ուրիշ տեղ չունի տանելու: Ապա, մի, ձին քշելու մի ճիպոտ կտրիր ինձ համար:

Ուղիղ կալի միջով Նազուլնովը դուրս յեկավ ճանապարհը: Նրա հետեից բարձրացող սպիտակ փոշին բյուրեղային պայծառ ցոլքերով տկանց նստել ցանկապատերին ու քոլախոտերի ճյուղերին: Յեղան հետքերը և նրանց կողքին ձիու սմբակների հետքերը հանում եյին մինչև ճանապարհն ու այնտեղ անհայտանում: Նազուլնովը Տուբյանակի ուղղությամբ ոլացավ մոտ հարյուր ստժեն: Ճանապարհին ճյան կույտերի մեջ նա տեսավ նույն հետքերը՝ տեղ-տեղ ճյունախառն հողով և հանգստանալով, վոր ճիշտ ուղղություն երունել՝ առաջ անցավ դանդաղ ընթացքով: Բլրակի այն կողմը, Մյորտվի ձորակի մոտ ճյունի վրա նա նկա-

աեց մի յեղան թրիք և կանոդ առամկ: Թրիքը թարմ եր
և հենց նոր ծածկվել եր սառուցիտ բարակ շերտով:
Նագուլնովը կիսամուշտակի դրականում շոշանիեց նա-
զանի սառն կրթը: Չորակն իջակ դանդաղ քայլով:
Ասրա մի կես վերստ ևս առաջ գնալուց հետո միայն,
իրենից վոչ հեռու, մերկ կաղնիների հետեւ նկատեց
մի ձիալոր և մի զույդ յեզ: Զիավորը մտրակում եր
յեղներին ու թամբի մեջ այս ու այն կողմ թեքվում:
Նրա թիկունքի կողմից բարձրանում եր ծխախոտի
կապույտ ծուխը, ցրիլում ու ցնդում ողում:

— Հետ դարձրո՛ւ:

Տիտոկը կանդնեցրեց վրնջացող զամբիկը, հետ
նայեց, դուրս թքեց ծխախոտը և դանդաղորեն յեղ-
ների առաջն առնելով կամաց ձայն տվեց.

— Հո՛, հո՛... հո՛...

Նագուլնովը մոտեցակ: Տիտոկը դիմավորեց նը-
րան յերկար հայացքով:

— Դու եղ ո՞ւր եյիր գնում:

— Յեղները ծախել եյի ուղում, Մակար: Զեմ
ծածկում:— Տիտոկը խնչեց և շեկ, մոնղոլի պես
ցած կախված բեխերը թեվքով սրբեց: Նրանք կանդնել
եյին դեմ առ դեմ, առանց ձիերից իջնելու: Նրանց
ձիերը վնչոցով հոտուում եյին իրար: Նագուլնովի
քամահար դեմքը բորբոքված եր և դաժան: Տիտոկն
արտաքուստ հանգիստ եր ու խաղաղ:

— Հետ տուր յեղներն ու տուն քշիր,— հրամա-
յեց Նագուլնովը՝ ձին մի կողմ թեքելով:

Տիտոկը մի ըոսկ տատանալեց: Նա սանձը հավա-
քեց, նիրհող մարդու նման դլուխը կախեց, աչքերը

կիսախում արեց և այդ վիճակում—տանու կտորից
կարած իր դորշ կապայով, պատումած փափախին քա-
շած սրածայր կնդուղով նա նման եր նիրհող բազեյի :
«Յեթե նրա կապայի տակ վորմե քան կա, կոճակը
կարձակի» մտածեց Նագուլնովը, աչքը չհեռացնելով
անշարժ Տիտից : Բայց նա, կարծես ուշքի դալով,
թափ ավեց մտրակը : Յեղներն իրենց հետքերով շարժ-
վեցին դեպի հետ :

— Խլելո՞ւ յեք : Կուլակաթա՞մի եք անելու, — յեր՝
կար լուլթյունից հետո հարցրեց Տիտոկը՝ հոնքերին
քաշած կնդուղի տակից Նագուլնովի վրա փայլեցնե-
լով իր կապույտ աչքերը :

— Դրան ել հասար : Քշում եմ քեզ՝ վոնց վոր-
մի դարշելի գերու, — իրեն չզսպելով դոչեց Նագուլ-
նովը :

Տիտոկը կուչ յեկալ : Մինչև բլրակը հասնելը
նա լուռ եր : Հետո հարցրեց .

— Ինձ ո՞ւր եք քչելու :

— Կվոնդենք : Իսկ եղ ի՞նչ ե ցցված կապայիւ-
տակ :

— Տրաքիչ :— Տիտոկն աչքի տակով նայեց Նա-
գուլնովին և կապայի փեշը հետ քաշեց :

Սերթուկի գրականից սպիտակին տվեց փողը կրտ-
րած կարճ հրացանի կոթը :

— Տուր ինձ :— Նագուլնովը ձեռքը մեկնեց, բայց
Տիտոկը հանդարտ մի կողմ հրեց նրա ձեռքը :

— Զե՛, չեմ տա, — և ժպտաց, կախված բեխերի-
տակ բանալով ծխից սկացած ատամները և ժանտաքի-
սի նման սուր, բայց ուրախ աչքերում Նագուլնովին
նայելով՝ ալելացրեց .— Զե՛մ տա ; կարողոթյունու-

խլում եք, բարվական չի՝ վերջին տրաքիչս Ե՞ւ եք
ուղում: Կուլակը հրացան պիտի ունենա, վոր վոր
թերթերումն են դրում նրա մասին: Անզայման հրա-
ցանով պիտի լինի: Գուցե թե յես նրանո՞վ պիտի խմ
որվա հացը ճարեմ: Գյուղթղթակիցներն ինձ առանց
առիթի...—նա ծիծաղեց դլուխնո որորելով, ձեռքը
թամբի գլխից չկարելով, և Նազուշովը չպնդեց հրա-
ցանը հանձնելու վրա: «Ենտեղ, գյուղում յես քեզ
կկուրեմ», վճռեց նա:

— Յերեկ իմացա, — շարունակեց Տիտոկը, — վոր
դուք պատրաստվում եք դալ, կուլակներին թափ տա-
լու... Միայն թե՝ դլխի չընկա, վոր եսոր կշարժվե-
միք տեղից... թե չե՝ յես յեղներս գիշերը ճամփու
կդնեյի....

— Ումնի՞ց խմացար:

— Դե արի, արան բան ասա: Աշխարհը լիքն ե-
լուրերով: Հա-ա'-ա'... Յեկ, յերեկոյան կնոջո
հետ վորոշեցինք յեղները մի հավատարիմ մարդու
պահ տալ: Զենքն ել հետո վերցրի... ուզում եյի տա-
փաստանում մի տեղ թաղել, վորոշեսզի գոմը նայե-
մո չզտնեք, բայց ախոսացի... և ահա, դու վըա
հասար: Իսկ ծնններիս տակն այնպէս և խուսուտ
զալի՛ս... աշխուժորեն խոսում եր նա, հեղնանքով
աչքերը խաղացնելով և իր ձիու կրծքով հուպ տալով
նաղուլովի ձիուն:

— Դու հանաքներդ հետո կանես, Տիտոկ, իսկ
հիմի՛ քեզ հավաքիր:

— Հա՛, Հա՛, հենց իսկը խմ հանաք անելու ժա-
մանակն ե: Նվաճեցի ինձ համար յերջանիկ կյանք...

ՅԵՐ ՏԻՄՈՆԿԻ ճայնը խիստ խղվեց : Այդ վայրկյա-
նից նա սկսեց առաջ գնալ լուռ, դիմամբ հետ պա-
հելով ձին, ցանկանալով Մակարին գեթ կես ձիաչափ
առաջ գցել : Սակայն նա ել յերկյուղից հետ եր մը-
նում : Յեզներն արդեն հեռացել եյին նրանցից :

— Շարժվի՞ր, շարժվի՞ր, — ասաց Նազուլնովը,
շարված նայելով Տիտին և դրամնում սեղմելով նա-
զանի կոթը : Նա լսով եր ճանաչում Տիտոկին, այնպես
եր ճանաչում, ինչպես վոչ վոք : — Դե դու հետ մի
մնա : Գուցե թե կրակե՞լ ես ուզում : Միմնույն ե,
չի հաջողվի, «չես հասցնի :

— Ե՞ս, իսկ դու վախկոտ ես դարձել, — ժպտաց
Տիտոկը և ձիուն մտրամելով առաջ սլացավ :

Գ Լ Ո Ւ Խ VI

Անդրեյ Ռազմյոսնովին իր խմբակով յեկավ Ֆրու
Դամաստկովի մոտ, վորի ձախ ռունդը դեռ մասնուել
հասակում պատռվել եր, ուստի և նրան Ռվանի
(պատռված) եյին կոչում։ Նա իր ընտանիքով նստած
ճաշում էր։

— Մստեցե՞ք, նստեցե՞ք, թանկաղին իշխանավորու
ներ, — վստահորեն ասաց Ֆրուի տղան՝ վայելչակաղմ
գեղեցիկ Տիմոֆեյը։

— Նստելու ժամանակ չունենք։ — Անդրեյը թղթա-
սկանակից մի թերթ թուղթ հանեց։ — Զքարլորական
ժողովը, քաղաքացի Ֆրու Դամաստկով, վորոշել և քեզ
վտարել տանից և բռնադրավել քո ամբողջ ունեցված-
քըն ու անասունները։ Ենակես վոր դու ճաշդ պրծի
ու դուրս յեկ տանից։ Մենք հիմի կցուցակագրենք
քո դույքը։

— Ե՞ղ վոչ բան ե, — զգալը դցելով վեր կացավ
Ֆրուի։

— Քեզ վոչնչացնում ենք, վորակես կուլակային
դասակարգ, — բացատրեց նրան Դյոմկա Ռւշակովը։

Անդրեյը նստեց սեղանի ծայրին, հանեց թուղթ
ու մատիտ։

Ֆրուի պատռված քիթը կապտեց, գլուխը ցընց-
վեց։ Նա ինչպես կանգնել եր, այնպես ել ընկապ հա-

տակին, դժվարությամբ շարժելով սեացած ուռած լեզուն:

— Թալանեցե՛ք, մորթեցե՛ք:

— Հայրիկ ջա՞ն, վեր կիաց, ի սեպ քրիստոսի՛, — լաւագին ճշաց աղջիկը, բոնելով հոր թերի տակից:

Ֆլորն ուղղվեց, վեր կացավ, սղառկեց յերկար նստարանին և կարծես անստարբեր լսեց, թե ինչպես Դյոմկա Ուշակովն ու ամաչկոտ Միխայիլ Իղնատյոնովը թելադրում են Ուաղմյոտնովին . . .

— Յերկաթե մահճակալ, սպիտակ դնդերով, փետուրե վերմակ, յերեք բարձ, ելի յերկու փայտե մահճակալ . . .

— Տասներկու աթոռ, մեկ յերկար աթոռ՝ կըռնակով :

— Մնդովի բանալին տուր, տանտիրուհի՛ :

— Զե՛մ տա: Զարդեցե՛ք, թե վոր իրավունք ունեք:

— Զարդելու իրավունք ունե՞նք, — աշխուժորեն հարցրեց Դեմիդ Մոլչունը, վորը հայտնի յեր նրանով, վոր խոսում եր միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, իսկ մնացած ժամանակ լուռ աշխատում, լուռ ծխում ել տոն որերին մոտղոցում հավաքված կաղակների հետ, լուռ նատում եր ժողովներում և սովորաբար հաղվաղեալ եր միայն պատասխանում խոսակցի հարցերին, այն ել մեղավորի սկսածպալով:

Դրա համար ել Անդրեյը, իր դվախ վերև լսելով Դեմիդի բամբ ձայնը, գլուխը վեր բարձրացրեց.

— Իրավունք, — հարցրեց նա նայելով Մոլչունի

դեմքին, կարծես առաջին անգամը լիներ նրան տեսնելիս.

— Իրավունք կա' :

Դեմիդը վոտքերը ծուռ փոխելով և իր մաշված թրջված վոտնամաններով հատակը կեղտոտելով՝ մըտավ սենյակ : Նա ժպտալով մոտեցավ սնդուկին և յերբ անցնում եր թարեքի մոտով, նրա ծանր քայլերից թափեքը շարժվեց — վրայի ամանեղենն աղեկը տուր զրնգաց : Նա պարզեց և սնդուկից կախված կողպեքը պատեցրեց իր մատների մեջ : Մի րոպէ անց՝ կողպեքը կոտրած վզով ընկած եր սնդուկի վրա, իսկ Արկաչկա Մենոկը բացահայտ հիացմունքով Մուլչունին նայելով՝ բացականչեց .

— Ա՛յ թե ում հետ արժեր ուժը փոխել :

Անդրեյը չեր հասցնում ցուցակագրել : Սենյակից ու դահլիճից Դյոմեկա Ռւշակովը, Արկաչկան ու Վասիլիսա մորաքույրը՝ Անդրեյի խմբակի միակ կինը իրար հերթ չտալով կանչում եյին :

— Կնկա մուշտակ, Դոնի :

— Քուրք :

— Յերեք զույգ նոր կոչիկ՝ կրկնակոչիկներով :

— Յերեք կտոր մահուդ :

— Անդրեյ Ռազմյոտնով, այ տղա, եստեղ ենքան ապրանք կա, վոր սայլով ել չի կրվի … ել չիթ, ել լսատիկ, ել ի՞նչ ասես վոր չկա …

Տանը յեղած գույքի ցուցակագրումն ավարտվում եր : Յերբ Ռվանիի տան իրերն եյին ցուցակագրում, բակում յերեսուն հոգու չափ բազմություն եր հավաքվել : Գլխավորապես հարեւան կանայք եյին .

կաղակներ քիչ կային : Իմանալով , վոր ֆրոլին տուա-
ջարկել են հեռանալ իր տանից , խրճիթ լցված բաղ-
մության մեջ շշուկ ու կամացուկ խոսակցություն
ոկալեց :

—Ես ել ի՞նչ բան ե . աշխատեց , աշխատեց , իսկ
հիմի՝ միանդամից չո՛ր քարին նստեց :

—Տխուր յերդ ե . . .

—Եղաղես ել պետք ե նրան , ի՞նչ ե , մե՞ղքդ ե
դալիս , հա՞ :

—Ամեն մեկի համար իր ցավը ծանր ե :

—Գուցե թե դուր չի դալիս , հա՞ : Ապա են ինչ-
պես ինքը հին ռեժիմի ժամանակ Տրիֆոնովի ունեց-
վածքը խլեց պարտքի դիմաց : Ես որը չե՞ր մտածում :

—Ինչ կցանես՝ են ել կհնձես . . .

—Եդ ճղված սատանային եղաղես ել հարկավո՛ր
ե : Պոչի տակ կըակ են ածել :

—Մեղք ե , կնանիք , ուրիշի ցավի վրա ծիծա-
ղելը : Գուցե թե եդ բանը քու դուանն ել ե կանդնած :

—Վո՞ր սատանան կըերի . յես դառ ու դատարկ
եմ , եդ որը չեմ տեսնի :

—Ամառը վոր հնձիչը յերկու որով տվեց , ինձա-
նից , իբր թե վորագես բարեկամից , մի ամբողջ տա-
սանոց առավ : Ապա եդ խի՞զ ե :

—Տվե՛ք շտեմարանի բանալիները , — հրամայեց
Անդրեյը :

Ֆրոլը , վոր այդ քոսեցին նման եր ածխացած-
կոճղի , թափ տվեց ձեռքը :

— Բանալին չկա :

— Գնա , գուռուը կոտրի՛ր , — Հրամայեց Անդրեյը
Դեմիտրին :

Ի՞սա ուղղվեց դեպի շտեմարանը , ճանապարհին
սայլից դուրս քաշելով յերկաթե ցիցը :

Կշռաքարի նման հինգ Փնտանոց կողմեքը դժվարությամբ կոտրվեց կացնով :

— Դու դուռը մի ջարդիր , հիմա եղ մեր ամբարն
է , սրտացալ վարդիր : Կամաց , կամաց , — տնքացող
Մոլչունին խորհուրդ եր տալիս Դյոմիան :

Սկսեցին հացը չափել :

— Գուցե հենց իսկույն տանենք ցանելո՞ւ : Այ ,
հստեղ խախալ*) ել կա , — առաջարկեց ուրախությունից
շշմած իդնատյոնով :

Նրա վրա ծիծաղեցին և դեռ յերկար ժամանակ
կատակներ եյին անում խոշորահատ ցորենը լցնելով
չափի մեջ :

— Այստեղից դեռ հացամթերման ել կարելի յե
մի յերկու հարյուր փութ տալ , — մինչև ծնկները ցո-
րենի մեջ խրված քայլելով ասաց Դյոմիա Ուշակովը :
Նա թիակով ցորենը դցում եր դեպի շտեմարանի
դռնակը , բռում եր ցորենը և մատնելի արանքով
ցած թափում :

— Ի՞նչ ցորեն ե... հատը մի դնդակ կքաշի :

— Ի՞նչ խոսք , վոսկի ցորեն ե , միայն թե , ինչ-
պես յերկում ե , հորած ե յեղել , մի քիչ խոնավա-
ցել ե :

Արկաշկա Մենոկն ու խմբակից ելի մի յերխուա-

*) Խոշոր ծակոտիներով մաղ , վորով ցորեն են մաղում :

սարգ դոմումն եյին տիրություն անում : Արկաշկան
իր չեկ մորուքը շոյելով ցուց եր տալիս յեղան թրի-
քը, վորի մեջ յերեսում եյին յեղիպտացորենի չմարս-
ված հատիկները :

—Ել ինչպես չեն քաշի լուծը . մաքուր հաց են ու-
տում ,իսկ մեզ մոտ՝ ընկերությունում խոտն ել ենք
վախիլիսելով տալիս :

Շտեմարանից լսվում եյին աշխույժ ձայներ ։
Քրքիջ և փշում եր հացի բուրսովետ փոշին :

Գ Լ Ո Ւ Խ VII

Նազուլնովը Տիտոկին դյուղ բերեց, յերբ արդեն
Ահսոր եր: Մինչ այդ՝ Դամիդովը ցուցակագրել եր
յերկու կուլակի տնտեսություն, տերերին վտարել
Եր, առաջ վերաբարձել եր Տիտոկի տունը և Լյուբիշ-
կինի հետ չափել ու կշռել աթարանոցում պտած հա-
ցը: Շչուկար սլամը վոչխարմերի իներած խոտի մնա-
ցորդը դրեց մառերի մեջ և մոտեցող Տիտոկին նկատե-
լով՝ արագ հեռացավ դոմից:

Տիտոկը բակով անցնում եր գլխաբաց, կապայի
կոճակիները բաց: Նա ուղեց գնալ դեալի կալը, սա-
կայն Նազուլնովը ձայն տվեց:

— Հետ դարձիր խկույն, թե չե ամբարում կը-
փակեմ քեզ:

Նա դայրացած, վրդովիմած եր, և նրա այտը սո-
վորականից ավելի ուժեղ եր ցնցվում. նա չեր նկա-
տել, թե Տիտոկը յերբ և վորտեղ եր դցել հրացանը:
Բայց յերբ մոտեցան կալին, Նազուլնովը հարցրեց.

— Կտա՞ս հրացանը, թե չե մեկ է կիլենք:

— Թո՞ղ հանաքներդ, — Տիտոկը ժպտաց, — աչ-
քիդ ե յերեացել...

Հրացանը չկար նաև նրա կասկայի տակ: Հետ գը-
նալ ու վորտեղն անմիտ կլիներ. միենույն ե, խոր
ճյունի ու քոլախոտերի մեջ չեր դանվի: Նազուլնովն

ինքն իր վրա բարկանալով սպասմեց այդ մասին Դավիթովին և նա, վոր շարունակ հետաքրքրությամբ Տիտովին եր նայում, մոտեցավ նրան:

— Դու, քաղաքացի, զե՞նքդ հանձնիր: Այդպես քեզ համար ավելի լավ կլինի:

— Ցես զե՞նք չեմ ունեցել. Նազուկնուն ինձնից վրեժ առնել և ուզում. — և Տիտովը ժպտաց, փայլեցնելով իր ժանոտաքիսի աչքերը:

— Դե, ի՞նչ արած. ատիպլած ենք քեզ ձերբակալել և շրջան ուղարկել:

— Ի՞՞նձ:

— Այօ՛, քեզ: Իսկ դու ի՞նչ ելիր կարծում: Դու հացը թագցնում ես և պատրաստովում ես...

— Ի՞՞նձ... — կարծեա ցատկելու համար կծկվելով ու շվոցով շնչելով կրկնեց Տիտովը:

Վայրկյանապես չքացան նրա առերես ուրախությունն ու անհոգությունը, նրա զսպվածությունը: Դավիթովի խոսքերը խթան յեղան, վոր պոռթկամինչ այդ թագցրած նրա զայրուցին ու կատաղությունը: Նա ցատկեց դեպի հետ քաշվող Դավիթովը, սայթաքելով ընկառի բակի մեջ տեղը գցած լծան վրա և կռանալով, հանկարծ դուրս քաշեց յերկաթե սամին: Նազուկնուն ու Լյուքիչկինը նետվեցին դեպի Դավիթովը: Եչուկար պարագ վորձեց դուրս վաղերակից, բայց հակառակի պես նրա վոտքերը խճճվեցին իր մուշտակի չափից ավելի յերկար վեհերի մեջ և վայր ընկառի խելակորույս դուռցով:

— Հասեք, հե՞յ... սպասում ե՞ն...

Տիտովը, վորի ձախ ձեռքը բռնել եր Դավիթովը, կարողացավ աջով մի հարված հասցնել նրա գլխին:

Դավիդովը տարտանվեց, բայց չընկառի: Նրա բացված վերքից արյունն առաստղեն դուրս հորդեց աչքերին ու կուրացրեց: Դավիդովը Տիտոնկի ձեռքը բաց թողեց ու յերերալով ձեռքը մատեցրեց աչքերին: Յերկրորդ հարվածը նրան դլորեց ձյունի վրա: Այդ վայրկյանին վրա հասավ Լյուբիշկինը և բռնեց Տիտոնկի մեջքից: Սակայն, չնայած իր ուժին, չկարողացավ պահել նրան: Լյուբիշկինի ձեռքից դուրս պլծնելով Տիտոնկը նետվեց դեպի կալը: Դարսկասի մոտ նրան հասավ Նադունովը և նազանի կոթով հարվածեց նրա տափակ, մազախիտ ծոճրակին:

Խառնաշփոթությունն ավելի ուժեղացրեց Տիտոնկի կինը: Նկատելով, վոր Լյուբիշկինն ու Նադունովն իր ամուսնուն ծեծում են, նա վազեց դեպի շրեմարանը և շղթայից արձակեց շանը: Գամփուը յերկաթե վզնոցը դնդացնելով մի անգամ իր շուրջը նայեց և դրավվելով Շչուկար պապի սարսափահար ճիշերով ու ձյունի մեջ թրպտացող նրա մուշտակով, հարձակվեց ծերումու վրա: Սպիտակ մուշտակից թռուն փոշախառըն կտորներն ու վոչխարի մորթու ծյշնները: Շչուկար պապը վեր թռամ և շանը կատաղի աքացիներ տալով՝ փորձեց ցանկալատից մի ցից դուրս քաշել: Նա մոտ յերկու սաժեն քաշ տվեց կատաղաբար իր ոճիքից կպած դամփոխին, որովվելով նրա զորեղ ցընցուամներից: Վերջապես հուսակտուր ջանքով նրան հաջողվեց մի ցից դուրս քաշել: Գամփուը կլանչոցով հետ ցատկեց, թեև արդեն կարողացել եր ծվեն-ծվեն ալապի քուրքը:

— Տուր ատրճանակը, Մակար, — աչքերը չը-

ուած, խոպոտ ձայնով կանչեց աշխուժացած Շջուկար պատը: — Տուր, քամի տիրոտս վառվուամ ե: Յես նրան իր կնկա հետ շանսատակի կանեմ:

Մինչ այդ, Դավիթովին ողնեցին տուն մտնել, խուզեցին վերքի մոտի մաղերը, վորից դեռ արյուն եր ծորուամ: Բակուամ Լյուբիշկինը յերկծի սահնակին լծեց Տիտոկի ճիերը, իսկ Նագուլովը սեղանի մոտ նստելով շուաղ դրեց.

«Պետքադլարչության շրջանային լիազոր ընչեր Զախարենկոյին: Զեր տրամադրության տակ եմ ուղարկուամ կուլակ Տիտ Կոնստանտինովիչ Բորոդինին, վորակես գորշելի հակահեղափակուական ելեսենտի: Այդ կուլակի դույքը ցուցակագրելիս նա պաշտոնապես հարձակուամ գործեց մեզ մոտ՝ ուղարկված քսանհինդ հաղարական ընկեր Դավիթովի վրա և վրա հասցեց յերկաթե սամիով յերկու հարսիած տալ նրա գլխին:

Բացի այդ, հայտնուամ եմ, վոր Բորոդինի մոտ յես տեսել եմ ոռուսական մի հրացան, վողը կտրած, վորը յես չկարողացա խլել, այն պատճառով, վոր գտնիուամ ելինք բլուրի վրա և վախեցա թե արյունահեղություն կլինի: Նա հրացանն աննկատելի դցեց ձյունի մեջ: Գտնելու դեսքուամ կուղարկենք ճեղ, վորպես իրեղեն ասլացուց:

Համեր(բ)Կ Գրեմյաչիի բջջի քարտուղար և վարմիր շքանշանակիր Մ: Նագուլով»:

Տիտոկին սահնակ նստեցըին: Նա խմելու ջուր ուղեց և խնդրեց իր մոտ կանչել Նագուլովին: Նագուլովը սանդուխքների գլխից ձայն տվից.

— Ի՞նչ ես ուղուամ:

— Մակար, հիշե՛ր, — դուռաց Տիտը, հարթա-

Ճի՞ նման ցնցելով կասլէպիլած ձեռքերը, — հիշի՛ր,
պենք զիւռ իրար կպատահենք: Դու ինձ արորեցիր,
իսկ են ժամանակ՝ յես դիտեմ: Միւնույն եւ—կապա-
նե՛մ:

— Պնա՛, հակա՛: — Նազուլնովը ձեռքը թափ ար-
պեց:

Զիւռն աշխույժ դուրս թռան բակլից:

Գ Լ / Ո Ւ Խ Խ III

Դավիդովը, Ռազմյոտնովն ու Նաղունովը դրա-
բոց յեկան ժողովի այն ժամանակ, յերբ այնտեղ ար-
դեմ լեփլեցուն եր ժողովութիւն։ Շենքում բոլորը տե-
ղավորվել չեցին կարող։ Կաղակները, աղջիկներն ու
կանայք խիստ կանգնել եյին միջանցքում, սանդուխքի-
գլխին։ Կրումների վրա բացած դռներից դուրս եր հոր-
դում ծխախտան գոլորշին։

Նաղունովն առաջինն անցամ միջանցքով։ Նրա
վլուքերի տակ ճրթճրթում եյին արևածաղկի սերմի
կեղեները։ Կաղակները հետ-հետ քաշվելով՝ լուռ նա-
յուամ եյին նրան։ Դավիդովին ահանելով՝ վախացին։
Յերեսաթափ տախտակից շինած բեմում դրված եյին
աշակերտական յերկու նատարան։ Դավիդովն ու Նա-
ղունովը նստեցին։ Ռազմյոտնովը ժողովը բաց ա-
րեց։ Նախադահությունը ընտրեցին առանց ձգձելու։

—Կորոնտեսության մասին խոսքը տրվում ե կու-
սակցության շրջկոմի լիազոր ընկեր Դավիդովին։
Ռազմյոտնովի ձայնը լոեց և շեշտակի կտրելով լոեց-
րեց նաև զրույցի խուլ ձայնը։

Դավիդովը վեր կացալ, գլխի վաթաթանն ուղ-
ղեց։ Նա կես ժամի չափ խոսեց, վերջում ձայնն ոկր-
սեց խղղալ։ Ժողովը լուռ եր։ Տոթը գնալով ավելի
յեր սաստկանում։ Յերկու լամպերի աղոտ լուսակ տակ

Դավիթովը տեսնում եր միայն առաջին շարքերում
նստածների քրտնաթոր դեմքերը, վորից այն կողմն
ամեն ինչ թաղված եր կիսախալարում։ Նրան վոչ մի
անդամ չընդհատեցին, սակայն յերբ խոսքը վերջաց-
րեց և ձեռքը մեկնեց ջրի բաժակին, հեղեղի պես տե-
ղացին հարցերը։

— Ամե՞ն բան պիտի համայնացվի։

— Իսկ անե՞րը։

— Եդ կոլտնտեսությունը ժամանակավո՞ր ե, թէ՞
մշտական։

— Մենատնտեսներին ի՞նչ կանեն։

— Նրանց հողը չե՞ն խլի։

— Ուտեն ե՞լ միասին պիտի լինի։

Դասինդովը յերկար ու հասկանալի պատասխանում
էր հարցերին։ Յերբ խնդիրը վերաբերվում եր դյու-
զատնտեսության բարդ հարցերին, նրան ողնում ելին
Նագուշնովն ու Անդրեյը։ Կարդացվեց որինակելի կա-
նոնադրությունը, սակայն, չնայած դրան, հարցերը
չելին դադարում։ Վերջապես միջին շարքերից բարձ-
րացալ մի կաղակ, աղվեալի մորթուց կարած վրա-
փախով և կոճակները բոլորովին արձակած աև կիսա-
մուշտակով։ Նա ձայն խնդրեց։ Կախովի լումալի լույ-
սը շեղակի ընկել եր նրա փափախին, վորի շեկ մազե-
րից կարծես ծուխ եր բարձրանում։

— Յես միջակ հողագործ եմ և յես, քաղաքացի-
ներ, այսպես եմ ասում, վոր, խոսք չկա, ի հարկե,
կոլեկտիվը լավ բան է, բայց, հարկավոր ե լավ մտա-
ծել։ Ենպես չի կարելի, վոր՝ շլափ-չլուփ և ահա՝
լավաշը պատրաստ ե — ա՛ռ վե՛ր։ Յես կարծում եմ՝
մարդկանց եսպես պիտի կոլեկտիվը քաշել — նրանց,

ովքեր լավ աշխատող են և անասումներ ունեն՝ մի կոլեկտիվում հավաքել, չըավորներին՝ ուրիշ կոլեկտիվում, հարուստներին ել՝ սպառզ և, առանձին, իսկ ամենալողերին՝ քշել, վորակեսղի Պետքաղվարչությունը նրանց աշխատել սովորեցնի։ Մարդկանց բոլորին մի ջվալի մեջ լցնելը քիչ և սատանան ել դըրանից գլուխ չի հանի։

Ժողովն արձագանքեց զսպրած ծիծաղով։

Այլվեաի մորթուց կարած փայտախի տերը թաշկինակով ճակատն ու շրթունքները սրբեց և շարունակեց։

— Մարդկանց ենարիս արետք ե ջոկել, վոնց վորլավ դյուղացին՝ իր յեղներին։ Զե՞ք խմանում, վորդյուղացին հավասար չափի ու հավասար ուժի յեղներ ե ջոկում։ Իսկ ասդա մի տարրեր ուժի յեղներ լըծիր, ի՞նչ կստացվի։ Վորն ուժեղ ե՝ կզոռի թույլին և նա հետ կմնա, իսկ դրանից վերջիվերջո ուժեղնել հետ կմնա։ Եղակիսի յեղներով աշխատել կլինի։ Ընկերն առում ե ամբողջ դյուղով մի կոլեկտիվ մըսնենք, բացի կուլակներից ։ ի՞նչ կստացվի դրանից ամեն որ կռիվ, տուր ու դմիոց ։

Լյուբիշինը վեր կացավ, սրանեղած ցնցեց իր յերկար, սև բեխերը, շուռ յեկան գեալի խոսողը.

— Դո՛ւ, կուզմա, մեկ-մեկ եղ ի՞նչ լավ ես յերդում։ Կնիկ լինեյիր, մարդ կուզեր հմաց հայտյանքեղ լսել ։

Բունկեց մի ընդհանուր ծիծաղ։

— Զենը քոնն ե, յերդդ՝ ուրիշինը։ Յերեկի դուեղ սովորել ես, յերբ Ֆրու Ռվանիի մեքենայական ընկերության մեջ եյիր։ Զեր շարժիչ մեքենան դեռ

անցյալ տարի խլեցին։ Իսկ հիմի մենք քո եղ Ֆրուիթ
թողն ել քառուն տվինք։ Դուք մըրուի մեքենայի շուրջն
եյթ հավաքվել ու կուեկտիվի նման մի բան կազմել,
միայն թե կուլակային կոլեկտիվ։ Հո չե՞ս մոռացել,
թե կալսելու համար ինչքան եյթ սլոկում։ Ութ փը-
թից մեկը չե՞ր։ Գուցե թե դու հենց հիմի ե՞լ ես եղ-
պես ուղում—թեքվել հարուստների կողմը...

Այնպիսի աղմուկ բարձրացավ, վոր Ռազմյոտնո-
վին հազլով հաջողվեց կարգը վերականգնել։ Յեկ դեռ
յերկար ժամանակ կարկուտի նման տեղում եյին կա-
տաղի բացականչությունները.

— Հենց եղ արտելով եք դիվել դուք...

— Վոջիլները տրամակտորով տրորել չի լինի...

— Քո բերանում կուլակներն են լեզու դրել...

— Քո դլխին պապոք պիտի կոտրել...

Հետո խոսք խնդրեց սակարգուժ միջակ Նիկոլայ
Լյուչնյան։

— Դու առանց վիճարանությունների սկսիր։
Հարցը պարզ ե, — նախաղղուշացրեց նրան Նազուլնո-
վը։

— Եղ վո՞նց թե։ Բա դուցե յես հենց հակառակն
եմ ուղում։ Թե՞ յես չեմ կարող քո քեֆին հակառակ
խոսել։ Յես եսպես եմ ասում։ Վոլեկտիվ անտեսու-
թյունը կամավոր բան ե— ուղում ես՝ մտիր, չես ու-
ղում՝ մի կողմը քաշվիր ու նայիր։ Դե մենք ել ու-
ղում ենք մի կողմը քաշվել ու նայել։

— Այլ ո՞վ ե «մենքը», — հարցրեց Դավիդովը։

— Մենք՝ հողագործներս։

— Դու, պապիկ, քո մասին խոսիր։ Ամեն մեկն
եր լեզուն ունի, կխոսի։

— Իմ կողմից ել կարող եմ : Այսինքն՝ Հենց իմ
կողմից ել ասում եմ : Յես ուզում եմ տեսնել, թե եղ
կոլեկտիվում ինչ տեսակ կյանք կլինի : Թե լավ կլինի՝
կդրվեմ, չե՞ չեմ խցկվի : Հիմար ձուկն ե, վոր աչքը
փակ՝ թոռի մեջ և ընկնում :

— Ճի՞շտ ե :

— Համ չե՞նք մանի :

— Թող ուրիշները մորձեն եղ նոր կյանքը :

— Զայնը տրվում և Ախմատելինին : Խոսկ'ր :

— Յես, աիրելիներս, իմ մասին կասեմ : Այ, յես
ու իմ հարազատ քեղքայրս՝ Պյոտրը միտոին եցինք
ապրում : Բայց՝ դլուխ չեկավ : Մեկ՝ կնանոց մեջ եր
կոխիլ ընկնում, իրար մաղ եյին քաշում, մեկ՝ յես ու
Պյոտրը յոլա չեցինք գնում : Խակ եստեղ՝ ուզում են
ամբողջ գյուղը մի տեղ հավաքել : Ախր ի՞նչ շփոթ
կստացմի : Հենց վոր դաշտ դուրս գանք վար անելու —
կոխիլ կընկնի մեր մեջ . Խմանն իմ յեզների հոգին կը
հանի, յես նբա ձիերին լավ չեմ նայի... Բանն ենտեղ
կհասնի, վոր գյուղում պետք ե միշտ միլիցիա պա-
հես : Մարդկանց ձենը կտրել չի լինի : Մեկը շատ կաշ-
խատի, մյուսը՝ քիչ : Մեր աշխատանքն ուրիշ բան է .
սա դորձարանի դազգյահի վրայի աշխատանք չի :
Ենտեղ ութի ժամ աշխատեցիր՝ ձեռնախայտ վերց-
րու, գնա...

— Դու խելի դորձարանում յեղեղ ես :

— Յես, ընկեր Դավիդով, չեմ յեղեղ, բայց դի-
տեմ :

— Վոչինչ չդիտես դու բանվորների մասին : Յեկ
յեթե չես յեղեղ ու չես տեսել, ել ի՞նչ ես լեզվուշ ա-

նում : Զեռնափայտով բանվորների մասին խոսքերը կուլակային խոսքեր են :

— Զայնը տրվում և Կոնդըատ Մայդաննիկովին : Խոսի՛ր :

Հետեւի շարքերից դանդաղորեն բեմին մոտեցավ մոխրագույն կարպահապատակ մի կարպատ : Նրա բուդյոնովիկա դլխարկի դումաթափակած դադաթը յերեաց բազմաթիվ փափախների, յեռականջ դլխարկների և կանանց խայտաբղետ շալերի ու լաչակների մեջ : Նա մոտեցավ բեմին, մեջքը դարձրեց դեսլի նառխաղահությունը, առանց շտապելու ձեռքը կոխեց անդրավարտիկի դրագանը :

— Ճառդ կարդալո՞ւ յես, — ժողոտավով հարցրեց Դյումկա Ռւշակովը :

— Գլխարկդ վերցրո՞ւ :

— Բերանացի ասա՛ :

— Նա իր ամբողջ կյանքը թղթի վրա յե դրում :

— Հա՛, հա՛, հա՛, — դրա՜դե՛տ ե...

Մայդաննիկովը հանեց հնամաշ ծոցատերը, ըշտապ մկնեց թերթել դրուտած թերթիկները :

— Դուք հլա միք ծիծաղի, դուցե թե լաց ել լինեք, — խոսեց նա վրդովիլած : — Այո, դրի յեմ առնում, թե ինչով եմ ապրում : Յեվ հենց հիմի կկարդամ ձեղ : Եստեղ դանազան խոսքեր յեղան և վոչ մեկը խելքը գլխին չեր : Կյանքից քիչ բան եք հասկանում...

Դավիդովը ուշադրությունը լարեց : Առաջին շարքերում ժպիտներ յերեացին և ամբողջ դահլիճում ձայներ լսվեցին :

— Իմ տնտեսությունը միջակ ե, — առանց շփոթ-

վելու, վստահորեն սկսեց Մայդաննիկովը :—Անցյալ
տարի հինգ դեսյատին ցանք արի : Ունեմ, ինչպես
բոլորդ դժուեք, մի դույգ յեղ, մի ձի, մի կով, կին
և յերեք յերեխա : Աշխատող ձեռքերս մենակ, ա'յ,
սրանք են : Իմ ցանքից ատացա իննուուն փութ ցորեն,
տասնութ' հաճար և քսաներեք փութ վարակ : Ըն-
տանիքիս հարկավոր ե վաթսուն փութ, տաս փութ'
թոչուններին, խակ վարսակը մնում է ձիուն : Ի՞նչ
կարող եմ ծախել պետությանը : Յերեատւն ութ փութ:
Միջինը դցիր մի մանեթ տաս կոպեկով, կստացվի
քառասատւն մեկ ռուբլի մաքուր յեկամուտ : Դե, ասենք
մի քանի հատ ել թոչուն կծախեմ . բաղերը կտանեմ
ստանիցա և մի տասնհինգ ռուբլի ել այդտեղից կտա-
նամ :—Յեկ թախծալից աչքերը դարձնելով բազմու-
թյանը, ձախնը բարձրացնելով շարունակեց :—Կարո՞ղ
եմ յես այդքան փողով և վոտնաման առնել, և հա-
գուստ, և նալթ, և լուցկի, և սալոն : Խսկ ձին պայ-
տելը փող արժի՞ : Դեռ լսով ե, թե բերքը հաջող լի-
նի : Խմկ յեթե բերքն ել պատ յեղա՞վ : Ի՞նչ կլինի իմ
որը : Փթոռէկի : Ել դուք ի՞նչ իրավունք ունեք ինձ կո-
լեկտիվից հետ պահելու, խրտնեցնելու : Միթե՞ ենտեղ
իմ դրությունը արանից վատ կլինի : Դուքս եք տալիս
գլխներիցդ : Ախր զուք, բոլոր միջակներդ ել իմ ո-
րին եք : Ել ինչու յեք հակառակում և պարզ ասենք՝
ձեզ ել խաբում, ուրիշներին ել :

— Եղակեա, խայտառակիր դրանց, կոնդրա՛տ,—
դոչեց լյուբիշկինը :

— Յեկ կխայտառակեմ . թող խելքի գան : Դուք
կուեկտիվին նրա համար եք դեմ, վոր ձեր կոմից ու

ձեր ծտի բուն տանից դեմը վոչինչ չեք տեսնում։ Թե—
կուզ քոստատ լինի, բայց իմը լինի — ևսպես եք մտա—
ծում։ Զեղ Համկոմկուսը նոր կյանքի յե կանչում, իսկ
դուք, վոնց վոր քոռ հորթ — վորին հրում են դեպի
կովի կուրծքը, իսկ նա՝ վտաները դեմ եւ ավել ու գլու—
խըն ե թափահարում։ Իսկ հորթը, վոր մորը չծծի,
չի ել ասլրի։ Ահա բոլորը։ Յես հենց հիմի կնատեմ
ու դիմում կդրեմ, վոր կոլեկտիվ մտնեմ և ուրիշնե—
րին ել կոչ եմ անուան նույնն անել։ Իսկ ով չի ուղում,
թող ուրիշներին ել չխանդարի։

Ուաղմյուսնովը վեր կացավ։

— Հարցը պարող ե, քաղաքացիներ։ Լամպերն մլ—
մարում են, ժամանակն ել ուշ ե։ Ով կոլեկտիվի կող—
մըն ե, ձեռք բարձրացնի։ Միայն տան դվարավորները
կարող են ձայն տալ։

Ներկա յեղող յերկու հարյուր տասնյոթ հոգուց
ձեռք բարձրացրին միայն վաթսուն յոթը։

— Ո՞վ ե դեմ։

Վոչ մի ձեռք չբարձրացավ։

— Զե՞ք ուղում կոլեկտիվում դրվել, — հարցրեց
Դավիդովը։ — Նշանակում ե Մայդաննիկովը ճի՞շտ—
չեր ասում։

— Զենք ու-ու-դու-ո՞ւմ, — լսվեց մի կնոջ ձայն։

— Քո Մայդաննիկովը մեղ որինակ չե՛։

— Մեր հայրերն ու պապերն ապրել են...

— Դու մեղ մի՛ զոռի։

Յեկ յերբ աղմուկն արդեն դադարել եր, վերջին
շարքերից, ծխախոտի բոցկլտուամներից, փայլող խա—

վարից լսվեց ինչ վոր մեկի չաբախնդությամբ լի ու-
շացած ձայնը.

— Մեզ հիմարի տեղ մի՛ դնի : Տիտոկը մի ան-
գամ քո արյունն առել ե, նորից կարելի յե...

Կարծես մտրակով հարվածեցին Դավիդովին : Քար
լոռության մեջ նա մի բոսկ կանոլ առավ լուս ու դու-
նատ, բերանը կիսաբաց, ապա խոսկոտ ձայնով դոչեց .

— Դո՞ւ, թշնամու ձայն, ինձնից քիչ արյուն են
առել : Յես դեռ այնքան կապրեմ, մինչև վոր բոլոր
քեզ նմանեցին կթաղենք : Իսկ յեթե հարկավոր լինի,
յես կուսակցության համար... յես իմ կուսակցության
համար, բանվորների գործի համար, իմ ամբողջ ա-
րյունը կտամ : Լսո՞ւմ ես, դո՞ւ, կուլակային ճիվաղ,
ամբողջը մինչև վերջին կաթելը :

— Եղ ո՞վ եր աղմկողը, — վեր թռչելով կանչեց
Նաղուլնովը :

Խաղմյոտնովը բեմից ցած ցատկեց : Հետեւի շար-
քերում նստարանը ճոճուաց, քսան հողու չափ մի ամ-
բոխ աղմուկով դուրս յեկամ միջանցք : Սկսեցին
բարձրանար նաև միջին շարքերից : Զբնդոցով ջարդվեց
լուսամուտի ապակին, ինչ-վոր մեկը սղմել եր նրա
շրջանակը : Բացված անցքից ներս խուժեց զով քամին :

— Եղ անպայման Տիմոշկան եր աղմկողը, Ֆրու
Ռվաննու Տիմոշկան...

— Վանդե՛լ նրանց գյուղից :

— Զե՛, Ալիմկան կլիներ : Եստեղ Տուբյանակից
ել կաղակներ կան :

— Խառնակիչներ, ցեցեր են դրանք, քշե՛լ...

Կես գիշերը վաղուց անց եր, վոր ժողովը վերջա-
ցավ : Խոսեցին և՛ կոլեկտիվ անտեսության ոգտին, և՛

դեմ, մինչև վոր ձայնելը խզվեցին, աչքնելը մռայլ-
վեց: Տեղ-տեղ, նույնիսկ բեմի մոտ հակառակորդնե-
րըն իրար ելին մոտենում և իրար ոձիքից բռնած՝
ապացուցում իրենց իրավացի լինելը: Կոնդրատ Մայ-
դաննիկովի շատիկը մինչև պորտը պատռեց իր հա-
րազար սանտէհայրն ու դրկեցը: Քիչ մնաց բանը,
բռնցքակովի հասներ:

Գ Լ Ո Ւ Խ

Կոնդրատ Մայդաննիկովը ժողովից սուսն եր գը-
նում : Նրա գլխարթերևում ամմար կրակի նման առ-
կայծում եյին ասողերը : Այնքան խաղաղ եր , վոր
հեռվից լավում եյին ասոնամանիքից ճաքճքող դետնի
ճրթճրթոցը և ցրտահարվող ճյուղի խշոցոցը : Տեղ
հասնելուն պես Կոնդրատը նախ մտավ դոմը , յեղ-
ների մոտ , նրանց առաջ զցեց խոտի մի փոքրիկ
խուրձ , բայց հիշելով , վոր վաղը նրանց տանելու յե-
րնդհանուր դոմը , մի ահապին խոտիտ խոտ վերցրեց
ու լսելի ճարյով ասաց .

— Դե՞ , մեր բաժաննիկու ժամանակը յեկալ ...
Տեղ տուր , քաջա՛լ : Չորս տարի մենք՝ կազակը յեղան
համար , յեղը՝ կաղակի համար աշխատեցինք ... Յեկ
դրանից խելքը դժմին մի բան դուրս չեկալ : Դուք ել
կիսաքաղց մնացիք , յես ել նեղվեցի : Դրա համար ել
յես ձեղ փոխում եմ ընդհանուր կյանքի հետ : Դե ,
ի՞նչ ես փքիկ , վարծես խակապես բան ես հասկա-
նում :

Կոնդրատը յեղանը նայելով՝ հանկարծ կոկորդում
մի սուր ցավ դգաց , աչքերում՝ այլոց : Նա լաց յե-
ղալ և զոմից դուրս յեկալ կարծես թեթևացած սըր-
տով : Գիշերվա մնացած մասը նա չքնեց , այլ ծիսում
եր շարունակ :

Ինչպիս կլինի կոլեկտիվ տնտեսությունում : Ար-
դյոք ամեն մենը կզգա՞ , իր նման կհասկանա՞ , վոր

այնտեղ տանող ճանապարհը միակ ճանապարհն է, վոր դրամից խուսափել չի կարելի, վոր ինչքան ել ափսոսաս ընդհանուրի ձեռքը տալ անասուններդ, վորոնք մեծացել են քո խրճիթի մեջ, յերեխաներիդ հետ, այնուամենայնին, հարկավոր ե տանել: Յեվ, դեսի իր ունեցիածքը յեղած այդ գաղտնի ափսոսանքը պետք ե խեղղել; չթողնել, վոր մարդու սրտում տեղ դառնի... Այսպես եր մտածում կոնդրատը, իր խոմիացող կնոջ մոտ պառկած, մթության մեջ վոչինչ չտեսնող իր աչքերը հառած խավար խորչերին: «Իսկ դառները և ուշե՞րն ինչպես պիտի տեղավորենք: Այսր նրանց տաք տեղ ե հարկավոր, հողատար խընամք: Ինչպե՞ս տարբերես եղ սատանաներին, քսմի վոր նրանք բոլորն իրար նման են: Այսր մայրերն ու կլսառնեն նրանց, մարդիկ ել: Իսկ կովերը: Ինչպե՞ս տուն կըրես Վերը: Վորքա՞ն կկորցնենք... իսկ ի՞նչ կլինի, յեթե մի տասնհինգ որ հետո, մարդիկ դժվարությունից վախեցած ցրվեն: Են ժամանակ հանքահոր պիտի դնալ, ընդմիշտ հեռանալ Գրեմյաչիից: Ել ապրելու ճար չի լինի»:

Առավոտյան դեմ նա քնի մեջ ընկալ և քնած ժամանակ ել նրան ծանր ու դժվարին եր թվում: Հեշտ չեր կոնդրատի համար կոլեկտիվ մտնելը: Արյուն արցունքով եր նա կտրվում սեփականությունից, իր յեղներից, իր հարազատ հողակտորից...

Առավոտյան նա նախաճաշեց և արեվավառ ճակատը կնճռած՝ յերկար ժամանակ դրում եր իր դեմումը.

«Ընկեր Մակար Նազուլնովին, Գրեմյաչիկ կո-
մունիստական կուսակցության բջջին».

ԴԻՄՈՒՄ.

Յես, կոնդրատ Խրիստաֆորիչ Մայդանիկովս, միջակ գյուղացի, խնդրում եմ ինձ ընդունել կոլեկ-
տիվ անտեսություն, իմ վնաջ ու յերեխաների հետ,
իմ ունեցվածքով և բոլոր անասուններով։ Խնդրում
եմ ընդունեք ինձ նոր կյանքի մեջ, քանի վոր յե-
նրան բոլորովին համաձայն եմ։

Կ. Մայդանիկով»։

— Մտա՞ր, — հարցրեց կինը։

— Մտա՛։

— Անասունները պիտի տանե՞ս։

— Հենց հիմա կտանեմ . . . Դե՛, ի՞նչ ես գոռում,
հիմարի գլուխի։ Քի՞չ եմ խոսել քեզ հետ, համոզել,
իսկ գուշ ելի գեալի հի՞նը։ Զե՞օ վոր գուշ ել համաձայն-
վել եյիր։

— Յես, կոնդրաշա, մենակ կովն եմ ավտո-
սում . . . Յես համաձայն եմ։ Մենակ թե՛ սիրաս
շատ ե ցավում . . . — ասաց նա, ժպտալով և գող-
նոցով սրբելով արցունքները։ Մոր հետեւ լաց
յեղավ և Խրիստիչկան՝ չորս տարեկան կրտսեր աղ-
ջիկը։

Կոնդրատը դոմից դուրս քշեց կովն ու յեղնե-
րը, ձին հեծալ ու քշեց գեալի գետակը։ Զրեց։ Յեղ-
ները հետ դարձան և ուզում եյին դեալի տուն գնալ,
սակայն կոնդրատը սրտում յեռացող ցավով ձին
քշեց, նրանց առաջը կտրեց և քշեց գեալի դյուղ-
խորհուրդ։

Կանայք նայում եյին լուսամուտներին կուծ,
կաղակները՝ ցանկապատների հետեւց՝ առանց փո-

Դաց դուրս դալու : Կոնդրատին իրեն մի տեսակ վատ դրաց : Սակայն, գյուղիսորհրդի ժութ փողոցը շուտ գոլով՝ նա տեսավ հայլաքված բարձմաթիվ յեզներ, վուչիստիներ ու ձիեր, ինչպես տոնավաճառում : Հարեւան փողոցից ել դուրս յեկավ Լյուբիշկինը : Նա քարչ եր տալիս մի կով, վորի հետևից շուապում եր հորթը՝ վղին ճոճացող պարանով :

— Արի սրամց սուզերն իրագր կապենք ու հնալեռ քշենք, — փորձեց կատակել Լյուբիշկինը, սակայն ինքն ել յերեսում եր մոայլ ու վրդովված : Նրան դժվարությամբ եր հաջողվել դուրս բերել կովը . այսի սրայի թարմ ճանկովածքն այդ եր ապացուցում :

— Եղ ո՞վ ե քեզ ճանկուտել :

— Սուս ի՞նչ առեմ, կնիկս և արել : Սատանի ծնունդը կովի հետևից ընկարի : — Լյուբիշկինը բեխի ծայրը բերանն առավ ու դժվարությամբ շարունակեց . — Հարձակվեց վրաս, վոնց վոր տանկ : Յեզ ենաբեա արյանաւելություն յեղավ մեր մեջ, վոր հիմի մարդ ամաչում և հարեւանների յերեսին նայել :

Գյուղիսորհրդից շարժվեցին դեպի Տիտոկի բակը : Առախոտյան տասներկու միջամկ ևս, գիշերը լույլ խորհելուց հետո, դիմում եյին ներկայացրել ու բերել իրենց անառումները :

Նաղունովը յերկու ատաղձագործի հետ Տիտոկի բակում մսուրի փայտ եր տաշում, Գրեմյաչի Լոդի սաաջին համայնական մսուրների համար :

Գ Լ Ո Ւ Խ

Կյանքը Գրեմյաչի Լոգում ծառս յեղավ այնպես, ինչպես կամակոր ձին և ծառս լինում դժվարին խո- չընդոտի առաջ: Յերեկները կաղամաները հավաք- վում եյին փողոցներում ու խրճիթներում, վիճում, զրուցում եյին կուտնտեսությունների մասին և յենթադրություններ անում: Չորս որ շարունակ ա- մեն յերեկո ժողովներ եյին հրամիլում, վորոնք տեսում եյին մինչև աքլորականչ:

Այդ որերին Նազուլնովն այնպես նիհարեց, վոր կարծես յերկար ժամանակ պառկել եր ծանր հիվան- դությունով: Բայց Դամիկովն առաջվա պես պահ- պանում եր իր արտաքին հանդստությունը, միայն թե նրա շրթումքների վերեւում, այտերի փոսիկների մեջ ավելի վորոշակի եյին յերեւում համառության խորունկ ծալքերը:

Դամիկովը մի ձիավոր սուրհանդակ ուղարկեց շրջկոմ, վոր տեղեկություն հաղորդի, թե առայժմ կուտնուեսություն ե ներդրավմած միայն յերեսուն- իերկու տոկոսը, սակայն ներդրավման աշխատանքը շարունակվում է հարսվածային թափով:

Իրենց տներից վտարված կուլակները տեղավոր- վել եյին իրենց աղղականների և մտերիմ մարդկանց մոտ: Ֆրու Ռվանին, վոր Տիմոֆեյին ուղակի շրջան

Եր ուղարկել, դաստախաղի մոտ, ապրում եր իր քարեկամ Բորչչեմի մոտ, հենց այն մարդու, վորս չքավորության ժողովում հրաժարվեց քվեարկելուց։ Բորչչեմի խրճիթում հավաքվում եյին ակտին կուլակները։

Սովորաբար ցերեկները, իրենց լրտեսելուց և հետամտելուց ապահովելու համար, նրանք Բորչչեմի մոտ հավաքվում եյին մեկ-մեկ, յերկու-յերկու, տան հետեւց, գոմի կողմից, վորագեղի մարդկանց աչքին չընկնեն, խորհրդի ուշադրությունը չգրավեն։ Գալիս եյին Դավիդ Գայելը, փորձված սրիկա Լապշինովը, վորը կուլակաթափ լինելուց հետո դարձել եր «քրիստոսի դուլը»։ Յերբեմն յերեւամ եր Յակով Լուկիչ Ռստրովնովը՝ իմանալու, թե ինչ կա, ինչ չկա։ «Շտաբին» եյին հարել նաև միջակներից մի քանիսը, վորոնք վճռականաբես դեմ եյին դուրս յեկել կոլտնտեսությանը — Նիկոլայ Լյուշնյան և Ժյուաները։ Նույնիսկ չքավորներից, բացի Բորչչեմից, յերկու ուրիշներն ել կային — բարձրահասակ, անհոնք կազակ Վասիլի Ատամանչուկովը, վոր միշտ լուռ եր, ձմեռ նման մերկ, մաքուր ածիլված ու խուղված, և Նիկիտա Խոմիլովը՝ գվարդիական հրետանու թընդանութաձիդ, Պոդտելկովի հետ ծառայած, վոր քաղաքացիական կոխմների ժամանակ շարունակ խույս եր տվել ծառայությունից, բայց և այնպես 1919 թվին ընկել եր կալմիկ գնդապետ Աշտիմովի պատժիչ ջոկատը։ Հենց այդ ել վորոշել եր Խոպրովի հետագա սամբողջ կյանքը՝ խորհրդային իշխանության որոք։ Գյուղից յերեք մարդ միայն — Յակով Ռստրով-

նավեն առ իք տղան և ծերութիւնովը 1920 թվին
նահանջի ժամանակ տեսել եյին նրան կուչեւկայում՝
Աշտիմովի պատժիչ ջոկատում, սպիտակ յերիզով
ուսադիրներով, տեսել եյին, թե ինչպես նա յերեք
կալմիկ կազակների հետ Աշտիմովի մոտ եր քշում
յերկարթուղու գեղոցի կարսնամլորված բանովընե-
րին... Տեսել եյին... Իսկ վորքան եր մաշվել ու
տանջվել Խոսկովը, յերբ Նովորսիյսկից Գրեմյաչի
Լոդ վերադառնալուց հետո խմացել եր, վոր Ոստրով-
նովիներն ու Լապչինովը վողջ են մնացել: Վորքան
սարսափներ եր ասլրել դմարդիական հրետանու այդ
լայնակուրծք հրետավորը՝ հակահեղափոխականների
հետ հաշիվ մաքրելու տարուց հետո: Յեվ նա, վոր
պայտելու ժամանակ ամեն տեսակ ձիու հետեւ վոտք
կարող եր բռնել ու զսպված պահել նրան, այժմ,
յերբ հանդիպում եր խորամանկորեն ժաղացող
Լապչինովին, դողում եր ուշացած, ցրտահար յեղած
կադինու տերեւի արեա: Ամենից շատ նա նրանից եք
վախենում: Հանդիպելիս հաղում ու շրթունքները
դժվարությամբ շարժելով ասում եր.

— Պապի, խնայիր կազակի հոդին, չմատնեա-
ինձ:

Լապչինովին իրեն վրդավլած ծեացնելով՝ պատաս-
խանում եր.

— Ի՞նչ ես ասում, Նիկիտա: Տեր ընդ քեզ: Մի-
թե յես խաչ չեմ կրում իմ կրծքին: Իսկ փրկիչն
ինչպես ե սովորեցրել «խղճա մերձամլորիդ», ինչպես
քեզ: Մտքովս ել չի անցնում. չեմ ասի: Մորթեա
արյուն չի հոսի: Մենակ թե—դու ել մի քեչ ինձ:

աղնիր, թե վոր... Ենտեղ ժողովում կարող ե մեկն
ու մեկը խոսի իմ դեմ, կամ իշխանությունը կասի
աեղմել... Եղ դեպքում դու ինձ պաշտպանիր...
Ձեռքը ձեռք ե ըլանում: Իսկ սուր բարձրացնողը՝
օրով ել կընկնի: Այդպես չե՞՞ : Մել ել, յես ուզում
եյի քեզ խնդրել, վոր հերկիս ողնես: Աստված ինձ
մի տղա յե տվել՝ խելքը պակաս. նա ինձ ողնել չէ
կարող, մարդ վարձելն ել թանգ կնսուի...

Յեկ ամեն տարի Նիկիասա Խոպրովն «ողնում» եր
Լապշինութին. Ճրիաբար հերկում, կալուսմ եր նրա
համար, Լապշինովի կալսիչի մոտ կանդնած՝ նրա
մեջ եր լցնում Լապշինովի ցորենը: Իսկ հետո տուն
եր դալիս, սեղան նստում, չուգունե թաթերի մեջ
առնում իր բայն, շրկահեր դեմքը և մտածում.
«Ախր մինչեւ յե՞րբ: Կսաղանեմ»:

Յակով Լուկիչ Ռատրովինովը խնդրանքներով չեր
նեղում, չեր տպառնում. դիտեր, վոր յեթե խնդրեր,
Խոպրովը վոչ միայն մի չիչ ողի՝ այլ և ավելի
մեծ բան չեր համարձակիլի մերժել: Իսկ ողի՝ Յա-
կով Լուկիչը հաճախ եր խմում նրա մոտ և միշտ
չուրհակալություն հայտնում նույն ձեռվ. «Շնոր-
հակար եմ հյուրասիրությանդ. համար»:

«Բկումդ մնա», ատելությամբ մտածում եր
Խոպրովը՝ սեղանի տակ սեղմելով իր կես փթանոց
քունցքները:

Պոլովցեվը դեռևս ազրում եր Յակով Լուկիչի
փոքրիկ սենյակում, վորտեղ առաջ պառավ Ռատրով-
նովան եր տեղալորվում: Պառավը մոխաղըվել եր

վառարանիւ վլրա^{*}), իսկ Պոլովցեալը նրա սենյակում ծխում եր համարյա անընդհատ, նեղլիկ թախտի վլրա պառկած, մերկ ու ջլուտ վոտքերը տաք բուխարիկին դեմ արած:

Այդ նրա սովորեցրածն եր, վոր յերկրութ անգամ, յերբ գլումյա չմոցիների ժողով հրամիրվեց կոլտնտեսության հարցով, Յակով Լուկիչը յելույթ ունեցավ՝ կոչ անելով կոլտնտեսություն մտնել և իր խելացի, դրական ճառով խիստ ուրախացրեց Դավիթովին, մահավանդ վոր նա դյուռզում հեղինակություն եր վայելում և Յակով Լուկիչի խոսքից հետո, վորը հայտարարեց, թե ինքը կոլտնտեսություն ե մտնում, միանգամից յերեսունմեկ դիմում ստացվեց:

Շատ լավ խոսեց Յակով Լուկիչը կոլտնտեսության մասին, իսկ հետեւյալ որը տները շրջելով և Պոլովցեսի փողերով հյուրասիրելով հռւամի, կոլտնտեսության դեմ՝ որամաղրված միջակներին՝ ինքն ել մի քիչ խմելով՝ այլ բան եր ասում:

— Հիմար ես դու, ախալեր, ինձ ալելի անհրաժեշտ ե կոլտնտեսություն մտնել, քան քեզ և հակառակ խոսել չեմ կարող: Յես կարգին ապրուստ ունեյի, կարող եյին կուրակաթափ անել: Իսկ դու ի՞նչ կարիք ունես այստեղ խցկվելու: Լուծ չե՞տեսել: Կոլեկտիվում, ախալեր, քեզ ենալես կլծեն, վոր աչքերդ կաւանան:—Յես կամացուկ սկսում եր՝

*) Ռուսական գյուղերում վառարաններն այնպես են շինված, վոր նրանց վրա մարդիկ քնում են: Ծ. Թ.

սլատմել արդեն անդիր արած դասը՝ սպասվող
ապստամբության մասին։ Յեվ, յեթե խոսակիցը յեն-
թարկվող ու ամեն ինչի պատրաստ մարդ եր լինում,
համոզում եր նրան, խնդրում, սպառնում վրեժ-
ինդրությամբ, յերբ արտասահմանից «մերոնք»
կդան և ի վերջո հասնում եր իր նովատակին։ Հեռա-
նում եր «միության» մեջ մտնելու համաձայնու-
թյունն առած։

Ամեն ինչ լավ եր գնում։ Յակով Լուկիչը մոտ
յերեառն կազմակ հավաքագրեց՝ խստորեն նախա-
ղգուշացնելով, վոր վոչ վոքի չասեն «միության» մեջ
մտնելու մասին, իր հետ ունեցած զրուցի մասին։
Բայց ահա, մի անգամ ել նա գնաց կուլակային
շուրբում ևս դորձը վերջացնելու (կուլակաթափ
արվածների և նրանց շուրջը համախմբվածների
վրա և՛ նա, և՛ Պոլովցել մեծ հույս ունեյին, դրա
համար ել նրանց ներդրավելը, վորակես դյուրին
դորձ՝ թողել եյին հետագային) և այսոեղ, առաջին
անգամ նա վրխալեց...։ Յերեկոյան դեմ Յակով
Լուկիչը կապայի մեջ փաթաթված յեկառ Բորչչեի
մոտ։ Անբնակ սենյակում վառվում եր ցածրիկ վա-
ռարանը։ Բոլորը ներկա եյին։ Մեջքը պատուհանին
դարձրած՝ կանգնած եր շրջանային կենտրոնից հենց
նոր վերսաղարձած Տիմոֆեյը—Թրոլ Ռվանու տղան։
Նա պատմում եր, թե ինչպես խիստ ընդունեց իրեն
դաստիարակը, թե ինչպես, իր գանգատը լաելու վո-
խարեն ցանկացավ ձերբակալել իրեն և հետ ու-
ղարկել շրջան։ Յերբ Յակով Լուկիչը ներս մտավ,
Տիմոֆեյը լոեց, սակայն հայրը նրան սիրո տվեց։

— Աս մեր մարդն ե, Տիմոչկա, դաւ նրանից
մի վախենաւ:

Տիմոֆեյը իր պատմությունը վերջացրեց և
աչքերը փայլատարելով ասաց.

— Կյանքն ենսգես ե դարձել, վոր յեթե մի
բանովա լիներ, խելույն ձի կնսուեյի ու կսկսեյի
կոմունխատների արյունը խմել:

— Խեղդող ե դարձել կյանքը, խեղդող...—
հաստատեց նաև Յակով Լուկիչը. — բայց յեթե
այսքանով ել պրծնենք, ելի վառք կտանք ասուր-
ծուն...

— Ել սրանից վատ ի՞նչ կարող ե լինել,—ցու-
սումով ասաց Ֆրուլ Ռյանին, —քեզ չեն կտել, դրա
համար ել քեզ լավ ե թվում, իսկ իմ հացը արդեն
վերջանում է: Յարի ժամանակ յետ ու դու համարյա-
միսուեսակ ելինը առլուսմ, իսկ հյոմի, դու հանկարծ
փքվեցիր, իսկ ինձանից՝ վերջին արեխներս ել խլե-
ցին:

— Յես դրանից չեմ վախենում. վախենում եմ
մի ուրիշ բան գուրս գա...»

— Ել ի՞նչ:

— Կարծես պատերազմի...»

— Տա՛ ասոված: Դու բարեխոս, ով սուրբ զորա-
վոր Յեղորի: Թեկուղ հենց իսկույն սկսվի: Առաջա-
լի զրքում ել ե ասված...»

— Բրերով ու մահակներով դուրս կդանք, ինչ-
պես վիշենցիք՝ տասնինը թվին:

— Վողչ-վողջ նրանց մաերը կտրտեյի, ե՛ս,
հը, մ-մ'-մ'...»

Ատամանուչուկովը, վոր Ֆիլոնովակի գյուղի
ժառ վիրավորվել եր կոկորդից, այնպես բարակ ու
անլսելի յեր խոսում, կարծես հովի սրինդ լիներ
նվազելիս:

— Ժողովուրդը դազազել ե, ատամաներով կը-
կրծեն...

Յակով Լուկիչն զգուշությամբ ակնարկեց, վոր
Հարևան դյուղերում զրությունը խաղաղ չե, վոր
նույնիսկ կարծես տեղ-տեղ կոմունիստներին խրա-
տում, խելքի յեն բերում, կազակավարի, ինչպես
նրանք հին ժամանակ խրատում եյին Մոսկվա յե-
կած ատամաններին. իսկ նրանց խրատում եյին
շատ հասարակ ձեռվ — դլխիվայր ձգում եյին սպարկի
մեջ և ուղիղ ջուրը: Նա խոսում եր կամացուկ, չա-
փալոր, կշռագատելով յուրաքանչյուր բառը: Ի միջի
այլոց նշեց, վոր դրությունը խաղաղ չե-ամենուրեք,
ամբողջ Հյուսիսային Կովկասում և վոր գարնանամու-
տին դեսանտ ե սպասվում: Ասաց, վոր այդ իրեն
ասել ե իրենց գնդից մի ծանոթ սպա, վոր մի շա-
բաթ առաջ անցել ե Գրեմյաչով: Յակով Լուկիչը
թաղցրեց միայն այն, վոր այդ սպան մինչեւ այժմ
ել թաղնված ե իր մոտ:

Նիկիտա Խոպրովը, վոր մինչ այդ լուս եր,
հարցրեց.

— Յակով Լուկիչ, դու ահա թե ինչ ասա:
Լա՛վ, ատենք թե մենք կապստամբենք, կկոտորենք
մեր կոմունիստներին, իսկ հետո՞: Միլիցիայի հետ
մենք կարող ենք հաշիվ մաքրել, իսկ յերբ կայս-
րանից մեր դեմ զորամասեր ուղարկեն, այն ժամա-

նակ ի՞նչ կանենք: Մեղ ո՞վ կառաջնորդի նրանց դեմ: Սպաներ չման: մենք՝ մութ մարդիկ ենք. ճանապարհն աստղերով ենք վորոշում... Բայց կռվում հո զորքն աչքերը փակած չի առաջ դնում. նրանք պլաններով են ճանապարհ գնում, շտարներում քարտեղներ են նկարում: Մենք ձեռներ կռւնենանք, իսկ գլուխ չենք ունենա:

— Գլուխ ել կլինի, — յեռանդով համոզում: Եր Յակով Լուկիչը: — Սպաներ դժւրս կդան: Նրանք ավելի ուսումնական են կարմիր հրամանատարներից: Հին յունկերներից են սեւոերը դժւրս յեկել. իսր դիսություններ են սովորել նրանք: Իսկ կարմիրներն ինչպիսի հրամանատարներ ունեն: Այս, թե կուղ հենց մեր Մակար Նարուլնովին պերցնենք: Դլուխ թոցնել կարող ե նա, իսկ մի հարյուրակ կարող ե առաջնորդել: Իր որումը չի կարող: Նա քարտեղներից բան հասկանո՞ւմ ե:

— Իսկ վո՞րտեղից լույս կը կնեն սպաները:

— Կնաները կծնեն, — վրդովված պատաժիանեց Յակով Լուկիչը, — Դու, Նիկիտա, ի՞նչ ես կաթել ինձ, վոնց վոր կծիծը վոչխարի դմակից: «Վորտեղից, վորտեղից»... Իսկ յես ի՞նչ դիտեմ, թե վորտեղից:

— Արտասահմանից կդան: Անպարյան կդան, — հաստատեց Թրոլ Ռվանին և հաճույքով պատկերացնելով հեղաշրջումը, արյունոտ վրեժի քաղցրությունը, բարվականությամբ ուռոցրեց իր վողջ մնացած ոռւնդը և Փողով ներծծեց ծխով հաղեցած որը:

— Զե, ախալեր, ինչպես ուղում եք, բայց յետ
եղ բանին համաձայն չեմ, — վճռական չեշտով ա-
սաց Խոսկովը : — Յես իշխանության դեմ չեմ կանգնի-
ե ուրիշներին ել խորհուրդ չեմ տալիս : Յեվ դու,
Յակով Լուկիչ, իզուր ես ժողովրդին շուռ տալի
եղալիսի բաների վրա... Են սպան, վոր քեզ մոտ-
էիշերել ե, խորթ, մութ մարդ ե : Նա ջուրը կաղտորի
ու մի կողմ կքաշվի, իսկ մենք՝ նորից կկոտորվենք :
Այս սլատերազմին նրանք մեզ վոտի հանեցին խոր-
հըրդային իշխանության դեմ, . կաղակների ուսերին
ուսադիրներ կարեցին, նրանցից վաղահաս սպաներ
թիւնցին, իսկ իրենք՝ քաշվեցին թիկումքը՝ շտաբնե-
րը, բարակ վոտներով աղջիկների հետ զբոսնելու...
Հիշում ես, յերբ պատասխան տալու ժամանակը
յեկալ, քոլորի մեղքը ո՞վ քաշեց : Մամբով Դոնի
բանակը վոչխարի հոտի պես նովորոսիյսկում եր
հավաքվել, իսկ գեներալները՝ նույն ժամին սպա-
ներն ու բոլոր ազնվացեղերը նավով ուրիշ տաքուկ
յերկրներ ելին ճղում : Ե՞հ : Հա՛, յես են ել եյի ու-
ղում հարցնել. Եղ քո «Ճերդ բարեծնությունը», վոր
քեզ մոտ դիշերել ե, հիմա ել թագնված չե՞ քեզ
մոտ : Մի քանի անգամ նկատել եմ, վոր դու ջուր
ես տանում գոմը... Մտածում եմ, Լուկիչն ինչո՞ւ
յե ջուր տանում այդտեղ, ի՞նչ սատանա յե ջրելու :
Մի անգամ ել ճիռու վրնջոց եմ լսել այնտեղից :

Խոսկովը գոհունակությամբ դիտում եր, թե
ինչպես Յակով Լուկիչը սկրմնում ե, դունատվում:
Բոլորի մեջ շփոթություն ու յերկյուղ ընկալ : Հա-
խուռն ուրախությունն ուղցնում եր Խոսկովի կուրծ-
քը, նա նետում եր բառերը, իսկ ինքը, կարծես թե

մի կողմնակի մարդ լիներ, վոր լսում եր ուրիշի ձայնը:

— Ինձ մոտ վոչ մի սպա չկա, —խուլ ձայնով ասաց Յակով Լուկիչը: —Վընջացել ե իմ ձին՝ մատակը, իսկ ջուրը յես տարել եմ, յերբեմն կեղտաջուր եմ տարել... Այնտեղ յես վարադ եմ պահում...

— Քո մատակի ձայնը յես դիտեմ, ինձ չես կարող խաբել: Բայց ի՞նձ ինչ: Զեր գործին յես չեմ մասնակցի, իսկ դուք համկացեք...

Խոպրովը փախախը չծածկեց և շուրջը նայելով ուղղվեց դեպի դուռը: Լապչենովը նրա առաջը կտրեց: Նրա ճերմակ մորուքը ցնցվում եր, նա տարորինակ ճեռվ կուանալով ու ճեռքերը տարածելով հարցրեց.

— Գնում ես մատնելո՞ւ, Հուդա՛, ծախվա՛ծ: Իսկ յեթե ասենք, վոր դու պատժիչ դորախմբումն ես յեղել, կալմիկների հետ...

— Դո՞ւ, ալապի՛, մի դոռա, — սառը զայրույթով խոսեց Խոպրովը՝ ձուլածո բոռնցքը բռնելով Լապչենովի մորուքի առաջ:

— Յես ինքս ամենից առաջ ի՞նձ կմատնեմ. Հենց այդուհա ել կմատնմ — յեղել եմ պատժիչ զորախմբում, յեղել եմ յենթասպա, դատեցեք: Սակայն, դուք ել դուշացեք: Յեվ դու, պառակ զամբիկի կշկուռ... Խոպրովը չնչակտուր եր լինում, նրա լայն կուրծքը խրխուռմ եր դարբնոցի փուքսի պես: — Դու իմ ամբողջ արյունը ծծեցիր: Գոնե մի անդամ քո հախիցը կդառ:

Առանց ճեռքը հետ տանելու նա բոռնցքով խեց Լապչենովի յերեսին և դուրս յեկավ, դուռը

չըխկացնելով, առանց նայելու շեմքին ընկած ծերուկի վրա:

— Այ, հիմա մենք բռլորս կորա՞նք,— առաջ բաղմանդամ ընտանիքի տեր կուլակաթափ Գոնյելը:

Նույն վայրկյանին Նիկոլայ Լյուչնյան վեր ցատկեց և առանց հրաժեշտի, առանց գլխարկը ծածկելու դուրս թռառ խրճիթից: Նրա հետեւից տառողութեան դուրս յեկան Ատամաննչուկովը, իսպատ ու բարակ ձայնով ասելով.

— Պետք եւ ցրմէլ, թե չե լավ հոր չի դալիս:

Յակով Լուկիչը մի քանի րոպէ լուռ նստած մնաց: Նրա սիրտը կարծես ուռչում ու դեմ եր առնուամ կրկորդին: Շնչելը ծանրանուամ եր: Արյունը գլխին եր խփում, խկ ճակատը սառն քրսինքով պատեց: Յերբ արդեն շատերը դուրս եյին գնացել, նա վեր կացան և Տիմոֆեյ Ռիվանուն կամացով առաց.

— Յեկ ինձ հետ, Տիմոֆեյ:

Վերջինս լուռ՝ պինջակը հաղակ, գլխարկը ծածկեց: Դուրս յեկան: Գյուղում վերջին ճրադները հանդչում եյին:

— Ես ո՞ւր ենք գնում, — հարցրեց Տիմոֆեյը:

— Ինձ մոտ:

— Ինչի՞:

— Հետո կիմանաս, շտապի՛ր:

Յակով Լուկիչը դիտմամբ գյուղխորհրդի մոտով անցան: Այնուեղ լույս չեր յերկում, լուսամուտները խափար եյին: Մտան Յակով Լուկիչի բակը:

Սանդուկսքի մոտ նա կամող առաջ և Տիմոֆեյի պինջակի թեքը քաշելով առաց.

— Մի քեզ սպասիր այստեղ։ Յես քեզ կկանչեմ։

— Լավ։

Յակով Լուկիչը դուռը բաղխեց, հարսը նիգը հետ քաշեց.

— Դո՞ւ յես, հայրիկ։

— Յես եմ։ Նա իր հետեւից դուռն ամուր փակեց և առանց խոհանոց մտնելու բաղխեց փոքրիկ սենյակի դուռը։ Խոզոտ, բամբ ձայնով մեկը հարցրեց.

— Ո՞վ ե։

— Յես եմ, Ալեքսանդր Անիսիովիչ։ Կարելի՞՞ յէ։

— Մտի՞ր։

Պոլովցեկը նատած եր սեղանի մոտ, սև շալով վարադուրած պատուհանի առաջ և ինչ վոր բան եր գրում։ Նա իր խոշոր թաթով գրած թերթը ծածկելով՝ լայնաճակատ գլուխը շուռ տվեց.

— Դե, ի՞նչ կա։ Վո՞նց ե գործը։

— Կատ ե... Դժբախտություն...

— Ի՞նչ։ Ասա՛, շուտ... — Պոլովցեկը վեր թռավ, գրմած թուղթը գրպանը կոխեց, շտապ կոձկեց իր վերնաշապկի ոձիքը, արյունը դեմքին խփեց և ամբողջովին շառագունելով կծկվեց, ինչպես գիշտիչ գաղանը՝ ցատկումից առաջ։

Յակով Լուկիչը չփոթված պատմեց նրան պատահածը։ Պոլովցեկը լսում եր առանց մի բառ բաց թողնելու։ Խոր խոռոչներից շեշտակիորեն Յակով Լուկիչին ելին նայում նրա կապտավուն աչքերը։ Նա դանդաղորեն ուղղվեց, սեղմեց ու բացեց բուռնցքները, ապա սափրված շրթունքները սոսկաւի ծոմոելով քայլեց գեղի Յակով Լուկիչը.

— Արլ' - ի - կ - կ - ա' . ի՞նչ ե , քամիթառ մոռւթ ,
կործանե՞լ ևս ուղում ինձ : Գո՞րծն ևս ուղում կոր-
ծանել : Դու արդեն կլսով չափ կործանել ես գործը
քո հիմար անզգուշությամբ : Յես քեզ ինչպե՞ս հրա-
մայեցի : Ինչպե՞ս հըլ-դամա' - յեցի քեզ : Հարկամուր
եր նախ ամեն մեկի տրամադրությունն առանձին-
առանձին շոշափիել : Իսկ դու՝ վոնց վոր կատաղած
յեզ ... — Նրա խեղդուկ , կլկլացող շշուկն ավելի
սարսափիեցրեց ու շփոթեցրեց սփրթնած Յակով
Լուկիչին . — ի՞նչ անենք այժմ : Նա , այդ Խոսքովը
հայտնե՞լ ե արդեն : Հըլ , չե՞ : Դե խոսիր , Գրեմյաչիի
կոճղակ : Զե՞ : Ո՞ւր դնաց նա , դու հետեւեցի՞ր :

— Ամենեին , վո'չ ... Ալեքսանդր Սնիսիմիչ ,
բարեկարս , կորած ենք մենք հիմա : — Յակով Լու-
կիչը ձեռների մեջ առավ իր դլուխը : Նրա դարչնա-
գույն այսրի վրայով դեպի սպիտակամուն բեխը դը-
լորվեց արցունքի մի կաթիլ : Իսկ Պոլովցել միայն
առամները կրճացրեց .

— Դու — կի՞կ'կ ... դործել ե ալետք և վոչ թե ...
տղադ տա՞նն ե ;

— Զիմ խմանում ... Յես հետո մարդ եմ բերել :

— Ի՞նչ մարդ :

— Ֆրու Ռվանու տղային :

— Հըլմ : Ինչի՞ յես բերել նրան :

Նրանց հայացքներն իրար հանդիպեցին և իրար
հասկացան առանց խոսքի : Յակով Լուկիչն առաջինը
հայացքը թեքեց և յերբ Պոլովցել հարցրեց . «Վը-
տուհելլի՞ տղա յե» , նա միայն լուռ դլխով արեց :
Պոլովցել կատաղաբար պոկեց մեխից իր կիռա-
մուշտակը , բարձի տակից հանեց նոր մաքրված նա-

գանը, թմբուկը պտտեցրեց և անցքերի մեջ սլսողը՝
զուն շրջանակով փայլեց փամփուշտների մեջ սեղմ-
ված գնդակների ծայրերի նիկելը: Կիսամուշտակը
կոճկելով՝ Պոլովցելը վրուշակի կերպով, ինչպես
պատերազմում, հրահանգեց:

- Վերցրու կացինը: Առաջնորդիր ամենակարծ
քամփով: Քանի՞ ըստելի ճանապարհ ե:
- Եստեղ, մոտիկ ե. ութ տանից են կողմը ...
- Բնտանիք ունի՞ :
- Մենակ կնիկը:
- Մոտիկ հարեւաննե՞ք:
- Եի կողմը կալն ե, մյուսը՝ այդին:
- Գյուղխորհուրդը:
- Հեռու յի ...
- Գնա՞նք ...

Մինչդեռ Յակով Լուկիչը դնաց փայտանոց՝ կաց-
նին, Պոլովցելը ձախ ձեռքով Տիմոֆեյի դաստակը
սեղմելով՝ կամացուկ ասաց.

— Առանց հակածառելու լսել ինձ: Կգնանք այն-
տեղ, և դու, տղա, ձայնդ կփոխես, կասես, վոր
դյուղխորհոդի հերթակահն ես, թուղթ ես բերել
իրեն: Հարկավոր ե, վոր նա ինքը բաց անի դուռը՝
— Դուք, ընկեր, զդույց յեղեք, հանկարծ ձեղ ...
դուք շեք ճանաչում ... եղ Խոսլրովը յեղան ուժ ու-
նի, յեթե միանդամից հաշնկը չմաքրվի, նա կարող
է հենց մերկ բոռնցքով ենալես հասցնել վոր ... —
կցկտուր սկսեց խոսել Տիմոֆեյը:

— Լոի՛ր; — ընդհատեց նրան Պոլովցելը և ձեռքը
մեկնեց Յակով Լուկիչին. — Տո՛ւր այստեղ:
— Առաջ ընկեր:

Հացենու կոթով կացինը, վոր Յակով Լուկիչի
բոռմ տաքացել ու խոնավացել եր, կիսամուշտակի
տակ խրեց անդրավարտիկի դոտին, ոճիքը բարձրաց-
րեց :

Փողոցում քայլում ելին լուռ : Ամրակազմ ու խո-
չորամարմին Պոլովցեի մոտ Տիմոֆեյը յերեխա լեր
յերեում : Նա գնում եր անհաստատ քայլերով առաջ
ընթացող յեսառւլի կողքով, անվերջ նայելով նրա
դեմքին, սակայն խավարն ու բարձրացրած ոճիքը
իսկուստում ելին :

Յանկապատի վրայով անցան կալը :

— Հետքերովս քայլեք, վորպեսովի մի հետք յե-
րեւ, — շուկով հրամայեց Պոլովցեվը :

Կուսական ձյունի վրայով քայլում ելին նրանք
դայլի շղթա կազմած, իրար հետքերով : Բակի վրա
բացվող դռնակի մոտ Յակով Լուկիչը թաթը սեղմեց
ձախ կողին ու տրտում շնչաց .

— Տեր՝ աստիած ...

Պոլովցեը ցույց տվեց դուռը :

— Բաղիսի՞ր :

Տիմոֆեյն ավելի շուտ շրթունքների շարժումից
հարսկացավ, քան թե լսեց նրան : Նա կամացուկ շը-
րբսկացրեց դռան թակը և նույն րոպեյին լսեց, թե
ինչպես դռան աջ կողմը կանդնած սպիտակ փակա-
խալոր ոտար մարդու մատները կատաղորեն չան-
դըրտում, պատառուտում են կիսամուշտակի կոճկառ-
ները : Տիմոֆեյը նորից քաղիսեց : Յակով Լուկիչը
սոսկումով նայում եր բաց մարադից դուրս յեկող
չնիկին : Սակայն ցըտից սառած չնիկը միայն կամա-

յուղ կլամուչեց, ծմբաց և քաշվեց դեսի յեղեգով
ծածկված մառանը ...

Խոսլրով տուն վերադարձավ մտքերի մեջ թաղ-
ված, սակայն ճանապարհին մի քիչ հանդստացած:
Կինը նրա համար ընթրիք պատրաստեց: Նա կերավ
դժկամությամբ և ասաց.

— Մի աղ դրած ձմերուկ լիներ, Մարյա, ինչպէ՞ս
կուտեյի ...

— Խմած ես, ի՞նչ ե,— ժակտալով հարցրեց կինը:

— Զե, եսոր չեմ խմել: Յես, Մաշուտիա, եզուց
իշխանությանը հայտնուած եմ, վոր յեղել եմ պատժիչ
զորախմբում: Ել ուժ չունեմ եսպես ապրելու:

— Ոհո՛, բան ե մտածել: Եղ ինչու եսոր դու մի
տեսակ, կարծես շշմած լինես, չեմ հասկանուա՞ :

Նիկիտան ժպտաց, թավ շեկ բեխը շարժեց և քնե-
լու պառկելով՝ նորից լրջորեն ասաց.

— Դու ինձ համար պաքսիմաս պատրաստեր, կամ
ճանապարհի բլիթներ թխիր: Յես կդնամ նստելու:

Իսկ հետո, առանց կնոջ հորդորանքները լսելու
պառկելեր և աչքերը հառած առաստաղմ՝ մտածուած
եր. «կհայտնեմ իմ մասին ել, Ոստրովնովի մասին
ել: Թող եղ սատանաներին ել նստեցնեն: Իսկ ինձ
ի՞նչ պիտի անեն: Չո չե՛ն գնդակահարելու: Կնսեմ
մի յերեք տարի, Ուրալուած ծառ կկտրեմ և հետո
դուրս կդամ մաքուր: Են ժամանեակ ել ինձ վոչ վոք իմ
անցյալը յերեսով չի տա: Ել իմ մեղքի պատճառով
վոչ վոքի համար չեմ աշխատի, հենց ճիշտ ել կա-
մեմ, թե ինչպես ընթիա Աշտիմովի մոտ: Ուղղակի կա-

աեմ . «Փախչում Եյի ռազմաճակատից , կասեմ , ո՞վ կուղենա դլուխը դեմ տալ գնդակին» : Թող դատեն , քանի վոր հին դործ ե , մեղմ կմոտենան» :

Նա քնեց : Շուտով դռան բաղխոցը նրա քումը կտրեց : Պառկած մնաց : «Ես ո՞ւմ խելքին ե վշել ես ժամին» : Բաղխոցը կրկնվեց : Նիկիտան դժգոհ փրկնթ-փնթալով սկսեց վեր կենալ , ուղում եր լամպը վառել , բայց Մարյան արթնանալով շշնջաց .

— Գուցե ելի ժողով են կանչում : Մի' վառի : Վոչ ցերեկն են հանդիսատ տալիս , վոչ դիշերը : Կատաղել են անիծվածները :

Նիկիտան վոտաքորիկ դուրս յեկայլ նախասեն-յակ :

— Ո՞վ ե :

— Յես եմ , քեռի Նիկիտա , խորհրդից :

Մանկական անծանոթ ձայն . . . Անհանգստության , տագնասալի նման ինչ վոր մի բան դդաց Նիկիտան և հարցըց .

— Ախը ո՞վ ես դու . ի՞նչ ես ուզում :

— Յես եմ , Նիկոլայ Կուժենկովը : Նախաղահից թուղթ եմ բերել քեզ . Հրամայել ե խկույն խորհրդուրդ զաս :

— Տուր դռան տակով :

Դռան մյուս կողմը մի վայրկյան լոռություն տիրեց . . . Սպառնալից ու շոապեցնող մի հայացք սպիտակ փափախնի տակից և Տիմոֆեյը , վոր մի ակընթարթ շփոթվել եր , յելքը դտամ .

— Թղթի համար ստորադրել ե հարկավոր , բայց արա :

Նա լսեց , թե ինչպես Խոսլովին անհամբեր քայ-

բուժ ե բոկսառն՝ նախատենյակի հողե հատակին։ Դուռն
փականը չըխկաց։ Դուան շրջանակի մեջ, խավար Փոնք
վրա յերևաց Խոպրովի սպիտակ կերպարանքը։ Այդ
վայրկյանին Պոլովցեկը ձախ վոտքը դրեց շեմքին,
հացինը թափով հետ տարավ ու նրա բութ կողմօնք
խփեց Խոպրովի ճակատին։

Մորթելուց առաջ մուրճի հարվածով շշմեցրած
եղան նման Նիկիտայի ծնկները ծալվեցին, և նա ստ-
հուն կերպով ընկտով մեջքի վրա։

— Ներս մտնե՛լ։ Դուռը փակե՛լ, — կամացուկ հրա-
հանդում եր Պոլովցեկը։ Նա շոշափելով դուակ դռան
բռնակը և կացինը ձեռքեց չթողնելով՝ բաց արեց
խրճիթի դուռը։ Անկյունի մահճակալից լսվում եր
փալասների խշիչոց և կանացի տագնապալից ձայն։

— Եղ ի՞նչ եր, քա՞ն դցեցիր . . . Եղ ո՞վ ե եղ-
տեղ, Նիկիտուշկա։

Պոլովցեր կացինը նետելով, ձեռքերը պարզած-
ցատկեց դեպի մահճակալը։

— Ո՞յ . . . հարա՞ . . . թու ո՞վ ե . . . հասե՞ք . . .

Տիմոֆեյը ճակատը դռան շրջանակի վերին փայ-
տին խփելով ներս վաղեց։ Նա լսեց անկյունից յեկող
խոխոցի ու քաշքշոցի ձայնը։

Սանդուխների դլիսին Պոլովցեկը հարբածի պես
որորվելով, շրթունքները չփչփացնելով սկսեց ուտել
ճաղերի դլիսին նստած թարմ փակուկ ձյունը։ Դուրս
յեկան դեպի դռնակը։ Տիմոֆեյը հետ մնաց և մի
կվարտալ շուռ դալով՝ ուղղվեց դեպի յերդի ու դար-
մոնի ձայնը, վոր դալիս եր դպրոցից։ Դպրոցի մոտ
խաղ ու պար եր։ Տիմոֆեյը մտավ շրջանի մեջ և
դարմոնիստից խնդրեց դարմոնը։

— Տիմոշկա՛, նվազելը մեղ համար «գնչուհին», շախալ, — խնդրեց ինչ վոր մի աղջիկ:

Տիմոֆեյը փողձեց գարմոնը վերցնել տիրող ձեռքեց և վայր դցեց: Նա կամացուկ ծիծաղեց, նորից ձեռքը մեկնեց և նորից դցեց, չկալողանալով գարմոնի վորկը ձախ ուսին դցել: Մատները նրան չեյին յենթարկվում: Նա մատները շարժեց, ծիծաղեց և գարմոնը վերադարձրեց:

— Լակել ե մի տեղ, յերեսում ե:

— Տեսէք, աղջիկերք, վոնց և հարբած նա:

— Պիջակի վրա ել վրախել ե. իսկական...

Աղջիկները հեռու քաշվեցին Տիմոֆեյից: Գարմոնի տերը դժուհությամբ ձյունը փչեց գարմոնի ծալքերից և անվստահությամբ սկսեց «գնչուհին» նվազել: Ույլանա Ախովատկինան—աղջիկներից սմենարձրահասակն սկսեց ցածրիկ կրունկները թրիսկացնելով ու ձեռքերը ջրկիրի վայտերի պես տարածելով պարել: «Պետք ե՝ նստել մինչեւ լույս, — մտածեց Տիմոֆեյը, կարծես մի ինչ վոր ոտարի մասին, — այն ժամանակ, հետաքննություն անելիս վոչ վոք չի կասկածի»: Նա վեր կացավ և արդեն դիտմամբ հարբած ձեվանալով, որորվելով մոտեցավ դպրոցի շեմքին նըստած աղջկան:

Գ Լ Ո Ւ Խ

Գրեմյաչի Լոգում անցկացրած մի շաբաթվալա ընթացքում Դավիդովի առաջ մի շարք հարցեր ծառացան: Նա գյուղ եր յեկել աշխատանքի՝ սմբենելին վո՛չ վորպես միամիտ քաղաքացի, սակայն դասակարդային պայքարի շրջապտույտը, նրա խճճված հանդույցները և հաճախ գաղտնի, թաղնված ձեւերը նըրան այսքան բարդ չելին թվում, վորպիսին նա տեսավ Գրեմյաչի գալու հենց առաջին որերը: Նրան անհամարնալի յեր, թե միջակների մեծ մասն ինչու համառորեն չի ցանկանում կոլտնտեսություն մտնել, չնայած կոլտնտեսային կարգի վիթխարի առավելություններին: Գրեմյաչիի բոլոր մարդիկ անցնում եյին Դավիդովի մտքի միջով: Յեկ նրանցից շատերը նրա համար ծածկված եյին ինչ վոր մի անշոշափելի, անտեսանելի վարպետույրով: Գյուղը նրան թվում եր նոր կառուցվածքի մի բարդ մոտոռ և Դավիդովն ուշադիր ու լարված ճզնում եր ճանաչել, ուսումնասիրել այն, տնտղել նրա յուրաքանչյուր մասնիկը, լսել այդ դարմանալի մեքենայի յուրաքանչյուր դարկը՝ նրա ամենորյա, անդադրում ու լարված աշխատանքի ընթացքում:

Զքավոր Խոսկովի ու նրա կնոջ հանելուկային

սպանությունը նրան դլիսի գցեց, վոր այդ մեքենայի մեջ մի ինչ վոր թաղնայած զսպանակ է գործում: Նա աղոտ կերպով հասկանում էր, վոր պատճառակական մի կատ կա Խոպրովի մահվան ու կոլեկտիվացման միջև, այդ նորի, վորը հախուռն թափով զարնում է ցիր ու ցան տնտեսությունների վրած սրատերին: Առավոտյան դեմ, յերբ հայտաբերվեցին Խոպրովի ու իր կնոջ դժամկները, նա յերկար զբույց ունեցավ Ռազմյուտնովի ու Նադուլնովի հետ: Նրանք ել եյին խճճվել գուշակությունների ու յենթաղբությունների մեջ: Խոպրովը չքայլոր եր, անցյալում՝ սպիտակ, հասարակական կյանքում՝ պատիվ և մասամբ հենաված եր կուլակ կապչինովին: Ինչ վոր մեկի յենթաղբությունը, թե՝ սպանել են կողոպտելու նպատակով, բայց արձակ անհեթեթություն եր, քանի վոր նրա ունեցվածքից վոչինչ սկըցրած չեր և, ասենք, Խոպրովը վերցնելու բան ել չունել:

Յերբ Դավիդովը յենթաղբություն արեց, թե սպանոթյանը կուլակներից վորեե մեկը մասնակից է, և առաջարկեց անմիջապես արտաքսել նրանց դյուզից, Նադուլնովը վճռականորեն պաշտպանեց այդ առաջարկը.

— Նրանց միջից են թրխացրել Խոպրովին, խոսք չկա: Յուրա յերկներ քշել այդ գարշելիներին:

Ռազմյուտնովը ժապանականորեն պաշտպանեց այդ առաջարկը.

— Նրանց պետք է քշել, խոսք չկա: Նրանք ժողովրդին խանգարում են կոլտնտեսություն մտնել: Միայն թե՝ Խոպրովը նրանց ձեռքով չգնաց: Հո չի կարելի ամեն բան կուլակների վրա դցել. տարորինակ բաներ միք ատի, ախտել:

Շրջանից յեկան քննիչն ու բժիշկը։ Սպանվածների դիմակները բաց արխին, հարևաններին հարցաքննեցին։ Սակայն, այդպես ել քննիչին չհաջողվեց դաշնելայն թելի ծայրը, վորը կտաներ դեպի սպանության մասնակիցներն ու պատճառները։ Հետեւյալ որը, վետրվարի 4-ին, կոլտնտեսականների ընդհանուր ժողովը միաձայն վորոշեց Հյուսիսային Կովկասի յերկրամասից դուրս քչել կուլակային տնտեսությունները։ Վարչությունը հաստատեց լիազորների կողմից ընտրված կոլտնտեսության վարչությունը, վորի կազմի մեջ մտան Յակով Լուկիչ Ռստրոմովը (նրա մեկնածությունը բուռն կերպով պաշտպանում ելին Դավիթովն ու Ռազմյունովը, չնայած Նադուլնովի առաքվումներին), Պավել Լյուբիշիկինը, Դյոմիկա Ռոշակովը։ Դժվարությամբ անցավ Արկածկա Մենոկը, իսկ հինգերորդը միաձայն ու առանց վիճաբանությունների ընտրվեց Դավիթովը։

Ընդհանուր ժողովում յերկար վեճ յեղավ, թե ինչպես անվանել կոլտնտեսությունը։ Վերջում Ռազմյունովը մի ճառ առաց.

— Զեմ ընդունում «Կարմիր կաղակ» անունը. դա մեռած ու ծամծամած անուն է։ Առաջ բանիվորները յերեխաներին կաղակով ելին վախեցնում։ Յես, թանկաղին ընկերներ, այժմյան կոլտնտեսականներ, առաջարկում եմ մեղ գեղի սոցիալիզմ տանող թանկադին ճանապարհի, մեր կոլտնտեսության սնունը զնել ընկեր Ստալինի անվան կոլտնտեսություն։ Մեղ ըուլորիս հայտնի յե, վոր հենց սկզբից նա գնում է ուղիղ ճանապարհով, չի ճոճվում վոչ ես կողմը, վոչ են կողմը և մենք տարածված լավայի պես գնում ենք

նրա հետեւից դեպի այդ նույն հարազատ սոցիալիզմը, վորի համար մենք կուլել ենք, կանանց ու յերեխաներին ենք նետել, մեր ջահել կյանքն ենք մոռացել և անինա թրջել ենք մեր ձեռքերը և՛ մեր, և՛ ուրիշ արյան մեջ:

Անդբեյը նկատելիորեն հուզվեց և նրա ճակատի սպին շառագունեց: Մի վայրկյան նրա վրդովված աչքերը պատեցին արցունքի մշուշով, սակայն նա իրեն հավաքեց և ձայնը բարձրացրեց.

— Թող, յեղբայրներ, յերկար կյանք ունենա մեր ընկեր իսոսիֆ Վիսարիոնովիչը ու ղեկավարի: Առաջարկում եմ վոտքի կանգնել նրա պատվին ու դրւխարկները հանել:

Ժողովը վոտքի կանգնեց, փայլեցին մերկացած ճաղատները, բացվեցին բազմազույն գլուխները:

Միաձայն կոլտնտեսության անունը դրվեց Ստալինի անվան:

— Եղ ո՞ւր ես գնում, — հետեւյալ առավոտը հարցվեց Նազովնովը Դավիդովին, ուսւր գալով գյուղխորհրդից:

— Ուղում եմ գնալ Ոստրովնովի մոտ: Յանկանում եմ նրա հետ իր տանը խոսել: Նա իսկոք դյուզացի յէ: Յես ուղում եմ նրան տնտես դարձնեմ, ի՞նչ ես կարծում: Այնպիսի մարդ ե հարկադոր, վոր նրա մոտ կոլտնտեսության կոսկելը ուսւբլու ձայն հանի: Ինչպես յերմում ե, Ոստրովնովն այդպիսի մարդ ե:

Նազովնովը բարկացած ձեռքը թափ տվեց.

— Ելի՛ նույն պատմությունը: Դուր ե յեկել քեզ

ու Անդրեյին եղ Ոստրովյանովը։ Նա կոլտնարեսությանն այնքան և պետք, ինչքան մահակը՝ շանը . . . Յես դեմ էմ։ Յես կաշխատեմ վոնդել նրան կոլտնարեսությունից։ Յերկու տարի գյուղհարիլը տոկոսային հավելումով և վճարել ուռմացած դարշելին, պատերազմից առաջ կուլակի կյանք եր վարում, իսկ մենք առաջ քաշենք նրան։

— Նա կուլտուրական տնտեսվար ե։ Ի՞նչ ե, քո կարծիքով յես կուլակի՞ն եմ պաշտպանում։

— Յեթե նրա թեերը չկտրեյինք, նա վաղուց կուլակիների շարքը թուած կլիներ։

Նրանք բաժանվեցին առանց համաձայնության դալու, իրարից դժուն։

Գ Լ Ո Ւ Խ XII

Դեռ լույսը չբացված՝ Յակով Լուկիչն արթնաց-
րեց վորդուն ու կանանց : Վառարանը վառեցին : Յա-
կով Լուկիչի վորդին՝ Սեմյոնը հետանի վրա դանակ-
ները սրեց : Յեսաուլ Պոլովցեց փաթաթանները խը-
նամքով փաթաթեց բրդե գուլպաներին, թաղիքի վոտ-
նամանները հագավ : Ապա Սեմյոնի հետ միասին դնա-
ցին վոչխարների փարախը : Յակով Լուկիչը տասնյոթ
վոչխար և յերկու այժ ուներ : Սեմյոնը գիտեր, թե
վոր վոչխարն ե հղի, վորն ե ծնել : Նա սկսեց վոչ-
խարները բռնել, շոշափելով ընտրել ամորձատածնե-
րը, խոյերն ու գառները և մեկ-մեկ հրել դեպի տաք
մորթատեղը : Պոլովցեն սպիտակ փափախը ճակատին
թեքած՝ բռնում եր վորձի սառն ու վոլորուն յեղ-
ջյուրներից, գետին տապաւում և ծունկը դնելով
դետնատարած կենդանու վրա, զլուխը բարձրացնում
ու կոկորդը կտրում, բաց թողնելով սե, խոխոջյուն
արյունը :

Յակով Լուկիչը տնտես մարդ եր : Հեղափոխու-
թյունից առաջ նա սկսել եր ուժեղանալ, մտածում
եր տղային ուսումի տալ Նովոչերկասկի յունկերական
դպրոցում, մտածում եր մի ձիթհանք գնել և արդեն
փող եր կուտակում : Նա մտածում եր առևտուր սկսե-
լով գնել ճախորդության մեջ գտնվող զորական ավագ

Ժողովին կիսավեր ջրաղացը... Այն ժամանակ Յակով
Լուկիչն իրեն պատկերացնում եր վոչ թե հասարակ
կոշտ կտորի անդրավարտիկով, այլ չեռուչայի հա-
ղուստով, ժամացույցի վոսկե շղթան իր փորի լայ-
նությամբ կախված, նա իրեն պատկերացնում եր վոչ
թե կոշտապատ, այլ վասիուկ, աղիտակ ձեռներով,
վորոնցից ոճի մաշկի պես կթափսիեն կեղտից սևա-
ցած յեղունդները։ Տղան գնդապետ դուրս կդար և
կամումնանար մի կրթված աղջկա հետ, և մի որ Յա-
կով Լուկիչը կայարան կղնար նրանց բերելու վոչ թե
հասարակ սայլակով, այլ սեփական ալտոմոբիլով,
այնպիսի ալտոմոբիլով, ինչպիսին ունի կալվածատեք
Նովոպալավլովը... Հեղափոխությունը վրա հասալ
չունված ցնցումների սարսուստով, յերերաց հողը
Յակով Լուկիչի վոտքի տակ, սակայն նա իրեն չկորց-
րեց։ Իրեն հատուկ ամբողջ լրջախոհությամբ ու խո-
շամանկությամբ նա կարողացաւ հեռվից տեսնել վե-
րահաս վտանգը և շոտակ, հարեաններից ու դյուլա-
ցիներից ծածուկ սկսեց ցրիվ տալ կուտակածը... Վա-
ճառեց շողեշարժիչը, վոր գնել եր 1916
թվին, կճուճի մեջ մի տեղ թաղեց յերեսուն հատ
վոսկի տասնոց և մի կաշվի քսակ արծաթ, ծախծը-
րեց ավելորդ անտառները, կրծատեց ցանքը։ Նա-
խապատրաստվեց։ Յեվ հեղափոխությունը, պատե-
րազմն ու ռազմաճակատներն անցան նրա վրայով,
վորպես անապատի մրրիկը՝ խոտի վրայով։ Ճիշտ և,
կռացրին նրան, բայց կոտրել, կամ վրշել՝ չկարողա-
ցան։

Փոթորկի ժամանակ միայն բարեկներն ու կաղ-
նիներն են կոտրվում և արմատախիլ լինում, իսկ քս-

լախոտը միայն իսոնարհվում է դետնահուալ, և հետո,
նորից բարձրանում: Բայց, ահա, Յակով Լուկիչին
նորից «բարձրանալ» չհաջողվեց: Հենց այդ ե պատ-
ճառը, վոր նու դեմ և խորհրդային իշխանությանը,
հենց այդ ե պատճառը, վոր որերը մռայլ եյին նրա-
համար, ինչպես ամորձատած ցուլի համար: Դրա հա-
մար ել այժմ Պոլովցին ավելի մերձավոր եր նրան,
հարազատ վորդուց ել ավելի հարազատ: Կամ դնալ
նրա հետ, վորպեսզի վերադառնա այն կյանքը, վոր
առաջ փայլում ու խշխշում եր ծխածանագույն հա-
րյուր ոութիանոցի նման և կամ յեղածն ել կորցնել:
Հենց դրա համար ել տասնչորս հատ վոչխար եր մոր-
թում Յակով Լուկիչը — Գրեմյաչի Ստալինի անվան-
կոլտնտեսության վարչության անդամը: «Այե-
լի լավ ե վոչխարի լեշը այս, այս ու-
շանը գցեմ, վորը յեսառու Պոլովցելի վոտ-
քերի տակ ազահորեն վոչխարի դոլորշաբույր
արյունն ե լակում, քան թե վոչխարները խառ-
նեմ կոլտնտեսության հոտին, վորպեսզի այնտեղ գի-
րանան, բաղմանան և իմ թշնամի իշխանության կեր
դառնան», — մտածում ե Յակով Լուկիչը: — Եեվ ճիշտ
եր ասում ուսումնական յեսառու Պոլովցել, թե՝ «պետք
է մորթոտել անասունները: Պետք ե փորել բոլշևիկնե-
րի վոտքի տակի հողը: Թող կոտորվեն յեղներն ան-
խնամ մնալուց, մենք դեռ ձեռք կրերենք յեղներ,
յերբ կը բավիկնք իշխանությունը: Մեզ համար Ամերի-
կայից ու Շվեդիայից յեղներ կուլարկեն: Սով ու ա-
զերումով, ասլստամբությամբ խեղղենք նրանց: Իսկ
դամբիկը մի ափսոսա, Յակով Լուկիչ: Այդ լավ ե,
վոր ձիերը համայնացրել են: Այդ մեզ համար ավե-

Ավ հարմար ու ձեռնտու յե... Յերբ ապստամբենք ու
գյուղերը դրավենք, ավելի հեշտ կլինի ձիերն ընդհա-
նուր գոմերից գուրս քաշել ու թամբել, քան թե բա-
կեց բակ վազվեր ու ձեւ վորոնել»: Վոակի խոսքեր
են: Յեռառու Պոլովցեն դլուին ել այնպես վստահելի
յե աշխատում, ինչպես բազուկները...

Յակով Լուկիչը ծածկի տակ կանդնած նայում
էր, թե ինչպես Պոլովցեն ու Սեմյոնը մաշկում են
մորթած ու կախված վոչխարները: «Չղջիկ» լապտե-
րը սղայծառ լուսավորում եր վոչխարի սպիտակ
միսը:

Մինչև նախաճաշ հաղիվ վերջացրին: Թարմ մսե-
րը կախ տվին շտեմարանում: Կանայք համեցին դը-
մակները: Պոլովցեր փակվեց փոքրիկ սենյակում
(ցերեկը նա այդ սենյակից դուրս չեր գալիս): Նրա
համար բերին վոչխարի մսով տաք ապուր և զմակի
տհալ: Հաղիվ եր հարսը նրա մոտից դուրս տարել
դատարկ ամանը, յերբ ճոռաց բակի դուռը:

— Հայրիկ, Դավիդովը գալիս ե,—գոչեց Սեմյոնը,
վոր առաջինն եր տեսել բակը մտնող Դավիդովին: Յա-
կով Լուկիչն ալյուրից ավելի սպիտակ դույն ստացավ:
Իսկ Դավիդովին արդեն նախասենյակում ամելով մաք-
րեց իր վոտքերը, խուլ հազար և քայլում եր ինքնա-
վստահ, հաստատուն կերպով փոխելով վոտքերը:

«Կորա, —մտածեց Յակով Լուկիչը:—Ենպես ե ման
դալիս շան վորդին, կարծես ամբողջ աշխարհի տերը
լինի: Կարծես իր սեփական տունն ե մտնում: Ո՞հ,
կորա! Յերեկի Նիկիտայի պատճառով ձերբակալելու
յե յեկել. դլիսի յե ընկել դեւ»:

Լավեց դռան բաղխոցն ու խոսպոտ տենորը.

— Կարելի՞ յէ մտնել :

— Մտե՛ք, —ուզեց բարձր ձայնով ասել Յակով Լուկիչը, սակայն նրա ձայնը չշուկով դուրս յեկավ :

Դավիթովը քիչ սպասեց և դուռը բաց արեց : Յակով Լուկիչը սեղանի մոտից վեր չկացավ (չեր կարող և նույնիսկ դողացող, ուժասալառ վոտքերը բարձրացրեց, վորպեսզի չպվի, թե ինչպես վոտնամանների կրունկները կոտորակի նման թխթխկոցով թակում են հատակը) :

— Բարե, տանտե՛ք :

— Բարե ձեղ, ընկեր, —միաձայն պատասխանեցին Յակով Լուկիչն ու իր կինը :

— Սառնամանիք ե դուրսը . . .

— Հա, ցուրտ ե :

— Հաճարը ցրտահար չի՞ լինի, ինչ ես կարծում :

Դավիթովը ձեռքը տարավ գրալանը թաշկինակ հանեց ու քիթը մաքրեց :

— Անցեք այս կողմը, ընկեր, նստեցեք, —հրավիրեց Յակով Լուկիչը :

«Ինչո՞ւ եսպես վախեցավ ես մարդը» — զարմացավ Դավիթովը, նկատելով, թե ինչպես դունասովեց տան տերը և ինչպես հաղիվ են չարժվում նրա դողով բըռնիմած շրթունքները :

— Հա, ինչպե՞ս կլինի ուրեմն հաճարը :

— Զե, չպետք ե վոր ցրտահարվի . . . ձյունը կը պաշտպանի : Գուցե թե ենտեղ ցուրտը տա, վորուկեց քամին քշել ե ձյունը :

«Հաճարից ե սկսում, բայց մեկ ել տեսար, կասի . . . «Դե, պատրաստվի՞ր» : Գուցե թե մեկն ու մեկը Պոլովցեի մասի՞ն ե մատնել : Խուզարկությո՞ւն», —

մտածեց Յակով Լուկիչը։ Նա քիչ-քիչ սկսեց տիրապետել իրեն, արյունը խփեց դեմքին, և քրտինքի կաթիները ճակատի վրայով սահեցին դեսլի սպիտակավուն բեխերն ու կոշտամաղ կղակը։

— Բարի յեք յեկել, անցնենք սենյակը, հյուրս եղինեք։

— Յես մտա խոսելու քեզ հետ... ինչպես ե անուն հայրանո՞ւնդ։

— Յակով, Լուկինի վորդի։

— Յակով Լուկի՞չ։ Հա, ուրեմն, Յակով Լուկիչ, դու ժողովում շատ լավ, շատ խելոք խոսեցիր կուտնաբռնության մասին։ Ի հարկե, դու իրավացի յես, վոր կոլտնտեսությանը բարդ մեքենա յե հարկավոր։ Բայց, այ աշխատանքի կազմակերպման մասին դու սխալվեցիր, վրաստ ե։ Մտածում ենք քեզ առաջ քաշել իրեւ տնտեսալար։ Յես լսել եմ, վոր դու կուտուրական տնտեսատեր ես...»

— Դեռ մի դուք ներս անցեք, սիրելի ընկեր։ Գաշա, ինքնայեռը դիր։ Կամ, դուցե թե դուք մասպո՞ւր կուտեք։ Կամ թե աղ դրած ձմերո՞ւկ կուզեք կտրեմ։ Ներս յեկեք, մեր թանկաղին հյուր։ Մեղ դեպի նոր կյանք... — Յակով Լուկիչն ուրախությունից չնչակառը յեղավ, կարծես նրա ուսերից մի լեռ ցածառն։

— Կուտուրական տնտեսություն եմ վարել, ճիշտ ասացիք դուք։ Ուզում եյի մեր մութ մարդկանց հետ կանոնեցնեմ պատենական սովորություններից... ինչպես են վարում։ Ճանկուտում են հողը։ Շըջանային հողբաժնից դովասանական թուղթ ունեմ։ Սեմյոն, բեր գովասանագիրը, են, վոր շրջանակի մեջ

և դրված։ Սաենք, մենք ինքներս այնտեղ կանցնենք,
հարկավոր չե։

Յակով Լուկիչը հյուրին առաջնորդեց սենյակ,
աննկատելիորեն աչքով անելով Սեմյոնին։ Վերջինս
նրան հասկացավ, դուրս յեկավ միջանցք, փակելու
այն վորքիկ սենյակի դուռը, վորտեղ Պոլովցեն եր
թաղնալած։ Նա նայեց սենյակի ներսը և վախեցավ.
սենյակը դատարկ եր։ Սեմյոնը մտավ դահլիճ։ Պո-
լովցեը միայն բրդե գուլպաներով կանգնած եր սեն-
յակի դռան մոտ։ Նա նշան արեց, վոր Սեմյոնը դուրս
գնա և իր կրծիկոտ, դազանի ականջի նման վեր ցըց-
ված ականջը կպցրեց դռանը։ «Աներկյուղ սատանա-
յե», մտածեց Սեմյոնը՝ դուրս գալով դահլիճից։

Ցուրտ դահլիճում Պոլովցեի վոտքերը սառչում
եյին, սակայն նա նստել եր ամնշարժ և սիրտ ճմլող
ատելությամբ լսում եր թշնամու խոպոտ ձայնը, վորն
իրենից բաժանված եր միայն մի դռնով։ «Խոպոտել ե
շունն իր միտինըներում։ Յես քեզ... Ա՛խ, յեթե կա-
րելի լիներ հենց հիմա...»։ Պոլովցեվը կրծքին սեղ-
մեց արյան առաստ հոբանքից ուստած բռունցքները, յե-
ղունզները խրվեցին ափերի մեջ...

Դռան հետևից լսվեց.

— Ինձ, ընկեր Դավիթով, իզուր չե, վոր մեր բա-
րերար խորհրդային իշխանությունը դովանանդիր ե
տվել։ Յես դիտեմ, թե ինչը վորտեղ ե հարկավոր։
Պատահում ե, վոր գյուղատնտեսներն ել վորոշ բանե-
րում սխալվում են, բայց նրանց ուսումի մեջ չատ-
ճիշտ բաներ ել կան։ Այ, որինակ, յես ադրոնոմա-

կան ժուռնալ եմ դուրս դրել և նրա մեջ մի ուսումնական մարդ, հենց նրանցից, վորոնք ուսանողներին են սովորեցնում, դրել եր, թե սերմը հողում չի ել սառչում, այլ նրանից ե փշանում, վոր մերկ հողը, վորի վրա ձյունի ծածկոց չկա, ճաքճքում և և իր հետ միասին բույսի արմատներն ել և պոկոտում:

— Ո՛, այդ հետաքրքիր ե. յես այդ չեցի լսել:

— Յեվ ճիշտ ե դրում նա: Յես համաձայն եմ նրա հետ: Յես նույնիսկ փորձ արի ստուգելու համար:

— Այս, Յակով Լուկիչ, դու շատ ճիշտ բան ես ասում, փաստ ե: Հարկավոր ե ձյունը պահել հողի վրա: Դու այդ ազրոնոմական ժուռնալներն ինձ տուր կարդամ:

«Քեզ պետք չեն դա: Զես հասցնի: Քո կյանքը կարճացել ե», ժպտաց Պոլովցել:

Պոլովցել ցանկացավ կիսատակառի վրա ավելի հարմար տեղավորվել, սակայն խոռնիը դուրս պրծավ նրա տակից և դղրդոցով ցած ընկալ: Պոլովցել ատամները կրծտացրեց, յերթ լսեց, վոր Դավիթովը հարցրեց.

— Այդ ի՞նչ ընկալ այնտեղ:

— Յերեի մեկը մի բան գցեց: Զմեռը մենք այնտեղ չենք ապրում, վառելիք շատ կղնա... Հա, այ, յես ուզում եմ ձեղ ցույց տալ ընտիր տեսակի կանեփի: Ուրիշ տեղից եմ դուրս գրել: Զմեռը մենք ես դահլիճումն ենք պահում: Ներս մտնենք:

Պոլովցել մի վոստյունով թուավ դեսի նախասենյակի դուռը: Դուռը ժամանակին յուղված եր սաղի-

Ճարպով, ուստի առանց ճռողի անաղմուկ դուրս թողեց նրան...

Դալիդովը Յակով Լուկիչի տանից դուրս յեկավ մի կապոց ժուռնալներ թևի տակ, գոհ իր այցելության արդյունքից և ե՛լ ավելի համոզված, վոր Ռոտրովնովն ողտակար մարդ ե։ «Այ, այսպիսի մարդկանցով մենք կարող ենք մի տարում շուռ տալ գյուղը։ Խելոք գյուղացի յե սատանան, կարդացած մարդ։ Յե՛վ ինչպես ել լավ ե ճանաչում տնտեսությունն ու հողը։ Այ քեզ վորա՛կ։ Չեմ հասկանում, թե ինչու Մակար Նաղուլնովը խեթ ե նայում նրա վրա։ Փաստ ե, վոր նա կոլտնտեսությանը շատ մեծ ողուտ կտա», մտածում եր նա, քայլելով դեպի գյուղխորհուրդ։

Գ Լ Ո Ւ Խ III

Գրեմյաշիում սկսեցին ամեն գիշեր Յակով Լուկիչի նման անասունները մորթուտել: Հենց վոր միքիչ մթնում եր, արդեն լսվում եր, թե ինչպես այստեղ, այնտեղ խուլ ու կարճատես մայում ե վոչխարը, մահվան ճիշով ծղբտում ե խողը, կամ բառաշում ե հորթը: Մորթուտում եյին և կոլտնտեսություն մտածները, և մենատնտեսները: Մորթում եյին յեղներ, վոչխարներ, խողեր, նույնիսկ կովեր, մորթում եյին նույնիսկ վերջին մնացորդները... Յերկու գիշերվա մեջ Գրեմյաշին յեղջերավոր անասունների թիվը կլաով չափ պակասեց: Գյուղով մեկ չներն սկսեցին աղիքներ ու փորոտիք քաշքաշել, մառաններն ու շտեմարանները լցվեցին մսով: Յերկու որվա մեջ կոռպերատիվ խանութը վաճառեց մոտ յերկու հարյուր փութ աղ, վոր մեկ ու կես տարի ընկած երպահնեստում: «Մորթիր, հիմի մերը չե», «Մորթեցեք, միենույն ե, մասմթերմանն են վերցնելու», «Մորթիր, թե չե կոլեկտիվում մսի համ չես տես-

Աելու», —տարածվում եր աև փսփսոցը։ Յեկ մոբ-
քոտում եյին։ Ուստում եյին ազահորեն, սահմանից
գուրս։ Մեծից մինչև փոքրը՝ բոլորի փոքրը ցավում
եր։ Ճաշի ժամանակ խրճիթներում սեղանները
կոտրվում եյին յեկած ու տապակած մսից։ Ճա-
շի ժամանակ բոլորի բերանը յուղոտ եր լինում,
բոլորը դկրտում եյին, վոնց վոր հոգեհացի ժամա-
նակ, և բոլորի աչքերը պղտորմվել եյին արբեցուցիչ
էջտությունից։

Շչուկար պապն առաջիններից մեկն եր, վոր
գետին դլորեց իր մի տարեկան հորթը։ Ինքն ու իր
պառակը միասին ուղում եյին մորթած հորթը
կախ տալ, վորպեսդի հեշտ լինի մաշկելը։ տանջին-
ցին յերկար, բայց իզուր (շատ ծանր դուրս յեկավ
ճարպակալած հորթը)։ Պառակը նույնիսկ իր մեջքը
ցավացրեց, յերբ փորձեց վեր քաշել հորթի հետույքը
և դրանից հետո մի շաբաթ շարունակ նրա մեջքին
կճում եր դցում հեքիմ-կնիկը։ Իսկ Շչուկար՝ պապը
հետեյալ առավոտն ինքը յեփեց կերակուրը և, իր
պառակի խեղանդամության վշտից եր, թե սոսկալի
ազահությունից—ճաշի ժամանակ այնքան շատ յե-
փած դոշի միս կերավ, վոր դրանից հետո մի քանի
որ տանից դուրս չեկավ, պարկի կտորից կարված
անդրավարտիկը չկոճկեց և ամբողջ որը, սոսկալի
թրտին կորչում եր մարագի հետեւ, արևածաղկի
ցողունների արանքում։ Այդ որերին ով վոր Շչու-
կարի խարխուլ խրճիթի մոտով անցնում եր, տես-
նում եր, ահա, պապի փափախը տնկվել ե բանջա-
ռանոցում, արևածաղկի ցողունների մեջ, տնկվել ե

ու տատանվում։ Հետո, ցողունների արանքից հանկարծ լույս եր ընկնում և ինքը՝ Շչուկար պապը և ուղղվում դեպի տուն, առանց փողոցի կողմը նայելու, յերկու ձեռքով բռնած չկոճկած վարտիկը։ Տառապնարից ընթացքով, վոտքերը հաղիվ քարշ տալով հենց վոր համում եր դռներին, հանկարծ, մի ինչվոր անհետաձգելի բան հիշած մարդու պես շուրջ եր դալիս, մանրիկ ու արագ քայլերով կրկին վազում դեպի արևածաղիկների ցողունները։ Յեկ նորից անշարժ ու հանդիսավոր կերպով ցողունների արանքում յերեսում եր պապի փափախը։ Իսկ սառնամանիքը սեղմում եր, քամին վոռնում եր բանջարանոցում և քշում, ցրում պապի շուրջը գոյացած ձյունի սրածայր կույտերը։

Յերկրորդ որը, յերեկոյան դեմ, հենց վոր Ռազմյոտնովը խմացալ, վոր անասունների կոտորածը մասսայական բնույթ և ստացել, վազեց Դավիդովի մոտ։

— Նստել ես։

— Կարդում եմ։ — Դավիդովը շուռ տվեց փոքրիկ դեղնավուն գրքույիկ թերթը և մտախոհ Ժըմագ։ — Այս, քեզ գիրք, մարդու քեփն և դալիս, — նա ժպտաց, բանալով իր ատամնափոս բերանը և տարածելով կարճիկ, ուժեղ թեկը։

— Դու պիտի լսես ի՞նձ, — պրովված հարցրեց Ռազմյոտնովը։

— Ապա ինչպես։ Իհարկե, պիտի լսեմ։ Իսկույն։

Դավիդովը խոհանոցից բերեց մի կավե աման

սասոն ասլուր և նստեց։ Նա միանդամից մի ահա-
գին պատառ հաց կծեց և ծամելով՝ իր հոգնած,
մոխրագույն աչքերը կլոցեց դեպի Ռազմյոտնովը։
Ապօւրի յերեսին սառել եյին տավարի մսի նարըն-
ջագույն ճարալի կլոր կոճակները և բոցի նման
կարմրին եր տալիս մանահեխի շիթը։—Մսո՞վ ե
ապօւրը, —չարությամբ հարցրեց Անդրեյը, ծխա-
խոտից ներկված մատով ցույց տալով ամանը։

Դավիդովը պատառը կուլ տալով ու գոհումա-
կությամբ ժպտալով՝ դլիսով արեց։

— Իսկ վորտեղի՞ց ե միուր։

— Զգիտեմ։ Ի՞նչ ե վոր։

— Այն, վոր գյուղում անասունների կեսը
մորթոտել են։

— Ո՞վ։—Դավիդովը հացի կտորը շուռ տվեց
ու մի կողմ հրեց։

— Սատանանե՞րը։ Ռազմյոտնովի ճակատի ըս-
պին կարմրաժոռեց։—Կոլտնտեսության նախաղա՛հ...
Գիղա՛նտ էս կառուցում։ Հենց քո կոլտնտեսական-
ներն են մորթոտում, ահա թե ով։ Նաև մենատնտես-
ները։ Կատաղել են գարշելիները։ Մորթում են աջ ու
ձախ, և նույնիսկ յեզներն են մորթում։

— Դու ել հենց սովորություն ունեն գոռայու-
վոնց վոր միտինգում, —նորից դառնալով ապօւրին՝
վշտացած ասաց Դավիդովը։—Դու ինձ հանգիստ ու
կարգին ասա, ո՞վ ե մորթոտում, ինչո՞ւ։

Ռազմյոտնովը պատմեց, ինչ վոր գիտեր անա-
սունների մորթի մասին։ Վերջում Դավիդովն ու-
տում եր համարյա առանց ծամելու, կատակները

Ժիանդամից թողեց, աչքերի մոտ կնճիռներ հավաքվել-
ցին և դեմքը կարծես ծերունու տեսք ստացավ:

— Խսկույն գնա և ընդհանուր ժողով հրավիրել: Նազունովին... Ասենք յես անձամբ կզնամ նըս
մոտ:

— Խակ ինչո՞ւ ժողով հրավիրել:

— Ինչպես թե ինչու: Վոր արգելենք անասուն-
ները մորթելը: Կվոնդենք կոլտնտեսությունից ու-
ղատի: Լուանք: Ախր այդ խիստ կարեռը և, վաստ
ե: Այդ նորից կուլակներն են քար գցում մեր ա-
նիվի տակ: Դե, ա՛ռ, ծխիր ու շտապիր...

Ռազմյատնովը դուրս գնաց: Դավիդովն ուղղեց
կեղտոտված Փուֆայկայի ոճիքը, հարդարեց գեպի
վեր սանրած թուխ մաղերը և սկսեց հաղնվել:

Ճանապարհին մտավ Նազունովի մոտ: Վեր-
ջինս նրան գիմայլորեց հոնքերը կիտած, մի կողմ
նայելով:

— Մորթոտում են անասունները... Ախսոսում
են սեփականությունը: Մանր բուրժուազիայի մեջ են-
պիսի շիոթություն և ընկել, վոր ասել չի լինի... —
Մրթմրթած նա վողջունելիս: — Պատրաստ են յերեք
ոեխով լավելու, միայն թե կոլտնտեսությանը չտան: Յես,
այ թե ինչ եմ առաջարկում: Հենց եսոր ժողո-
վում վորոշում հանենք, վոր չարամտորեն մորթող-
ները գնդակահարվեն:

— Ի-ի-ի՞նչ:

— Գնդակահարվեն, ասում եմ: Ո՞ւմ սկսոք ե դի-
մել գնդակահարության մասին: Ժողղատարանը չի՞
կարող, հա՞: Բայց, այ, յեթե մի յերկուսին, վորոնք

Հղի կովեր են մորթել, թրիկացնենք, մյուսներն ել խելքի կդան: Հիմա հարկավոր ե ամբողջ խստությամբ գործել:

Դամիկովը կեղին զցեց սնդուկի վրա ու սկսեց սենյակում քայլել: Նրա ձայնի մեջ անբավականություն ու մտախոհություն կար:

— Ահա, դու նորից ծոռւմ ես... Պատուհաս ես դու, Մակար: Դե, մի ինքու մտածիր. միթե՞ կարելի յե կով մորթելու համար մարդ գնդակահարել: Ախր եղալիսի որենք ել չկա, փաստ ե: Յեղել ե կենտղործկոմի վորոշումը և դրա մասին այնտեղ պարզ ասված ե, յերկու տարով նատեցնել, կարելի յե հողից դրկել, չարամիտներին արտաքսել, իսկ դու՝ միջնորդենք գնդակահարելու: Նու, ճիշտն ասած՝ դու մի տեսակ...»

— Մի տեսակ, մի տեսակ...Վոչ մի տեսակ: Դու չարունակ չափում ու ծրադրում ես: Իսկ ինչո՞վ կցանենք, յեթե բոլոր յեզները մորթումին:

Մակարը մոտեցավ Դամիկովին, թաթերը զրեց նրա լայն կրծքին: Նա համարյա մի դլսի չափ բարձր եր Դամիկովից: Նայելով նրան վերնից ներքեւ՝ խոսեց.

— Սյոմա, մեղք եմ դալիս քեզ: Ախր քո ուղեղն ինչո՞ւ այնքան ծանր է շարժվում, —և համարյա գոռաց. —Ախր կկորչենք, թե վոր ցանքը դլուխ չըերենք: Միթե՞ չես հասկանում: Եղ դարչելիներից մի քանիսին անպայման պիտի գնդակահարել: Կուակներին պիտի գնդակահարել: Նրանց սարքածն ե: Բարձր մարմիններին պիտի խնդրել:

— Հիմա՞ր :

— Ըհը, ելի յես հիմարը յեղա... — Նազունովը
տրտմությամբ գլուխը կախեց, ասդա խթանված ձիռւ
նման նորից վեր բարձրացրեց ու վորոտաց. — Բոլո՛րը
կմորթեն: Կովի ժամանակ և հասնել, վոնց վոր քա-
ղաքացիական պատերազմի ժամանակ, թշնամին
վիստում և չորս կողմը, խակ դո՞ւ... Դուք, քեզ պես-
ները կխորտակեք համաշխարհային. հեղափոխությու-
նը... Նա չի դալիս հենց քեզ պես բթամիտների
պատճառով: Ենտեղ բուրժուաներն աջ ու ձախ տան-
ջում են բանվոր ժողովրդին, կարմիր չինացիներին
ջնջում են ծխի նման, կոտորում են բոլոր սևամորթ-
ներին, խակ դու այստեղ թշնամիների հետ քնքու-
թյուն ևս անում: Ամո՛թ ե: Մեծ իւայտառակություն:
Մարդու սրտում արյուն և ցամաքում, յերբ հիշում
ե, թե արտասահմանում բուրժուաներն ինչպես են
տրորում մեր հարազատ յեղբայրներին: Հենց դրա
համար ել յես թերթ կարդալ չեմ կարդանում...
Թերթ կարդալիս ամբողջ ներսս տակն ու վրա յե լի-
նում: Խակ դու... Ի՞նչ ես մտածում դու մեր հարա-
զատ յեղբայրների մասին, վորոնց թշնամիները բան-
տերն են քշում: Դու նրանց չես խղճում...

Դամինդովը սոսկալի վնչացրեց ու մատներով խառ-
նեց իր ճարպոտ, սև մաղերը:

— Գրողը տանի: Ինչպես թե՝ չես խղճում:
Փաստ ե: Յեկ մի գոռա խնդրեմ: Ինքդ գիտ ես, ու-
ղում ես ուրիշներին ել գժվեցնել: Ի՞նչ ես առա-
ջարկում: Ուշքի յե՛կ: Գնդակահարության մասին
խոսք չկա: Դու, ալելի լավ կլիներ, մասսայական

աշխատանք կատարելիք, բացատրելիք մեր քաղաքականությունը, թե չե գնդակահարելը—հառարակ բան է: Յեվ դու հենց միշտ այլպես ես: Մի փոքրիկ անհաջողություն՝ և դու իսկույն ծայրահեղության մեջ ես ընկնում. փաստ է: Իսկ վո՞րտեղ եյիր դու մինչ այդ:

— Ենտեղ, վորտեղ դու:

— Հենց բանն ել այդ է: Մենք բոլորս աչքաթող արինք այդ կամպանիան, իսկ այժմ հարկավոր եռողջել և վոչ թե գնդակահարությունների մասին խոսել: Բավական է հիստերիկա սարքես: Դործի անցիր: Որիո՞րդ, սատանա: Ավելի վատ ես, քան յեղունդները ներկած որիորդը:

— Իմ յեղունդներն արյունով են ներկված:

— Բոլորինն ե այլպես, ով վոր առանց ձեռնոցների յե կովել. փաստ է:

— Դու, Մեմյոն, ինչպե՞ս ես կարողանում ինձ ուրիորդ անվանել:

— Եղ՝ ենպես, վորպես խոսք եմ ասում:

— Հետ վերցրու եղ՝ խոսքը,—կամացուկ խնդրեց նադուլնովը: Դավիդովը լուռ նայեց նրան, ծիծաղեց:

— Հետ եմ վերցնում: Դու հանդստացիր և գընանք ժողով: Ուժեղ աղիտացիա պիտի սկսել մորթելու դեմ:

— Յերեկ, ամբողջ որը յես տնետուն եյի անում ու համոզում:

— Այդ լավ մեթոդ է: Նորից պիտի շրջել և բուրս պիտի դնանք:

— Այ, դու ելի... Յերեկ յես փարախից դուրս

Այի գալիս ու մտածում . «Դե , կարծես համոզեցի» :
Քայց հենց դուրս եմ գալիս՝ լսում եմ «Ճը՛-ղ-ճը՛-ղ»
—արդեն գոճին ճղճղում ե դանակի տակ : Իսկ յես եղ
գարշելի սեփականատիրոջը դրանից առաջ մի ժամ
պատմում ելի համաշխարհային հեղափոխության ու
կոմունիզմի մասին : Յեվ են ել վո՞նց եյի պատմում :
Հենց ինքս մի քանի անգամ հուզմունքից արտասվե-
ցի : Չե՛ , նրանց չպետք ե համոզել , այլ գլուխները
ծեծել , ծեծել ու ասել . «Մի՛ լսիր կուլակին , վնասա-
կար գարշելի՛ : Մի՛ սովորիր նրանից սեփականու-
թյանը կպչէլ : Մի՛ մորթուսիր անասունները , սոսո՛ր
արարած» : Նա կարծում ե թե ինքը յեղն ե մոր-
թում , բայց իրականում համաշխարհային հեղափո-
խության թիկունքն ե խրում դանակը :

— Վոմանց պիտի խփել , վոմանց ել՝ սովորեց-
նել , — համառում եր Դավիդովիր :

Նրանք դուրս յեկան բակի : Խոնավ քամի յեր վիր-
չում : Զյան փիրուն փաթիլները ծածկել եյին հին
ձյունը և հալմում եյին տանիքների վրա : Ահավոր
խավարի մեջ հասան դպրոց : Գրեմյաշնցիների միայն
կեսն եր յեկել ժողովի : Ուազմյունովը կարդաց կենտ-
գործկոմի ու ժողկոմխորհի վորոշումը՝ «Անասուն-
ների գիշատիչ մորթի դեմ պայքարելու մասին» : Հե-
տո խոսք վերցրեց Դավիդովիր : Վերջում նա ուղղակի
հարց դրեց .

— Մեղ մոտ , քաղաքացիներ , քսանվեց դիմում
կա կոլտնտեսություն մտնելու մասին : Վաղը ժողո-
վում մենք կքննենք այդ դիմումները և նրան , ով վոր
կուլակի թակարդն ե ընկել ու կուեկտիվ մտնելուց

առաջ իր անասունները մորթոտել, — չենք ընդունի, միտու եւ:

— Իսկ յեթե կոլտնտեսություն մտածները մորթոտել են մասաղաշները,՝ դրա՞նց վոնց, — հարցրեց Լյուբիշկինը:

— Այդպիսիներին կըհեռացնենք:

Ժողովը հառաջեց, խոռվ կերպով ոժժաց:

— Են ժամանակ կոչեկտիվը ցրեցեք: Գյուղոմ ենպիսի տուն չկա, վոր անասուն մորթած չինի, — գոչեց Բորչչելը:

Նադունովը բոռնցքները թափահարելով, նրա վրա պլրծակ:

— Դու ձենդ կտրեր, կուլակի պո՛չ: Կոլտնտեսության գործերին մի՛ խառնվի. առանց քեզ ել յուլա կդնանք: Դու ինքդ յերեք տարեկան յեզդ չե՞մ մորթել:

— Իմ անասունների տերը յես ինքս եմ:

— Այ, եղուց յես քեզ բանտ կըշեմ, կդնաս ենտեղ տիրություն կանես:

— Շատ ե խիստ: Շատ խիստ եք վարվում, — գոռաց ինչ վոր մեկը՝ խոպոտ ձայնով:

Ժողովը թեև բաղմամարդ չեր, սակայն աղմկալից եր: Յրվելիս գյուղացիները լուռ եյին, և միայն դարոցից դուրս գալուց հետո, յերբ խմբերի բաժանվեցին, ճանապարհին սկսեցին կարծիքներ վոխանակել:

— Վո՞ր սատանան ինձ դրդեց յերկու վոչխարժորթել, — զանգստովում եր Լյուբիշկինին կոլտնտե-

սակայն Սեմյոն Կուժենկովը .— Հիմի եղ միւը քթից սկզբ...

— Յես ինքս ել, այ տղա, հիմարացա, այծո մորթեցի . . . ծանր հառաչեց Լյուբիշկինը, — Հիմի՝ աչքը ցած գցիր ժողովի առաջ: Կնիկս ինձ մեղքի մեջ գցեց. «Մորթիր, հա, մորթիր»: Միւ եր միտն ընկել: Ա՛խ, դու, յուրկավո՛ր սատանա:

— Հարկարվոր ե, հարկավոր ե խրատել, — խորհուրդ տվեց Լյուբիշկինի խնամին՝ զառամյալ Բեսխլեբնով Ակլոմ պապը. — Քեզ համար, խնամի ջան, շատ անհարմար ե, ախոր դու կոլտնտեսության անդամ ես:

— Հենց բանն ել եղ ե, — հառաչեց Լյուբիշկինը, խավարի մեջ բեխերից թափ տալով ձյունի փաթիլներն ու սայթաքելով:

— Իսկ դու, Ակլոմ առեր, կարծեմ թե չալտիկ յեղն ե՞լ ես մորթել, — հաղալով հարցրեց Դյումկա Ուշակովը՝ Բեսխլեբնովի հարևանը:

— Մորթել եմ, մատա՛ղ: Ախը վո՞նց չմորթելի. կոտրվել եր խեղճ յեղան վոտքը: Զար սատանան նրան մառանի մոտ եր տարել և ընկել եր մառան ու վոտը կոտրել:

— Դրա՞ համար լուսաղեմին յես տեսա, թե ինչպիս դու և հարսդ ճիպոտներով մառան եյիք քշում նրան . . .

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, Դեմենտի, — վախեցած բացականչեց Ակլոմ պապը և կանդ առավ

Գողոցի մեջտեղում ու դիշերվա խալարի մեջ սկսեց
արագ-արագ ձագնղացնել աչքերը :

— Գնանք, գնանք, ապեր, — հանգստացրեց նըան
Դյումկան : — Դե ի՞նչ կանգնեցիր դեմ ընկած արորի
պես : Յեղդ մառան քշեցիր . . .

— Ինքը ներս մտավ, Դեմենտի : Մեղք մի՛ անի :
Ո՛, մեծ մեղք ե :

Գյուղի գլխին մոլեղնում եր խոնավ քամին : Գե-
տակի վրա, ցանկապատած արոտատեղերում խշում
էյին բարդիներն ու ուռենիները : Այնպիսի խալար
պատեց գյուղը, վոր մատղ մարդու աչքը կոխեյիր՝
չեր տեսնի : Խոնավությամբ հագեցված գողոցներում
դեռ յերկար ժամանակ ձայներ եյին լավում : Տեղում
եր ձյունը : Զմեռը իր վերջին ցլառերն եր թափ տա-
յիս :

Գ Լ Ա Խ Խ

Հետեւյալ որը Գրեմյաչիի կուսքջի դռնիակ
նիստում միաձայն վորոշվեց համայնացնել կոլտնուե-
սության անդամներին պատկանող բոլոր անասուննե-
րը—ինչպես խոշոր, այնպես և մանր անասունները:
Վորոշվեց բացի անասուններից համայնացնել նաև
թռչունները:

Սկզբում Դավիթովը համառ կերպով դեմ դուրս
յեկավ մանր անասունների ու թռչունների համայ-
նացմանը, սակայն Նազուլնովը վճռականորեն հայ-
տարարեց, թե՝ յեթե կոլտնտեսականների ժողովում
բոլոր անասունների համայնացման վորոշում չանց-
կացնեն, գարնանացանը կտապարվի, վորովհետև ինչ-
պես բոլոր անասունները, այնպես ել թռչունները
կմորթվեն: Ռազմյոտնովը նրան պաշտպանեց և Դա-
վիթովը տատանումով համաձայնեց:

Բացի այդ վորոշվեց ու ժողովի արձանագրու-
թյան մեջ մտցվեց հետեւյալը. աղիտացիոն ուժեղ
կամպանիա ծավալել անասունների չարամիտ մորթը
գաղարեցնելու համար: Այդ նպատակով ինքնապար-

տավորման կարգով կուսակցության բոլոր անդամները հենց նույն որը պետք է չըջեն բոլոր տները: Ինչ վերաբերում և չարամիտ մորթ անողների դեմ դատ բանալու միջոցին, վորոշվեց առայժմ վոչ վոքի նկատմամբ այդ միջոցը չկերառել, այլ սպասել աղիտացիոն կամպանիայի արդյունքներին:

— Այդպիսով անսառուններն ու թռչունները պաշտպանված կլինեն: Թե չե՛ մինչև գարուն դյուդում ել վոչ յեզան բառաչ կլավի, վոչ աքլորի ծուղրուղու, —ասաց ուրբախացած Նազուլնովը՝ արձանագրությունը պահելով թղթապանակի մեջ:

Կոլտնտեսային ժողովում թռչունների համայնացման շուրջը յերկար ու տաք վիճաբանություններ սկսվեցին: Հակաճառում եյին առանձնապես կանայք: Ի վերջո նրանց համառությունը կոտրվեց: Դրան մեծ չափով նպաստեց Նազուլնովը: Նա եր, վոր իր յերկարուկ թաթերը շքանշանին սեղմած առւմ եր.

— Կնանիք, այ սիրելիներս, համերի ու սազերի հետեւից միք ընկնի: Մարմինն ուստողը պոչում չի խռովի: Թող համերն ել կուեկտիով կյանք վարեն: Գարնանը ինկուբատոր բերել կտանք և թխսկանի փոխարեն նա՛ մեղ համար հարյուններով ճուտեր կհանի: Եղափիսի մի մեքենա կա, ինկուբատոր են ասում, վոր հիանալի ճուտեր ե հանում: Խնդրում եմ միք համառի: Հավերն ելի ձերը կլինեն, միայն թե մի ընդհանուր շենքի մեջ: Համի սեփականություն չպիտի լինի, սիրելի մորքութներ:

Ժողովից հետո անմիջապես Նազուլնումն ու Դա-
վիդովը դուրս յեկան տները շրջելու։ Առաջին իսկ
տներից պարզվեց, վոր արդեն բոլոր տներում անա-
ռուններ են մորթվել։ Կեսորին մտան նաև Շչուկար
պապի տուն։

— Նա ակտիվիստ է, ինքն եր ասում, վոր ա-
նասունները պիտի պահպանել։ Նա չի մորթի, — Հա-
վատացնում եր Նազուլնովը՝ Շչուկար պապի տուն
մտնելիս։

«Ակտիվիստը» պառկած եր մահճակալին, վոր-
քերը չունեցած։ Նրա շապիկը հետ եր ծալված մինչև
գլուխված մորուքը, իսկ նիհար, գունատ փորին,
վոր ծածկված եր սպիտակավուն մազերով, բերանս-
իվայր իրվել եր մի կավե աման։ Կողերին տղրուկի
պես կարել եյին դեղատնապային յերկու բանկա։ Շչու-
կար պապը չնայեց ներս մտնողների վրա։ Նրա թե-
վերը, վոր մեռածի նման խաչված եյին կրծքին,
գողդողում եյին։ Սոսկալի ցավից խելակորույս, խո-
ռոչներից դուրս պղծած աչքերը դառնում եյին դան-
դաղորեն։ Մահճակալի մոտ չուռ ու մուռ եր գալիս
արագաշարժ, մկան նման մոխրագույն հեքիմ-պառա-
վը՝ Մամիչիսան, վորն «ոզնության եր հասել» տա-
րաբախու Շչուկար պապին։

Դավիդովը ներս մտավու աչքերը չոեց։

— Բարե՛, պապի։ Եղ ի՞նչ ե յեղել փորդ։

— Տանջվարությամբ եմ փո՞ռ-ո՞րիցը՝ առաջ Շչուկար պապը։ Յեկ
անմիջապես, լակոտի նման բարակ ձայնով ծմբաց։

Պոկի՞ր փարչը... պոկի՞ր, ջաղուա: Ո՞յ, փորս պատըսլում ե, ո՞յ, ձեզ մատա՞ղ, ազատեցե՞ք...

— Դիմացիր, դիմացիր, խուռացն կթեթեվանսը, — շշուկով համողում եր հեքիմ պառավը, իդուր ջանալով պոկել փարչի պոռանկը, վոր խրալել եր կաշվի մեջ:

Սակայն Շչուկար պասլը հանկարծ մոնչաց կատաղի դադանի պես, մի աքացիով գետին գլորեց հեքիմին և յերկու ձեռներով կալավ փարչին: Այն ժամանակ Դավիդովին ողնության հասավ նրան. դարակի վրայից վերցրեց փայտե գլանակը, մի կողմ հրեց պառավին և դլանակով դարկեց փարչի: Հատակին: Փարչը վշրմեց և նրա միջից շվեռոցով դուրս հորդեց ողը: Շչուկար պասլը խուլ տնքաց, թեթեացավ և արագ-արագ շնչելով՝ դյուրությամբ պոկեց բանկաները: Դավիդովիլ նայեց պատի փորին, զորի ահադին պորտը կատարել եր փարչի տակ և խելակորույս քըրքիջից թուլացած ընկալ թախտի վրա: Նրա այտերով ծորում եյին արցունքի կաթիլները, գլխարկը վայր ընկալ, սև մաղերի խոպուղները թափնեցին աչքերին...

Շչուկար պասլը դիմացկուն եր յերեռում: Մամիչիչիսա տատը դեռ նոր եր սկսել վողբալ իր վշրմած փարչը, վոր Շչուկար պասլը շապիկը ցած քաշեց ու ինքը վեր բարձրացավ:

— Ա՞յս, իմ քամբախտ գլուխ, — հեկեկում եր պառակը. — Չար վոգին ջարդեց ամանս: Չեզպեսներին ֆարդ բժշկի և լավությունն ել ե՞ս լինի:

— Հեռացիր, պառակլ։ Ես ըոպեյին հեռացիր ես-
տեղից, —և Շչուկարը ձեռքը մեկնեց դեպի դուռը։
—Դու, քիչ մնաց, վոր հոգիս առնես։ Եղ փարչը քո
գլխին պետք եր ջարդել։ Կորի՞ր, թե չե ինձ մար-
դասպանության կհասցնես։ Եղ տեսակ բաներ իմ
ձեռքից կդան։

— Ախր եղ ի՞նչ եր պատահել քեզ, —հարցընց
Նադուլնովը Մամիչիսայի հետեւց դուռը ծածկելով։

— Ո՞հ, սիրելիներս, զավակներս, հավատացեք,
քիչ մնաց ձեռքից գնայի։ Յերկու որ ե տանից դուրս
չեմ յեկել, մի դլուխ շալվարս բռնած եյի ման դա-
լիս... Ենպիսի լուծ ե սկավել, վոր պահել չի լինի։
Ենպես եմ վատացել... քշում եր, վոնց վոր հիվան-
դուս սագի ձագից։ ամեն մի վայրկյան... .

— Մի՞ս ես խժուել։

— Միս... .

— Հո՞րթդ ես մորթել։

— Ա՞խ, ել չկա հորթուկս... . Շահ չտեսա յես
նըանից... .

Մակարը վրդովվեց, զզվանքով նայեց պապին ու
ատամները սեղմելով ասաց.

— Քեզ պես քայլթառ սատանայի փորին վոչ թե
փարչ պիտի գցել, այլ յերեք դույլանոց չուզուն,
վորպեսզի նա քո ամբողջ փորոտիքը դուրս քաշի։
Այ, կվոնդենք քեզ կոլտնտեսությունից, են ժամա-
նակ ուրիշ տեսակ կքշի։ Ինչի՞ մորթեցիր։

— Մեղք եմ գործել, Մակարուշկա... պառակլ
համոզեց, վոնց վոր գիշերվա կկուն ե շարունակ կը ը-
կըշում... Դուք գթացեք, ընկեր Դամիովով։ Մենք

Տաելիմ ենք յնդել իրար, դուք ինձ միք քշի կոլտըն-
տեսությունից: Առանց եղ ել յես շատ եմ տանջվել
իմ արած բարորությունների համար...

— Դե, ի՞նչ պահանջես սրանից, — Նազուլովը
ձեռքը թափ տվեց: — գնանք, Դավիդով: Իսկ դու,
հիվանդ, հրացանի յուղը խառնիր աղին ու խմիր,
խկույն կանցնի:

Շչուկար պապը նեղացած շշնջաց.

— Ձե՞ս ես առել ինձ:

— Ճիշտ եմ ասում: Հին քանակում մենք փորա-
ցալից հենց դրանով ել փրկվում եյինք:

— Ի՞նչ, յես յերկաթի՞ց եմ, ինչ ե. ինչվոր ան-
շունչ հրացանն են մաքրում, նույնն ել յե՞ս պիտի
դործածեմ: Ձե՞մ անի: Ավելի լավ ե կմեռնեմ արևա-
ծաղկի ցողունների արանքում, քան թե հրացանի յուղ
կխմեմ:

Հետեյալ որը, իհարկե, առանց մեռնելու, Շչու-
կար պապն արդեն քաշ եր գալիս գյուղում և յուրա-
քանչյուր հանդիպողի պատուամ, թե ինչպես Դավի-
դովն ու Նազուլովը հյուր են յեղել իր մոտ, ինչ-
պես են իրենից խորհուրդ հարցրել գյուղատնտեսա-
կան գործիքների նորոգման մասին և կոլտնտեսու-
թյան զանազան ուրիշ գործերի մասին: Ապա, յեր-
կարատե լուսությունից հետո ծխախոտ փաթաթելով
պվելացնում եր.

— Մի քիչ ժամանակ տկարացա և ահա, նրանք
յեկան ինձ մոտ: Առանց ինձ յոլա գնալ չեն, կարող: :
Ամեն տեսակ ուեղ եյին առաջարկում: «Բժշկվիր, —
ասում եյին, — արապիկ, թե չե՝ աստված չանի՝ կը-

մեռնես և մենք կորած ենք առանց քեզ»։ Յեվ կկոր-
չեն, Քրիստոսը վկա։ Հենց վոր մի պատիկ բան ե-
պատահում՝ կանչում են բջիջ. մեկ ել տեսար՝ մի
վորեւ խորհուրդ տվի նրանց։ Դե յես այդպես եմ-
քիչ եմ, խոսում, բայց չամիչ եմ խոսում։ Իմ խոսքը
իսկի գետին չի ընկնի, —և իր խամրած, բայց հըրճ-
վալից աչքերով զրուցակցին նայելով՝ աշխատում եր-
հասկանալ, թե ինչ աղղեցություն թողեց նրա վրա
իր պատմությունը։

ԳԼՈՒԽ ԽՎ

Յեկ նորից աշխուժացավ կարծես տապ արած Գրեմյաչի Լոգը։ Դադարեցին անասունները մորթել։ Յերկու որ շարունակ համայնական գոմերն եյին քը- շում ու քարշ տալիս գույնդգույն վոչխարներ ու այ- ծեր, ալարկեցով հավեր եյին կրում։ Գյուղը լցվել եր անասունների, բառաչով և թռչունների ճիչ ու կըչկը- չոցով։

Կոլտնտեսության մեջ արդեն հարյուր վաֆսուն տնտեսություն կար։ Կազմակերպվեցին յերեք բրի- գադ, Կոլտնտեսության վարչությունը Յակով Լու- կիչին լիազորեց հաղուստի կարիք ունեցող չքավորու- թյանը բաժանել կուլակներից խլված կիսամուշտակ- ները, կոչիկներն ու այլ հագուստեղենը։ Նախնական ցուցակագրություն կատարեցին։ Պարզվեց, վոր վար- չությունն անկարող է բոլորին բավարարել։

Տիտոկի գոմում, վորտեղ Յակով Լուկիչը կուլակ- ներից բոնագրավլած հագուստն եր բաժանում, մին- չեալ աղջամուղջ կանդնած եր լինում ձայների անլսե- լի դժոոց։ Հենց այնտեղ, շտեմարանի մոտ, ուղղակի ձյունի վրա հանվում եյին, վոր փորձեն կուլակների ընտիր վոտնամանները, թեր քաշեն պիջակները,

կուրտկաները, կիսամուշտակները: Այն յերջանիդները, վորոնց հանձնաժողովը վորոշել եր, ի հաշիվ հետագա աշխատանքի հազուստ կամ վունաման տալ, մերկանում եյին ուղղակի շտեմարանի սոխախկում և, բավականությամբ փնչալով, ցնծալից աչքերով, կցկուռք ժպիտներով փայլեցնելով իրենց թուխ դեմքերը՝ շտապշտապ կապոց եյին անում իրենց հին, կարկատած ու վերակարկատած լաթերը, հազնում եյին նոր հազուստները, վորոնց միջից այլքս չեր յերևում նըրանց մարմինը: Իսկ մի վորեւե բան վերցնելուց առաջ վորքա՞ն խոսակցություն, խորհուրդներ, կասկածներ ու հայհոյանքներ եյին լինում...

Իրիկնապահին բաժանքին վրա հասավ նաև Շչուկար պապը: Նա խցկվեց կոլտնտեսության վարչության ռենյակը և հազիվ շունչ առնելով դիմեց Դավիթովին.

— Վողջ լինեք, ընկեր Դավիթով: Միշտ առողջ տեսնեմ ձեզ:

— Բարե՛, պապի:

— Մի բլանկ դրեցեք ինձ համար:

— Ի՞նչ բլանկ:

— Շոր ստանալու բլանկ:

— Քեզ ի՞նչի համար պիտի շոր տանք, — թափտանք, — թայի հոնքերը վեր քաշելով ասաց Նազունովը, վոր նստած եր Դավիթովի մոտ, — Նրա՞ն համար, վոր հորթղ մորթեցիր:

— Մակարուշկա, անցած բաներ հիշողի աչքը դուքս կղա, գիտե՞ս: Ինչպե՞ս թե ինչու: Իսկ Տիտովին կուլակաթափ անելիս ո՞վ վնասը քաշեց: Յե-

ՀԵ ԸՆԿԵՐ Դավիթովը : Նրա գոնե միայն դլուխը
պատռեցին ; Եղ դատարկ բան է , իսկ իմ քուրքը
վլո՞նց զգեց շունը : Ամբողջ քուրքից միայն վոտքի
հաթաթաններ մնացին : Ախար յես եմ տանջլել
խորհրդային իշխանության համար և հիմի ինձ
հարկավա՞ր չե : Ավելի լավ կլիներ , վոր Տիտոկն իմ
դլուխը միշուր-միշուր աներ , միայն թե քուրքիս
ձեռք չտար : Ախար քուրքը իմ աղառալի՞նն եր , թե
վլոչ : Ախար նա եղ քուրքի համար ինձ կջնջի աշ-
խարհի յերեսից . են ժամանակ վո՞նց կլինի : Այ թե
ինչի յե պետք :

— Զիախչեյիր՝ քուրքդ ել վաղջ կմնար :

— Վո՞նց թե՝ չիախչեյիր : Իսկ դու , Մակարուշ-
կա , լսե՞լ ես , թե Տիտոկի կնիկն ինչ ոյին սարքեց-
նա շունը քիս եր տալիս ինձ վրա . «Քլ՛ս , քը՛ս ,
բոնիր դրան , բոնիր դրան , Սերկո քը՛ս , նա
ամենավանդավորն ե եստեղ» : Այ , Ընկեր Դավի-
դովն ել կարող ե հաստատել :

— Պառավել ես դու , բայց փչում ես սաստիկ :

— Ընկեր Դավիդով , դուք հաստատեցեք :

— Յես , ինչ-վոր ... չեմ հիշում ...

— Քրիստոսը վկա , չենց եղակես եր բղավում
նա : Դե , յես ել , իհարկե , սարսափուց փախա գոմից :
Դոնե եղ շունն ել մյուս շների նման լիներ ... բայց
ախար վագրից ել սարսափելի յե :

— Վոչ վոք շունը քեզ վրա քըս չի տվել , հնա-
ցում ես :

— Մակարուշկա , դու չես հիշում , հոգիս : Դու
ի՞նքդ ել ենպես վախեցար , վոր յերեսիդ ել դույն

չեր մնացել, ել ի՞նչ պիտի հեշես։ Մեղքս ինչ ծած-
կեմ, յես դեռ են ժամանակ մտածում եյի, թե՝
«Մակարը հիմի կակսի փախչել»։ Իսկ թե շունն ինձ
վոնց եր քաշքում դոմի առաջ, յես մաղմաղ հիշում
եմ։ Այ, թե վոր շունը չիներ, Տիտոկն իմ ձեռքից
սաղ չեր պրծնի, աստված ե վկա։ Յես վախեցող
պտուղ չեմ։

Նագուլնովը դեմքը կնճռոտեց վոնց վոր ատամիւ
ցալից և Դավիդովին ասաց։

— Գրի'ր նրա համար, թող շուտ հեռանա։

Սակայն Շուկար պապն այս անդամ ավելի
քան յերբեք, խոսելու սեր ուներ։

— Յես, Մակարուշկա, ջահել ժամանակս պա-
տահում եր, վոր ուզածդ մարդուն հենց բռունցքնե-
րով . . .

— Դե՛, մի փչիր, լսել ենք քեզ։ Գուցե գրենք
վոր քեզ դույլանոց չուղումնե աման տան, փորդ
ախր, ինչո՞վ պիտի բժշկեա։

Շուկար պապը խիստ վիրասվորված՝ գրությու-
նը վերցրեց և դուրս յեկալ առանց հրաժեշտ տալու։
Սակայն, յերբ Յակով Լուկիչից դարադած լայն
կիսամուշտակն ատացալ, նորից տրամադրությունը
բարձրացավ։ Նրա աչքերը կկոցվեցին ու փայլատա-
կեցին։ Պտղունցով, ինչպես աղամանից աղ վերցնես,
նա բռնեց կիսամուշտակի փեշերը, վեր քաշեց, ինչ-
պես ցեխի վրայով ցատկելու պատրաստվող կինն և
բարձրացնում իր շրջադպեստի փեշերը, լեզուն
չպաղացրեց ու սկսեց պարծենալ կաղակների մոտ։

— Ա՛յ քեզ կիսամուշտակ։ Իմ մեջքովս եմ վաս-

տակել : Բոլորը դիտեն . յերբ մենք Տիտոկին կու-
րակաթափ ելինք անում , նա ասմիով հարձակվեց-
ընկեր Դավիդովի վրա : «Կորչի ,—մտածում եմ ,—
իմ բարեկամը » : Են բոակեյին վրա թուա ազատելու
և հերոսի պես ազատեցի : Յես շինեցի—Դավիդովին
յերգը յերգված եր :

— Բա ասում եյին՝ դու շանից փախչելիս վեր-
ես ընկել ու նաև սկսել ե քո ականջները ալոկել , վոնց
վոր խողին են պոկում ,— վրա բերեց լսողներից մե-
կը :

— Փչո՞ց ե : Ես ի՞նչ տեսակ ժողովուրդ ե .
ինչե՞ր ասես չի հնարում : Շունն ի՞նչ բան ե վոր :
Շունը հիմար ու անբան անասուն ե : Վոչ մի բան
չի հասկանում . . . — Յեվ Շչուկար պապը վարպե-
տորեն խոսակցությունը շուր տվեց ուրիշ նյութի :
Գիշեր ե . . .

ԳԼՈՒԽ XVi

Գրեմյաչի Լոգից դեպի հյուսիս , հեռո՞ւ-հե-
ռո՞ւ , տափառտանի մշուշապատ թմբերից դենը ,
հովիտների ու չորուկների այն կողմը , լայնատարած
անտառներից ել հեռու դտնալում ե Խորհրդային-
Միության մայրաքաղաքը : Նրա գլխին ելեկտրական-
լամպերի հեղեղն ե : Նրանց թրթուացող կապույտ-
բոցկլտոցը անձայն հրդեհի պես կանգնած ե բազ-
մահարկ տների գլխին և մթաղնում ե կես գիշերային
լույսի ու աստղերի լույսը :

Գրեմյաչի Լոգից մեկ ու կես հազար կիլոմետր
հեռավորության վրա գիշերն ել ե ապրում քարաշեն-
Մոսկվան . յերկար ու ձիգ շաչում են շոգեքարերի
շշակները , վիթխարի ներդաշնակությամբ ճշում են

ավտոմոբիլների աղղանշանները, զնդում ու հնչում
են տրամվայները։ Աենինի դամբարանի այն կողմը,
կը եմ լի պատերից դենը, շառադունած յերկնքում՝
ցուրտ քամու առաջ Փռուսմ, ծածանվում ե կարմիր
դրոշը։ Ներքելից ելեկտրական լույսի սպիտակավուն
լույսով լուսավորված՝ կարմիր դրոշը յեռում, այր-
վում ու հոսում ե, ինչպես դուրս հորդող կարմիր
արյուն։ Շրջապտույտ փչում ե սառն քամին, մի լոսկե-
ջուռ ե տալիս ծանրորեն կախված դրոշը և նա նորից
ե ծածանվում մեկ դեպի արևմուտք, մեկ արևելք, բո-
ցավառում ապստամբության բոսորագույն հրով, կան-
չում պայքարի։

Յերկու տարի առաջ, գիշերով, կոնդրատ Մայ-
դաննիկովը, վոր այն ժամանակ Մոսկվայումն եր,
խորհուրդների Համառուսական համագումարում, յե-
կալ կարմիր հրապարակ։ Նայեց դամբարանին, հաղ-
թանականորեն ծածանվող դրոշին և շտապ վերցրեց
իր գլխից բուդյոնովիկան։ Բաց գլխով, տան գործած
կտորից կարված կարայով նա կանգնեց յերկար ու
անշարժ...

Իսկ Գրեմյաչի կոգում գիշերը տիրում ե լուռ ու
թանձր խավարը։

Պառկել ե կոնդրատը ու անցյալը շարունակ
դալիս, անցնում են նրա մտքով։

Նա Դոնի կազակի տղա յե, իսկ այժմ՝ կոլտնտե-
սական։ Տափաստանի շավիղի նման յերկար գիշեր-
ներին շատ բան մտածեց կոնդրատը։ Իսկական զին-
վորական ծառայության մեջ յեղած ժամանակ նրա
հայրն իր հարյուրյակով մտրակահար ու սրա-

խողող արեց Իվանո-Վաղնեսենսկում գործադուլ արած ջուլհակներին՝ սլաշտպանելով գործարանատիրոջ շահերը։ Մեռավ հայրը, Կոնդրատը մեծացավ և 1920 թվին կոտորեց սպիտակ լեհերին ու վրանդելականներին՝ սլաշտպանելով իր խորհրդային իշխանությունը, նույն Իվանո-Վաղնեսենսկի ջուլհակների իշխանությունը՝ գործարանատերերի ու նրանց վարձկանների հարձակումից։

Վաղուց արդեն Կոնդրատը չի հավատում աստծուն, այլ հավատում ե կոմունիստական կուսակցությանը՝ վորն ամբողջ աշխարհի աշխատավորությունը տանում ե դեպի ազատություն, դեպի հիասքանչ այսպան։ Նա կոլտնտեսության գոմը տարավ իր բոլոր անասունները, բոլոր թռչունները՝ մինչև վերջին թև։ Նա կողմնակից ե, վոր հաց ուստի և աշխարհում մասնդա միայն նա ով աշխատում է։ Նա ամուր ու անքակտելի կած ե խորհրդային իշխանությանը։ Բայց ահա, դիշերները Կոնդրատի քունը չի տանում... Յեկայդ նրա համազ, վոր սրտում դեռ ափսոսանք ե մնացել դեպի իր ունեցվածքը, դեպի իր սեփականությունը, վորից ինքը կամավոր կերպով դրկվեց... Բուն ե դրել նրա սրտում այդ զզվելի ափսոսանքը և տանջում ե նրան վշտով ու թախիծով...»

Դատարկ, մեռած ե այժմ Կոնդրատի գոմը։ Վոչ մի անասուն չի դուրս գա այնտեղից։

Դատարկ են մնացել մսուրները, լայնորեն բաց են վոստերից գործած դռները և նույնիսկ աքաղաղի-

ձայն չի լսվում յերկար գիշերներին. Ել ինչով վորոշել գիշերվա ժամանակն ու տևողությունը...

Միայն այն ժամանակ ե ցրվում թախիծը, յերբ հերթապահ ե լինում կոլտնտեսության գոմում: Իսկ ցերեկն շտապում ե շուտ դուրս գալ տանից, վորապեսզի չտեսնի սոսկալի դատարկ գոմը, վորապեսզի չտեսնի կնոջ վշտահար, մորմոքող աչքերը:

Թպրտում ե Կոնդրատն իր մտքերի մեջ, ինչպես ուղանն ընկած ճռկ: «ՅԵ՞րբ ձեռք կքաշես ինձնից, գարշելի ափսոսանք: Անցնում եմ ձիերի ախոռի մոտով, ուրիշի ձիերն են կանգնած և կարծես՝ վոչինչ: Իսկ հենց վոր ի՞մ ձիուն եմ հասնում, նայում եմ նրա ճեղքին՝ վորի վրայով մինչեւ պոչը մի սև զոլ ե անցնում և վորի ձախ ականջը դրոշմված ե, — ճմլվում ե սիրոս, կարծես այդ բոպեյին նա կնոջիցս ավելի հարազատ ե ինձ: Յեվ աշխատում ես նրան ավելի լավ խոտ տալ, ավելի ծաղկավետը, ավելի մանրը: Յեվ ուրիշներն ել նույնաղես: Յուրաքանչյուրն իր անատունի մոտ ե քարանում, իսկ մյուսների նկատմամբ անտարբեր ե: Ախր հիմա ուրիշի չկա, բոլորը մերն են, բայց արի տես, վոր այդ այդպես ե... Անտառներին խնամելու չեն գնում, շատերը խորիթ աչքով են նայում... Յերեկ Կուտենկովն եր հերթապահ: Նա ինքը ձիերը չտարավ ջրելու, տղային ուղարկեց: Սա ել մի ծի նստեց ու ամբողջ ջոկը խորիկ տվեց դեպի դետը: Վորը խմեց, վորը շմամեց, իսկ նա նորից ջոկը խորի տվեց մինչեւ ախոռը: Յեվ վոչ վոքի հակառակ խռուել չես կարող. ատամները կկրծտացնեն» «Հա՛-ա՛-ա՛, քեզ ամենից շատ ե հարկավոր»:

Կոնդրատը քուն ե մտնում։ Նրա շրթունքներից
յլայր ե ընկնում ծխախոտը և մի մեծ, սև անցք ե բաց
անում միակ վերնաշապկի վրա։ Նա վեր ե թռչում
այրվածքից, վեր կենում և շշուկով հայհոյելով, խա-
վարի մեջ խարխափելով ասեղն ե փնտրում, վոր կա-
րի վերնաշապկի ծակը, թե չե՞ առավոտյան Աննան
կնկատի և այդ ծակի համար յերկու ժամ կտանջի
նրան... Բայց նա ասեղը չի գտնում և նորից ե քուն
մտնում։

ԳԼՈՒԽ ԽVII.

Զնայած վաղ առավոտ եր, բայց կոլտնտեսության վարչության շենքը լի յեր բազմությամբ։ Բակում, սանդուխքների մոտ, մի զույգ ձի լծած սահնակը կանդ նած սպասում եր Դավիթովին, վոր պատրաստվում եր արջանային կենտրոն դնալ։ Լապշինովի շորորուն ձին թամբած՝ վոտքով ձյունն եր փորփրում, իսկ նրա մոտ՝ փորկապներն ամրացնելով շուռ ու մուռ եր դալիս Լյուբիշկինը։ Նա ևս պատրաստվում եր դնալ Տուրյանս, վորտեղ պետք ե տեղի կոլտնտեսության վարչության հետ պայմանավորվեր սերմազտիչի մասին։

Առաջին սենյակում սեղանի առաջ կանդնած դըրքերն եր քրքրում ստանիցայից զերջերս յեկած հաշվետարը։ Յակով Լուկիչը, վոր վերջին ժամանակները նիհարել ու մոայվել եր, նրա դիմացը նստած ինչ վոր բան եր դրում։ Հենց այդտեղ ել հավաքվել եյին մի խումբ կոլտնտեսականներ, վորոնց առաջարկված եր խոտ կրել։ Յերրորդ բրիդադի բրիդադիր՝ ծաղկատաք դեմքով Ադաֆոն Դուբցովը և Արկածկա Մենոկն անկյունում վիճում եյին դյուղի միակ դարբին իպոլիտ Շալի հետ։ Հարեան սենյակից լսվում եր Ռազմյոտնովի զել և ուրախ ձայնը։ Նա հենց նոր յեկել եր և

շատապով ու ծիծաղելով պատմում եր Դավիթովին.

— Առավոտը կանուխ ինձ մոտ են գալիս չորս
պատափ։ Նրանց առաջնորդում և տատմեր Աւլյանան-
Միջիա Իղնատինկայի մայրը։ Դու ճանաչում ես
նրան։ ԶԵ՞։ Ենալիսի մի պատափ ե, վոր յոթ-ութ փութ
կէջոի, քթին Ել մի գորտնուկ ունի։ ՅԵկան։ Տատմեր
Աւլյանան վնչում և փոթորկի պես, շունչը կարխում
և զայրույթից և դորտնուկը տմբամբում և քթի ծայ-
րին։ ՅԵկ անմիջապես վրա յե տալիս։ «Ա՛յս, զո՞ւ,
եսպես ու ենպես»։ Ինձ մոտ՝ խորհրդում ահազին ժո-
ղովուրդ կա, իսկ նա ինձ հայհոյում է։ ՅԵս, ի հար-
կե, նրան խառությամբ ասում եմ։ «Զենդ կարիք ու
վերջ տուր հայհոյանքներիդ, թե չե ստանիցա կու-
ղարկեմ իշխանությանը վիրավորելու համար։ Ի՞նչ ես
կառաղել դու, հարցնում եմ»։ Իսկ նա թե՝ «Դուք եղ-
ի՞նչ եք պառավներին ձեռք առել։ Ի՞նչպես եք հա-
մարձակիլում մեր ծերությանը ծաղրել։ Հաղիկ կա-
րողացա հառկանալ, թե ինչ ե պատահել։ Բանից դուքս
յեկապ, վոր նրանք լսել են, թե իրք բոլոր պառավ-
ներին, ովքեր աշխատանքի անընդունակ են, ում վաթ-
սուն տարին անց ե կացել, կոլանտեսության վար-
չությունը վորոշել ե դարնանը։ — Նազուլնովք փրք-
վեց և ծիծաղը հաղիկ զսպելով շարունակեց։ — իրը
թե ճուտ հանելու մեքենաներ չինելու պատճառով բո-
լոր պառավներին պիտի նշանակեն այդ աշխատանքին։
ՅԵկ դրա համար ել պառավները կատաղել եյին։
Սկզեցի հարց ու փորձ ահել, թե վարտեղից Են լսել
այդ լուրը և պարզվեց, վոր յերեկ չե անցյալ որը
Վոյսկովցի վանքից մի կույս ե յեկել գյուղը, գիշերը

մնացել ե Տիմոֆեյ Բորչչովի մոտ և նրանց պատմել ե, թե՝ անլա չեք ասի հավերը հենց նրա համար են հավաքել, վոր բոլորը քաղաք ուղարկեն, իսկ պառավների համար, իբր թե, մի առանձին ձեմի աթոռներ պիտի շինեն, վորոնց տակ ծղոտ պիտի մոռեն, ձուղնեն և պառավներին ստիպեն թուխս նստել նրանց վրա, իսկ ովքեր հակառակվեն, իբր թե, պիտի կապկըսկեն աթոռին:

— Վորտե՞ղ ե հիմի այդ կույսը, — զայրացած հարցրեց Նագուլնովը, վոր ներկա յեր այդ պատմությանը:

— Զքվել ե: Հիմար չե՛: Կիչի ու պոչը կքաշի:

— Եղակիսի սևապոչ կաչաղակներին պետք ե ձեր-բակալել և քշել ուր վոր տեղն ե: Իսկ դու — գյուղ-խորհրդի նախագահ ես, իսկ քո գյուղում ով ասես գեշերում ե: Լա՞վ կարգեր են...

— Սատանան միայն կարող ե նրանց բոլորին նկատել...

Դավիթովը վերարկույթի վրայից ել մուշտակը հաղած՝ նստած եր սեղանի մոտ: Վերջին անգամ աչքի տնցնելով գարնանացանի պլանը, վոր հաստատված եր կոլտնտեսության ժողովում, առանց աչքերը թղթից հեռացնելու ասաց.

— Մեղ բամբասելը թշնամու հին միջոցն ե: Իսկ մենք յերբեմն զենք ենք տալիս նրա ձեռքը, այ, ինչ-ովես որինակ թռչունների հարցն ե:

— Եղ ինչո՞վ այսինքն, — ոռունդներն ուռեցրեց Նագուլնովը:

— Հենց նրանով, վոր թռչունները համայնացրինք:

— Ճիշտ չե':

— Փաստ ե, վոր ճիշտ ե: Զալետք ե մենք այսքան ցըինվ գայինք մանրուքների վրա: Ահա, մեր սերմացուն ել դեռ պատրաստ չե, իսկ մենք՝ թուչունների հետեւից ընկանք: Ի՞նչովիսի հիմարություն: Քիչ ե մնում բազուկներս կրծեմ: Իսկ շրջկոմում սերմացվի համար են պոչս վոլորում, փաստ ե: Ուղղակի անդուրեկան փաստ:

— Դու ինձ են ասա, ինչո՞ւ չի կարելի թուչունները համայնացնել: Ժողովը հո համաձայնվե՞ց:

— Դե հո բանը ժողովը չե,— կնճռտավեց Դավիդովը:— Ինչուս դու չես հասկանում, վոր թուչունները մանրունք են, իսկ մեզ հարկավոր ե լուծել գլխավոր հարցը— ամրապնդել կոլտնտեսությունը, ցանք անել: Յեվ յես, Մակար, լրջորեն առաջարկում եմ այ թե ինչ. մենք քաղաքական սխալ դործեցինք այդ անիծված թուչունների հարցում, փաստ ե, վոր սխալվեցինք: Ես դիշեր յես մի բան կարդացի կոլտնտեսությունները կազմակերպելու վերաբերյալ և հասկացա, թե վորն ե մեր սխալը: Ախր մեզ մոտ կոլտնտեսություն ե, այսինքն՝ արտել, իսկ մենք՝ վրա քշեցինք կոմունային: Ճիշտ ե: Հենց այդ ել «Ճախ» թեքումն ե, փաստ ե: Այ, դու ել մտածիր: Յես լինեյի քո տեղը (դու անցկացրիր այդ և մեզ ել ադխտացիա եյիր անում), բոլշևիկյան համարձակությամբ կընդունեյի այդ սխալը և կհրամայեյի հավերն ու մյուս թուչունները հետ տալ տերերին: Հը՞: Դե, յեթե դու այդ չանես, այն ժամանակ յես ինքս կանեմ իմ ոլատասխանավորթյամբ, հենց վոր վերադառնամ: Յես դնացի,

բանություն, — և նա դուքս յեկավ լայն ու ծանր քայլերով:

— Գնանք, Մակար, հավերը հետ քշենք իրենց տերերին: Դավիդովը ճիշտ բաներ ե ասում:

Պատասխանի սպասելով՝ Ռազմյոտնովը յերկար նայում եր Նագուլնովին: Վերջինս նստել եր պատուհանի վոդին, կիսամուշտակի կոճակներն արձակած, ձեռքի մեջ շուռ ու մուռ եր տալիս զվարկելը և ըլլթունքներն անձայն շարժում: Այդպես անցավ յերեք րոպե: Աղա Մակարը հանկարծ գլուխը բարձրացրեց և նրա հայացքը հանդիսեց Ռազմյոտնովի հայացքին:

— Գնանք: Սխալվել ենք, ճիշտ ե: Դավիդովը իսկապես վոր ճիշտ ե... — և մի քիչ հուզված ժպտաց:

Հավանոցի բակում գույնզգույն ճալաքարերի պես ցըխի եյին յեկել հարյուրավոր հավեր: Բեսխլերնով Ակիմ պապը ճիպոտը ձեռքին ծըջում եր բակում: Քամին խաղում եր նրա ճերմակ մորուքի ալիքների հետ, չորացնում ճակատի քրտինքի հատիկները: Նա քայլում եր, թաղիքի վոտնամաններով հրելով հավերին, իսկ ուսին զցած եր մի պարկ՝ կիսով չափ լվար կուտով: Պապը նեղ շերտով շաղ եր տալիս կուտը շտեմարանից մինչեւ սրահը, իսկ նրա վոտքերի ասութիւնում եյին հավերը և անդադար հնչում եր վութեալու ու հողատար՝ «զո՞ւ, չո՞ւ, չո՞ւ, չո՞ւ»:

Ցցերով ցանկապատած կալում խիտ ցրված կրաքարերի պես սպիտակին եր տալիս սագերի յերամը: Ինչպես դարնանային չույի ժամանակ ջրերի միջից՝ այնտեղ բարձր հնչում եր սագերի կոնչոցը, թևերի շխկակոցը և կափկափացը:

Սրահի մոտ մարդկանց մի ըազմություն եր խմբվել։ Յերեսում եյին միայն նրանց մեջքերն ու հետույքները։ Գլուխները թեքել եյին ցած և լարված ինչ վար բանի եյին նայում իրենց վոտքերի տակ։

Ռազմյատնովը մոտեցավ և մարդկանց թիկունքի վրայով նայելով՝ աշխատեց տեսնել, թե ի՞նչ կա ՀԵՐ-Ձանի մեջ տեղը։ Մարդիկ փափառալով, կիսաձայն եյին խոսում։

— Կարմիրը կհաղթի։

— Իսկի ել չեւ տե՛ս, նրա կատարն արդեն կախ է ընկել։

— Ո՛չ, վո՞նց խմիեց . . .

— Կառցը բաց արեց. հալից ընկել ե . . .

— Մի՛ բրթի, մի՛ բրթի, նա ինքը կսկսի։ Մի՛ բրթի, խառնակիչ, թե չեւ ենազե՞ս կբրթեմ և կոկորդիու . . . — լսվեց Շջուկար պատի ձայնը։

Շրջանի մեջ թեերը կախած շրջում են յերկու աքաղաղ. մեկը՝ վառ կարմիր, մյուսը՝ սև փետուր-ներով։ Նրանց կատարները կտցահարված են ու սեացած՝ չորացած արցունից։ Վոտքերի տակ ցրված են սեւ ու կարմիր փետուրներ։ Կովողները հողնել են։ Նրանք հեռանում են իրարից ու ձեւցնում, թե ինչ վոր բան են կտցահարում, վոտքերով քերում են հալվող ձյունը, խուզարկու հայացքով հետեւելով մեկու։ Սակայն նրանց ձեւցրած անտարբերությունը կարճատե ե. հանկարծ սեր պոկվում և գետնից ու վեր թռչում, ինչպես հրդեհից թռած խանձող։ Կարմիրն ել և վեր թռչում։ Նրանք խփվում են իրար ողի մեջ, նորից ու նորից . . .

Ծչուկար պատղ նայում ե լարված, մոռացած ամբողջ աշխարհը։ Հանկարծ, այս լարված վիճակից նրան հանում ե ինչ վոր մեկի ձեռքը, վոր կոպտարար քաշում ե պատի կիսամուշտակի ոճիքից և դուրս դցում նրան շրջանից։ Ծչուկարը հետ ե դառնում, նրա դեմքն այլանդակվել ե անասելի կատաղությունից, աքլորային վճռականությամբ հարձակվում ե իրեն վերավորողի վրա։ Բայց վայրկյանապես փոխվում ե նրա դեմքի արտահայտությունը, դառնում ե բարի ու բարեհամբույր։ այդ նադունովի ձեռքն եր, վոր քաշել եր նրան։ Նա խոժուած դեմքով ցրեց հավաքվածներին, քշեց աքաղաղներին ու մռայլված ասաց։

— Գո՞րծ եք դտել ձեղ համար, աքլորնե՞ր եք կովեցնուամ։ Ապա, մի ցրվեցեք աշխատանքի . . . լողթե՞ր։ Գնացեք գոմերը մաքրելու, թե վոր ուրիշ գործ չունեք։ Գոմաղը կրեցեք բանջարանոցները։ Իսկ յերկու հոգի գնացեք տները շրջեցեք ու կանանց ասացեք, վոր դան իրենց հավերը տանեն։

— Ցրո՞ւմ եք հավերի կոլտնտեսությունը, — հարցրեց աքլորակովի սիրահարներից մեկը, աղմեսի փափախով մի մենատնտես, Բանիկ անունով։ — Տեսաք, վոր նրանց դիտակցությունը դեռ մինչեւ կուտնտեսություն չի աճել։ Իսկ սոցիալիզմի ժամանակ աքլորները պիտի կովե՞ն թե չե։

Նադունովը հարց տվողին չափեց իր թունոտ հայցքով ու դռնատվեց։

— Դու հանաք արա, բայց իմացիր, թե ինչի վրա կարելի յե հանաք անել։ Սոցիալիզմի համար մարդկային ծաղիկն ե զոհվել, իսկ դո՞ւ, շան կճի՞ր,

նրա վրա՞ յես ծիծազրամ։ Կորիր խոկույն եստեղից,
հակա՛, թե չե ենպես կհասցնեմ, վոր են աշխարհէ
կդնաս։ Կորի՛ր, գարշելի, քանի մեռելդ չեմ փռել։
Ախր յես ել հանաք անել գիտեմ։

Նա հեռացավ լուռ կանդնած կաղակների մոտից,
վերջին անդամ նայելով դոմի բակին, վոր լի յեր
թռչուններով և ծանր հառաջանքը զսպելով՝ դանդառ,
դլուխը կախ դնաց դեպի դռնակը։

ԳԼՈՒԽ XVL

Արտադրական ընդլայնած խորհրդակցությանը, վոր կայացավ փետրվարի տասներկուսին, հավաքվել եր ավելի քան քառասուն հոգի՝ կոլտնտեսության ակտիվից։ Դրված եյին սերմացույի Փոնդ ստեղծելու, դաշտավին աշխատանքի արտադրական նորմաների, ցանքի ինվենտարի վերանորոգման և կերի պաշարից, գարնան դաշտային աշխատանքների համար հատուկ Փոնդ առանձնացնելու հարցերը։

Դավիդովն առաջարկեց միջին թվով յուրաքանչյուր հեկտարին յոթ փութ սերմացու ցորեն հավաքել, ընդամենը՝ 4669 փութ։ Յեվ հենց այդտեղ ել մի խլացուցիչ աղմուկ բարձրացավ։ Ամեն մեկը գոռում եր իր համար, առանց մյուսին լսելու։ Աղմուկից Տիտոկի տան ապակիները դողում ու զնդզնդում եյին։

— Զափազանց շատ ե։

— Խելքը քամո՞ւն ե տվել։

— Մեր կյանքում եղակես ցանք արած չկանք։

— Յեփած համի ել կծիծաղի։

— Հինգ փութ՝ հաղիվ դնա։

— Դե՛, թեկուղ հինգ ու կես։

— Մեղ մոտ դեսյատինին յոթ փութ պահանջող

ուժեղ հող չես գտնի: Աքոտատե՞ղը պիտի վարենք,
ինչ ե, եղ ինչ ե նախատեսել իշխանությունը:
— Թե՞ Պոնյաշկինի մարադի մոտ են եդ հողերը:
— Ո՛, ամենախոտավետ տեղե՞րը հերկել... հենց
իսկ դլխին ընկար:
— Դուք հացի մասին առացեք. հեկտարին քանի՞
կիլո յե հարկավոր:
— Դու կիլոներով մեզ մի շփոթի. չափով, կամ
կիթով հաշվիր:
— Քաղաքացիներ, քաղաքացիներ, լոեցե՞ք...
թո՛ւհ, կատաղել են անիծվածները: Ինձ մի խոսք
տվեք, — գոռաց բրիգադիր Լյուբշիկինը:
— Տալիս ենք, վերցրու բոլոր խոսքերը:
— Այ քեզ ժողովուրդ... իսկական անասուններ:
իդնա՛տ, ի՞նչ ես գոռում ցուլի պես: Քիչ ե մնում
պայթես, ենպես ես փրկել:
— Հենց քո բերանի՞ց ե, վոր փրփուրը թափվում
ե, վոնց վոր կատաղած շան բերանից:
— Լյուբի՛շիկին ձեն տվեք:
— Համբերելու բան չի. խլացա՞նք:
Խորհրդակցությունը փոթորկում եր աղաղակնե-
րով: Վերջապես, յերբ ամենից բարձր գոռացողները
մի քիչ հանդարտվեցին, Դավիթովն իր համար արտա-
սովոր դայրութով դոչեց:
— Ո՞վ ե եսպես խորհրդակցություն տեսել:
ի՞նչ գոռզոսոց ե: Ամեն՝ մեկը թող կարդով խոսի,
մյուսները՝ լսեն, փաստ ե: Եստեղ բանդիտություն
աարքելու տեղը չի: Գիտակցություն պետք ե ունենալ:
Ով վոր ուրիշի խոսքի մեջ կընկնի, նրան այ, ես վո-

կանով ենակես կվուեմ, աստված վկա, վոր սմբակները
կչոի:— Այուբիշկինը վեր կացավ, ճոճեց կաղնի փայ-
տից պատրաստած ահագին փականը:

— Եղ հո մինչև ժողովի վերջը դու մեզ բոլորիս
անդամալույծ կանես,— արձագանքեց Դյոմիա Ուշա-
կովը:

Խորհրդակցողները ծիծառեցին, ծխեցին և արդեն
լրջացած՝ սկսեցին քննարկել ցանքի նորմայի հարցը:
Յեվ, ինչպես պարզվեց, ամենեին վիճելու և դուռալու
կարիք ել չկար: Առաջինը խոսք վերցրեց Յակով Լու-
կիչը և միանդամից լուծեց բոլոր հակասությունները:

— Ի զուր տեղը գոռողոսալով կոկորդ ենք պատ-
ռում: Ինչո՞ւ ընկեր Դավիդովն առաջարկեց դեսյա-
տինին յոթ փութ: Շատ սկարզ ե. եղ մեր բոլորիս
խորհուրդն ե: Սերմազտիչով պե՞տք ե զտենք ու ախ-
տահանենք: Այո՛: Տականք կլինի՞: Կլինի՞: Յեվ կա-
րող ե շատ տականք լինել, վորովհետեւ ենակես մար-
դիկ կան, վորոնց սերմացուն կուտից չես տարբերի:
Սերմացուն պահում են ուտելու հացահատիկի հետ
միասին, մաքրում են, բայց վո՞նց: Դե, իսկ յեթե
մնացորդ ել կմնա, հո չի՞ կորչի: Թուչուններին, անա-
պուններին կտանք:

Վորոշեցին դեսյատինին յոթ փութ: Դրությունն
ավելի վատացավ, յերբ անցան գութանի արտադրան-
քի նորմային: Այստեղ արդեն կարծիքներ այնպիսի-
բազմազանություն սկսվեց, վոր Դավիդովը համարյա-
մոլորվեց:

— Դու ի՞նչպես կարող ես եմ գլխից ինձ դութանի
արտադրանքի նորմա տալ, քանի վոր չդիտես, թէ

ինչպիսի դարում ե լինելու, — գոռում եր յերբորդ
բրիդադի բրիդադիր, ծաղկատար Աղաֆոն Դուքցավը,
հարձակվելով Դավիդովի վրա: — Իսկ դու դիտե՞ս թե
ձյունն ինչպես կհալվի և նրա տակից ինչ տեսակ հող
կրացվի՝ խոնա՞վ, թե՞ չոր: Ի՞նչ ե, դու հողի միջի՞ց
ես դալիս:

— Իսկ դու ի՞նչ ես առաջարկում, Դուքցով, —
հարցրեց Դավիդովը:

— Առաջարկում եմ ի զուգ տեղը թուղթ չփշացնել
և վոչինչ չդրել: Յանքը կսկսվի և բանը բան ցույց
կտա:

— Դու ել ի՞նչ բրիդադիր ես, վոր անդիտակիցի-
պես դեմ ես դուրս դալիս պլանին: Քո կարծիքով
պլան հարկավո՞ր չե:

— Չի կարելի առաջուց ասել, թե ինչը՝ ինչպես
կլինի, — անսպասելի կերպով Դուքցովին պաշտպանեց
Յակով Լուկիչը: — Յեկ ի՞նչպես կարելի յե նորմա
սահմանել: Ասենք թե՝ ձեր դութանին յերեք զույզ
փորձված, ուժեղ յեղներ են լծած, իսկ իմին՝ աջառ-
ներ: Մի՞թե յես կարող եմ ձեղ չափ վարել: Պարզ
ե՝ չեմ կարող:

Բայց այստեղ միջամտեց կոնդրատ Մայլաննի-
կովը.

— Շատ զարմանալի յե, վոր անտեսվար Ռոտ-
րովնովն եղալիսի բաներ ե ասում: Դու եղ ինչպես
պիտի աշխատես առանց առաջադրանքի: Ինչպես վոք
ոիրադ կուղի՞։ Յես ձեռքս մաճից չեմ հեռացնելու,
իսկ դու պառկած մեջքդ պիտի արևին դեմ անես և

Ենքան ստանաս, ինչքան յե՞ս: Խելքդ տե՞ղն ե, Յակավ
Լուկիչ:

— Փառք աստծու, լավ եմ, կոնցըատ Խրիստա-
ֆորովի՛չ: Իսկ դու ինչողե՞ս պիտի հավասարեցնես
յեզան ու աջառի ուժը, կամ հենց հողերը: Ասենք՝
քեզ փափուկ հող ե բաժին ընկել, իսկ ինձ՝ պինդ,
քոնը հարթ տեղ ե, իսկ իմը՝ դար ու փոս: Ասա՛,
վոր դու եղքան խելոք ես:

— Պինդ հողի բանն ուրիշ ե, փափուկինը՝ ու-
րիշ: Յեզներն ել կարելի յե հավասարեցնել լծելոս:
Ամեն ինչ կարելի յե հաշվի առնել, զու իմ գլխին
քարող մի կարդա:

— Իսկ դուք, քաղաքացիներ, ինչի՞ յեք լոել:
Ակտիվ եք համարվում, իսկ չեք ձայնը յես դեռ չեմ
լոել:

Դեմիդ Մոլչունը զարմացած նայեց Դավիթովին
և խուլ բառով պատասխանեց.

— Ցէս համաձայն եմ:

— Ինչի՞ն:

— Վոր պետք ե վարել, ուրեմն . . . և ցանել:

— Հետո՞:

— Ուրիշ վոչինչ:

— Վերջացա՞վ:

— Հը՞մ . . .

— Այ թե խոսեցիք . . .

Դավիթովի ժպտաց, ելի մի ինչ վոր բան ասաց,
սակայն ընդհանուր հրհոսցի մեջ նրա ձայնը չլսվեց:
Հետո արդեն Դեմիդ Մոլչունի փոխարեն բա-
ցարեց Շչուկար պապը.

— Նա ընկեր Դավիթով, մեղ մոտ՝ դյուզուք
Մոլչուն^{*)} և կոչվում։ Իր ամբողջ կյանքում լուս ե,
խոսում և ծայրահեղ դեսլքերում, դրա համար ել իր
կնիւլը թողեց զրան։ Ինքը հիմար կազակ չէ, այլ՝
մի քեզ հիմարի նման, իսում, թե վոր ավելի քնքուշ
տաճնք՝ հիմարավան, ևսպես ասած՝ վոնց վոր ձին
գլխին քացի տված։

— Դե ձենող կտրի՛ր, — լովեց հետեւիլից մի ծայն
և քրքիչ։

— Մի խոխա յեր, հիշում եմ յես նրան, անողետք,
փալնքում մի տղա, վաղվղում եր չըլդը և վոչ մի բանի
չնորք չուներ, իսկ յերբ մեծացավ, շարունակ լուս
է։ Հին ոհմիմի ժամանակ Տուբյանակիի տերտերը մի
անդամ դրա համար նրան հաղորդեց զրկեց։

— Դու կլոե՞ս եստ, թե չե, — հաքցրեց Նազուլ-
նովը — իսկույն զուրո կանեմ ժողովից։

— Դու, Մակարուշկա, մայիսի մեկին դպրոցում
համաշխարհային հեղափոխության մասին խոսեցիր
կես որից մինչև արեամուտ։ Զանձրալի եյիր խոսում,
խոսք չկա, շարունակ նույնը և նույնը։ Յես կամաց
դլուխա նստարանի վրա դրի ու քննցի, իսկ քեզ ընդ-
հատել չհամարձակվեցի, բայց դու, այ, իմ խոսքը
կտրում ես . . . Ե, ի՞նչ կա վոր, ժողովուրդ, Դե-
միուր լուս ե, իսկ մենք կիսունք, եղ մեղ չի վերա-
րեքում։ Ասենք՝ լավ խոսքը, վոնց վոր իմն ե, արծաթ
ե, իսկ լուսթյունը՝ վոսկի։

^{*)} Մոլչուն — ոռուերեն մօլչալիվայի բառից ե,
որը նշանակում է լուսկյաց։

— Համ կլիներ, դու քո ամբողջ արծաթը վոստ...
հետ փոխելիր, ուրիշներն ել հանգիստ կլինելին,—
խորհուրդ տվեց Նադունովը:

Քրքիջը մեկ բոնկում եր, մեկ լոռում: Շչուկար
պապի պատմությունը քիչ մնաց գործնական տրամա-
դրությունը խախտի, սակայն Դավիթովը դեմքի
ժպիտը ցըելով, հարցրեց.

— Դու ի՞նչ եյիր ուզում ասել արտադրանքի նոր-
մայի մասին, գործից խոսիր:

— Յե՞սու, — և Շչուկար պապը թևքով քրտնած
ձակատը սրբելով աչքերը ճպճպացրեց: — Յես դրա
մասին վոչինչ ել չեյի ուզում... Յես Դեմիդի հարցը
լուսաբանեցի... իսկ նորման եստեղ գործ չունի:

— Այս խորհրդակցությանը քեզ ձայնից զրկում
եմ: Պետք ե գործի մասին խոսել, իսկ կատակները
հետո կարելի յե անել, փաստ ե:

— Գութանին որական մեկ դեսյատին, — առաջար-
կեց ագրոլիազորներից մեկը՝ կոլտնտեսական իվան
Բատալչիկովը:

Սակայն Դուբցովը հուզված գոչեց.

— Հիմարացել ես դու: Եղ հեքիաթները քո
կնկանը պատմիր: Որական մի դեսյատին չի վարդի,
ճաքես ել՝ չես վարի:

— Յես առաջ վարել եմ: Դե, դուցե մի քիչ ուր-
կաս:

— Հենց բանն ել եղ ե, վոր պակաս:

— Գութանին կես դեսյատին: Եղ պինդ հողերում:

Յերկար վեճից հետո կանոք առան հետեյալ նոր-

մայի վրա . պինդ հողերում՝ գութանին 0,60 հեկտար ,
փափուկ հողերում՝ 0,75 հեկտար :

Վորոշեցին սերմֆոնդը հավաքել յերեք որվա ընթացքում : Լսեցին դարբին իպոլիտ Շալովին վոչ ուրախալի հայտարարությունը : Նա խոսում եր բարձր , վորովհետեւ ինքը մի քիչ ծանր եր լսում և շարունակ աշխատանքից սեացած ձեռքերի մեջ շուռ ու մուռ եր տալիս իր բաւղուտած յեռականջ փափախը՝ քաշվելով խոսել այդքան բազմության մեջ :

— Բոլորն ել կարելի յե նորոգել : Գործն ինձ մոտ չի կանդնի : Բայց , այ , յերկաթի մասին , վոնց վորվինի պիտի ճարել : Գութանների խոփերի ու ձեիչների համար մի կտոր յերկաթ ել չկա : Ինչո՞վ աշխատես : Ցանիչները կսկսեմ հենց վաղը : Ինձ մի աշակերտ և հարկալոր , մեկ ել ածուխ և մեկ ել՝ կուտնակառությունն ինձ ինչքա՞ն պիտի վճարի :

Դավիթավը վճարելու մասին նրան մանրամասն բացատրեց և Յակով Լուկիչին առաջարկեց հենց հետեւյալ որը զնալ շրջանային կենտրոն՝ յերկաթ և ածուխ բերելու : Կերի Փոնդ ստեղծելու հարցը շուտ լուծվեց :

Դրանից հետո լուծեցին ու խորհրդակցեցին ելի մի շարք հարցերի մասին : Սկսեցին ցրվել : Դավիթավը ու Նազուլնովը դեռ դյուզիսորհուրդ չեյին հասել , վարդյուղիսորհուրդի բակից արագ քայլերով նրանց դեմը դուրս յեկալ մի յերիտասարդ , կաշվե բաճկոնի կոճակներն արձակած , յունդշտուրմական համազդետում : Վանդակավոր կտորից կարված կեպին ձեռքին

բոնած և քամու ուժեղ հոսանքից պաշտպանվելով
նա շտապ մատենում եր:

— Ով վոր ե, շրջանից և յեկել, — աչքերը կկո-
ցելով ասաց Նազուլնովը:

Յերիտասարդը բոլորովին մոտեցավ, ովհելորա-
կանի պես ձեռքը կեալիին մոտեցնելով բարեեց ու
Հարցրեց.

— Դուք գյուղխորհրդից չե՞ք:

— Իսկ դուք ո՞ւմ եք ուզում:

— Այստեղի բջջի քարտուղարին, կամ Խորհրդի
նախագահին:

— Յես բջջի քարտուղարն եմ, սա՝ կոլտնակու-
թյան նախագահը:

— Այդ շատ լավ ե: Յես, ընկերներ, ազիտ խմբա-
կիցն եմ: Մենք հենց նոր յեկանք և ձեզ սպասում ենք
պյուղխորհրդում:

Յցաքիթ ու թխաղեմ յերիտասարդը մի արագ
հայմցք դցեց Դավիդովի դեմքին և Հարցական ժըսլ-
տաց.

— Դու Դավիդովը չե՞ս, ընկեր:

— Դավիդովն եմ:

— Յես քեզ ճանաչեցի: Յերկու շարած առաջ մենք
հանդիպեցինք ոկրուգիոմում: Յես ոկրուգումն եմ
աշխատում, ձեմի դործարանում. մամլող եմ:

ԳԼՈՒԽԱ XIV

Յեսաուլ Պոլովցեր Յակով Լուկիչի մոտ ապրելով՝ յեռանդուն կերպով պատրաստվում եր գարնանը, ապստամբության: Գիշերները, մինչև աքլորականչնա նստում եր իր փոքրիկ սենյակում և ինչ-վոր բան եր գրում, քիմիական մատիտով ինչ-վոր քարտեղներ եր գծում ու կարդում: Յերբեմն նրա մոտ մտնելով՝ Յակով Լուկիչը տեսնում եր, թե ինչպես Պոլովցեն իր լայնաճակատ գլուխը սեղանին խոնարհած կարգում է, անձայն շարժելով իր հաստ շրթունքները: Աակայն յերբեմն ել Յակով Լուկիչը նրան գտնում եր մտքերի մեջ խորասուզված: Այդպիսի ըովեներին նա նստած եր լինում արմունկները հենած սեղանին, մատները խրած իր նոսր ու արգեն սպիտակող մազերի մեջ: Նրա պիրկ ծնոտները շարժվում եյին դանդաղ, կարծես մի ինչ վոր պինդ բան ծամելիս լիներ, իսկ աչքերը կիսախուփի եյին լինում: Մի քանի կանչից հետո միայն նա բարձրացնում եր իր գլուխը և նրա մանրիկ, սարսափելիրեն անշարժ բիրերի մեջ փայլատակում եր զայրույթը: «Դե՛, ի՞նչ ես ուզում» հարցնում եր նրա վոռնացող բասով: Այսպիսի ըովեներին Յակով Լուկիչը նրա հանդեպ զգում եր ավելի մեծ սարսափ և ակամա հարդանք:

Յակով Լուկիչի պարտականությունների մեջ եր
ամսում՝ ամեն որ Պոլովցեին հայտնել, թե ինչ է
կատարվում կողանտեսությունում ու գյուղում։ Նա
ամեն ինչ հազորդում եր բարեխզճորեն, սակայն յու-
րաքանչյուր որը մի նոր վիշտ եր բերում Պոլովցեին։

Այն որը, յերբ Գրեմյաչի Լոդից կուլակներին ար-
տաքսեցին, Պոլովցեն ամբողջ գիշերը չքնեց։ Մինչև
լուսաբաց հնչում ելին նրա ծանր, բայց անազմուկ
քայլերը և Յակով Լուկիչը մատների ծայրերով մոտե-
նալով փոքրիկ սենյակի դռանը, լսում եր, թե ինչպես
նա ատամները կընտացնելով մրմոռում ե.

— Քանդում են մեր վոտքի տակի հողը, զրկում
են հենարանից . . . կոտորել, կոտորել, կոտորել ան-
ինա . . .

Ապա լոռում եր, նորից սկսում քայլել, թաղիքն
վոտնամաններ հաղած, անձայն քայլերով ու լսվում
եր, թե ինչպես տրորում ե իր մատները, ըստ սովո-
րության քորում կուրծքը և նորից խուլ շնչում։

— Կոտորել, կոտորել . . . — Ապա ալելի մեղմ,
խուլ մրմնջոցով ավելացնում . . . վաղոքմած աստ-
ված, ամենատես, արդարադատ աստված, դո՛ւ ողնիր։
Ախր, յե՞րբ պիտի վրա հասնի այն ժամը, տե՛ր,
արագացրու քո դատաստանը։

Անհանդստացած Յակով Լուկիչն արդեն լուսա-
ծեղին մոտեցավ սենյակի դռանը, կրկին ականջը դրեց
վիականքի անցքին։ Պոլովցեն աղոթք եր մրմնջում,
տնքոցով ծունկ չողում, յերկրապատկում։ Հետո նա
ճրագը հանգցրեց, պառկեց և արդեն կիսաքուն մի
անգամ ևս կամացուկ շնչաց։

«Կոստորել բոլորին . . . մինչև վերջինը . . .»— և հա-
ռաչեց :

Մի քանի որ անց, դիշերով Յակով Լուկիչը լսեց,
վոր թակում են իր լուսամուտի փեղկը և դուրս յեկալ
նախասենյակ :

— Ո՞վ ե :

— Բա՛ց արա, տանտե՛ր :

— Ալեքսանդր Անիսիմիչի մոտ եմ յեկել,— լսվեց
Հովհան Հետեկից :

— Ի՞նչ : Եստեղ եղալիսի մարդ չկա՛ :

— Ասա նրան, վոր յես Սևի մոտից եմ յեկել,
ծրար եմ բերել :

Յակով Լուկիչը քիչ լսեց, ապա բաց արեց դուռը.
«Ինչ լինելու յե, թող լինի» : Ներս մտավ ինչ վոր
մի ցածրահասակ մարդ, բաշուղով փաթաթված :
Պոլովցել նրան տարավ իր սենյակը, դուռն ամուր
փակեց և մոտ մեկ ու կես ժամ փոքրիկ սենյակից
կամացուկ ու արագ խոսակցության ձայն եր զալիս :
Մինչ այդ, Յակով Լուկիչի վորդին յեկվորի ձիու
խոտ տվեց, սանձը դլխից հանեց և փորկապները թու-
լացրեց :

Այսուհետեւ համարյա ամեն որ ձիավոր սուրհան-
գակներ եյին դալիս, սակայն վոչ թե կեսդիշերին,
այլ այդաբացին մոտ, դիշերվա մոտավորապես ժամը
յերեքին-չորսին : Յերեսում եր, վար սրանք ավելի հե-
ռու տեղերից եյին դալիս, քան առաջինը :

Արտասովոր յերկվություն եր ապրում Յակով
Լուկիչն այդ որերին : Առավոտյան դնում եր կոլ-
սնտեսության գրասենյակը, խոսում եր Դավիթովի,

Նազուլնովի, պտաղձագործների հետ։ Աշխատանքուց
հրասլուրում եր նրան, գործելու ցանկություն ուներ,
դվառում ամեն տեսակ նախաղծեր եյին ծնվում։ Նա
յեռանդով ձեռնամուխ յեղավ գոմերի տաքացմանը,
հիմնական ախոռների կառուցմանը, ղեկավարում եր
համայնացված շտեմարանների փոխադրությանը և
կոլտնտեսության նոր չտեմարանի կառուցումը։ Բայց
յերեկոյան, հենց վոր աշխատանքային որվա յեռու-
զեռը դադարում եր և տուն դնալու ժամանակն եք
դալիս, այն միտքը, թե այնտեղ՝ իր փոքրիկ սենյա-
կում նստած ե Պոլովցեր՝ ինչպես դիշատիչ ցինը՝
մեռելաթմբի վրա, մռայլ ու զարհուրելի իր մե-
նության մեջ,— այդ մտքից Յակով Լուկիչի սիրու-
ճմլում եր, . շարժումները ծանրանում, ամբողջ
մարմինը համակում եր չտեսնված հոգնածությամբ...
Նա տուն եր վերադառնում և ընթրելուց առաջ մտնում
Պոլովցեի մոտ։

— Խոսի՛ր, — հրամայում եր նա, ծխախոտ փա-
թաթելով, աղահորեն լսելու պատրաստ։ Յեվ Յա-
կով Լուկիչը պատմում եր կոլտնտեսության ընթացիկ
գործերի մասին։ Սովորաբար Պոլովցեր մինչեւ վերջ
բում եր լուռ, միայն մի անգամ, յերբ Յակով Լուկիչը
հաղորդեց, թե կուլակներից խլված հագուստեղենը
բաժանել են չքաղլորներին, նա ընդհատեց նրան, կա-
տաղի ծկլոցով դռչեց։

— Գարնանը... գարնանը կպատառուտենք մենք
նրանց կոկորդը, ովքեր վերցըել են։ Այդ բալոր...
դու բոլոր այդ շան վորդիների ցուցակը կազմիր։
Լսո՞ւմ ես։

- Յուցակը կա ինձ մոտ, Ալեքսանդր Անիսիմիչ:
- Հիմա մո՞տե՞ք ե:
- Մոտս ե:
- Տո՛ւր այստեղ:

Նա վերցրեց ցուցակը և խնամքով հանեց նրա պատճենը, լրիվ գրելով հազուստ վերցնողների անուն, ազգանուն, հայրանունը, վերցրած իրերը, յուրաքանչյուրի անվան դիմաց նշան դնելով:

Պոլովցեի հետ զրուցելուց հետո Յակով Լուկիչը քնում եր ընթրելու, իսկ քնելուց առաջ նորից գնում եր նրա մոտ՝ հրահանդներ ստանալու, թու ինչ պիտի անի հետեւյալ որը:

Այդ, Պոլովցեի հրահանդի՛ համաձայն եր, վոր Յակով Լուկիչը փետրվարի 8-ին յերկրորդ բրիդադի կարգադրիչին հրամացեց չորս սայլ ու մաքդիկ ուղարկել և դետի ավաղ կրել տալ յեզների գոմը: Ավազը կրեցին: Յակով Լուկիչը կարգադրեց մաքրել դժմի հողե հատակը և այնտեղ ավաղ փռել: Աշխատանքի վերջում Դավիդովը յեկալ յերկրորդ բրիդադի գոմը:

— Այդ ի՞նչ եք անում այս ավազը, — հարցրեց նա Դեմիդ Մոլչունին, վոր բրիդադի յեղապան եք հշանակված:

— Փռում ենք գոմում:

— Ինչո՞ւ:

Լոռիթյուն:

— Ի՞նչու, հարցնում եմ քեզ:

— Զեմ իմանում:

— Ո՞վ ե կարգադրել այստեղ ավաղ փռել:

— Տնտեսվարը :

— Բայց ի՞նչ ե ասել նա :

— Վոր մաքրություն լինի, — ասում ե, — բա՛ն
և հնարել դարձելին :

— Այդ լավ ե, փաստ ե: Յեվ դու իզուր ես այդ-
պես... դժգոհում: Դե ախր հիմա մարդու քեֆ ե-
զալիս, վոր նայում ե գոմին: Ավաղ, մաքրություն-
հը: Դու ի՞նչ ես կարծում:

Յերեկոյան դեմ Լյուբիշկինը վազեց Դաւիթովի-
մուս ու վրդովված հարցրեց.

— Ուրեմն եսորվանից ցամքարի փոխարեն ավա՞գ
ենք փոելու յեղների տակը:

— Այո՛, ավագ:

— Ախր դա, եղ Ոստրովնովը... դժ...վե՞լ ե,
ի՞նչ ե: Վորտե՞ղ ե տեսնված: Յեվ դու, ընկեր Դա-
միդով, միթե՞ եղ ախմախությունը խրախուսում
ես:

— Իսկ դու, մի հուզվիր, Լյուբիշկին: Այստեղ
հարցը մաքրությանն ե վերաբերում և Ոստրովնովը
ճիշտ ե արել: Այդպես անվտանգ ե. վոր մաքուր լի-
նի, վարակում ել չե լինի:

— Ախր դա ի՞նչ մաքրություն ե. թքած վրեն:
Յեզն ինչի՞ վրա պիտի նստի: Մի տես թե ցուրտը
վսնց ե հուզ տալիս: Ցամքարի վրա հալա տաք կլի-
նի, իսկ ավագի վրա մի նստի տեսնե՞մ...

— Զե, դու խնդրեմ, մի հակաճառի: Հարկավոր
ե ձեռք քաշել անասունները հին ձեռվ պահելուց:
Ամեն բան մենք պետք ե դիտական հիմքի վրա դր-
նենք:

— Ախր եղ ինչ տեսակ հիմք ե, ե՞լու, — Լյուրիշ-կինն իր սև փափախը թնփացրեց իր ծնկանը և կառ կարմիր կտրած՝ դուրս թռավ Դավիդովի մո-տից :

Իսկ առավոտյան քսաներեք յեզ նստած տեղից վեր կենալ չկարողացան : Գիշերը սառած ավաղից յեղների մեղը չեր անցել, յեղները նստել եյին թագ տեղը և ցրտահարվել : Մի քանիսը վեր կացան, փայ-տացած ավաղին կպած թողնելով իրենց մաշկի կտոր-ները, չորսի սառած պոչը կտրվեց, մյուսները հի-վանդ՝ սկսեցին դողալ :

Զափից անցավ Յակով Լուկիչը, Պոլովցեղի պատ-վերը կատարելիս և քիչ մնաց, վոր զրկվեր անտես-վարի պաշտոնից :

— Ցըտահար արա նրանց յեղներն, ահա այս միջոցով : Նրանք — այդ հիմարները կհավատան, թե մաքրության համար ես անում : Բայց ձիերին լավ հսկիր, վորպեսզի հենց եսորվանից բոլորը պատրաստ լինեն, — մի որ առաջ ասում եր Պոլովցեր : Յեվ Յա-կով Լուկիչը կատարեց այդ :

Առավոտյան Դավիդովը նրան իր մոտ կանչեց, դռան փակը դցեց և առանց աչքերը բարձրացնելու հարցրեց .

— Այդ ի՞նչ արիր դու :

— Սիալ դուրս յեկավ, սիրելի ընկեր Դավիդով : Ախր յես . . . տե՛ր իմ աստված, քիչ և մնում մազերա փետուեմ . . .

— Դու այդ ի՞նչ արիր, դարձելի՛ . . . և Դավի-դովը սիրթնեց, դայրույթից արցունքով լցված աչքե-

ու բարձրացրեց Յակով Լուկիչի վրա . . . վնասարա-
բություն ես անում : Զդիտե՞լիք , վոր չի կարելի գո-
մամ ավագ մոռել : Զդիտե՞լիք , վոր յեղները կարող են
շրտահարվել :

— Ուզում եյի յեղները . . . Աստված ե վկա՝ չգե-
տելի :

— Լուիր դու քո . . . Զեմ հավատա , վոր դու ,
այդպիսի տնտես գյուղացի՝ չըիտենայիք :

• Յակով Լուկիչը լաց յեղավ , հեկեկալով շարունակ
նույնն եր կրկնում .

— Մաքրություն եյի ուզում սարքել . . . վոր աղօ
հավաքվի . . . Զդիտեյի , դլախ չընկա , վոր եղակն բան
կլինի . . .

— Դնա՛ , դործերը հանձնիք Ուշակովին : Իսկ քեզ
կդատենք :

— Հնկեր Դավիդով . . .

— Դուրս գնա , ասում եմ քեզ :

Յակով Լուկիչի զնալուց հետո Դավիդովն սկսեց
ավելի հանգիստ մտածել պատահած դեպքի մասին :
Եյժմ արդեն նրան անհեթեթություն եր թվում Յա-
կով Լուկիչին կասկածել վնասարարության մեջ : Զե՞
վոր Ոստրովնովը կուլակ չի յեղել : Յեվ յեթե մեկն ու
մեկն ել յերբեմն նրան այդպիսի անուն ե տվել , ա-
պա այդ ուղղակի անձնական հաշիվներից դրդված ե
յեղել : Մի անգամ , յերբ դեռ Ոստրովնովը նոք եր
անտեսվար նշանակվել , Լյուրիշկինը մի խոսք նետեց
թե՝ «Ոստրովնովը նախկին կուլակ ե» : Դավիդովը
դեռ այն ժամանակ ստուգեց և պարզեց , վոր շատ տա-
րիներ առաջ Յակով Լուկիչն , իրոք , ունեոր ե յեղել ,

բայց հետո անբերիությունը քայլայել ե նրան և
դարձրել միջակ : Մտածեց, մտածեց Դավիթովը և յե-
կավ այն յեղրակացության, վոր Յակով Լուկիչը մե-
ռավոր չե այս դժբախտ պատահառում՝ վոր տեղի
ունեցավ յեղների հետ, համոզվեց, վոր նա իրոք,
ստիպել ե գոմում ավագ փոել, վորպեսզի մաքրու-
թյուն լինի, մասամբ ել գուցե հենց շարունակ նոր ու
նոր բաներ վորոնելու իր ձգտումից դրդված : «Յե-
թե նա վնասարար լիներ, այնպես հարվածայնորեն
չեր աշխատի և լերջապես, չե՞ վոր նրա մի զույգ յեղ-
ներն ել են այնտեղ վնասվել»,— մտածեց Դավիթո-
վը :— Վո՛չ, Ուստրովնովը նվիրված կոլտնտեսական
ե և ավաղի դեպքը պարզապես մի ցալալի սխալ է,
փաստ ե» :

Ինչպես Դավիթովը նկատել եր, Յակով Լուկիչը
ձիերի նկատմամբ այնպես եր հոգ տանում, ինչպես
հավանորեն վոչ վոք չեր տանի : Այս ամենը մտածե-
լով՝ Դավիթովն իրեն զգաց ամոթահար և մեղավոր
տնտեսվարի մոտ, իր բռնկվելու, անտեղի զայրույ-
թի համար : Նա իրեն անհարմար եր զգում, վոր այն-
պես կոպիտ կերպով գոռաց այնքան լավ կոլտնտեսա-
կանի վրա, իր համագյուղացիների կողմից հարգված՝
կոլտնտեսության վարչության այդ անդամի վրա և
նույնիսկ իրեն մեղավոր զգաց, վոր թյուրիմացու-
թյան պատճառով նրան կարկածել ե վնասարարու-
թյան մեջ : «Ի՞նչ խայտառակությո՞ւն» : Դավիթովը
խառնշտեց իր մազերը, հուզված փնչացրեց և դուրս
յեկավ սենյակից :

Յակով Լուկիչը խոսում եր հաշվետարի հետ,

բանալիների մի փունջ ձեռքին բռնած : Հուզմունքից
Նրա շրթունքները դողում ելին :

— Դու, ահա թե ինչ, Ոստրովնով, դու գործերը
մի հանձնիր, շարունակիր աշխատել, փաստ ե : Բայց
յեթե մի անդամ ել այդպիսի մի բան դուրս դա...
Մի խոսքով, այն, ը... շրջանից կանչի անասնաբու-
ժակին, իսկ բրիգադիրներին ասա, վոր ցրտահարված
յեղներն աղատեն աշխատանքից :

Կոլտնտեսությանը վնասելու առաջին փորձը Յա-
կով Լուկիչի համար հաջողությամբ վերջացավ : Պո-
լովցելը միառժամանակ Ոստրովնովին ուրիշ առաջա-
դրանքներից ազատեց, վորովհետև ուրիշ գործով եր
զբաղված . ինչպես միշտ՝ դիշերով նրա մոտ մի նոր
մարդ յեկավ : Նա սայլակը թողեց, մտավ խրճիթ և
Պոլովցեն իսկույն նրան տարավ իր սենյակը, հրա-
մայելով, վոր վոչ վոք ներս չմտնի : Նրանք խոսեցին
շատ յերկար, իսկ առավոտյան Պոլովցեն ուրախ տրա-
մադրությամբ իր մոտ կանչեց Յակով Լուկիչին :

— Ահա, իմ թանկագին Յակով Լուկիչ, սա մեր
մերության անդամ ե, այսպես ասած՝ մեր զինակիցը .
յենթասպա, իսկ կաղակավարի՝ յենթայեսառու Վաց-
լավ Ավգուստովիչ Լյատևսկին : Սիրիր նրան և պատ-
վիք : Իսկ սա՝ իմ տանտերն ե, յեփված կազակ, վոր
հիմա կոլտնտեսության տնտեսվարն ե : Կարելի յե
ասել՝ խորհրդային ծառայող...

Այդ որը Պոլովցեն արտասովոր ուրախ տրամա-
դրություն ուներ և նույնիսկ սիրալիր եր Յակով Լու-
կիչի հետ... Վոչինչ չնշանակող խոսակցությանը նա

շուտով վերջ տվեց և դառնալով դեպի Ռատրովնովը՝
ասաց .

— Յենթասապա Լյատեվսկին մի յերկու շաբաթ
կմնա քեզ մոտ , իսկ յես այսոր , հենց վոր մթնի ,
կգնամ : Ամեն բան , ինչ վոր պետք կդա Վացլավ Ավ-
դուստովիչին , ճարիր : Նրա բոլոր հրամանները՝ իմ
հրամաններն են : Հասկացա՞ր : Այդպես , ուրեմն , սի-
րելի Յակով Լուկիչ , — և թմբլիկ թաթը ղնելով Յա-
կով Լուկիչի ծնկին , խորհրդավոր ձեռվ ընդգծեց .—
շուտով սկսում ենք : Ելի մի քիչ համբերություն:
Այդպես ել ասա մեր կաղակներին , թող խրախուսվեն :
Դե , իսկ այժմ զնա , մենք դեռ խոսելիք շատ ու-
նենք :

Ինչ վոր մի արտասովոր բան եր պատահել , վոր
Պոլովցեին : Հարկադրել եր յերկու շաբաթով հեռա-
նալ Գրեմյաչի Լողից : Յակով Լուկիչը վառվում եր
հետաքրքրությունից : Բան խմանալու մտադրությամբ
նա մտավ այն դահլիճը , վորտեղից մի անդամ Պոլով-
ցեվն ականջ եր դրել իր ու Դավիթովի խոսակցու-
թյանը , մոտեցավ ու ականջը կողցրեց բարակ միջնոր-
մին : Պատի հետեւից , փոքրիկ սենյակից հաղիկ լը-
վում եր հետեւյալ խոսակցությունը .

Լյատեվսկի — Ձեզ անպայման անհրաժեշտ է կապ-
վել Բիկադրումի հետ . . . Նորին դերազանցությունը .
Հասկանալի յե , վոր տեսակցության ժամանակ կապատ-
մի ձեզ թե ծրագիրը . . . Հաքմար սիտուացիան . . . Այդ-
ու հիանալի յե : Սալսկի ոկրուգում . . . զբահա-
ղնացքը . . . պարտության դեպում . . .

Պոլովցեւ .— Սը'սսս . . .

Լյատեվսկի .— Մեղ վոչ վոք չի լսում :

Պոլովցեւ .— Այնուամենայնիւ . . . Գաղտնապահություն ամեն բանի մեջ :

Լյատեվսկի .— (Ավելի կամաց , այնպես , վոր Յակով Լուկիչն ակամայից կորցրեց նրա խոսքի կապը) Պարտություն . . . ի հարկե . . . Ավղանստան . . . Նրանց ողնությամբ հասնել . . .

Պոլովցեւ .— Բայց միջոցներ . . . Պետքաղվարչությունը . . . (և այնուհետև միալար դ'ը-դը'-դը'-դը' . . .) :

Լյատեվսկի .— Վարիանտն ե սահմանն անցել . . . Մինսկում . . . Անցնելով . . . Յես ձեզ հավատացնում եմ , վոր . . . Սահմանապահ զորախումբը . . . Գենշտարի բաժանմունքը , անպայման , կընդունեն . . . Գնդապետը , աղդանունը գիտեմ . . . պայմանական ներկայություն . . . Յեվ հո դա վիթխարի ողնություն ե . . . Հովանավորությունը . . . դործը նպաստին չի վերաբերում . . .

Պոլովցեւ .— Իսկ հատուկ կարծիքնե՞ր :

Լյատեվսկի .— Վստահ եմ , վոր գեներալը կկըր-կընի . . . շատ : Ինձ բանավոր կարգադրված ե . . . Խիստ լարված . . . ողտագործելով . . . ըստեն չփախցնել . . .

Զայները փոխվեցին շշուկի և Յակով Լուկիչն այնպես ել վոչինչ չհասկացավ այդ կցկառուր խոսակցությունից , հառաչեց և զնաց կոլտնտեսության դրասենյակը : Յեվ յերբ նորից մոտեցավ Տիտոկի նախկին տանը , ըստ սովորության՝ մի հայացք զցեց դարբասի ճակատին խփած սպիտակ տախտակին , վորի

վրա դրված եր . «Գրեմյաչիլ Ստալինի անվան կոլ-
տնտեսության վարչություն» և սրտի խորքում զգաց
սովորական յերկությունը : Իսկ հետո հիշեց յենթա-
սպա Լյատեվսկուն և Պոլովցեվի ինքնավստահ խոսքե-
րը՝ «Շուտով կսկսենք» և չարախնդությամբ , ինքն ի-
րեն նեղանալով մտածեց . «Գոնե շուտ լիներ , թե չե
յես նրանց ու կոլտնտեսության արանքում կտրոր-
վեմ , ինչպես յեղը՝ լպրծուն ճամփի վրա» :

Գիշերը Պոլովցեվը ձին թամբեց , իր բոլոր թըղ-
թերը դարսեց խուրջինի մեջ , պաշար վերցրեց և հրա-
ժեշտ տվեց : Յակով Լուկիչը լսեց , թե ինչպես պա-
տուհանի մոտով ուրախ , կայտառ , ամբակների ուժեղ
դոփյունով խայտալով անցավ Պոլովցեվի յերկար ժա-
մանակ հանդիսատ առած ձին :

Նոր տնվորը դուրս յեկավ մի անհանդիսատ ու
զինվորականի սես անպատկառ անձնավորություն :
Ամբողջ որը նա ուրախ ու ժաղտերես թափառում եք
խրճիթում , կատակներ անում կանանց հետ , հանդիսա-
չեր տալիս պառավ տատին , վորը մահու չափ ատում
եր ծխախոտի ծուխը , շըջում եր , առանց վախենա-
լու , թե վորեւ մի կողմնակի մարդ կմտնի Յակով
Լուկիչի մոտ , այնողես , վոր Յակով Լուկիչը նույնիսկ
գիտողություն արեց .

— Դուք մի քիչ դույչ լինեք . . . ժամանակը
վատ է , ձերդ բարեձնություն , վորեւ մեկը ներս
կմտնի և կտեսնի ձեզ :

— Իսկ ի՞նչ է , իմ ճակատին դրված է , վոր յես
«ձերդ բարեձնություն եմ» :

— ԶԵ՛, բայց, ախը կարող են հարցնել, թէ ո՞վ եք դուք...

— Իմ գրպանը, սիրելիս, լիքը կեղծ փաստաթղթեր են, իսկ յեթե բանն այնտեղ կհասնի, վորչեն հավատա, այն ժամանակ կներկայացնեմ ա՛յ, այս մանդատը։ Սրանով ամեն տեղ կարելի յեղնել, — և ծոցից հանեց սե, փայլուն մառողերը, շարունակ նույն ուրախ ժպիտը դեմքին, վրդովեցուցիչ կերպով նայելով իր անշարժ աչքով, վոր ծածկված եր մորթութմբածե ծալքի տակ։

Յերբեմն Լյատեվսկուն ծրարներ եյին բերում։ Նա կարդում եր և անմիջապես վառարանի մեջ այրում։ Վերջում նա սկսեց գիշերները խմել, մռայլից և ավելի ու ավելի հաճախ եր Յակով Լուկիչին կամ Սեմյոնին խնդրում «կես լիտրանոց» ողի ճարել, վորի համար նոր, խշուցուն չերվոնեցները նրանց բուռն եր կը կախում։

Մի որ, կես գիշերին վոյսկովով գյուղից, Պուլուց ցեղի մոտից մի ինչ վոր ձիավոր սուրհանդակ յեկատ։ Լյատեվսկին կարդաց նրա բերած նամակը, վարի վրա նշանակված եր. «Հույժ շտապ» և արթնացրեց խոհանոցում քնած Յակով Լուկիչին։

— Ահա, առ, կարդա՛։

Յակով Լուկիչն աչքերը տրորելով վերցրեց Լյատեվսկուն հասցեադրված նամակը։ Քիմիական մատիտով, ծոցատերից կտրած թերթի վրա պարզ, տեղակ հին ուղղագրությամբ դրված եր։

«Պարոն պորուչիկ,

Մենք հավաստի տեղեկություն ենք ստացել, վոր

Քոլշեիկների կենտկոմը գյուղական բնակչությունից Հաց և հավաքում, իրը թե կոլտնտեսությունների ցանքի համար։ Սակայն իրականում այդ հացն ուղարկվելու յե արտասահման՝ վաճառելու, իսկ գյուղացիները, վորոնց թվում նաև կոլտնտեսականները, սոսկալի սովոր յեն մատնվելու։ Խորհրդային իշխանությունն զգալով իր անխուսափելի և մոտալու վերջը, վաճառում է վերջին հացը, վերջնականապես քայլայում և Ռուսաստանը։ Հրամայում եմ ձեզ անմիջապես կարծեցյալ սերմացույի հավաքման դեմ լայն աղխտացիա ծավալել Գրեմյաչի Լոգի բնակչության մեջ, վորտեղ դուք ներկայումս մեր միության ներկայացուցիչն եք համարվում։ Իմ նամակի բովանդակությունը տեղեկացրեք Յա. Լ.-ին և նրան պարտավորեցրեք անմիջապես բացատրական աշխատանք սկսել։ Խիստ անհրաժեշտ ե, ինչ զնով ել լինի, արդելք հանդիսանալ հացի հավաքմանը»։

Առավոտյան Յակով Լուկիչը դեռ վարչության շմտած՝ զնաց Բաննիկի և իր մյուս համախոհների մոտ, վորոնց ինքը «Դոնի ազատադրության միության» մեջ եր առել։

ԳԼՈՒԽ ՀՀ

ՅԵՐԵՔ Հողուց բաղկացած բրիդադը, վորին ագիտալոնի հրամանատար՝ կոնդըքատենկոն թողել եր Գրեմյաչի Լողում, ձեռնամուր յեղամ սերմֆոնդի համարմանը:

Աշխատանքի առաջին իսկ որերից պարզվեց, վոր սերմֆոնդի գանձումը կատարվելու յէ մեծ դժվարություններով ու ժամկետի ձղձղումով։ Սերմացվի գոնձումն արագացնելու ուղղությամբ բրիդադի ու տեղական բջիջի ձեռք առած բոլոր միջոցները գեմեյին առնում վիթխարի դիմադրության թե կուտնանահականների մեծամասնության և թե մենատնտեսների կողմից։ Ամբողջ գյուղում լուրեր եյին պատվում, թե հացը հավաքվում ե արտասահման ուղարկելու համար, թե այս տարի ցանք չի արվելու, թե ժամ առ ժամ պատերազմ ե սպասվում . . . Ամեն որ Նադունովը ժողով եր հրավիքում, բրիդադի ողնությամբ լուսաբանում, հերքում եր անհեթեթ լուրերը, խիստ պատիժներով եր սպառնում նրանց, ովքեր կըրըոնվեն «Հակախորհրդային պրոպագանդի» մեջ, սակայն և այնպես, հացը շատ դանդաղ եր հավաքվում։ Կաղակներն սկսեցին առավոտվանից դուրս դալ տա-

նից, վարեկ տեղ դնալ, կամ անտառ՝ փայտ բերելու, կամ հարեանի մոտ և նքա հետ միասին մի ծածուկ տեղ սպասելու տաղնապալից որն անցնելուն, վորակեսզի չներկայանան գյուղխորհրդին կամ բրիգադի շտարին։ Իսկ կանայք բոլորովին դադարեցին ժողով գընալ, իսկ յերբ գյուղխորհրդից մարդէ եր դալիս իրենց մոտ, նրանից աղատվում եյին կարճ պատասխանով։ «Իմ տան տերը այստեղ չե, իսկ յես վոչինչ չգիտեմ»։

Կարծես մի ինչ վոր հղոք ձեռք պահում եր հացը։ Բրիգադի շտարում սովորաբար այսպիսի խոսակցություն եր լինում։

— Սերմաց մն տվե՞լ ես։

— Չե։

— Ինչո՞ւ։

Չունեմ։

— Ինչպե՞ս թե չունես։

— Դե, ինչպես, շատ պարզ... մտածում եյի պահել ցանքի համար, բայց հետո տվեցի հացամթերմանը, ինձ ել ուտելու բան չմնաց։ Յեվ ահա՝ սերմացուն կերա, պրծալ։

— Ի՞նչ, ուրեմն դու ցանք անելու միտք չունեյի՞ր։

— Միտք ունեյի, բայց ինչո՞վ...

Շատերն եյին պատճառաբանում, թե սերմացուն ել են տվել հացամթերմանը։ Դավիդովից վարչությունում, Վանյուշկա Նայդենովից շտարում քըքրում եյին ցուցակները, մթերման կայանի ստացագրերը,

սառագում և պարզում եյին, վոր այդ համառողները
ճիշտ տեղեկություն չեն տալիս. պարզվում եր, վոր
նրանց մոտ սերմացու մնացել եւ: Սակայն դրանից հս-
տո ել նրանք անձնատուր չեյին լինում.

— Դե, մի քիչ ցորեն մնացել եր, խոսք չկա:
Բայց, ախր գիտե՞ք, ընկերներ, ինչ բան է տնտեսու-
թյունը: Մենք սովոր ենք հացն ուտել առանց կշեռ-
քի, ծախսել առանց չափի: Ինձ ընտանիքի չնչին ամ-
սական մի փուլի հաց եյին թողել, իսկ յես, որի-
նակ, որական յերեք-չորս փուլստով եմ ուտում: Յեզ
ստում եմ, վորովհետեւ հետը կարգին կերակուր
չկա: Այ, դրանից ել ավելի շատ և ծախսվել ու հիմի
հաց չկա, կուլեք խուզարկեցեք:

Բջջի ժողովում Նաղուլնովն ուզում եր առաջար-
կել, վոր մի քանի ունեսոր գյուղացիների խուզարկեն,
սակայն Դավիդովը, Լյուբնոն, Նայդենովը, Ռազմ-
յուտնովը գեմ յեղան դրան: Յեզ սերմֆոնդի գանձ-
ման մասին շրջկոմի տված հրահանգով ել խիստ ար-
դելվում եր խուզարկություն կատարելը:

Բրիդադի և կողանտեսության վարչության յերեք
որվա աշխատանքի արդյունքն այն յեղավ, վոր կու-
տնտեսային սեկտորում դանձվեց ընդամենը 480 փուլ՝
սերմացու, իսկ մենատնտեսներից՝ 35 փուլ: Կու-
տնտեսության ակտիվը լրավին հանձնեց իր մասը:
Կոնցրատ Մայդաննիկովը, Լյուբիչկինը, Դուրցովը,
Դեմիդ Մոլչունը, Շչուկար պապը, Արկաշկա Մենո-
կը, դարբին Շալին, Անդրեյ Ռազմյուտնովը և մյուս-
ները սերմացուն բերին հենց առաջին որը: Հետեւ-
յալ առավոտը յերկու սայլով դանդաղորեն մոտեցան

Համայնական շտեմարանին Յակով Լուկիչի տղա Սեմյոնը և ինքը՝ Յակով Լուկիչը։ Լուկիչն անմիջապես անցավ դրասենյակ, իսկ Սեմյոնն սկսեց լիք պարկերն ի՞նքնել սայլերից։ Ընդունողն ու կշռողը Դյոմիկ Աւշակովն եր։ Սեմյոնը չորս ջվալը դատարկեց, բայց յերբ հինգերորդի կապը քանդեց, Ուշակովը բազեյի նման նրա վրա հարձակվեց։

— Եղ քու հերն ես տեսակ ցորե՞ն եր ուղում ցանել, — և մի բուռ հատիկ դեմ արավ Սեմյոնի քըթին։

— Ի՞նչ ե վոր, — բոնկեց Սեմյոնը, — վոնց վոր յերեսում ե, քո Ադիկ աչքին ցորենը սիմինդ ե յերեխացել։

— Զե, սիմինդ չի յերեխացել։ Յես շլէիկ եմ, բայց քեզ պես սրիկայից ել լավ եմ տեսնում։ Դուք յերկուսդ ել քո հոր հետ շա՞-ատ լավ պտուղ եք, ո ի-ի-տե՛-ե՛նք։ Ես ի՞նչ ե։ Սա սերմացո՞ւ յե։ Դու քիթդ մի շուռ տա։ Դու մեր մաքուր ցորենի մեջ ես ի՞նչ լցրիր, դարչելի մոռւթ։

Սյոմկան իր բուռը մոտեցրեց Սեմյոնի դեմքին, իսկ նրա բունում կեղտուտ, հողի ու վիկի հետ խառը ցորեն եր։

— Յես հենց հիմա մարդիկ կկանչեմ։

— Դե դու հիմարություն մի անիր, — վախեցավ Սեմյոնը, — ինչպես յերեսում ե, ես սպարկը սխալմամբ ենք վերցրել։ Իսկույն հետ կտանեմ, կիփոխեմ... Զարմանալի բան ե, աստված ե վկա։ Դե, դու ել ի՞նչ ես տաքանում համառ ձիու պես։ Ասացի՝ կիփոխեմ, սխալմամբ ե յեղել...

Բերած տասնչորս պարկի վեցը Դյոմիկան անսլետք
դուրս բերեց։ Յեկ յերբ Սյոմիկան նրան խնդրեց ող-
նել իրեն՝ շալակելու հետ տանելիք պարկերից մեկը։
Դյոմիկան շուտ յեկավ դեպի կըեռքը, վորպես թե չի
լսում նրան։

— Զես ե՞լ ողնում, ուրեմն, — դողացող ձայ-
նով հարցրեց Սեմյոնը։

— Խեղճ տղա։ Եղ ինչպես ե, տանը բարձրաց-
նում եյիր՝ թեթև եր, իսկ հիմտ հանկարծ ծանրա-
ցա՞վ։ Ինքու բարձրացրու, քո հախն ե։

Լարումից կարմրատակած՝ Սեմյոնը պարկն ա-
ռավ թեփ տակ ու տարավ……

Հետեյալ յերկու որը համարյա վոչինչ չստաց-
վեց։ Բջջի ժողովում վարոշվեց տները շրջել։ Նախորդ-
որը Դավիթովը գնացել եր հարեան շրջանը՝ սելեկցիոն
կայան։ Նա վերադարձավ մարտի 4-ին, իսկ նրա վե-
րադարձից մի որ առաջ հետեյալ դեսպը պատահեց։
Մակար Նազուլնովը, վոր կցված եր յերկրորդ բրի-
գագին, առավոտվանից Լյուբիշկինի հետ մոտ յերե-
սուն տուն շրջեց, իսկ յերեկոյան, յերբ Ռազմատնովն
ու քարտողարը գյուղխորհրդից գնացին, սկսեց կան-
չել այն գյուղացիներին, վորոնց տները ցերեկով գը-
նալ չեր կարողացել։ Չորս հոգու բաց թողեց առանց
դրական արդյունքի հասնելու։ «Սերմացու չունեմ։
Թող պետությունը տա»։ Սկզբում Նազուլնովը հան-
դարտ եր համոզում, հետո սկսեց բոռնցքով սեղանը
ծեծել։

— Եղ ինչպես թե ասում եք սերմացու չունենք։

Այ, հենց ոքինակ դու, Կոնստանտին Գալրիլովիչ,
ախք աշնանը յերեք հարյուր փութ կալսեցիր:
— Իսկ պետությանը դու հաց տվիր իմ տեղը:
— Ինչքա՞ն տվիր:
— Նու, հարյուր յերեսուն:
— Մնացածն ուր ե:
— Զե՞ս իմանում ուր ե. կերանք:
— Փչում ես: Կճաքեյիր դու, յեթե եղքան հաց
լափեյիր: Ընտանիքը վեց հոգի յե ու եղքան հա՞ց
ուտես: Բե՞ր առանց խոսքի, թե չե իսկույն դուրս
կշպրանեմ կոլտնտեսությունից:
— Դուրս արեք կոլտնտեսությունից, ինչ կուղեք՝
արեք, միայն թե՝ հաց, քրիստոսը վկա, չկա՛: Թող
իշխանությունը դոնե տոկոսվ տա...
— Դու սովորել ես խորհրդային իշխանությու-
նից ծծել: Իսկ են փողը վոր վարկ ես վերցրել ցանող
ու խոտ հնձող մեքենաներ առնելու համար, վերա-
գարձրե՞լ ես վարկային ընկերությանը: Այ, տեսնո՞ւմ
ես: Եղ փողերը տակով արիր, հիմա ել ուզում ես
սերմացո՞ւն տակով անել:
— Հիմա մի հաշիվ ե, խոտ հնձիչն ել, ցանիչն ել
Հիմա կոլտնտեսությանն են, ինձ չհաջողվեց ոգտա-
դորձել, ի զուր ես յերեսովս տալիս:
— Դու սերմացուն բեր, թե չե վատ կլինի: Ի
զուր մի համառի: Մեղք ես:
— Ախար յես մեծ սիրով կրերեյի, թե վոր ունե-
նայի...
ինչքան ել չարչարվեց Նազուլնովը, ինչքան ել
փորձեց համոզել, ինչով ել սպառնաց, այնուամենայ-

նիվ, ստիպված յեղավլ բաց թողնել սերմացու չհանձնողներին : Նքանք դուրս յեկան, մի յերկու բոսկ նախասենյակում զրուցեցին, ապա սանդուխքները ճըռճըռացին : Մի քիչ անց՝ ներս մտավ մենատնտես Գրիգորի Բաննիկը : Նա հավանորեն արդեն դիտեր, թե ինչով և վերջացել քիչ առաջ կոլտնտեսականների հետ յեղած խոսակցությունը և նրա շրթունքների անկյուններում խաղում եր ինքնարվատահ ու վրդավեցուցիչ ժպիտը : Նագուլովը դողդոջուն ձեռքերով ցուցակը փոեց սեղանին ու խուլ ձայնով ասաց .

— Նստիր, Գրիգորի Մատվեյիչ :

— Շնորհակալ եմ : — Բաննիկը նստեց վոտքերը լայն չուկով :

— Եղ ինչպե՞ս ե, Գրիգորի Մատվեյիչ, վոր սերմացուն չես բերում :

— Իսկ յե՞ս ինչու բերեմ :

— Ախր ընդհանուր ժողովի վորոշումն այդպես եր — սերմացուն պիտի հանձնեն և' կոլտնտեսականները, և' մենատնտեսները : Դու հո ունե՞ս :

— Բա վո՞նց . ի հարկե, ունեմ :

Նագուլովը ցուցակում նայեց, Բաննիկի ազգանվան դիմաց՝ «նախատեսվող գարնանացանի տարածությունը» այունյակում գրված եր 6 թվանշանը :

— Դու այս տարի վեց հեկտար ցորեն ցանելու մի՞տք ունեյիր :

— Ճիշտ եղանակ :

— Նշանակում եք քառասուն յերկու փութ սերմացո՞ւ ունես :

— Ամբողջը լրիվ ունեմ, մաղած ու մաքրած ցուրեն, վոնց վոր վոսկի:

— Դե, ուրեմն դու հերոս ես, — թեթելացած շունչ աւնելով գովեց նազուլնովը: — Վաղը փոխադրիր համայնական շտեմարանը: Կարող ես քո պարկերում թողնել: Մենք մենատնտեսներից նույնիսկ իրենց պարկերով ենք ընդունում, յեթե չի ցանկանում իր սերմացուն խառնել:

— Դե՛, դու, ընկեր նազուլնով, ձեռք քաշի, — Քաննիկը հանդգնորեն ժպտաց ու շոյեց իր սպիտակավուն բեխերը: — Քո եղ նոմերը չի անցնի: Յես ձեզ սերմացու չեմ տա:

— Եղ ինչո՞ւ վոր, թույլ տուր հարցնել:

— Նրա համար, վոր ինձ մոտ ավելի լավ՝ կմնայիսկ ձեղ վոր տամ, զարնանը դատարկ պարկերն ել հետ չեմ ստանա: Հիմա մենք ել ենք գիտնական դարձել, թաց տեղ չենք պառկի:

Նազուլնովը կիտեց իր խիտ հոնքերը և փոքր ինչ շառադունեց.

— Դու ինչպես ես կարողանում խորհրդային իշխանությանը կասկածել: Զե՞ս հավատում ուրեմն:

— Հենց հա՛, չեմ հավատում: Մենք շատ ենք լսել ձեր փչոցները:

— Եղ ո՞վ ե փչել և ի՞նչ: — Նազուլնովն զգալիուրեն գունատովեց և դանդաղորեն վեր բարձրացավ: յակ:

— Ի՞նքդ ես փչում, դարշելի՛, — Մակարը բըռունցքը զարկեց սեղանին:

Հաշվիչն ընկառի հատակին, թանաքամանը շուր

յեկավ։ Մանուշակագույն շիթը թղթի վրայով սահելով թափվեց Բաննիկի դաբաղած կիսամուշտակի փեշն։ Նա թանաքը թափ տվեց ու վեր կացավ։ Նրա աչքերը կծկվեցին, շրթունքների անկյուններում սպիտակ փրփուր գոյացավ։ Զապված կատաղությամբ նա խոխոաց։

— Դու ինձ վրա մի՛ գոռա։ Դու քո կնկա՝ Լուշկայի վրա բոռնցք թափ տուր, իսկ յես քո կինը չեմ։ Հիմի քան թիվը չե։ Հասկացա՞ր։ Իսկ սերմացուն չեմ տա…

Նազուլնովը քիչ մնաց սեղանի վրայով հարձակվեց նրա վրա, բայց իսկույն որորվելով ուղղվեց։

— Դու եղ…ո՞ւմ խոսքերը… Դու եղ… հակա՛, ինչե՞ր ես խոսում։ Սոցիալի՞զմն ես ծաղրում, գարշելի՛։ Յես իսկույն…— Նա բառեր չեր գտնում, չնչակառուր եր լինում, բայց մի կերպ իրեն տիրապետելով, թաթի հետեւու ճակատի կպչուն քրտինքը որբելով ասաց — իսկույն ստորագրություն տուր, վոր վաղը կրերես սերմացուն և հենց վաղը յես քեզ կուղարկեմ ուր վոր պետք ե։ Ենտեղ կիմանաս, թե դու վորտեղ ես եղախսի ճառեր սերտել։

— Դու ինձ ձերբակալել կարող ես, իսկ ստորագրություն չեմ տա և սերմացուն ել չեմ բերի։

— Գրի՛ր, ասում եմ։

— Կամա՞ց։

— Յես քեղ խաթրով եմ խնդրում։

Բաննիկը դիմեց դեպի գուռը, սակայն, ըստ յերեվույթին, այնքան եր կատաղել, վոր ել չհամբերեց, ոնելով դուն բոնակը՝ գոչեց։

— Իսկուսյն կղնամ ու եղ հացն ել խողերի առաջը
Ալլունեմ : Ավելի լավ է նրանք խժուեն, քան թե ձեզ
պես ձրիակերներին տամ :

— Խողերի՞ն, սերմացո՞ւն :

Նադուլնովը յերկու վոստյունով դռանը հասավ,
գրավանից դուրս քաշեց նաղանը և կոթով խփեց Բան-
նիկի քունքին : Նա յերերաց, թեքվեց դեսլի պատը և
մեջքով կավիճը սրբելով՝ դլորվեց հատակին :

Նադուլնովն ուղղակի ջրամանից խմեց անդուրե-
կան, տաքացած ջուրը՝ ատամները չխկացնելով ամա-
նի պուտնկին : Եեթ-խեթ նայելով բարձրացող Բան-
նիկին, մոտեցավ նրան, ունելիքի պես ամուր բռնեց
դաստակը, հրեց սեղանի մոտ և մատիտը բուռը կո-
խեց .

— Գրի՞ր :

— Յես կղքեմ, բայց այս կհայտնվի դատախւ-
զին... Նադանի զոռով ինչ ուզես՝ դրել կտաս...
Խորհրդային իշխանության որով ծեծելն արգելված
է... Նա— կուսակցությունն ել սրա համար ճակատող
չի պաչի...— խռպոտ ձայնով մոմուց Բաննիկը՝ ու-
ժասպառ նստելով նստարանին :

Նադուլնովը կանգնեց նրա դիմաց ու նադանի վո-
տը բռնեց .

— Ուսո՞ւ, հակա՛, խորհրդային իշխանություն ու
կուսակցությո՞ւն հիշեցիր : Քեզ վոչ թե ժողովատա-
րանը պիտի դատի, այլ յես, իմ դատաստանով : Թե
վոր չգրես կղնդակահարեմ վորպես զզվելի արարա-
ծի, իսկ հետո թող գնամ ու մի տասը տարի բանտ
նստեմ : Յես չեմ թողնի խորհրդային իշխանությանը

Հայհոյես : Գրի՞ր . «ստրագրություն» : Գրեցի՞ր : Գրի՞ր . «Յես , նախկին ակտիվ սպիտակ դվարդեական-մամանտովականս , վոր զենքը ձեռքիս կարմիր բանակի դեմ եյի դուրս յեկել — հետ եմ վերցնում իմ խոսքերը ...» Գրեցի՞ր : «Իմ խոսքերը , վորոնք ծանր վերավորանք եյին Համկոմկուսին» Համկոմկուսը դվաստառերով : Յեղա՞վ : «Յեվ խորհրդային իշխանությանը , ներողություն եմ խնդրում նրանցից և պարտավորվում եմ այսուհետեւ , թեև յես թաղնված հակա յեմ ...»

— Զեմ գրի : Ի՞նչ ես զոռում ինձ :

— Զե՞ , կդրես : Բա ի՞նչ եյիր կարծում . վոր յես՝ սպիտակների կողմից վիրավորվածու , խոշտանգվածու կներե՞մ քո խոսքերը : Դու իմ աչքի առաջ հաջես խորհրդային իշխանության վրա , իսկ յես լոե՞մ : Գրիր , թե չե հոգիդ կհանեմ ...

Բաննիկը թեքվեց սեղանի վրա և նրա ձեռքի մատիտը նորից սկսեց դանդաղորեն սահել թղթի վրայով : Նագուլնովն առանց մատը նապանի չնիկից հեռացնելու , հատ-հատ թելագրում եր .

«Թեև յես թաղնված հակա յեմ , սակայն խորհրդային իշխանությունը , վորը թանդ է բոլոր աշխատավորների համար և ձեռք և բերվել աշխատավոր ժողովրդի թափած արյունով , յես չեմ մնասելու վոչ բանավոր , վոչ գրավոր , վոչ իմ գործերով : Զպետք ե հայհոյեմ ու վիրավորեմ նրան , այլ համբերությամբ պիտի սպասեմ համաշխարհային հեղափոխության , վորը մեղ բոլորիս — համաշխարհային մասշտաբով նրա թշնամիներին կհասցնի սառեցման կետին : Պար-

տավորվում եմ նաև արդելք չլինել խորհրդային իշխանության ճանապարհին, չտապալել ցանքը և վաղը, 1930 թվի մարտի 3-ին համայնական շտեմարանը տանել...»

Այդ ժամանակ սենյակ մտան գյուղխորհրդի հերթապահը և յերեք կողմնտեսական :

— Մի քիչ սպասեցեք նախասենյակում, — գոչեց Նազուլնովը և դառնալով դեպի Բաննիկը, շարունակեց. «... Քառասուն յերկու փութ՝ սերմացու ցորեն : Վորին և ստորագրում եմ» : Ստորագրի՛ք :

Բաննիկը, վորի դեմքն արդեն շառագունել եք, խաղմղեց ու վեր կացավ :

— Դու սրա համար պատասխան կտաս, Մակար Նազուլնով :

— Մեզնից յուրաքանչյուրն իր համար պատասխան կտա, բայց յեթե վաղը սերմացուն չբերես՝ կսպանեմ :

Նազուլնովն ստորագրության թերթը ծալեց և դրեց կանաչավուն վերնաշապկի ծոցագրապանը, նագանը նետեց սեղանին և Բաննիկին հետեւց մինչեւ դուռը : Մինչեւ կես դիշեր նա մնաց գյուղխորհրդում : Հերթապահին հրամայեց չհեռանալ և նրա ողնությամբ դատարկ սենյակում փակեց ելի յերեք կոլտնտեսականի, վորոնք հրաժարվում եյին սերմացուն բերել : Արդեն կես դիշերին հոգնածությունից ու ցընցումնալից ասլրումներից հոգնած՝ քնեց, գյուղխորհրդի սեղանի մոտ նստած, գղղված մաղերով գլուխը յերկար թաթերի վրա դրած : Մինչեւ արշալույս Մակարը յերաղում տեսնում եր տոնական հագուստ-

ներով մի ահագին բազմություն, վոր վարար ջրի
նման անընդհատ շարժվում եր տափաստանում։
Մարդկանց արանքներով արշավում եր հեծելազորը։
Խայտաբղետ ձիերն իրենց սմբակներով տրորում եյին
տափաստանի փափուկ հողը, սակայն չգիտես ինչու,
նրանց սմբակների զնդացող դղբղոցը ծանր եր, կար-
ծես, ամբողջ եսկաղըրոններ եյին անցնում փռված թի-
թեղի վրայով։ Նվագախմբի արծաթակույն փողերը
հանկարծ հնչեցին «Ինտերնացիոնալ», Մակարին շատ
մատ և նա, ինչպես միշտ իրականության մեջ, դդաց
սրտագրդիո մի հուզում, կոկորդի կծկում . . .

Ամբողջ գեշերը գարնանային քամուց խաղացող
լուսամուտի փեղկերի ճոփնչը Մակարին յերազում յե-
րաժշտություն եյին թվում, իսկ տանիքի թիթեղի
դղբղոցը՝ ձիերի սմբակների հատու դոփյուն . . . Առա-
վոտյան ժամը վեցին Ռազմյուտնովը դյուզիսորհուրդ
դալով՝ Նազուլնովին դեռևս քնած գտավ։ Մակարի
դեղին այտի վրա, վոր լուսավորված եր դարնանային
առավոտիա մանուշակագույն լույսով, դրոշմվել եր
լարված ու սպասողական ժպիտը և լարվածությամբ
շարժվում եր նրա թավ հոնքը . . . Ռազմյուտնովը հրեց
Մակարին ու հայհոյեց.

— Գործերը խառնել ես ու քնել։ Քաղցը յերազ-
ներ ես տեսնում ու ժպտում։ Ինչու յես ծեծել Բան-
նիկին։ Նա հենց լուսադեմին սերմացուն բերեց, հանձ-
նեց և իսկույն շտապեց շրջան։ Լյուբիշկինը վաղեց
ինձ մոտ, զնաց, ասում ե Բաննիկը քո մասին միլի-
ցիային հայտնելու։ Հիմա կդա Դավիթովը, ի՞նչ կա-
մի քեզ, Ե՛հ, Մակար . . .

Նաւուլնովը թաթերով տրորեց անհարմար քնից
ուռած յերեսը և մտախոհ ժպտաց .

— Անդրյուշա՛, ի՞նչ յերադ ելի տեսնում յես :
Շա՞տ սքանչելի յերաղ :

— Դու քո յերազների մասին մի խոսի : Դու ինձ
մաննիկի մասին պատմիր :

— Յես եղալիսի թունավոր ոճի մասին չեմ ել խո-
սի : Ասում ես նա սերմացուն բերե՞լ ե : Դէ, նշանա-
կում և ազդել ե վրան : Քառասուն յերկու փութ սեր-
մացու — Հանագ բան չի : Յեթե ամեն մի հակայից
երելի լինեք նադանի մի հարվածով քառասուն
յերկու փութ սերմացու ստանալ, յես իմ ամբողջ
կյանքում հենց դրանով ել կզբաղվեյի — շարունակ
կշրջեյի ու կհարվածեյի : Նրան, իր խոսքի համար
եղանն ել քիչ եր : Թող ուրախ լինի, վոր յես նրա
վոտքերը իր հետույքով չհանեցի : — Յեկ կատաղորեն
աչքերը փայլեցնելով՝ վերջացրեց . — Սխը նա, այդ
դարշելին դեներալ Մամոնտովի հետ եր քարշ դալիս :
Նա այնքան կովեց մեր դեմ, մինչև վոր Սև ծովում
չլողացրին, և դեռ հիմա ել փորձում և ճանապարհը
կորել, վնաս հասցնել համաշխարհային հեղափոխու-
թյանը : Գիտե՞ս թե նա այստեղ ինչ խոսքեր ասաց
լորդադային իշխանության ու կուսակցութայն մա-
սին : Վիրավորանքից մաղերս բիղ բիղ եյին կանգ-
նում :

— Շատ բան կարող ե պատահել : Իսկ դու չպետք
ե ծեծեյիր, ավելի լավ կլիներ, յեթե ձերբակալելիք
նոան :

— ԶԵ, ՎՈՅ ԹԵ ՃԵՐԲԱԿԱԼԵԼ, այլ սպանել եր պետք
նրան: — Նագուշնովը կոտրված տարածեց ճեռքերը: —
Յեվ ինչո՞ւ չթրխեցրի յես նրան: Ուղղակի չեմ
հասկանում: Այ թե հիմի ինչն եմ ափսոսում:

— Հիմաք անվանեմ քեզ՝ կնեղանաս, բայց հե-
տարությանդ չափ ու սահման չկա: Այ, կդա Դավի-
թովը, նա խրատ կտա եղաղիսի բաների համար:

ԳԼՈՒԽ

XXI

Սելեկցիոն կայանից Դավիթովը վերադարձավ
 տաներկու փութ տեսակավոր սերմացույով, ուրախ,
 հաջողությունից գոհ։ Տանտիրուհին նրա համար ճաշի
 պատրաստություն տեսնելով պատմեց, թե ինչպես
 նրա բացակայության ժամանակ Նազուլովը ծեծել է
 Գրիգորի Բաննիկին և մի դիշեր յերեք կոլտնտեսականի
 պահել է գյուղիսորհրդում։ Ըստ յերեսույթին այդ լուրն
 արդեն լայնորեն տարածվել եր Գրեմյաչի լոգում։
 Դավիթովին շտապ ճաշեց և վրդովված գնաց վարչու-
 թյուն։ Այնտեղ հաստատեցին տանտիրուհու պատմա-
 ծը՝ լրացուցիչ մանրամասնություններով։ Նազուլ-
 նովի վարմունքը յուրաքանչյուրը տարբեր կերպ եր
 դնահատում։ Վոմանք խրախուսում եյին, վոմանք
 պարսավում, վոմանք ել զսպված լուսթյուն եյին
 պահպանում։ Որինակ Լյուբիշկինը կտրականապես
 Նազուլովի կողմը կանգնեց, իսկ Յակով Լուկիչը
 շրթունքները սեղմեց և արտաքուստ այնքան նեղա-
 ցած եր, վոր կարծես հենց ինքն եր ճաշակել Նազու-
 լովի հարվածը։ Շուտով ինքը՝ Մակարն ել յեկավ
 վարչություն։ Արտաքուստ նա սովորականից ավելի
 դաժան տեսք ուներ։ Նա Դավիթովին վողջունեց

զսպված և նայեց նրան թագնված՝ տագնագով ու ըստ պասողականությամբ։ Յերբ յերկուսով մնացին, Դավիդովին իրեն զսպել չկարողանալով՝ խստությամբ հարցրեց.

— Այդ ի՞նչ նորություններ եր սկսել:

— Լսել ես. Ել ի՞նչ ես հարցնում:

— Այդպիսի մեթոդներով ես սկսում աղիտացիուննել սերմացուն հավաքելու համար։

— Իսկ նա թող այդպիսի ստորություններ չանի։ Յես ու պարտավոր չեմ համբերել թշնամու, սպիտակ գարշելու ծաղրը։

— Իսկ դու մտածեցի՞ր թե քո վարմունքն ինչպես կազդի մյուսների վրա, թե քաղաքական ահսակետից ինչպես կբացատրվի այդ։

— Են բոպեյին մտածելու ժամանակը չեր։

— Այդ պատասխան չե, փաստ ե։ Դու նրան պետք ե ձերբակալեյիր իշխանությանը վիրավորելու համար և վոչ թե ծեծեյիր։ Դա կոմունիստին վարկարեկող վարմունք ե։ Փաստ ե։ Յեվ մենք հենց այսոր քո հարցը կդնենք բջիջում։ Դու մեղ, այ թե ինչպիսի վնաս հասցրիր քո վարմունքով։ Մենք պետք ե քննենք այդ։ Յեվ դրա մասին յես պետք ե խոսեմ կոլտնտեսության յողովում, առանց շրջկոմի վորոշմանն սպասելու, փաստորեն եմ խոսում յես։ Վորովհետեւ, յեթե մենք լուենք, կոլտնտեսականները կկարծեն, թե մենք քարածին համաձայն ենք և այդ գործում նույնպիսի դիրք ենք բռնում։ Վո՞չ, ախպերս, այդ հարցում մենք քեզանից բաժաննվում ենք և կդատապարտենք։ Դու կոմունիստ ես, բայց ժանդարմի պես ես վարվել։

Դա խայտառակություն է : Գրողը տանի քեզ քո պատահարներով :

Սակայն Նագուլնովը յեղան պես համառեց : Դա վիշտովի բոլոր պատճառաբանություններին, վորոնցով ուղում եր նրան համոզել, վոր նրա վարմունքն անթույլատրելի յէ կոմունիստի համար և քաղաքականապես վնասակար,— Նագուլնովը պատասխանում եր .

— Տեղին եմ ծեծել յես նրան : Են ել վոչ թե ծեծել եմ, այլ մի անդամ թխկացրել, այնինչ ավելին եր հարկավոր : Զեռք քաշիր : Ինձ վերադաստիարակելն ուշ է : Յես պարտիզան եմ և ինքս դիտեմ, թե ինչ-պես պիտի իմ կուսակցությանը պաշտպանեմ առնեն տեսակ սրբիաների հարձակումներից :

— Դե յես հո չեմ ասում, թե այդ Բաննիկը մեր մոլորն է . դրողը նրան տանի : Իմ ասելն այն է, վոր դու չպետք է ծեծեյիր նրան : Իսկ կուսակցությանը վիրավորանքից պաշտպանել կարելի յեր ուրիշ ձևով, փաստ է : Դու գնա, Հանդարտվիր մի քիչ և մտածիր, իսկ յերեկոյան կղաս բջիջ և կասես, վոր յես ճիշտ եմ ասում, փաստ է :

Յերեկոյան, բջիջ ժողովն սկսելուց առաջ, Հենց վոր Մակարը հոնքերը կխոսած ներս մտավ, Դավիդովն առաջին հերթին հարցրեց .

— Մտածեցի՞ր :

— Մտածեցի :

— Նո՞ւ :

— Քիչ եմ դնքսել յես այդ շան վորդուն : Նրան սպանել եր հարկավոր :

Ադիտ կալոնի բրիդադն ամբողջովին Դավիդովի

կողմն անցավ և քվեարկեց Նագուլնովին խիստ հանդիմանություն անելու ողբերին։ Անդրեյ Ռազմյոտնովը քվեարկելիս ձեռնալահ մնաց, շարունակ լուռ եր, սակայն, յերբ դուքս գնալուց առաջ ել Մակարը մոընչաց. «Հաստատ եմ մնում իմ կարծիքին», Ռազմյոտնովը վեր ցատկեց և վրդովված թքելով ու հայհոյելով դուքս վազեց սենյակից։

Մութ նախասենյակում ծխախոտը վառելով և լուցկու լույսով Նագուլնովի դունատված դեմքին նայելով՝ Դավիդովը հաշտվողաբար ասաց.

— Դու, Մակար, իզուր ես նեղանում մեղանից, փաստ ե։

— Յես չեմ նեղանում։

— Դու հին, պարտիզանական մեթոդներով ես աշխատում, բայց այժմ նոր ժամանակ ե և վոչ թե հանկարծակի հարճակումներ, այլ դիրքային մարտեր են տեղի ունենում։ Մենք բոլորս պարտիզանականությամբ ենք տարված յեղել, մանավանդ մերոնք՝ նավատորմայինները, դե, ի հարկե և յես։ Դու թեև չղային հիվանդություն ունես, բայց, սիրելի Մակար, հարկավոր ե քեզ մի քիչ... ենակես... սանձել։ Այ, դու մի նայիր փոխարինողներին. մի տես, թե ինչ հրաշքներ ե գործում կոմյերիտական Վանյուշկա Նայդենովը՝ աղիտ կալոնից։ Նրա թաղում ամենից շատ սերմացու յե հավաքվել. համարյա բոլորը բերել են։ Դու հենց հետաքրքրության համար վաղը նրա հետ տները շրջիր ե տես, թե ինչ միջոցներով ե նա իր նպատակին հասնում, — շարունակեց Դավիդովը, շա, աստված վկա, ամենեվին վիրավորական րան չի

քեզ համար։ Մենք, ախպերս, յերբեմն յերիտասարդ-ներից ել սովորելու բան ենք ունենում, փաստ եւ Նրանք, ինչ վոր, մեզ նման չեն աճում, ինչ վոր՝ ավելի լավ են հարմարված...

Նազուլնովը չպատասխանեց, բայց առավոտյան, հենց վոր վեր կացավ, գտավ Վանյուշկա Նայդենովին և, վորովես թե ի միջի այլոց, ասաց.

— Եսոր յես աղատ եմ, ուզում եմ քեզ հետ դալ և ողնել քեզ։ Քո յերրորդ բրիդադում ելի՛ ինչքա՞ն սերմացու յե մնացել բերելու։

— Զնչին բան ե մնացել, ընկեր Նազուլնով։ Գը-նանք, յերկուսով ավելի ուրախ կլինի։

Գնացին։ Նայդենովը քայլում եր Մակարի համար անսովոր արագությամբ, որորվելով, բաղի նման ճոճվելով։ Նրա կաշվե բաճկոնի կոճակներն արձակված եյին, վանդակավոր կտորից կարլած կեպին քաշած մինչև հոնքերը։ Նազուլնովն աչքի տակով մի հայացք դցեց այդ կոմյերիտականի վորես բանով աչքի չընկնող դեմքին, վոր ծածկված եր ինչ վոր մանկական պեպեններով։ Դեռ յերեկ Դավիդովը նրան իրեն վոչ հատուկ քնքշանքով «Վանյուշկա» անվանեց։ Նրա դեմքին կար մի ինչ վոր խիստ մոտիկ, մի դրամիչ բան։ Նրա լայն բացված փայլուն աչքերն եյին արդյո՞ք, թե համարձակորեն առաջ ցցված կզակը, վոր դեռ չեր կորցրել իր պատանեկական կլորությունը...

Նրանք նախկին «հավարած» Բեսխլերնով Ակիմ պապի տուն յեկան այն ժամանակ, յերբ նրանց ամբողջ ընտանիքը նախաճաշում եր։ Ինքը՝ ծերունին

Աեղան եր նստել առաջին անկյունում, նրա կողքին՝
մոտ քառասուն տարեկան տղան եր, վոր նույնպես
Ակիմ եր կոչվում, Կրտսեր մականունով:

— Բարե ձեզ, տանտերե՛ր, — Նայդենովը հանեց
իր յուղու կեղին և շոյեց իր վեր ցցված մազի փըն-
ջերը:

— Բարե, թե վոր կատակ չեք անում, — հազիվ
նկատելի ժպիտով պատասխանեց պարզ ու հասարակ
բնավորության տեր Ակիմ Կրտսերը:

Այս կատակով ասված վողջույնին վորպես պա-
տասխան՝ Նագուլնովը զայրույթով լցված հոնքերը
կկիտեր ու կասեր. «Մենք կատակներ անելու ժամա-
նակ չունենք: Ինչու մինչև հիմա սերմացուն չես
հանձնել», սակայն Նայդենովը, իբր թե չնկատելով
տանտերերի սառն զսպվածությունը՝ ժպտալով ա-
սաց.

— Բարի ախորժակ:

Ակիմը դեռ չեր հասցըել բերանը բանալ, վոր-
պեսղի առանց սեղանի մոտ հրավիրելու մի ժլատ
«Հուրհակալ եմ» ասի, կամ դլուխն աղատի «ուսում
ենք մեր աշխատածը, իսկ դու կանգնիր ու դիտիր»
կոպիտ կատակով, յերբ Նայդենովն արագությամբ
շարունակեց.

— Դե լավ, միք անհանդստանա, հարկավար չե՞:
Ասենք, կարելի յե և մի քիչ նախաճաշել... Յես,
պետք ե խոստովանեմ, այսոր դեռ վոչինչ չեմ կերել:
Ընկեր Նագուլնովը տեղացի յե, նա, ի հարկե, ար-
դեն դոտին պնդացըել ե, իսկ մենք որ ու մեջ ել հա-
զիվ ենք ուսում, ինչպես յերկնքի թռչուններ:

— Վոչ ցանում եք վոչ հնձում, բայց կուշտ եք
լինում ուրեմն,— ծիծաղելով ասաց Ակիմը:

— Կուշտը՝ կուշտ չենք լինում, բայց միշտ ու-
րախ ենք լինում,— և այդ խոսքերով, ի զարմանս
Նագուլնովի, Նայդենովին անմիջապես ուսերից դենը
նետեց կաշվե բաճկոնն ու նստեց սեղանի մոտ:

Նրան կերակուր մատուցեցին: Լսվում եր միայն,
թե ինչպես են չփչփում բերանները և ամանի հատա-
կին քսվում փայտե դղալները: Լոռությունը միայն
այն ժամանակ եր խախտվում, յերբ յերեխաններից
վորեկ մեկի դղայն սկսում եր ամանի մեջ պտույտներ
դործել, յեփած տանձեր վորոնել: Այդպիսի դեպքե-
քում Ակիմ պապն իր դդալը լիզում եր և նրանով ա-
մուր շրիկացնում մեղանչած յերեխայի ճակատին ու
խրատում.

— Վորս մի՛ անի:

— Ենպես լոեցեք, վոնց վոր յեկեղեցում,— խո-
սեց տանտիրուհին:

— Յեկեղեցումն ել միշտ լուռ չեն լինում,— ա-
սաց վանյուշան, ախորժակով ուտելով կերակուրը:—
Այ, դատկից առաջ մեղ մոտ այնպիսի մի բան պատա-
հեց, վոր մարդ ծիծաղից կճաքեր:

Տանտիրուհին դադարեց սեղանը սրբել: Ակիմ
Կրտսերը ծխախոտ փաթաթեց ու թախտին նստեց,
պատրաստվելով լսել, և նույնիսկ Ակիմը զկրտալով
ու յերեսը խաչակնքելով սկսեց ականջ դնել Նայդեն-
նովին: Նագուլնովը, վար անհամբերության բացա-
հայտ նշաններ եր ցույց տալիս, մտածեց. «Սա յե՞րբ
պիտի սերմացույի մասին սկսի: Ինչպես յերեսում ե,

այստեղ մեր գործը փթռուկ է : Յերկու Ակիմներին ել հեշտությամբ կոտրել չի լինի . ամենահամառ սատանաներն են ամբողջ Գրեմյաչում : Իսկ վախեցնելով ել ինչպես կարող ես վերցնել , քանի վոր Ակիմ Կըրտսերը ծառայել է կարմիր բանակում և ընդհանրապես վերցրած՝ մեր մարդն ե այդ կազակը : Իսկ սերմացուն չի հանձնի և սեփականությանը սկինդ կպած լինելու և ժլատության պատճառով : Նրանից ձմեռվա կեսին ձյուն ել չես կարող ստանալ , լավ դիտեմ յես» : Մինչդեռ , Վանյուշա Նայդենովը մի փոքր լուելուց հետո շարունակեց .

— Ես ծնունդով Տացինսկի շրջանիցն եմ և ահա , մի անգամ զատկի որերին յեկեղեցում այսպիսի մի գեղք պատահեց : Յեկեղեցական արարարողություն եր տեղի ունենում : Հավատացյալ մարդիկ հավաքվել եյին յեկեղեցում , նեղածքությունից խեղղվում եյին : Տերտերն ու տիրացուն , ի հարկե , յերդում ու կարդում եյին , իսկ ցանկապատի մոտ ջահելները խաղ եյին անում : Մեր գյուղում մի հորթ կար , մի տարեկան մողի , ենակես հարու տվող եր , վոր հենց մի քիչ ձեռք տայիր թե չե՝ ճարապկորեն կհարձակվեր , վոր մի լավ պողահարի : Այդ հորթը հանդիստ արածում եր ցանկապատի մոտ , բայց յերեխաները նրան այնքան գրգռեցին , վոր նա մեկի հետեւից ընկալ և քիչ մընաց , պիտի հասներ : Յերեխան թուավ ցանկապատի ներսը , հորթը նրա հետեւից ; տղան ընկալ յեկեղեցու զավիթը , հորթը՝ հետեւից : Գավիթում՝ լիքը ժաղովուող . . . Հորթը վրա վաղեց ու եղ տղայի հետուաքին ենպես մեկ հասցըք . . . Տղան ամբողջ թափով ըն-

կավ մի պառակի վոտքերի տակ։ Պառակն ել մեջքի
վրա թրխկաց ու գուռում ե. «Ողնեցե՞ք, բարի՛ մար-
դիկ, ո՛, մեռա՛...» Պառակի մարդը դազանակով
սկսեց շրիկացնել տղայի թիկունքին։ «Ա՛յ, երվես
դու, սատանի ծնունդ»։ Իսկ հորթը՝ բե՛-ե՛-ե՛... Յեվ
այն ե, հա, իր պողերը ծերունում ե հասցնում։ Յեվ
այնպիսի մի խուճա՛պ սկսվեց։ Խորանին մոտ կանդ-
նածները չեն հասկանում, թե ինչ է պատահել, միայն
լսում են, վոր դավթում աղմուկ ե, դադարել են աղո-
թել, կանգնել են, հուզվել, իրար անցել, մեկը մյու-
սին հարցնում ե. «Ի՞նչ են աղմկում ենտեղ, ի՞նչ է
պատահել»։

Վանյուշան վոգեվորվելով այնքան կենդանի յեր
նկարագրում դեմքերը, այնքան ճիշտ եր արտահայ-
տում իր համագյուղացիների սարսափած շշնչոցը,
վոր Ակիմ Կրտսերը չդիմանալով՝ առաջինն սկսեց
քրքջալ։

— Այ թե բան ե արել հորթը հա՛...
Ժպտալով ու իր սպիտակ ատամները մերկաց-
նելով՝ Վանյուշան շարունակեց։

— Մեկը կատակով ասաց. «Գուցե կատաղած
շուն ե ընկել ենտեղ, փախչե՞նք»։ Նրա կողքին մի
հղի կին եր կանգնած, նա սարսափեց ու յեկեղեցովը
մեկ վո՞նց և գոռում. «Ո՞խ, մերա ջա՞ն... հիմի մեղ
կատաղած շունը կկծի...» Հետեվինները սեղմում են
առաջիններին։ Մոմակալները շուռ տվին, մոմերը
հանդան, մութը պատեց։ Մեկը գոռաց. «Այրվո՞ւմ
ենք...» Յեվ՝ սկսվեց։ «Կատաղած չո՞ւն», «այրվում
ենք», «ախր ի՞նչ ե պատահել եղտեղ», «աշխարհե

վերջն ե» : Ե՞-ի՞-ի՞նչ : «Աշխարհի վերջը, կնիկ, տուն
հասի՛ր» : Վրա ընկան կողքի դռներին և այնպես խա-
ռնվեցին, վոր վոչ մեկը դուրս գալ չեր կարող :
Մոմավաճառի սեղանը շուռ տվին, փողերը թափ-
վեցին, մոմավաճառն ընկավ, աղմկում ե . «Թա-
լանո՞ւմ են» : Կանայք վոչխարի պես դեպի խորան,
իսկ տիրացուն բուրվառով խփում ե նրանց գլուխնե-
րին . «Թո՛ւ, անիծվածներ, ո՞ւր եք դնում, ո՞ւր, պիդա
արարածներ : Զեք իմանում, վոր կանանց իրավունք
չկա խորան մտնել» : Իսկ դյուզի տանուտերը՝ հաս-
տափորի մեկը, շղթան կըծքին դրում ե դեպի դու-
ռը, հրմշտում մարդկանց ու գոռում . «Ճանապա՛րհ,
անիծվածներ : Զե՞ք իմանում, վոր յես դյուզի տերն
եմ» : Բայց ինչպես հետ քաշվեն, քանի վոր «աշխարհի
վերջն ե» :

Քրքիջն ընդհատելով, վանյուշան շարունա-
կեց .

— Մեր դյուզում մի ձիու դող կար, Արխիալ Զո-
խով անունով : Ամեն շաբաթ ձիեր եր դողանում ե
վոչ վոք չեր կարողանում նրան բռնել : Արխիալը յեկե-
ղեցում մեղքերն եր քավում : Յել ահա, յերբ գուա-
ցին «Աշխարհի վերջն ե», «Կորա՞նք, յեղբայներ» ,
այդ Արխիալը նետվեց դեպի պատուհան, ապակիները
փշրեց և ցանկացավ դուրս թռչել, բայց պատուհանը
յերկաթե վանդակով եր պատած : Ամբողջ ժողովուրդը
տրորվում ե դռների մեջ, իսկ Արխիալը վաղվզում ե
յեկեղեցում : Կանդ ե առնում, ձեռքերն իրար խփում
ու գոռում . «Ո՞ի, յեթե յես բռնվեցի, ուրեմն հիմա
բռնվեցի» :

Աղջիկները, Ակիմ Կրտսերն ու նրա կինն այնքան
ծիծաղեցին, վոր սկսեցին ծկլթալ, արցունքը հոսեց
նրանց աչքերից: Նույնիսկ Ակիմ պապը անձայն ծըն-
դոնած՝ բաց եր արել անատամ լինդերը: Միայն պա-
ռավն եր, վոր խուլ լինելու պատճառով պատմության
կեսը չլսելով և վոչինչ չհասկանալով, չգիտես ինչու
լաց յեղավ և կարմրատակած աչքեռը սրբելով մըր-
մըռաց.

— Աշել ե թե բոնվեչ խեղճը: Շուրբ աշտվաճա-
ճի՞ն... բա ի՞նչ արին նրան:

— Ո՞ւմ տատիկ:

— Դե, են ուխտավորին:

— Ախր ի՞նչ ուխտավոր, տատիկ:

— Են վոր դու աշում եյիր, բալիկչ... են ուխ-
տավորին:

— Ախր ի՞նչ ուխտավոր:

— Դե յես ինչ դիտեմ, ջանիկն... Ճանրացել են
ականջներս, ճանրացել են, աժիժու... Լավ չեմ լը-
չում...

Տատիկի ասածը քրքիջի մի նոր պոռթկում առա-
ջացրեց: Ակիմ Կրտսերը ծիծաղեց արցունքակալած
աչքերը սրբելով մի քանի անդամ հարցրեց.

— Ինչպես ասաց եղ դողը՝ «Ուրեմն հիմա բըռ-
իլցիցի»: Ե՛հ, յերիտասարդ, զարմանալի ուրախ բան
պատմեցիր դու մեղ, — մտերմորեն հիացավ նա՝ Վան-
յուշայի մեջքին խփելով: Իսկ նա հանկարծ արագորեն
լոջացավ ու հառաչեց.

— Ե՛հ, ի հարկե, ծիծաղելի պատմություն ե սա,
բայց հիմա ենպես բաներ կան, վոր ծիծաղելու հա-

վես չի մնում... Հենց եսոր վոր յես լրագիրը՝ կար-
դացի, սիրոս մղկտաց:

— Մղկտա՞ց, — հարցրեց Ակիմը, վոր մի նոր
ուրախ պատմություն եր սպասում:

— Այո՛: Նրա համար մղկտաց, վոր կապիտալիս-
տական յերկրներում այնպես դաղանաբար խոշտանդում
են մարդուն: Եսպիսի մի բան կարդացի յես. Ռումի-
նիայում յերկու կոմյերիտական՝ գյուղացիների աջքերն
եյին բաց անում, ասում եյին, վոր հարկավոր և հո-
գը կալվածատերերից խլել և բաժանել իրենց մեջ:
Բումինիայում հողագործները շատ աղքատ կյանք են
վարում...

— Վոր աղքատ են՝ դիտեմ, յես ինքս եմ տեսել,
յերբ տասնյոթ թվին մեր գնդի հետ ոռումինական ճա-
կատումն եյի, — հաստատեց Ակիմը:

— Յեվ ահա, նրանք աղիտացիա եյին մղում կա-
պիտալիզմի տապալման և Ռումինիայում Խորհրդա-
յին իշխանություն հաստատելու համար: Բայց դա-
ժան ժանրարմները բռնեցին նրանց. մեկին այնքան
ծեծեցին, վոր մահացավ, իսկ մյուսին սկսեցին տան-
չել: Հանեցին աչքերը, պոկոտեցին գլխի մազերը,
իսկ հետո մի բարակ յերկաթե թիթեղ շիկացըին ու
սկսեցին խրել յեղունդների տակ:

— Անիծ-ված-նե՛ր, — հառաչեց Ակիմի կինը՝
ձեռքերն իրար խփելով: — Յեղունդների տա՛կ...

— Յեղունդների տակ... Հարցնում են: «Ասա, թե
ելի ով կա ձեր բջիջում և հրաժարվիր կոմյերիտմիու-
թյունից»: «Չե՛մ ասի, դաղաններ, և չեմ հրաժարվի»,
անվեհեր պատասխանում և կոմյերիտականը: Այ-

Ժամանակ ժանդարմները սկսեցին թրերով կտրտեր նրա ալանջները, քիթը: «Կասե՞մ»:—«Վո՞չ, —ասում ե, — կմեռնեմ ձեր արնաշաղախ ձեռքով, չե՞մ ասի: Կեցցե՛ կոմունիզմը»: Այն ժամանակ նրանք նրա ձեռքերը կապեցին, կախեցին առաստաղից ու տակը կրակ վառեցին...

— Ա՛յ, անիծվածներ, ի՞նչ արնախումներ են: Ի՞նչ գաղանություն, — վրդովված խոսեց Ակիմ Կըրտակը:

— . . . Այրում են նրան խարույկի վրա, իսկ նա միայն արյուն արցունք և թափում, սակայն իր ընկեր կոմյերիտականներից վոչ մեկին չի մատնում և շարունակ կրկնում ե. «Կեցցե՛ պրոլետարական հեղափոխությունն ու կոմունիզմը»:

... Տանջում են նրան, խոշտանգում ամեն կերպ, իսկ նա լուռ ե: Յեկ այդպես մինչև յերեկո: Նա կորցնում է դիտակցությունը, բայց ժանդարմները չուր են լցնում վրան, ուշքի բերում և շարունակում իրենց գործը: Յերբ տեսան, վոր այդպիսով բան չի դուրս դալիս, դնացին, ձերքակալեցին նրա մորը և բերին իրենց պաշտոնատուն: «Տես, — ասում են, — թե քո տղային մենք վոնց ենք խրատում: Ասա նրան, վոր հնաղանդիլի, թե չե կսպանենք ու դիտակը շներին կդցենք»: Այդտեղ մայրն ուշազնաց յեղակ, իսկ յերբ նորից ուշքի յեկավ, նետվեց դեպի իր զավակը, դրկեց, նրա արնոտած ձեռքերը համբուրեց . . .

Գունատված վանյուշան լոեց, իր խոշոր աչքերով մի հայացք դցեց ունկնդիրներին. աղջիկների բերաները բաց եյին մնացել, շրթունքները կապտել եյին.

իսկ աչքերում արցունքներ եյին փայլում, Ակիմի կինը՝ զողնոցով քիթն եր սրբում ու հեծեծալով մրմնջում. «Անբաղիտ մեր... տեր աստված... վոնց եր նայում քր զավակին...» Ակիմ Կրտսերը հանկարծ հառաջեց և թութունի տոսլրակը վերցնելով՝ շտապ սկսեց ծը-խախոտ փաթաթել: Միայն Նադունովն եր, վոր սըն-դուկի վրա նստած արտաքուստ հանդարտություն եր պահպանում, սակայն, պառւզայի ժամանակ նրա այ-տին ևս ինչ վոր կասկածելի մի ցնցում յեղավ, վորից նրա բերանը մի կողմի վրա ծռվեց...

«... Ազե՞ս բալաս, իմ խաթեր, քո մոր խաթեր հնադանդիլիր այս քարասիրտներին», ասում եր մայ-րը, սակայն նա մոր ձայնը լսելով պատասխանեց. «Վո՞չ, սիրելի մայրիկ յես չեմ մատնի իմ ընկերներին, կմեռնեմ իմ դաղափարի համար, իսկ դու ավե-լի լավ ե մահից առաջ համբուրիլի ինձ, այն ժա-մանակ ինձ ավելի հեշտ կլինի մեռնել»:

Վանյուշան կերկերուն ձայնով ավարտեց իր պատ-մությունը, թե ինչպես ուռմինացի կոմյերիտականը մեռավ դահիճ ժանդարմների տանջանքներից:

Մի բոսկ լուռման տիրեց, իսկ հետո տանտի-բուհին լալով հարցրեց.

— Քանի՞ տարեկան եր խեղճը:

— Տասնյոթ, — վրա բերեց Վանյուշան և անմի-ջապես աչքերին քաշեց իր վանդակավոր կեպին: — Այո՛, մեռավ բանվոր դասակարդի հերոսը, մեր սե-րելի ընկեր, ոռմինացի կոմյերիտականը... Մեռավ նրա համար, վոր աշխատավորներն ավելի լավ ապ-գին: Մեր խնդիրն ե՝ ողնել նրանց, տապելել կապի-

տալիզմը, բանվորա-գյուղացիական իշխանությունը ստեղծել, իսկ դրա համար հարկավոր ե կոլտնտեսություններ հիմնել, ամրացնել կոլեկտիվ տնտեսությունը: Բայց մեղ մոտ կան այնպիսի հանցաղութներ, վորոնք իրենց անդիտակից լինելու պատճառով ողնում են այդպիսի ժանդարմներին և արգելք են լինում կոլտնտեսային շինարարությանը— սերմացուն չեն հանձնում պահեատ... Դե, շնորհակալ եմ նախաճաշի համար: Այժմ խոսենք դործի մասին, ինչի համար վոր մենք յեկել ենք ձեզ մոտ: Դուք պետք ե Հենց հիմա սերմացուն տանեք: Զեր ընտանիքին ուղիղ յոթանասուն յոթ փութ սերմացու յե հասնում: Դե, սահնտեր, սկսիր կըելլ:

— Դե ո՞վ ե իմանում... Իսկի հաց ել չի մնացել...— անվճռականորեն սկսել ուղեց Ակիմ Կըրտսերը, վոր շվարչվել եր այդ անսպասելի նախարանից, սակայն կինը մի խեթ հայացք գցեց նրա վրա ու կտրուկ ընդմիջեց.

— Ել մի սկսի՛, դնա պարկերը լցրու ու տար:

— Զի լինի յոթանասուն փութ, համ ել մաղածչե ախր,— թույլ կերպով հակառակեց Ակիմը:

— Տա՛ր, Ակիմուշկա, վոր առում են, ուրեմն պետք ե տանել: Ի՞նչ կա հակառակելու, — հարսին պաշտպանեց Ակիմ պապը:

— Մենք գոռող մարդիկ չենք. կողնենք, կմաղենք, — սիրով արձաղանքեց Վանյուշկան:— Իսկ մաղունե՞ք:

— Կա, բայց մի քիչ սարքին չե...

— Մեծ դժբախտություն չե, կսարքենք: Դե շուտ,

շուտ, տանտեր: թէ չէ, առանց այն ել մենք ձեզ մոտ շատ խոսքով ընկանք...

Կես ժամ անց Ակիմ Կրտսերը կոլտնտեսության գոմի բակից յերկու սայլ եր տանում, իսկ Վանյուշշկան պես ենի նման մանր քրտինքի կաթիլները յերեսը պատած՝ մարադից դեպի շտեմարանի ծակն եր տանում մաղված ցարենով լի պարկերը, տոռուղ հատիկներով ցորեն, վոր դեղին վոսկու փայլ ուներ:

— Եղ ինչո՞ւ յեք ձեր ցորենը մարադում պահել: Շտեմարան ունեք, իսկ ցորենն այսպես անխնամ եք պահում, — խորամանկությամբ աչքով անելով հարցրեց նա Ակիմի աղջիկներից մեկին:

— Եղ հերս եր եղակես մտածել... շիոթված պատասխանեց նա:

Յերբ Բեսխլերնովն իր յոթանասուն յոթ վութ սերմացուն տարավ համայնական շտեմարանը, իսկ Վանյուշշկան ու Նադուլնովը հրաժեշտ տալով ճանապարհ ընկան մի ուրիշ տուն, Նադուլնովն ուրախ համոզմունքով նայելով Վանյուշշկայի հոգնած դեմքին՝ հարցրեց.

— Եղ կոմյերիտականի մասին ի՞նքո՞ւ հնարեցիր:

— Զե, — ցրված պատասխանեց նա, — վաղուց, մի անգամ կարդացել եմ ՄՈՊՐ-ի ժուռնալում այդ դեպի մասին:

— Բայց դու ասացիր, վոր եսո՞ր ես կարդացի:

— Դե միւնույն չէ՞: Այստեղ զլխավորն այն ե,

վոր այդպիսի դեպք յեղել ե. այ թե ինչն ե ցավալի, ընկեր Նազուլնով:

— Լավ, իսկ դու... խղճալու համար քեզանից բան ավելացնո՞ւմ եյիր, — հետաքրքրվեց Նազուլնովը:

— Դե, այդ կարեռը չե, — տհաճությամբ կարծ կապեց Վանյուշկան և ցըտից կծկվելով ու կաշվեքանկոնի կոճակները դցելով ավելացրեց.

— Կարեռն այն ե, վոր մարդիկ ատելություն զգան դեպի դահիճներն ու կապիտալիստական կարդը, իսկ դեպի մեր մարտիկները՝ համակրանք զգան: Կարեռն այն ե, վոր սերմացուն հանձնեն, իսկ մնացածը՝ դատարկ բան ե... Ասենք յես համարյա վոչինչ ել չալելացրի... Բայց տանտիկնոջ կերակուրը հիանալի յեր: Դու, ընկեր Նազուլնով, ի դուր հրաժարվեցիր:

ԳԼՈՒԽԱ **XXII**

Մարտի տասի իրիկվանից Գրեմյաչի Լոգի վրա
մառախուղ իջավ։ Մինչև առավոտ խրճիթների կը-
սուրներից չոչում եր հալվող ձյան ջուրը։ Հարա-
վից, տափաստանից վչում եր տաք ու խոնավ քամին։
Գարնան առաջին դիշերն իջավ Գրեմյաչի վրա, վիր
փաթաթվել եր լողացող ամպերի սև մետաքսով և
խաղաղ լոռւթյան մեջ հողմահարվում եր գարնանա-
յին քամիներով։

Յերեք որ անց՝ արդեն մերկացել եյին քամի-
ներին յենթակա բոլոր բլուրները, հեղեղված լանջե-
րին փայլում եր խոնավ կավը, բլուրներից հոսող
ջուրը պղտորվում ու իր կարկաչուն ալիքների վրա
տանում եր փրփուրի կույտերը, հեղեղված արտերից
պոկած ցորենի արմատները, հերկած հողերից դուրս
քաշած բաղմաճյուղ չոր վիշախոտերը։

Գյուղի այն կողմը հրապուրիչ կերպով սևին եր
տալիս ձյունից աղատված աշնան հերկը։ Շուռ տը-
ված սևահողի շերտերից ամպանման դոլորչի յեր
բարձրանում։ Կեսորվա ժամերին տափաստանում ան-
սահման անդորր ու խաղաղություն եր տիրում։
Բրիդագիրներ Դուբցովը, Լյուբիշկինը, Դյոմկա

Ուշակովն ամեն որ ձին հեծած, տափաստան եյին
դաւրս դալիս, տեսնելու, թե արդյոք հողը պատրաստ
չե՞ վազ ու ցանքի: Քամիների ուժեղ շնչով փովում
եր գարունը տափաստանում: Պարզ ու ջինջ որերն
սկսվեցին և առաջին բրիգադն արդեն պատրաստվում
էր վարելու իր հողամասում յեղած գորշավաղային հո-
ղերը: Աղիտիսմբակի բրիգադը հետ կանչվեց Վոյս-
կովո գյուղը, սակայն Նաղուլնովի խնդրանքով Վան-
յուշկա Նայդենովը մնաց Գրեմյաչիում մինչև ցանքի
վերջը:

Վարչության բակում հնչեց ավտոմոբիլի աղղա-
նչանը: Որոքվելով ու շտանդով լցված ջուրը ճեղքե-
լով ներս մտավ շրջգործեցմի ավտոմեքենան: Դռնակը
բացվեց և նրա միջից դուրս յեկավ Շրջանային Վեր-
ստուգիչ Հանձնաժողովի նախադահ Սամոխինը:

— Ես իմ գործով ե յեկել, — կնճռոտեց Նաղուլ-
նովը: — Տանել չեմ կարող եղ լայնաճակատ սատանա-
յին: Ո՛չ, եղ Բաննիկն ել... Սպանել եր պետք գար-
շելուն և...

Սամոխինը սենյակ մտավ, ձեռքից բաց չթողնե-
լով բրեղենտե պորտֆելը, առանց բարեվելու, կիսա-
կատակով ասաց.

— Ե՛չ, Նաղուլնով, գո՞րծ ես սարքել: Յեկ ա-
հա, յես քո պատճառով ստիպված եմ յեղել այսպիսի
հալհլոցին այստեղ հասնել: Իսկ այս ընկե՞րն ով ե:
Դավիդո՞վն ե կարծեմ: Դե՛, բարե ձեղ: — Նա Նա-
դուլնովի ու Դավիդովի ձեռքը սեղմեց, նստեց սեղա-
նի մոտ: — Դու, ընկեր Դավիդով, մի կես ժամ մեղ
մենակ թող, յես պետք ե այս խենթի հետ խոսեմ, —
ու նա դլիսի նշանով ցույց տվեց Նաղուլնովին:

ԳԼՈՒԽ ՀՀԻ

Գիշերը Յակով Լուկիչը քնի մեջ վոտնաձայներ ու թմիթմիոց լսեց դռնակի մոտից, բայց վոչ մի կերպ չկարողացավ արթնանալ։ Յեկ յերբ մեծ ջանքով քնից աղատովեց, արդեն պարզ կերպով լսեց, թե ինչպես ցանկապատի տախտակը ճռճռաց ինչ վոր մեկի ծանրության տակ և կարծես ինչ վոր մետաղի բան զբնդաց։ Շտապով սպատուհանին մոտենալով՝ Յակով Լուկիչը հավեց լուսամուտի անցքին և ուշադիր նայեց. Նախալուսաբացի խորին մթության մեջ նկատեց, թե ինչպես մեկը ներս ցատկեց ցանկապատի վրայով (լսվեց նրա թռիչքի ծանր թմիոցը)։ Խավարի մեջ սպիտակին տվող փափախից ճանաչեց Պոլովցեցին։ Յակով Լուկիչը սերթուեն ուսերին գցեց, թշողերի վշտնամանները հագավ և դուրս յեկավ։ Պոլովցեվն արդեն ձին ներս եր քաշել, դարբասը փականքով կողղել։ Յակով Լուկիչը նրա ձեռքից անձն առավ։ Ձին քրտնած եր մինչեւ իր բաշը և խզզում ու դոդում եր։ Պոլովցեց Յակով Լուկիչի վողջույնին չպատասխանելով՝ խռպոտ ձայնով հարցրեց.

— Այդ... Լյատկսկին այսուհ՞ղ ե:

— Քնած ե։ Խաթա մարդ ե... ինչ գնացել եք, շարունակ ողի յե խմում...

— Սատանան իր հետ։ Զիս, կարծես, չափից ավելի յեմ քշել...

Պոլովցելի ձայնն անճանաչելիողեն ցածր եր, նրա մեջ Յակով Լուկիչը նկատեց ինչ վոր անհանգստություն, տաղնապ ու հոգնածություն։

Մի յերկու անդամ ծխախոտի ծուխն ազահորեն ներս քաշելուց հետո Պոլովցեն աշխուժացավ։ Նրա աչքերից քունը փախալ, ձայնն ուժեղացավ։

— Ե՛ս, ինչպես են եստեղ դործերը։

Յակով Լուկիչը համառոտակի պատմեց, ապա իր հերթին հարցրեց։

— Իսկ ինչպես են ձեր հաջողությունները։ Շո՞ւտ կլինի։

— Այս որերս, կամ... բոլորովին չենք սկսի։ Վաղը յերեկոյան քեզ հետ կդնանք Վոյսկովո։ Այն-աեղից պիտի սկսել։ Ստանիցային ավելի մոտ ե։ Ագիտկալոնը հիմա այնտեղ ե։ Հենց նրանից ել կփոք-ձենք։ Իսկ դու այնտեղ ինձ հարկավոր ես։ Կազմկ-ներն այնտեղ ճանաչում են քեզ, քո խոսքը կվոդեարի անրանց։ Պոլովցել լոեց, նրա դեմքը մռայլվեց։ ա-պա կտրուկ, դործնականորեն հարցրեց։

— Փոստը վաղո՞ւց ե յեղել։

— Զյունհալ ե հիմա, բոլոր ձորակներով սելավ է անցնում, ճանապարհ չկա։ Մեկ ու կես շաբաթ՝ կլի-նի՝ փոստը չի յեկել։

— Գյուղում Ստալինի հողվածի մասին վոչինչ չե՞ն լսել։
— Ի՞նչ հողված։

— Թերթերում տպալել եր նրա հողվածը կու-
տնտեսությունների մասին:

— Չե, չենք լսել: Յերեխ եղ թերթերը մեզ չեն
հասել: Իսկ ի՞նչ եր գրած եղ հողվածում, Ալեքսանդր
Անիսիմիչ:

— Դատարկ բաներ... ի՞նչ հետաքրքիր և վոր:
Դե, գնա պառկիր քնելու: Զիուն կջրես յերեք ժամից
հետո: Իսկ վաղը դիշերը կճարես յերկու ձի կոլտնտե-
սության ձիերից և հենց վոր կմթնի, կղնանք Վոյսկո-
վոյ:

Առավոտյան Պոլովցիը յերկար զբուցեց ուշքեր յե-
կած Լյատեսկու հետ: Զրույցից հետո Լյատեսկին
դուրս յեկավ խոհանոց, ամբողջապես դունատված ու
դաղաղած:

— Գուցե կուղեյիք խմե՞լ մի բաժակ, — զգուշու-
թյամբ հարցրեց Յակով Լուկիչը, սակայն Լյատեսկին
նրա դլիսի վրայով նայելով հեռուն, կտրուկ պատաս-
խանեց.

— Այժմ արդեն վոչինչ հարկավագը չե, — և անց-
նելով փոքրիկ սենյակը, յերեսի վրա ընկալ մահ-
ճակալին:

Գիշերը կոլտնտեսության գոմում հերթապահ եր
իվան Բատալչիկովը, մեկը նրանցից, վորոնց Յակով
Լուկիչը ներդրավել եր «Դոնի աղատության միու-
թյան մեջ»: Սակայն Յակով Լուկիչը նրան ել չա-
սաց, թե ուր և ինչի յեն գնում: «Մեր գործով մի
մոտիկ տեղ պետք ե գնալ», խուսափողական պատաս-
խան տվեց նա Բատալչիկովի հարցին: Յեվ նա ա-
ռանց տատանվելու լավագույն ձիերից արձակեց մի

զույլ։ Կալերն անցկացնելով՝ Յակով Լուկիչը ձիերը կապեց ցանկապատից ու դնաց Պոլովցեին կանչելու։ Ծեվ յերբ մոտեցավ փոքրիկ սենյակի դռանը, լսեց, թե ինչպես Լյատևսկին գոչեց. «Բայց ախր դա մեր պարտությունն ե նշանակում, հասկացեք»։ Պոլովցեն իր բամբ ձայնով ինչ վոր պատասխան տվեց նրան և Յակով Լուկիչը ինչ վոր դժբախտության նախադրացումով կամացուկ բախեց դուռը։

Պոլովցեր թամբը դուրս բերեց։ Գնացին։ Զիերը հեծան ու քշեցին։ Գետակն անցան դյուղի հետեւ, ծանծաղուտով։ Ամբողջ ճանապարհին Պոլովցեր լուռ եր, ծիելն արդելել եր և հրամայել եր գնալ վոչ թե ճանապարհով, այլ կողքով, մի հիսուն սաժեն ճանապարհից հեռու։

Վոյսկովյում նրանց սպասում եյին։ Յակով Լուկիչին ծանոթ մի կազակի տանը նստած եյին մոտ քսան դյուղացի։ Մեծ մասամբ ծերունիներ եյին։ Պոլովցեր բոլորին ձեռք տվեց, ապա մեկի հետ առանձնացավ ու պատուհանի մոտ կանգնած շշուկով զրույց արավ նրա հետ։ Մյուսները լուռ նայում եյին մեկ Պոլովցեին, մեկ Յակով Լուկիչին։ Իսկ նա, շեմքի մոտ նստած, իրեն կորցրած ու անհարմար եր զգում այդ ոտար, քիչ ծանոթ կազակների մեջ…

Պատուհանները ներսից ամուր ծածկված եյին թանձր վարագույրներով, փեղկերը փակված, իսկ բակում պահակ եր կանգնած տանտիրոջ փեսան, սակայն, չնայած դրան, Պոլովցեն սկսեց իրանել կիսաճայն։

— Դե, պարոնայք կաղակներ, մոտ ե ժամը։

Վերջանում է ձեր ստրկության ժամանակը, պետք է վոտքի յելնել։ Մեր մարտական կաղմակերպությունը կաղմ ու պատրաստ է։ Դուրս ենք դալիս վաղը չեն, մյուսը որը գիշերով։ Ձեզ մոտ Վոյսկովոյ կդա ձիավորների մի հիսնյակ և հենց առաջին կրակոցին դուք պետք ե հասնեք բոլոր տները և այդ... ագիտ կալոնի անդամներին ձերբակալեք։ Այնպես վոր վոչ մեկը կենդանի չաղատովի այստեղից։ Գրեմյաչի Լոգից ինձ հետ յեկել ե ձեղ բոլորիդ հայտնի կազակ Յակով Լուկիչ Ոստրովնովը, վոր ինձ հետ միենույն դնդումն ե յեղել։ Նա ձեղ կասի, թե ինչպես դրեմյաչինցիների մեծ մասը պատրաստ ե մեղ հետ դալու, մեղ հետ միասին կովելու կոմունիստների լծից Դոնի ազատության մեծ դաղափարի համար։ Խոսի՛ր, Ոստրովնով։

Պոլովցեկի համառ հայացքը վոտքի հանեց Յակով Լուկիչին։ Նա շտապ վեր կացավ, ծանրություն զդալով իր վողջ մարմնի մեջ և տապ՝ իր ցամաքած բերանում, սակայն նա խոսել չկարողացավ։ Նրան կանխեց ժողովին ներկա կաղակներից մեկը, արտաքինով ամենահասակալոր կազակը, յեկեղեցական խորհրդի անդամ, վոր պատերազմից առաջ շարունակ Վոյսկովոյում ծխական դպրոցի հոգաբարձու յեր յեղել։ Նա վոտքի յելակ Յակով Լուկիչի հետ միասին և նրան խոսելու ժամանակ չտալով՝ հարցրեց.

— Իսկ դուք, ձերկ բարեծնություն, պարոն յեսառւ, լսել եք են, վոր... Այ, եստեղ, ձեր դալուց առաջ մենք մեր մեջ խորհուրդ եյինք անում... Եստեղ մի շատ հետաքրքիր թերթ ե յեկել...

— Ի-ի-ի՞նչ, ի՞նչ ես ասում, ծերուկ, — խռպատ
ձայնով հարցրեց Պոլովցել:

— Թերթ, ասում եմ, թերթ ե յեկել Մոսկվայից
և նրա մեջ տարված ե ամբողջ կուսակցության նախա-
գահի հոդվածը:

— Քարտուղարի, — ուղղեց ինչ վոր մեկ վառա-
րանի մոտ խմբվածների միջից:

— Հա, քարտուղարի, ամբողջ կուսակցության
քարտուղար ընկեր Ստալինի հոդվածը: Այ, հենց ես
թերթը: Ես ամսի չորսից, — առանց շտապելու, ծե-
րունու տենոր ձայնով առաց պապը և բաճկոնի ծո-
ցադրպանից հանեց խնամքով ծալված թերթը: — Զեր-
դալուց քիչ առաջ մենք մեր մեջ բարձր ձենով կար-
դում եյինք և... դուրս ե գալիս, վոր ես թերթը
մեզ բաժանում ե ձեզանից: Դուրս ե գալիս, վոր մեր՝
հողագործներիս կյանքի ճանապարհն ուրիշ ե... Մենք
ես թերթի մասին յերեկ լսեցինք, իսկ եսոր առավոտ
յես ձի նստեցի ու, ծերությանս չնայելով, քշեցի
ստանցիա: Լեվշեի ծորակով սելավ եր անցնում, ճիշտ
է շատ դժվարացա, բայց անցա եղ սելավը: Ստա-
նիցայում մի ծանոթի աղաչեցի, պաղատեցի ու աստծու
սիրուն դնեցի ես թերթը. վճարեցի... տասնհինգ
ոութիւն վճարեցի նրան... Հետո տեսանք, վոր վրան
դինը հինգ կոպեկ ե նշանակած: Դե, ինչ կա վոր,
փողը դյուզը կհավաքի, կտա ինձ. ամեն տանը տաս
կոպեկ ե ընկնում: Մենք եղակես ել վորոշեցինք:
Բայց թերթն եղ դինն արժե, դեռ դուցե մի բան ել
ավելի... .

— Ինչե՞ք ես խոսում դու, ծերուկ: Յեվ տաքին

ես փէտմ և սառին։ Մեծացել, թողրել ես խելքը։
Քեզ ո՞վ ե իրավունք տվել բռլրի կողմից խոսեւ, —
բարկությունից դողացող ձայնով հարցրեց Պոլովցել։

Այն ժամանակ վեր կացավ կարճահասակ մի
կաղակ, արտաքինով մոտ քառասուն տարեկան, շի-
կավուն նշար բեխերով ու տափակ քթով։ Պատի մոտ
կանգնած բաղմության միջից առաջ յեկավ նա և խո-
սեց վրդովկած, զայրացած։

— Դուք, ընկեր նախկին սպա, մեր ծերունինըի
վրա միք դուռա, առանց են ել հին բանակում դուք
շատ եք գոռացել։ Բավական ե, ինչքան աղայություն
արիք, իսկ հիմա պետք ե խոսել առանց կոպտու-
թյան։ Մենք խորհրդային իշխանության ժամանակ
խամացել ենք եղաղիսի վերաբերմունքից, հասկանալի՞
յե ձեզ։ Յեվ մեր ծերունին ձիշտ ե ասում, վոր մենք
մեջ խորհուրդ ենք արել և «Պրավդա»-յի եղ հոգ-
վածի համար ել մենք բոլորս վորոշել ենք չապտամ-
բել։ Բաժանվեցին մեր ու ձեր ճամփեքն իրարից։
Մեր գյուղի իշխանությունը հիմարություններ ե ա-
րել, սրան-նրան հիմարաբար կոլտնտեսություն ե
քշել, շատ միջակների ի զուր տեղը կուլակաթափ ե
արել։ Դե մեր խորհրդի նախագահն ենալիս եր սեղ-
մել, վոր ժողովում նրան հակառակ մի խոսք ասել
չեր լինի։ Մենք ել առաջ կարծում եյինք, թե եղ բո-
լորր կենտրոնից ե եղաղիսի հրաման գալիս, մեր յուղը
քամել են ուղում, ենալես եյինք կարծում, թե եղ
պրոպագանդը կոմունիստների կենտրոնիցն ե տրված,
խոսում եյինք իրար մեջ, թե՝ «առանց կրակի ծուխ
չի լինի»։ Հենց դրա համար ել վորոշել եյինք ապօ-

տամբել և մտնել ձեր «միության մեջ»։ Հասկանալի՞ց յե ձեղ։ Իսկ հիմի ենապես և դուրս դալիս, վոր Ստալինը այդ տեղական կոմունիստներին, վորոնք ժողովրդին զոռով կոլտնտեսությունները քշեցին և յեկեղեցիներն առանց հարցնելու փակեցին, եղախի կոմունիստներին Ստալինը պախարակում և անխնա, հեռացնում և իրենց պաշտոնից։ Յեկ հողագործի դրությունն ել թեթևանում ե, նա աղատ և թողնվում։ Կուղես՝ մտիր կոլտնտեսություն, կուղես՝ նստիր քո անհատական տնտեսության վրա։ Յեկ դրա համար ել մենք վորոշեցինք ձեղ հետ դործը խաղաղ վերջացնել… Տվեք մեղ մեր ստորագրությունները, վոր մեր հիմարության պատճառով տվել ենք ձեղ և գնացեք ուր ուղում եք, մենք ձեղ վնաս չենք հասցնի, քանի վոր մենք ել ենք կեղտոտվել…

Պոլովցել մոտեցավ պատուհանին, մեջքը դեմ արավ հենակին, գունատվեց այնպես, վոր բոլորը նկատեցին, սակայն նրա ձայնը հնչում եր ուժեղ, չոր, յերբ նայելով բոլորին՝ հարցրեց։

— Այդ ի՞նչ ե, կաղակներ։ Դավաճանություն։
— Հասկացեք, ինչպես կուղեք, — պատասխանեց

մի ուրիշ ծերումի, — ինչ անուն կուղեք տվեք, բայց մեր ճանապարհը ձեղ հետ չի։ Քանի վոր ինքը՝ մեծավորը մեղ պաշտպան և կանդնել, մենք ինչո՞ւ պիտի միախէնք նրանից։ Այ, ինձ իդուր տեղը զրկել եյին ձայնից, արտաքսել եյին ուղում, իսկ իմ տղան կարմիր բանակում ե, ուրեմն՝ յես իմ ձայնի իրավունքը կստանամ։ Մենք խորհրդային իշխանությանը հակառակ չենք, այլ մեր դյուզում յեղած անկարգություն-

Ներին ենք հակառակ, իսկ դուք ուզում եյիք մեղ ամբողջ խորհրդային իշխանության դեմ շուռ տալ: Զե՛, եղ մեղ ձեռնտու չե: Հետ ավեք մեղ մեր ստորագրությունները, քանի դեռ խաթրով ենք ուզում...

Խոսեց մի ուրիշ հասակավոր կազակ ևս, ձախ ձեռքավ դանդաղորեն շոյելով իր գանգուր մորուքը.

— Սիալվել ենք մենք, ընկեր Պոլովցե, աստված ել ե տեսնում, վոր սխալվել ենք: Դուք ասում եյիք. թե, աղստամբելու դեպքում, դաշնակիցներն անմիջապես զենք ու ռազմամթերք կհասցնեն մեղ: Մեր գործը, ասում եյիք, միայն են կլինի, վոր կրակենք, կոտորենք կոմունիստներին: Բայց հետո մենք փոշմանեցինք. ախր ի՞նչ դուրս կդա դրանից: Զենք, ճիշտ ե, կրերեն նրանք, դա դժվար բան չե, բայց արետես, վոր նրանք իրենք ել մեր հողը կմտնեն: Իսկ վոր ներս մտան, ել նրանցից աղասվել չես կարող: Հետո դուրս կդա, վոր նրանց ել սլիտի զենքով դուրս քես ոուսական հողից: Կոմունիստները մեղ ցեղակից են, եսպես ասած՝ մեր մարդիկն են, հարազատ, իսկ նրանք, սատանան գիտի թե ինչ լեզվով են խոսում, ենպես ել վրածած են ման գալիս, ձմեռվա կեսին ձյուն ել չեն տա մարդու, նրանցից բարիք սպասել չե լինի: Եղ դաշնակիցներին մենք փորձել, նրանց համը տեսնել ենք: Զե, ավելի լավ ե մենք եստեղ մեր իշխանության հետ մի կերպ կհաշտվենք և մեր դժողոհությունը մեր տանից դուրս տանելու կարիք չկա... դուք բարեհաճեցեք մեր ստորագրությունները հետ դուք բարեհաճեցեք մեր ստորագրությունները հետ ամալ:

«Հիմի նա դուրս կթռչե պատուհանից, իսկ յեւ

կմնամ եստեղ, վո՞ց վոր խեցդետինը ցամաքի վրա։
Այ թե խրլեցի՞... Ու, մայր իմ հարազատ, չար ժամի
յես ծնել դու ինձ։ Կապկեցի նզովյալի հետ, խճճեց
ինձ չար սատանան», մտածում եր Յակով Լուկիչը,
քմմովելով նատարանին, աչքը չգեռացնելով Պալով-
ցելից։ Իսկ նա հանդիստ կանդնած եր պատուհանի
մոտ և այժմ արդեն վոչ թե գունատությունն եր փայ-
լում նրա այտերին, այլ զայրույթն ու վճռականու-
թյունը։ Նրա ճակատին ուռել եյին լայնությամբ անց-
նող յերկու հաստ յերակները և ձեռքերն անընդհատ
սեղմում եյին պատուհանի դողը։

— Դե, ինչ արած, պարոնայք կաղակներ, կամքը
ձերն ե։ Զե՞ք ուղում դալ մեղ հետ, չենք խնդրում
չենք աղաջում։ Ստորագրությունները յես չեմ վերա-
դարձնի, նրանք ինձ մոտ չեն, այլ շտարումն են։
Ասենք դուք իդուր եք անհանդստանում, յես հո չեմ
գնա Պետքաղվարչություն՝ ձեր մասին հայտնելու...
— Եղ, ի հարկե, եղան ե, — համաձայնվեց
ծերունիներից մեկը։

— Յեկ դուք Պետքաղվարչությունից չե, — վոր
պիտի վախենաք... — Պոլովցելը, վոր մինչ այդ խոսում
եր դանդաղ, կամաց, հանկարծ դուռաց կոկորդովը
մեկ։ — Մեղնից պիտի վախենալ։ Մենք կդնդակահա-
րենք ձեղ, վորպես դավաճանների... Հապա, մի հե-
ռու ճանապարհից։ Քաշվեցե՞ք, պատերին կպե՞ք... —
և նազանը դուրս քաշելով, ձեռքն առաջ պարզած
ուղղվեց դեսկի դուռը։

Կաղակները շշմած հետ-հետ քաշվեցին, իսկ Յա-
կով Լուկիչը, Պալովցեկի առաջն ընկնելով, ուսով

Խպեց, բաց արեց դուռը և պարսատիկով նետված քարի պես դուրս թռավ նախասենյակը:

Մթության մեջ նրանք արձակեցին ձիերը և սրարշավ դուրս յեկան բակից: Խթճիթից լովում եր հուզված ձայների աղմուկը, սակայն վոչ վոք դուրս չեկավ, կազակներից վոչ մեկը չփորձեց բռնել նրանց...

Յերբ վերադարձան Գրեմյաչի Լոռ և Յակով Լուկիչը արագ վաղքից քրտնամխած ձիերը կոլտնտեսության գոմը տարավ, Պոլովցեր կանչեց նրան իր մոտ՝ փոքրիկ սենյակը: Նա վոչ կիսամուշտակն եր հանել, վոչ փափախն եր վերցրել. ներս մտնելուն պես Լյատեվսկուն հրամայեց պատրաստվել մեկնելու; կարդաց իրենց գալուց առաջ ձիավոր սուրհանդակի բերած նամակը, վառեց ծխնելույղի մեջ և իր ունեցածն սկսեց հավաքել խուրջինի մեջ:

Յերբ Յակով Լուկիչը ներս մտավ, նա նստած եր սեղանի մոտ: Դռան ճռոցի վրա Պոլովցեր ձեռքը հետքաշեց ճակատից և շուռ յեկավ դեպի Յակով Լուկիչը:

— Մենք գնում ենք, Յակով Լուկիչ: Ահա իմ հրահանդը քեզ. կոլտնտեսությունից դուրս չդաս, վնասիր նրանց ամեն կերպ, իսկ նրանց, ովքեր մեր «միության» մեջ եյին, ասա իմ հաստատ խոսքը. մենք առայժմ նահանջում ենք, սակայն մենք ջախջախված չենք: Մենք դեռ կվերադառնանք և վայ նրանց, ովքեր կհեռանան մեղանից, կդավաճանեն մեր դործին... կազակային թրից հասած մահը կլինի նրանց վարձատրությունը, այդպես ել ասա՛:

— Կասեմ, — շնչաց Յակով Լուկիչը:

Պոլովցեաի խոսքերը հուղեցին նրան, սակայն
սրտի խորքում խիստ ուրախ էր, վոր ազատվում է
այդ վտանգավոր կեցվորներից, վոր այդ ամենն այդ-
քան բարեհաջող վերջացավ, վոր այսուհետեւ վտան-
գի չի յենթարկվի իր գույքն ու սեփական կաշին:

— Կասեմ, — կրկնեց նա և համարձակվեց հարց-
նել: — Իսկ ո՞ւր եք զնում դուք, Ալեքսանդր Անիսի-
մի՛չ:

— Իսկ ինչի՞դ ե հարկավոր այդ, — լարված ու-
շաղրաւթյամբ հարցը Պոլովցեը:

— Ենպես, կարող ե սպառահել, պետք կլիննք
դուք, կամ վորեւ մարդ կդա ձեղ մոտ:

Պոլովցեը դլուխն որորելով վոտքի յելավ:

— Վո՛չ, յես այդ քեզ ասել չեմ կարող: Սակայն,
եսպես, մի յերեք շաբաթից հետո սպասիր ինձ: Մնաս-
քարե, — և իր պաղ ձեռքը մեկնեց Յակով Լուկիչին:

ԳԼՈՒԽ ՀՀԻՎ

Մարտի 20-ի առավոտյան փոստը Գրեմյաչի Լոռ
պերեց ջրերի վարարելու պատճառով ուշացած թեր-
ժերը՝ Ստալինի «Գլխապուլյատը հաջողություննե-
րից» հոդվածով: «Մոլոտ» թերթի մարտի 4-ի համա-
րի յերեք որինակները մի որում շրջեցին բոլոր տները
և յերեկոյան դեմ արդեն դարձել եյին կեղտոտված,
տրորված, գզգզված լաթեր: Գրեմյաչի Լոռի գոյու-
թյան ընթացքում յերեք թերթն իր շուրջն այնքան
բազմաթիվ ունկնդիրներ չեր հավաքել իր շուրջը,
վորքան այդ որը: Կարդում եյին խմբերով հավաքված,
խորհուրդներում, փողոցներում, պատերի տակ, շտեմա-
ռանների ծածկերի տակ: Մեկը կարդում եր բարձրա-
ձայն, մյուսները լսում եյին, պահպանելով կատար-
յալ լուսվթյուն, վախենալով, թե վորեե բառ բաց
կթողնեն: Ամենուրեք հոդվածի առթիվ տաք վիճա-
բանություններ եյին սկսվում: Յուրաքանչյուրն իր
ձեռով եր բացատրում, մեծ մասամբ այնպես, ինչպես
իր սրտին դռւր կդար: Յեկ, համարյա ամեն տեղ,
հենց վոր Նադունովը կամ Դավիթովը յերեսում

Եյին, չդիտես ինչու, շտապով թերթը ձեռքից ձեռք
եյին տալիս, մինչև վոր սպիտակ թռչունի նման
ֆռֆռալով անհայտանում եր վորեւե մեկի լայն գըր-
պանում :

— Դե, հիմի ցրիվ կզան կոլտնտեսությունները
քրքրված շորի պես,— առաջինը հրճվանքով գուշա-
կություն արեց Բաննիկը :

— Աղբը կղնա, իսկ ինչ վոր ծանր ե, կմնա,—
առարկեց նրան Դյոմկա Ուշակովը :

— Տես, վոր հանկարծ հակառակը, թարսը չստաց-
մի,— քմծիծաղ տվեց Բաննիկը և շտապեց հեռանալ,
վորպեսզի մի ուրիշ տեղ վստահելի մարդկանց ական-
ջին շնչա. «Աղմկիր, դուրս յեկ կոլտնտեսությունից,
քանի ճորտերի համար ազատություն են հայտարա-
րել» :

— Չովել ե միջակը : Մի վոտքը կոլեկտիվումն ե,
ժյուսը վեր ե քաշել, ճոճում ե ու մտածում դուրս
պլծնել կոլտնտեսությունից, նորից իր տնտեսության
մեջ ընկնել,— ասում եք Պավլո Լյուբիչկինը Մինկի-
նին՝ ցույց տալով աշխուժորեն զբուցող միջակ կու-
տնտեսականներին :

Կանայք, վոր շատ բան լրիմ չեյին հասկացել,
իրենց կանացի սովորության համաձայն յենթադրու-
թյուններով ու դուշակություններով եյին զբաղված:
Յեզ գյուղովը մեկ շարունակ լսվում եր.

— Ցրվում են կոլտնտեսությունները :

— Մոսկվայից հրամայված ե հետ տալ կովերը :

— Կուլակներին հետ են դարձնում ու կոլտնտե-
սություններում ընդունում :

— Աւմ վշտը ձայնազուրկի եյին արել, նորից ձայնի
երավունք են տալիս :

— Տուբյանսկում յեկեղեցին բաց են անում, իսկ
նրա մեջ հավաքած սերմացուն բաժանում են կոլտնտե-
սականներին՝ ուտելու:

ՄԵծ դեսպանը եյին վրա հասնում : Բոլորն զգուժ
էյին այդ : Յերեկոյան, կուսակցական բջջի դռնիակ
ժողովում Դավիթովը վրդովված ասում եր .

— Շատ լավ ժամանակին ե գրվել ընկեր Ստալինի
Հողվածը : Այդ հողվածը, որինակ՝ Մակարի վոչ թե
հոնքը, այլ ուղիղ աչքն ե ծակում : Գլխապտույտ ե
յեկել Մակարը հաջողություններից և նրա հետ միա-
սին մենք ել մի քիչ դլխապտույտի յենք յեկել : Յե-
կեք, ընկերներ, առաջարկություններ արեք, թե ի՞նչը
պիտի ուղղենք : Նու, թուչունները մենք հետ այլինք,
ժամանակին ոլխի ընկանք, բայց, ա՛յ, վոչխարները,
կովե՞րն ինչ անենք : Ինչպե՞ս անենք, ձեզ եմ հարց-
նում : Յեթե այդ քաղաքականությունով չանենք, ա-
պա, փաստ ե, կստացվի... կստացվի մի աղղանշնի
պես բան, թե՝ «Ով կարող ե, թող դլուխն աղատի»,
«փախեք կոլտնտեսությունից» : Յեվ կփախչեն, կտա-
նեն բոլոր անառունները և մենք կմնանք կոտրած տաշ-
տակի առաջ, շատ հասկանալի յե :

Նագուլնովը, վոր ամենից վերջն եր ժողովի յե-
կել, վեր կացավ, արտասվալից ու արնակալած աչքե-
րով շեշտակի նայեց Դավիթովին ու խոսեց և Դավի-
տովին զգաց, թե ինչպես ողու սուր հոտ ե փչում Մա-
կարից :

— Ասում ես իմ ա՞չքն ե ծակում եղ հողվածը :

Վ.Շ. Վոչ թե աչքս, այլ՝ ուղիղ սիրտս : Յեվ սրտիս
խորքն ե խորովում : Յեվ իմ գլուխը պտույտ յեկալ
վոչ թե են ժամանակ, յերբ մենք կոլտնտեսություն
և յինք ստեղծում, այլ, ա'յ, հիմա, ես հողվածից հե-
տո... .

— Մի շիշ ողուց հետո յե պտուտ յեկել քո գլու-
խը, — կամացուկ նկատեց Վանյուշա Նայդենովը :

Ռազմյոտնովը ժպտաց ու հավանության նշան ա-
րավ, Դավիդովը գլուխը կախեց սեղանին, իսկ Մա-
կարը սպառնած ոռւնդերն ուռեցրեց, վայրկենապես
կատաղությունը փայլատակեց նրա պղտոր աչքերում .

— Դու, դեռ շատ ջահել ես ինձ արվորեցնելու և
նկատողություն անելու համար : Քո պորտը դեռ չեր
չորացել, յերբ արդեն յես կովում եյի խորհրդային
իշխանության համար և կուսակցության մեջ եյի...
Եղակե՛ս : Իսկ վոր յես եսոր խմել եմ, եղ փաստ և,
ինչպես մեր Դավիդովն ե ասում : Յեվ են ել վոչ թե
մեկ, այլ յերկու շիշ :

— Բա՛ն գտավ պարծենալու : Դրա՛ համար ե վոր
Եղակես հիմար բաներ ես դուրս տալիս... — մոայլո-
րեն նկատեց Ռազմյոտնովը :

Մակարը միայն խեթեց նրա կողմը, սակայն իւ...
սեց ավելի մեղմ և դադարեց ձեռքն անխմաստ թա-
փահարելուց, այլ ամուր սեղմեց կրծքին և այդպես,
ել կանդնած մնաց մինչև իր անկատ, տաք ճառի վեր-
ջը :

— Հիմար բաներ չեմ դուրս տալիս, Անդրյուշ-
կա, վիշում ես : Իսկ յես խմել եմ նրա համար, վոր
Ստալինի եղ հողվածը գնդակի պես ծակեց ինձ ու

իմ մեջ յեռաց արյունը . . . — Մակարի ձայնը դողաց,
ավելի ցածրացավ : — Յես եստեղ թջին քարտուղարն
եմ, չե՞ : Յես դիմեցի ժողովրդին և ձեզ՝ սատանա-
ներիդ, վոր հավերը, սագերը կոլտնտեսություն քշեք.
այս՞ : Յես ինչպե՞ս եյի ագիտացիա մղում կոլտնտե-
սության համար : Այ թե ինչպես . մեր չարագործ-
ներից սրան կամ նրան, թեև միջակ ել եր համար-
վում, ուղղակի ասում եյի «Կոլտնտեսություն չե՞ս
մտնում : Նշանակում ե դու դե՞մ ես խորհրդային
Եշանությանը : Տասնիննը թվին մեզ հետ կովում,
դիմադրում եյիր և հիմա դե՞մ ես : Վոր եղան ե,
ինձնից ել լավ բան չապասես : Յես քեզ՝ գարշելուդ-
ենակես կղաղեմ, վոր սատանաներն ել կսարսափեն» :
Եսակես եմ ասել յես . ասել եմ : Նույնիսկ նաղանս եմ
թրիկացը ել սեղանին : Զեմ ժխտում : Ճիշտ ե, վոչ
բալորին, բայց վոմանց ասել եմ, ովքեր իրենց հոգու
խորքում մեր դեմ լարված են յեղել : Յեվ յես հիմի
հարրած չեմ : Խնդրեմ հիմարություններ միք ասի :
Յես եղ հոգվածը տանել չկարողացա, դրա համար ել
խմեցի, ես կես տարվա մեջ առաջին անդամ . . . Յեվ
ի՞նչ տեսակ հոգված ե դա : Դա ենպիսի հոգված ե,
վոր ընկեր Ստալինը գրել ե, իսկ յես, այսինքն՝ Մա-
կար Նագուլովս թավաղլոր եմ յեղել ու վեր ընկել
ցեխի մեջ յերեսնիվար, տրորված, հալից ընկած :
Եղ ի՞նչպես, ընկերներ : Զե՞ վոր յես համաձայն եմ,
վոր յես հավերի ու մյուս կենդանիների հարցում դե-
պի ձախ եմ ծռել . . . Բայց յեղբայրներ, ինչո՞ւ յեմ
յես ծռել, յեղբայրներ : Յեվ ինչո՞ւ յեք զաւք Տբոց-

Ցուն խմավին փաթաթում, կապում եք ինձ նրա հետ,
վոր յես նրա հետ քայլեմ:

— Դու ըստ եյության խոսիր, Մակար: Ի՞նչ ես
չուր ծեծում: Ժամանակը թանգ ե: Դու առաջարկու-
թյուններ արա, թե մենք ինչպես ուղղենք մեր ընդ-
հանուր սխալները, թե չե ի՞նչ ես Տրոցկու պես մի
զլուխ կրկնում՝ «յես կուսակցության մեջ եմ, յես
ու կուսակցությունը...»

— Թող տուր խոսեմ,— մոնչաց Մակարը, բոր-
բոքվելով և աջ ձեռքն ավելի ամուր սեղմելով կըրծ-
քին:—Տրոցկուց յես խորշում եմ: Ինձ համար խայ-
տառակություն ե նրան հավասարվելը: Յես դավաճան
չեմ և ձեզ նախազդուշացնում եմ. ով ինձ տրոցկիստ
անվանի, նրա մոռւթը կջարդեմ: Յեվ յես հավերի
հարցում ձախ թեքվեցի վոչ թե Տրոցկու համար, այլ
շտապում եյի համաշխարհային հեղափոխության հաս-
նելու: Դրա համար ե, վոր յես ուզում եյի ամեն
ինչ շտապ անել, ավելի ամուր սեղմել մանր բուր-
ժուա սեփականատերին: Ամեն բան մի քայլով ավելի
յեր մոտեցնում դատաստանը համաշխարհային կապի-
տալիզմի նկատմամբ: Դե՞: Ի՞նչ եք լոել: Իսկ հիմա
նսպես. ո՞վ եմ յես ընկեր Ստալինի հոգվածի համա-
ձայն: Այ թե ինչ ե դրած եղ հոգվածի մեջ,— Մա-
կարը կիսամուշտակի դրապանից «Պրավդա»-ն հանեց,
բաց արեց և դանդաղորեն սկսեց կարդալ. «Ո՞ւմ են
պետք այդ խեղաթյուրումները, կոլտնտեսային շարժ-
ման այդ չինովնիկական դեկրետավորումը, այդ ան-
վայել սպառնալիքները գյուղացիներին: Վաչ վոքի,
բացի մեր թշնամիներից: Ինչի՞ կարող են հասցնել

նրանք, այդ խեղաթյուրումները։ Մեր թշնամիների ուժեղացմանը և կոլտնտեսային շարժման պսակազերծ անելուն։ Պա՞րզ չե արդյօք, վոր այդ խեղաթյուրումների հեղինակները, վորոնք իրենց «ձախ» են համարում, իրականում ջուր են լցնում աջ ոպորտունիզմի ջրաղացին։ Յեվ ահա, դուրս ե դալիս, վոր յես նախ և առաջ դեկրետային չինովնիկ եմ և խեղաթյուրումների հեղինակ, վոր յես պսակազերծ եմ արել կոլտնտեսականներին և վոր յես ջուր եմ լցրել աջ ոպորտունիտների ջրաղացին, դործի յեմ գցել նրանց ջրաղացը։ Յեվ եղ բոլորն ինչ վոր վոչ խարների, հավերի համար, այ դետինն անցնեն դրանք։ Յեվ մեկ ել նրա համար, վոր վախեցրել եմ մի քանի նախկին սպիտակի, վարոնք արգելք եյին լեռում կոլտնտեսությանը։ Ճիշտ չե եղ։ Յես եսկադրոն եմ առաջադրել և՛ լեհեցի վրա, և՛ վրանդելի վրա ե՛ գիտեմ, յեթե հարձակման ես անցել, կես ճանապարհից հետ մի՛ դպոնա։

— Դու հենց եսկադրոնից մի հարյուր քայլ առաջ ես արշավել։ — Հոնքերը կիտելով ասած Ռազմյոտնովը, վոր վերջին ժամանակները համառոքեն Դավիդովի կողմն եր պահում, — և դու, Մակար, խնդրեմ վերջացրու, դործի մասին պիտի խոսել։ Այ, յերբ քնզինսկոմի քարտուղար կընտրեն, են ժամանակ կարող ես գլուխդ առած գրոհի գիմել, իսկ հիմի դու շարքային մարտիկ ես և պետք ե կարդ պահպանես, թե չե մենք քո կազը կքաշենք։

— Դու ինձ մի ընդհատիր, Անդրեյ։ Յես կուսակցության ամեն մի հրամանին յենթարկվում եմ,

իսկ հիմի վոր ուղում եմ խոսել, վոչ թե նրա համար, վոր ուղում եմ դեմ գնալ իմ հարազատ կուսակցությանը, այլ նրա համար, վոր յես նրա լավն եմ ուղում: Ընկեր Ստալինը գրել ե, վոր հարկավոր երաշխատել հաշվի առնելով տեղի պայմանները: Այդպիս ե: Ել ինչո՞ւ յես դու, Դավիթով, ասում, թե այդ հոգվածն ուղիղ իմ աչքն ե մտնում: Նրա մեջ հուղղակի գրված չե՞ն, թե Մակար Նաղունովը խեղաթյուրումների հեղինակ ե և չինովնիկ: Գուցե թե եղ խռաքերը բոլորովին ել ինձ չե՞ն վերաբերում: Այ, յեթե ընկեր Ստալինը գար Գրեմյաշի Լոգ, յես նրան կասեցի. «Մեր թանկագին իոսիֆ Վիսսարիոնովիչ, ուրեմն դու դե՞մ ես, վոր մեր միջակներին հուպ տանք: Դու նրանց հետ մեղմ ես վարվում և ուղում ես քնքությարմբ համոզել: Իսկ յեթե եղ միջակը անցյալում սպիտակ կաղակների մեջ ե յեղել և մինչեւ որս ել ամուս կպած ե իր սեփականությանը, եղ դեպքում յես նրա վո՞րտեղը պաշեմ, վոր նա կուեկտիվ տնտեսություն մտնի ու հանդիսատ կերպով մոտենա համաշխարհային հեղափոխությանը: Ախր նա, եղ միջակը կուտնտեսություն ել վոր մտնի, ելի չի ամուս սեփականությունից հրաժարվել, այլ շարուկարող սեփականությունից կերպ անի, վոր իր անասուններին ավելի լավ կերակրի: Այ, թե ինչ տեսակ մարդ է նա»:

— Դե լավ, բավական ե:— Դավիթովը վեր կացավ, մտեցավ Մակարին, իրեն համար անսովոր սառն տոնով հարցրեց.— Ստալինի նամակը, ընկեր Նաղունովը, այդ կենտկոմի դիմումների գումարը այդամասյն չե՞ս այդ նամակին:

— ԶԵ՞ :

— Իսկ քո սխալներն ընդունո՞ւմ ես : Յես, որինակ, իմ սխալներն ընդունում եմ : Փաստին հակառակել չես կարող : Յես վոչ միայն ընդունում եմ, վոր մենք չափն անցել ենք մանր անասուններն ու թռչունները համայնացներով, այլ և պիտի ուղղեմ իմ սխալները : Մենք չափից ավելի տարվեցինք կոլեկտիվացման տոկոսներով, թեև դրանում շրջանային կոմիտեն ել մեղք ունի . և շատ քիչ աշխատեցինք կոլտնտեսության ամրապնդման վրա : Դու ընդունո՞ւմ ես այս, ընկեր Նագուլով :

— Ընդունում եմ :

— Դե՞ն, ել ի՞նչ կա վոր :

— Հոդվածը ճիշտ չե :

Դավիդովը մի բոպե ձեռքով հարդարեց սեղանին փոած կեղտոտ մոմլաթը, չգիտես ինչու պտտեցրեց կանոնավոր վառվող լամպի պատրույդը, — ըստ յերեվույթին ջանում եր զսպել իր վրդովմունքը և չկարողացաւ .

— Դու հաստագլո՛ւխ ես, հաստակո՛ղ : Մի ուրիշ տեղ քո եղ խոսքերիդ համար քեզ դուրս կշպրտելին կուսակցությունից : Դե, վա՛ստ ե : Դու գժվե՞լ ես, ի՞նչ ե : Կամ դու անմիջապես վերջ կտաս քո այդ . . . քո այդ . . . քո ոպողիցիային, կամ մենք քո մասին . . . վա՛ստ ե : Մենք բավական դիմացանք քո այդ դատարկաբանություններին, իսկ յեթե դու այդ գուրծ ես դնում, — խնդրե՞մ : Մենք պաշտոնապես կհայտնե՞մ շրջանային կոմիտեյին, վոր դու յեւույթ ես ունեցել կուսակցության գծի դեմ :

— Հայտնի՞ր։ Յես ինքնս կասեմ շրջանային կոմիտեյին։ Յեվ Բաննիկի և բոլորի մասին միանդամից կպատասխանեմ...

Ծանը, ճնշող լոռության մեջ Դավիդովը մատներով թմբկահարեց սեղանը։ Վանյուշկա Նայդենովը, վոր շարունակ տարակուսական ժողիտով Մակարին նրայում, մեջ ընկավ։

— Վերջացնենք, ընկեր Դավիդով։

— Այսպես ուզեմն, ընկերներ, — աշխատժորեն խոսեց Դավիդովը, — յես հետեւյալն եմ առաջարկում։ մանր անասուններն ու կովերը վերադարձնել կոլտնտեսականներին, բայց ով վոր յերկու կով ե հանձնել, նրան աշխատենք համոզել, վոր մեկը թողնեն համայնացված նախրի մեջ։ Վաղը հենց առավոտվանից պետք ե ժողով հրավիրել և բացատրական աշխատարել։ Այժմ ծանրության կենտրոնը բառանք կատարել։ Դա կասեն աշխատանքը պիտի դարձնել։ Յես վախենաւմ եմ, թե կսկսեն դուրս գալ կոլտնտեսությունից, իսկ մենք այսոր վաղը դաշտ պիտի դուրս գանք... Այս, թե վորտեղ պիտի ցույց տաս քո վորձված լինելով, Մակար։ Համոզիր, բայց առանց նագանի, վոր կոլտնտեսությունից դուրս չգան, այ, այդ վաստիւնի։ Դե, ուրեմն քվեարկե՞նք։ Քվեարկե՞նք իմ ակլինի։ Դե, առաջ սեղմեն Մակարին։ Ո՞վ ե «կողմ»։ Դու ձեռնպա՞հ ես, Մակար։ Այդպիս ել կարձանադրենք՝ «մեկի ձեռնպահությամբ»...

Դավիդովը շարունակ ներքուստ տատանվում էր։ արդյոք սեղմե՞լ Մակարին։ Դնե՞լ արդյոք նրա հարցը՝ կուսակցական պատասխանատվության յենթարկը՝

կելու կարգով, այն բանի համար, վոր յելույթ ունեցավ ընկեր Ստալինի հողվածի դեմ, վոր չի ցանկանում կոլտնտեսություն ստեղծելու ընթացքում կատարած «ձախ» սխալների հետևանքները վերացնել։ Սակայն ժողովի վերջում նայելով Մակարի մեռելի պես գունատ դեմքին, վոր քրտնել եր ու քունքերի վրա յերակներն ուռել, վորոշեց. «Վո՞չ, հարկավոր չե։ Ինքը կհասկանա։ Ավելի լավ ե, նա առանց ճնշման գիտակցի։ Խճճվել ե, բայց ախր մե՛ր մարդն ե։ Յեվ մեկ ել, նրա այդ հիվանդությունը... Ընկնավորությունը։ Զե, կկոծկենք եղ դործը»։

Իսկ Մակարը մինչեւ ժողովի վերջը նստել եր լուս և արտաքուստ վոչ մի բանով ցույց չեր տալիս իր հուղումը։ Դավիդովը նրան նայելով միայն մեկ անգամ նկատեց, թե ինչպես մի ուժեղ դող անցալ ուժասպառ ծնկներին ընկած Մակարի թերով։

— Նազուլովին տար քեզ մոտ քնելու, հետեիր, վոր չիմի, — շնչաց Դավիդովը Ռազմյոտնովին և նա դլխով համաձայնության նշան արավ։

Դավիդովը տուն եր վերադառնում մենակ։ Լուկակա Զեբակովի տան մոտ, քանդված ցանկալատին նստել ելին կազակները և այնտեղից աշխույժ զրույցի ձայն եր գալիս։ Դավիդովը դնում եր փողոցի հակառակ կողմով և յերբ նրանց հավասարվեց, լսեց, թե ինչպես մեկը խավարի մեջ վստահորեն, բամբ ճայնով ասում ե։

— ... Ինչքան ուղում ես տար, ինչքան ուղում ես վճարիր, ելի դոհ չեն։

Իսկ մյուսն ասում ե.

— Հիմի ել խորհրդային իշխանությանը յերկութեւ ե դուքս յեկել. աջ ու ձախ: Բա յե՞րբ կթռչի ու կհեռանա մեզանից:

Պոռթկաց բաղմաձայն ծիծաղը և խկույն ել հանկարծակի կտրվեց:

— Ալս-ս'ս'ս'-ս-ս... Դավիթովը, — լսվեց տաղնապալից: Յեկ անմիջապես նախկին բամբ ձայնն արդեն առանց նենդ ակնարկի նշույլի, ձևացրած դործիմացությամբ ասաց.

— Հա'-ա'-ա'... ա'յ թե անձրեւ չլիներ, ցանքը չուտ կվերջացնելինք... Հողն ենպես ե չորանում, վոր խակի տեսնված չե... Եհ, տղերք, ցրվեցեք հանգըստանալու: Բարի գիշեր հալա...

Հաղ: Վոտնաձայներ...

ԳԼՈՒԽ ՀՀՎ

Հետեւյալ որը կոլտնտեսությունից դուրս գալու մասին քսաներեք դիմում ստացվեց : Դուրս յեկան-էլիսավորապես միջակները, վորոնք վերջինն եյին մը-տել կոլտնտեսություն, ժողովներում առվորաբար լուռ եյին մնում, շարունակ վիճում եյին գործի նշանա-կողների հետ և դժկամությամբ եյին աշխատանքի գը-նում : Դրանց մասին եր, վոր Նազուլնուն ասում եր . «Դե մի՞թե դրանք կոլտնտեսականներ են : Դրանք վոչ ձուկ են, վոչ միս» ; Դուրս յեկան նրանք, ովքեր եյա-պես մեռած մարմիններ եյին բրիդադներում, վորոնք կոլտնտեսական եյին դարձել կամ յերկյուղից, թե հանկարծ չլինի իշխանությունը խեթ նայի իրենց վը-րա, կամ ուղղակի ընկել եյին դեռ հունվարին սկսված կոլեկտիվացման ուժեղ հոսանքի մեջ :

Դավիդովը դիմումներն ընդունելիս փորձեց նրանց ել համոզել, խորհուրդ տվեց նորից մտածել, սակասել մի քիչ, սակայն դուրս յեկողները համառեցին և Դա-վիդովը վերջի վերջո թափ տվեց ձեռքը .

— Գնացե՛ք, քաղաքացիներ, բայց հիշեցեք, նո-րից պիտի խնդրեք, վոր կոլտնտեսություն ընդունենք և այն ժամանակ մենք կմտածենք, ընդունե՞նք ձեղ, թե վոչ :

— Դժվար թե մենք նորից խնդրենք։ Հույս ունենք, վոր նորից առանց կոլտնտեսության ել կապւենք . . . — շագանակագույն, դանդուր բեխերի տակ ժպտալով բոլորի փոխարեն պատասխանեց յերեկվուկոլտնտեսական իվան Բատալչիկովը։

— Մենք ել առանց ձեղ մի կերպ կապրենք, լաց ու կոծ չենք անի ձեղ համար, մաստ ե։ Պառավոր սայլակից ցած դա՝ ձին ավելի հեշտ կքաշի, — կտրուկ պատասխանեց Դավիթովը։

— Լավն ել են ե, վոր սիրով բախանվենք։ Կճուճը կճուճին կոչի՝ առանց վնասի չե անցնի։ Թույլ տարի՞ս եք մեր անասունները բրիգադներից հետ վերցնել։

— Վո՞չ. այդ հարցը մենք վարչության նիստում պիտի դնենք։ Սպասեցեք մինչև վաղը։

— Մենք սպասելու ժամանակ չունենք։ Դուք ձեր կոլեկտիվով դուցե թե հողեղալուստից հետո սկսեք ցանքը, իսկ մենք՝ դաշտ պիտի դուրս դանք։ Մինչև եղուց կսպասենք, բայց յեթե դուք վաղն ել վորձեք մեր անասունները պահել, են ժամանակ ինքներս կվերցնենք։

Բատալչիկովի ձայնի մեջ բացահայտ սպառնալիք կար և Դավիթովը նրան պատասխանելիս թեթևակի կարմրեց բարկությունից։

— Կտեսնեմ, թե դու ինչպես կհամարձակվես վորեւ բան վերցնել կոլտնտեսության դոմից, առանց վարչության թույլտվության։ Առաջին, վոր չենք տա, իսկ յերկրորդ՝ յեթե վերցնես, դատարանով պատասխան կտաս։

— Իմ անառումի՞ համար։

— Առայժմ նա կոլտնտեսությանն է :

Այդ նախկին կովտնտեսականներից Դավիթովը բաժանվեց առանց մաղաչափ ախտոսանքի, սակայն նրան, խստ վշտացրեց, յերբ Դեմիդ Մոլչունից ել դիմում ստացվեց դուրս գալու մասին : Նա յեկավ արդեն իրիկնապահին, բոլորովին հարբած և սովորականի պես լուռ : Առանց բարեվելու, Դավիթովի բուռը կոխեց լրագրի թղթի մի կտոր, վորի վրա տողերի հակառակ ուղղությամբ ինչ վոր խաղմզված եր ու ասաց . «Բաց թողեք կոլտնտեսությունից» :

Դավիթովը տարակուսանքով ձեռքերի մեջ շուռ ու մուռ տվեց Մոլչունի կարճառոտ դիմումը և անգավական տոնով հարցրեց .

— Դո՞ւ այդ ինչ ես անում, հը՞ :

— Հեռանում եմ,— մըթմըթաց Մոլչունը :

— Ո՞ւր, ինչո՞ւ :

— Ուրիշները դուքս են դալիս . . . Դե, յես ել նրանց հետեւից :

— Իսկ յեթե ուրիշները ժայռից ցած դլորվեն, դու ե՞լ նույնը կանես,— մեղմ ժպիտով հարցրեց Ռազմյուտովը :

— Դե, ախաղերս, եղ արդեն հաղիվ թե,— Մոլչունը խուլ քրքջաց : Նրա ծիծաղը դարմանալի նման եր դատարկ տակառի դղբղոցի :

— Դե, ի՞նչ արած : Դուքս յեկ, — հառաչելով ասաց Դավիթովը, — քո կովը կարող ես վերցնել : Քեզ, վորակս չքալորի, անխոս կվերադարձնենք, փաստ ե : Կտանք չե՞ , Ռազմյունտով :

— Պետք ե վերադարձնել, — համաձայնվեց Ռազ-

մյուտնովը, սակայն Դեմիտը նորից լայնաբերան ծի-
ծաղեց ու վրա բերեց.

— Ասենք եղ կովը ինձ պետք ել չի: Կոլտնտե-
սությանն եմ նվիրում: Յես յերեկի տնօփեսա կղնամ:
Խ՞նչ ե, դուք զարմանո՞ւմ եք յերեկի:— Յեվ նա դուրս
յեկալ առանց հրաժեշտ տալու:

Դավիդովը լուսամուտից նայեց:

Մոլչունն անշարժ կանդնած եր սանդուխքների
մոտ:

Հետաքրքրությամբ դիտելով նրան՝ Դավիդովը
տեսալ, թե ինչպես Մոլչունը պատի մոտից լինովը
վերցրեց, մոտեցավ դարբասին:

— Չլինի՞ եղ արջը մտածել և քարուքանդ անել
մեր շենքը,—ծիծաղելով ասաց Բաղմյուտնովը, վոր
մոտեցել եր լուսամուտին: Նա միշտ ջերմ վերաբեր-
մունք ուներ դեպի Մոլչունը, կապված եր նրա հետ,
անսահման հարգանք եր զգում դեպի նրա Փիղիքա-
կան վիթխարի ուժը:

Մոլչունը դարբասը բաց արեց և սառույց կտրած
ձյունակույտին այնպիսի ուժով հարփածեց, վոր միան
դամից յերեք փթաչափ սառույցի մի խոշոր կտոր
պոկեց: Սառույցի կտորտանքը կարկուտի պես թափ-
վեցին դարբասի վրա և շուտով յերկաթե նիդով բա-
ցած հունի միջով հանդաբար հոսել սկսեց բակում լճա-
յած ջուրը:

— Դե, սա ելի կոլեկտիվում կլինի,— խոսեց
Բաղմյուտնովը, քոնելով Դավիդովի ուսերից և ցույդ
տալով Մոլչունին:— Անկարդ բան նկատեց, ուղղեց,
նոր գնաց: Նշանակում ե նրա սիրտը մեր կոլտնտե-
սությունում մնաց: Ճիշտ չե՞մ ասում:

ԳԼՈՒԽ ՀՀՎԻ

Մի շաբաթվա ընթացքում Գրեմյաչի Լոգում մոտ հարյուր տնտեսություն դուրս յեկան կոլտնտեսությունից : Առանձնապես ուժեղ մաղում յեղավլ յերկրորդ բրիգադում, վորի մեջ մնացին ընդամենը քսան հինգ տնտեսություն, նրանցից ել մի քանիսի արդեն «փախչողների թեկնածու եյին», ինչպես ասում եք բրիգադիր Լյուբիշկինը :

Դեպքերը ցնցում եյին դյուղը : Յուրաքանչյուր որը նոր անախորժություններ եր բերում Դավիդովին : Նրա կրկնակի հարցումին, թե դուրս յեկողների լըծկանն ու դյուղատնտեսական գործիքները հիմա՞ պիտի վերադարձնել, թե՞ ցանքից հետո, շրջանային դաշտավարական միությունն ու կուսակցական կոմիտեն պատասխանեցին բարձրագույն մի հրամանով, վորի խմաստն այն եր, թե՝ գրեմյաչինցիները բոլոր ուժերով ու միջոցներով պետք ե կոլտնտեսության քայլայման առաջն առնեն, հնարավորին չափ ավելի մեծ թվով կոլտնտեսականների պահեն կոլտնտեսության մեջ, իսկ դուրս յեկողների հետ բոլոր հաշիվները մաքրելը, ինչպես և նրանց դույքը վերադարձնելը պետք ե հետաձգել աշնանը :

Ինչպես յեղակ՝ շուտով Գրեմյաչի յեկավ շրջանային հողբաժնի վարիչ, շրջկոմի բյուրոյի անդամ Բեղլիխը։ Նա շտապ ծանոթացավ դրությանը (այդ որը նա մի քանի գյուղ պիտի շրջեր) և ասաց։

— Այժմ վոչ մի պայմանով գործիքներն ու անասունները դուրս յեկողներին միք վերադարձնի։ Մնամինչև աշուն, իսկ հետո՝ կտեսնենք։

— Այս մարդիկ մեր բկին են չողում, — փորձեց առարկել Դավիդովը։ Բեղլիխը, վոր մի վճռական ու հաստատամիտ մարդ եր, միայն ժպտաց։

— Դե, դու ել քո հերթին չողիր։ Բայ եյության, ի հարկե, պետք ե վերադարձնենք, սակայն սկզբուղային կոմիտեյից այդպիսի հրահանդ կա վերադարձնել միմյայն բացառիկ դեպքերում, հաշվի առնելով դասակարգային սկզբունքը։

— Այսի՞նքն։

— Դե, այդ արդեն դու ինքդ պիտի հասկանաս առանց «այսինքն»-ի։ Զքավորին վերադարձնել, իսկ միջակին խոստանալ աշնանը։ Հասկանալի՞ յե։

— Բայց, Բեղլիխ, դրանից հարյուր տոկոսանոց կուեկտիվացման նման բան չի՞ ստացվի։ Զե՞ վոր շրջանային կոմիտեյում այդպիսի դրույթ ել կաքչինչ գնով ել լինի քշիք մինչև հարյուր և վորքան կարելի յե՝ շուտ։ Յեվ դուրս յեկավ գլխապտույտ։ Միջակի անասունը չվերադարձնել՝ այդ նշանակում ե փաստորեն սեղմել նրան։ Ապա նա ինչո՞վ վար ու ցանք կանի։

— Նրանց դարգը քեզ չեն ավել։ Դու մենատնտեսի մասին մի մտածիք, այլ քո կոլտնաեսության։ Ապա

դո՞ւ ինչով պիտի աշխատես, յեթե անասունները վերադարձնես: Յանքի պլանը չես կատարի՝ գլուխք կտոկենք:

Ցել արդեն սայլակը նստելով կարծես ի միջի այլոց ասաց:

— Բնդհանուր առմամբ դըժ-վա՛-ա՛-ը և մի քիչ: Շեղումների համար, ախալերս, ստիպված ենք քայլել, որան-նրան զոհաբերել... Եղան և կարգը: Մեր շրջկենտրոնի մարդիկ խիստ են կատաղած նադուլնովի վրա: Այդ ինչե՞ր և սարքել նա այսուղ. ծեծել և մի ինչ վոր միջակի, ձերբակալել և, նադանով սպառնացել: Ինձ Սամոխինն ասաց: Դրա մասին մի ամբողջ գործ ունի նա: Հ-ա՛-ա՛, բանից զուրս և զալիս, վոր նադուլնովը մեծ մասշտաբով ձախլիկ և: Իսկ հիմա դիտե՞ս ինչ դրույթ կա. պատժել, մինչեւ իսկ կուսակցությունից վատարել: Դե, մնաք բարե: Անասունները, անասունները պահպանի՛ք:

Բեղլիխը քշեց գեղի վոյակովոյ: Դեռ քամին չեր չորացրել նրա սայլակի անխինների հետքերը, վոր վազելով, հուզված ներս ընկալ Աղաֆոն Դուբցովը՝ յերբորդ բրիգադի բրիգադիրը:

— Բնկեր Դավիդովի, յեղներն ու ձիերը տարան, նրանք, վոր դուրս են յեկել, զուսվ տարան:

— Ի՞նչպես թե տարան, — շառադունած դոչեց Դավիդովը:

— Շատ պարզ. տարան: Յեղապանին մարադում փակեցին և յեղներն արձակեցին ու տափաստան քշեցին: Տասնութ զույգ յեղ ու յոթ հատ ձի տարան: Ի՞նչ պիտի անենք:

— Իսկ դո՞ւ, ապա դու ի՞նչ եյիր անում, թմբած։
Վորտե՞ղ եյիր դու, ինչո՞ւ թույլ տվիր, վո՞րտեղ եյիր
չքվել, հը՞...

Չնայած անասունները պահպանելու համար ձեռք
առած բոլոր միջոցներին, յերկու որվա ընթացքաւմ՝
կոլտնտեսությունից դուրս յեկածները կարողացան
փախցնել յոթ զույգ յեղ և յերեք ձի։ Նրանք անասուն-
ները քշեցին տափաստան, հեռավոր ձորակների կողմը
և, վորպեսզի հասակավորների բացակայությունն աչքի
չընկնի, նախրապան ուղարկեցին անչափահասներին։
Առավոտից մինչև գիշեր կոլտնտեսության վարչությու-
նում ու գյուղխորհրդում բազմություն եր վիստում։
Մրդեն լուրջ վտանգ կար, թե հեռացածները կիսլեն
կոլտնտեսության հողերը։

— Կամ հենց հիմա մեղ հող տվեք, կամ թե չե-
մենք ելի մեր նախկին հողամասերը կսկսենք հեր-
կել, — պահանջում եյին Դավիթովից հեռացածները։

— Ձեղ հող կտանք, միք հուզվի, քաղաքացի մե-
նատնտեսներ։ Վաղը կսկսենք բաժանել։ Դիմեցեք
Ռոտրովնովին, այդ գործը նա պիտի կարդավորի,
փաստացի յեմ ասում, — հանդստացնում եր Դավիթո-
վը։

— Իսկ վո՞րտեղից պիտի մեղ հող տաք և ի՞նչ
տեսակ։

— Վորտեղ աղատ հող կլինի։

— Գուցե թե եղ աղատ հողը գյուղի հողամասի
ծայրումն ե, եղ վոնց կլինի։

— Դու, ընկեր Դավիթով, հիմարի տեղ մի դնի
մեղ։ Բոլոր մոտիկ հողերը կոլտնտեսության ձեռքն

անցան . դուրս ե գալիս , վոր մեզ հեռու տեղերի՞ց պի-
տի հող տաք : Լծկանը չեք տալիս , դուցե թե մենք
ինքներս պիտի լծվենք կամ կովերը լծելով պիտի ցանք
անենք և են ել հեռու հողե՞րն եք մեզ տալիս : Ե՛ւ ,
այ թե ի՞նչ արդարադատ իշխանություն ե ...

Դավիթովը համոզում , հասկացնում եր , վոր ինքը
չի կարող ամեն մեկին իր ցանկացած տեղից հող տալ ,
վորովհետեւ չի կարող կոլտնտեսության հողային ամ-
բողջական տարածությունը կտրել և դժվարացնել
աշնանը կատարվելիք հողաշինարարությունը : Հեռա-
ցածներն աղմուկով դուրս եյին գնում , բայց մի քանի
բոսկեյից հետո ներս եր թափվում մի նոր ամբոխ , վոր
հենց չեմքից դոռում եր .

— Հող տվե՞ք : Ես ի՞նչ կարգ ե : Դուք ի՞նչ իրա-
վունք ունեք մեր հողը պահելու : Ա՛յ , դուք մեզ չեք
թողնում ցանք անել , իսկ ընկեր Ստալինն ինչպե՞ս ե
գրել մեր մասին : Մենք նրան ել կարող ենք գրել ,
վոք վոչ միայն անասունները չեք տալիս , այլ և հողը ,
վոր մեզ ապրուստի բոլոր հնարավորություններից
զրկել եք : Նա ձեր ճակատը չի պաչի դրա համար :

— Յակով Լուկիչ , եղուց առավոտը սրանց հողա-
բաժին հատկացրու խեցգետնի լճակի այն կողմը :

— Են խոպա՞նը , — դոռացին հեռացածները :

— Հանդստացած հող ե , ի՞նչ խոպան : Եդ հողը
վարվել ե , բայց վաղուց , մի տասնհինգ տարի ա-
ռաջ , — բացատրեց Յակով Լուկիչը :

Յեվ միանդամից վոթորկալից աղաղակ բարձրա-
ցավ .

— Զենք ուղո՞ւմ , ամուր հող ե ...

— Ինչո՞վ պիտի վարենք եղ տեսակ հողը...

— Փափուկ հող տվե՞ք...

— Հետ տվեք լծկանը, են ժամանակ պինդ հողն

ել կմշակենք:

— Մարդ կուղարկենք ուղիղ Մոսկվա, Ստալինի մո՛տ:

— Ի՞նչ եք մեր որը սևացնում:

Կանայք ճղճղում եյին: Կաղակները սիրով ու միահամուռ ձայնակցում եյին նրանց: Շատ ջանք եր հարկավոր լինում այդ աղմուկը գաղարեցնելու համար: Այսպիսի զեղքերում սովորաբար վերջ ի վերջո Դավիդովն իրեն կորցնելով դոռում եր.

— Ի՞նչ, իսկ դուք ուժում եք, վոր ամենալավ հողե՞րը ձեզ տան: Այդ չի լինի, փաստ ե: Խորհրդացին իշխանությունը բոլոր առավելությունները կայտնատեսություններին ե տալիս, վաչ թե նրան, ով դեմ ե գնում կոլտնտեսությանը:

Տեղ-տեղ մենատնտեսներն արդեն սկսեցին հերկել ու մշակել այն հողերը, վորոնք մի ժամանակ իրենց վյին պատկանել, իսկ հետո կոլտնտեսության հողային զանդվածի մեջ եյին մտել: Լյուբիշկինը նրանց դուրս քչեց կոլտնտեսության հողերից, իսկ Յակով Լուկիչը փայտի սաժենանոցը ձեռքին գնաց տափաստան և խեցդետնի լճակի այն կողմը յերկու որ շարունակ հողակտորներ եր բաժանում մենատնտեսներին:

Դյոմիկա Ուշակովի բրիդադն ամսի 25-ին դուրս յեկավ դորշ-ավաղահողը վարելու: Դավիդովը դաշտավարների տրամադրության տակ դրեց ամենից ավելի աշխատունակ կոլտնտեսականներին, դասավա-

բեց ուժերը։ Ծերունիներից շատերը հաճությամբ
բրիգադները մտան վորպես ցանքարար, մաճկալ, տա-
փանող։ Վորոշեցին ձեռքով ցանք չանել։ Նույնիսկ
ևախկին «հավ մատնահարող» Ակիմ Բեսխլեբնովը, այդ-
զառամյալ ծերունին ցանկություն հայտնեց գնալ
շարքացանով աշխատելու։ Շչուկարին Դավիդովը կոլ-
տնտեսության վարչության ձիապան նշանակեց։ Ամեն
ինչ պատրաստ եր։ Ցանքը ձգձգում ելին միայն հորդ
անձրեները, վոր յերկու որ շարունակ առատորեն
վողողում ելին Գրեմյաչի բլուրները, աշնանացանը,
վորն առավիտները պարուրված եր լինում սպիտա-
կավուն գոլորշու մեջ։

Կոլտնտեսությունից դուրս գալը դադարեց։ Մնաց
վստահելի, ամուր կորիզը։

ԳԼՈՒԽ XXVII

Եչուկար պապը ցնծությամբ համաձայնվեց իրեն՝
Ազոլվարչության մշտական ձիապան նշանակելուն։ Պաշտոնական ուղևորությունների համար վարչությունում թողնված նախկին կուլակային յերկու հովատակը հանձնելով նրան, Յակով Լուկիչն ասաց.

— Աչքիդ լույսի պես պահպանիր ես ձիերը։ Ենա պես արա, վոր չնիհարեն։ տես, վոր արագ չքշես, չհոգնեցնես։ Տես, Տիտոկի ես մոխրագույն հովատակը ցեղական ե։ Ասենք ես շեկն ել Դոնի լավ տեսակի ձիերից ե։ Մեղ մոտ ենքան ել շատ նստող չի լինի։ Շուտով ես հովատակները զամրիկներին ենք խառնելու։ Դո՞ւ յես նրանց համար պատասխանատու։

— Ասա՛ ինդրեմ, — պատասխանեց Եչուկար պապը, — ի՞նչ ե, յես չեմ իմանում, թե ձիերի հետ ինչպես պիտի վարվել։ Ինչքա՞ն ձի յեմ տեսել յես իմ կյանքում . . . դլիսիս ենքան մաղ չկա, ինչքան վոր ձի յե անցել իմ ձեռքի տակով։

Բայց իսկությունն այն ե, վոր Եչուկար պապի ամրողի կյանքում «նրա ձեռքով» ընդամենը յերկու ձի յեր անցել, այն ել մեկը վորիանակել եր կովի հետ, իսկ յերկրորդի հետ հետևյալ պատմությունն եր առեղի ունեցել։

Քսան տարի առաջ Շչուկարը խիստ հարբած էլոյսկովո դյուղից վերադառնալիս այդ ձին գնել եր քոչվոր գնչուներից, յերեսուն ոութլով։ Գնելու ժամանակ յերբ նա ձին զննեց, կլորիկ տեսք ուներ, լավ դույն, ականջները կախ եյին, աչքի մեջ ել հատ կար, յայց շատ արագաշարժ եր, աշխույժ։ Մինչև կեսոր Շչուկար սպապը սակարկեց դնչույի հետ, մի քառասուն անդամ ձեռք-ձեռքի խփեցին, ելի բաժանվեցին, նորից մոտեցան իրար։

Լավ ե, գնչուն բարեհոգի մարդ դժւրս յեկավ, յերկար սակարկելուց հետո մի ոութլի ևս իջեցրեց, սանձը հանձնեց Շչուկարին և ձեացնելով, թե աիս սոսում ե՝ հառաչեց ու իր յերկար, բաց կապույտ սերթուկի թեքով սրբեց շաղանակաղույն ճակատը։

Հենց վոր սանձն անցավ Շչուկարի ձեռքը, ձին կորցրեց իր քիչ առաջվա աշխուժությունը։ Նա Շչուկարի հետեւից քայլում եր դժկամությամբ յենթարկվելով նրա լարված ջանքին, դժվարությամբ փոխելով իր չոված վոտքերը։

Դեռ Տյուբանսկ չհասած՝ ձիու հետ սկսեցին Հրաշքներ տեղի ունենալ։ Պատոհաբար հետ նայելով Շչուկարը շամեց. նրա հետեւից քայլում եր վոչ իր զնած մեծափոք, տոռուղ ձին, այլ մի նիհար, հալից ընկած ձի, ներս ընկած փորով, գալակի վոսկորների մոտ խորունկ փռսերով։ Ծնդամենը մի կես ժամում նա կիսով չափ նիհարել եր։ Շչուկարը յերեսին խաչքաշեց ու շշնջաց. «տե՛ր վողորմյա, տե՛ր վողորմյա, տե՛ր վողորմյա»։ Սանձը ցած ընկավ նրա ձեռքից, նու կանդ առավ, զգալով, թե ինչպես միանդամից ան-

հավ իր հարբածությունը։ Զիու շուրջը պատվելուց
հետո միայն նա դմխի ընկավ, թե ինչն եր նրա այդքան
աքաղ նիհարելու պատճառը։ ձիու զզզզված պոչի
տակից, վոր սատանան գիտե, թե ինչ ձեռվ թեքված
եր մի կողմի վրա ու դեպի վեր, շաջյունով ու սու-
լոցով դուրս եյին ժայթքում խեղդուկ ողն ու հեղուկ
թրեքի շիթերը։ «Ա՛յ քեզ բա՞ն...» հառաչեց Շչու-
կարը՝ յերկու ձեռքով բռնելով իր դուխը։ Խսկ հետո,
սանձը բռնելով՝ տասնապատիկ ուժով ձիդ տվեց
ձիուն։ Մինչև Տյուբանսկ հասնելը նրա ստամոքսի
հրաբխային ժայթքումները չեյին դադարում և ճա-
նապարհին այլանդակ հետք եյին թողնում։ Գուցե և
Շչուկարը հաջողությամբ մինչև Գրեմյաչի Լոդ հաս-
նեց, յեթե ձին շարունակ քաշելով տաներ, սակայն
հենց վոր հասավ Տուբյանսկի գյուղի առաջին տներին։
վորտեղ իր քավորն ու շատ ծանոթ կազակներ եյին
ապրում, վորոշեց նստել իր գնած ձին, գոնե դանդաղ
քայլով քշել և վոչ թե քաշ տալ հետեւից։ Նրա մեջ
հանկարծ մի չտեսնված հպարտություն բռնկեց և
արթնացավ իրեն հատուկ ցանկությունը՝ պարծենալ,
ցույց տալ, վոր ինքը՝ Շչուկարը արդեն դուրս և
յեկել աղքատությունից և արդեն ձիով ե գնում, թեև
զատ, բայց և այնպես՝ իր սեփական ձիով։ «Հը՛ո՛-ո՛,
անիծված, հենց թռչկոտում ես մի դլուխ», ասաց նա.
աչքի տակով նայելով ծանոթ կազակին, վոր դուրս
եր դալիս կողքի տանից։ Յեվ սանձը ձիդ տալով նա
կանդ առավ։ Նրա ձին, վոր հավաներեն խաղացել ու
թռչկոտել եր իր հեռավոր ջահելության տարիներին,
իրականում ամենեին միտք ել չուներ թռչկոտելու։

Նա կանդ առավ և տիսուր-տրտում զլուխը կախ դցեց,
հետեւի վոտքերը ծալեց «Քավորի տան մոտով պեաք
և անցնել, թող տեսնի», մտածեց Շչուկարը և ցատ-
կելով՝ իր փորը դցեց ձիու մեջքի սուր վոսկորներին:
Յեվ հենց այստեղ ել պատահեց այն, ինչի մասին
հետադայում յերկար ժամանակ խոսում եյին Տուր-
յանսկի կաղակները: Հենց այդտեղ եր, վոր Շչու-
կարը կրեց շսված մի խայտառակություն, վորի
մասին հիշողությունը հասել ե մինչև մեր որերը և
հավանորեն կանցնի նաև գալիք, սերունդներին... Հա-
զիվ եյին Շչուկարի վոտքերը դետնից պոկվել ու ինքը
կախվել իր ձիու վրա, նրա մեջքի լայնու-
թյամբ ընկած, ջանալով վեր բարձրանալ ու նստել
վրան, յերբ ձին յերերաց, նրա ներսն ինչ-վոր բան
գողոաց և ձին հենց տեղն ու տեղը կարծես փլեց,
ընկալ ճանապարհի մեջ տեղն ու պոչը յերկարեց:
Շչուկարը ձեռքերը տարածած ընկալ ճանապարհի
մյուս կողմը, վուկեց փոշու մեջ: Ապա արագ վեր
ցատկելով և նկատելով, վոր կաղակը տեսավ իր խա-
տառակությունը, դործն ուղղեց գոչելով. «Ի՞նչ ես մի
զլուխ քացի գցում, գրողի տա-ա-րա՞ծ», գուաց նա
վոտքով խփելով ձիուն, Զին վեր կացավ և կարծես
վոչինչ չեր պատահել, դունչը մեկնեց թառամած մո-
լախոտին:

Շչուկարին նայող կաղակը շատ կատակասեր և
ուրախ մարդ եր: Նա ցանկապատի վրայով ցատկեց,
մոտեցավ Շչուկարին: «Քարի որ, Շչուկար, եդ ի՞նչ
ե, ձի յես դնել»— «Գնել եմ, բայց կարծես մի քիչ
սխալվել եմ. կատաղած ե սատանան. հենց ուղում ես

Հեծնել — հո՛պ, գետին և թմբացնում : Յեղեռում և,
դեռ չեն հեծել սրան, սովոր չե» : Կազակն աչքերը
կկոցելով մի յերկու անգամ պտտվեց ձիու շուրջը .
թեթեակի նայեց ատամներին, ապա միանդամայն
լրջորեն ասաց . «Դե, ի հարկե, խամ և : Բայց, յերե-
վում ե, աղնվացեղ ձի յե : Ատամներն նայես՝ հիսուն
տարեկանից պակաս չի լինի, բայց հենց նրա համար .
վոր աղնվացեղ ե, վոչ վոք չի կարողացել տանձեւ
նրան» : Շուկարը համակրական վերաբերմունք տես-
նելով նրա մեջ, համարձակվեց հարցնել . «Բայց մի
ինձ ասա, իգնատ Պորֆիրի՛չ, ինչու եսպես շուտ
նիհարեց : Յես քաշում եմ նրան, իսկ ինքն ուղղակի
կարծես աչքիդ առաջ հալվում ե, ծանր հոտ և փշում
նրանից, թրիքն ել կարծես անդունդից ե դուրս ժայթ-
քում, ամբողջ ճանապարհին նկատել եմ» :— «Իսկ
դու վո՞րտեղ ես առել ես ձին . հո գնչուներից չե՛ս
առել» :— «Նրանցից եմ առել . քոչը հենց ձեր գյուղի
մոտ եր կանգնած» :— «Դե հենց նրանից ե նիհա-
րում,— բացատրեց կազակը, վոր և՛ ձիերն եր ճանա-
չում, և՛ գնչուներին,— նրանից ե նիհարում, վոր
քեզ վաճառելուց առաջ փչել են : Զին վոր պառավու-
թյունից նիհարում ե, նրանք վաճառելուց առաջ հե-
տույքը մի ծակ յեղեղ են կոխում և բոլորը հերթով
ենքան են փշում, մինչև վոր ձիու կողերն ուռչում են
և կլորիկ տեսք և ստանում : Յեկ յերբ արդեն աջառի
տկի պես փչած են լինում, յեղեղն իսկույն հանում
են ու տեղը կպրոտած մի լաթ խրում կամ մի ուրիշ
բան, վորպեսզի փուքը դուրս չգա : Ահա, դու հենց եկ
տեսակ փչած, ուռեցրած ձի յես առել» :

Վողբաց Շչուկարը և այլես չհամարձակվեց նըստել գնչույի տված «Հըեղենին»։ Նա դուրս յեկալ պյուղից, ուղղվեց դեպի բլբակը, սակայն բլբակի վըրա արդեն հողնեց սանձը քաշելուց և վորոշեց ձին քել իր առաջին արած։ Բայց այդտեղ ել պարզվեց, վոր այնքան դժվարությամբ դնած ձին յերկու աչքեց ել կույր ե։

Յերբ Շչուկար պապը Յակով Լուկիչին հավատացնում եր, թե ինքն իր կյանքում անթիվ ձիեր ե անցկացրել, հաստատ համոզված եր, վոր Յակով Լուկիչը չի կարող հավատալ իրեն, քանի վոր Շչուկարի ամբողջ կյանքը նրա, Յակով Լուկիչի աչքի առաջ եր անցել։ Սակայն բնականից այդպես եր Շչուկար պապը. չեր կարող չպարհենալ ու սուստ չխոսել։ Մի ինչ վոր ներքին մղում նրան ստիպում եր ասել այնպիսի բաներ, վորոնցից մի քանի բոսկ հետո ինքն ել հաճույքով կհրաժարվեք։

Մի խոսքով Շչուկար պապը դարձավ ձիապան և միաժամանակ կառապան։ Յեվ պետք ե ասել, վոր նա իր վոչ բարդ պարտականությունները վատ չեր կատարում։ Միակ բանը, վոր դուր չեր դալիս արագ վաղք սիրող Նաղուլնուին, այդ հաճախակի կանդ առումներն եյին։ Դեռ բակից դուրս չեկած, մեկ ել կտեսնելիք յերասանակները քաշեց. «Հռ՛-ռ՛-ռ՛, կա՛ց . . .»— «Ի՞նչ պատահեց», կհարցնի Նաղուլնովը։ «Ենպես, ձիու բնական կարիքի համար», կպատասխանի Շչուկար պապը և այնքան յերկար կսկսեր սուրել, մինչև Նաղուլնովը դուրս կքաշեր մտրակը նրա նստատեղից ու կշրիացներ հովատակի մեջքին։ «Հե-

մի ցարի ժամանակները չեն, վոր կառապանը առջեկ
չոր տեղը լինի նստած, իսկ ուղեորդ հետեւի փափուկ
բարձի վրա ճոճվի: Հիմի, այ, յես կառապան եմ, բայց
ընկեր Դավիթովի հետ մի շարքում եմ նստում: Պա-
տահում ե, ծխել եմ ուղում և ասում եմ. «Ապա մի-
յերասանակը բռնի՛ր, ծխախոտ պիտի փաթաթեմ»:—
«Խնդրեմ, մեծ սիրով», ասում ե: Պատահում ե, վոր
ճեռքիցս առնում ե յերասանակները ու մի ամբողջ
ժամ քշում ձիերը, իսկ յես նստում եմ առոք, փառք
ու բնությանը նայելով հիանում»: պարծենում եր
Շչուկար պապը կաղակների մոտ: Նա մի տեսակ
պատկառելի տեսք եր ընդունել և նույնիսկ մի քիչ սա-
կալախոս եր դարձել:

Նա այնքան արագ լծել սովորեց, վոր իր արագու-
թյամբ մրցում եր նույնիսկ Գրեմյաչի հրշեջ խմբի
հետ: Ամեն անդամ յերբ ձիերը դուրս եր բերում
լծելու, վրնջացող ու վոտքերով դովոր հովատակնե-
րին հանդստացնելիս անդադար կանչում եր բարձ-
րաձայն. «Հո՞-ո՞-ո՞, կատաղել և սատանա՞ն... դե
սա ել հո զամբիկ չե՛, հենց են պտուղն ե, ինչ վոր
դո՞ւ...» իսկ լծելն ավարտելուց հետո սայլակին-
նստելով՝ ինքնազոհությամբ ասում եր. «Դե, գնում
ենք ուրեմն և մի գծիկ*» ել կվաստակենք: Զե, ախ-
ուեր, ես կյանքը ինձ սկսել ե դուր դալ»:

* 1930 թվին սովորաբար կոլտնտեսականի յու-
րաքանչյուր աշխատած որվա համար բրիգադիրն իր
ծոցատետրում նրա անվան դիմաց մի գծիկ եր քա-
շում:

ԳԼՈՒԽ **XXIII**

Նագուշնովն առավոտյան վաղ արթնացավ, յեր-
պու բաժակ կաթ խմեց ու գնաց / կոլտնտեսության
գոմը:

— Մի ձի դուրս քաշիր ինձ համար, միայն լա-
վը,— խնդրեց գոմի հերթապահին:

Նա դուրս քաշեց դեղնավուն մի ձի, կախ ընկած
հետույքով, վոր հայտնի յեր բացառիկ դիմացկունու-
թյամբ ու կայտառությամբ, և հարցրեց.

— Հեռո՞ւ յեք գնալու:

— Շրջան: Դպիդովին կասես, վոր յես եսոք դի-
շերվա դեմ կվերադառնամ:

— Հեծա՞ծ եք գնալու:

— Հա, դուրս բեր թամբը:

Մակարը ձին թամբեց, նոխտան գլխից հանեց,
հազցրեց սանձը, վոր մի ժամանակ Տիտոկին եր պատ-
կանում, դյուրությամբ վոտքը դցեց ատամնավոր
ասպանդակեն:

Շրջանային կոմիտեյի բյուրոյի նիստն սկսվեց
ժամը տասնմեկին: Որակարգում դրված եր ըրջա-
նային հողբաժնի վարիչ Բեգլիխի զեկուցումը՝ ցանքի
ընթացքի մասին, առաջին հնդորյակում: Բացի բյու-

լոյի անդամներից ներկա եյին նաև չըջանային վերահսկիչ հանձնաժողովի նախագահ Սամոխինը և շրջանային դատախազը:

— Քո հարցն առանձին ե դրվելու, չդնաս, — նախազգուշացրեց Նագուլնովին կազմբաժնի վարիչ Խոմուտովը:

Բեղլիխի կես ժամ տեսող զեկուցումը լսվեց լարված, ծանր լուսթյամբ:

— Այժմ, ահա, Նագուլնովի մասին: — Քարտուղարն ամբողջ նիստի ընթացքում առաջին անդամ հայեց Մակարին, մի քանի վայրկյան նրա թափառող, վանող հայացքը կանդ առավ նրա վրա: — Զեղ հայտնի յե, վոր նա Գրեմյաչիկ կուսակցական բջջի քարտուղար լինելով՝ մի շարք ծանր հանցանքներ ե դորձել կուսակցության դեմ! Հակառակ շրջանային կոմիտեյի ցուցումներին՝ կոլեկտիվացման ու սերմ-ֆոնդ գանձելու ժամանակ ձախ դիմ ե տարել: Նա հագանով ծեծել ե մի մենատնտես միջակ գյուղացու, ցուրտ սենյակում կալանավորել ե մի քանի կոլտնտեսականի... Ընկեր Սամոխինն անձամբ գնացել ե Գրեմյաչում, քննել այս գործը և պարզել, վոր Նագուլնովը հեղափոխական որինականության խախտման, կուսակցական գծի վնասարարական աղավազման աղաղակող գործեր ե արել: Խոսքը տանք Սամոխինին: Ընկեր Սամոխին, հայտնիր բյուրոյին, թե դու ինչ ես պարզել Նագուլնովի հանցագործությունների վերաբերյալ: — Քարտուղարն աչքերը փակեց իր ծանր կոպերով և ծանրորեն հենվեց արմունկների վրա: •

Նագուլնովը դեռ շրջանային կոմիտե դալու

բոպեյից հասկացել եր, վոր իր գործը վատ ե, վոր
ներողամտության սպասել չի կարող: Շրջանային կո-
միտեյի քարտուղարն արտասովոր զսպվածությամբ
վողջաւնեց նրան և, ըստ յերեսույթին խոսակցության
բռնվելուց խուսափելով՝ անմիջապես ինչ վոր հար-
ցով դիմեց շրջանային գործադիր կոմիտեյի նախա-
դահին:

— Ի՞նչպես ե իմ գործը, ընկեր կորչժինսկի, — վա-
րանումով հարցրեց նրան Մակարը:

— Բյուրոն կվճռի, — դժկամությամբ պատաս-
խանեց նա:

Ասենք, մյուսները ևս խուսափում եյին Մակարի
հարցական հայացքից և հեռու քաշվելմ նրանից: Բայտ
յերեսույթին նրանք իրենց մեջ նախապես արդեն լու-
ծել եյին նրա հարցը: Միայն միլիցիապետ Բալաբինն
եր, վոր կարեկցաբար ժպտաց Մակարի յերեսին և
ամուր սեղմեց նրա ձեռքը.

— Մի վախի, Նագուլնով: Դե, սխալվել ես,
խճճվել ու կացինդ քարին ես խիել. դե, ախր մենք
քաղաքականապես այնքան ել լավ կոփած չենք: Քե-
զանից լավ գլուխ ունեցողներն ել Պն սխալվել:

Յերբ Սամոխինը պղորտֆելից հանեց հաստակոր
թղթապանակը, Նագուլնովը սրտի խորքում տագնապ
զգաց: Լսելի ձայնով բախեց նրա սիրտը, արյունը
գլուխը խիեց, քունքերն այրվեցին, շշմեցնող մի ծան-
րություն զգաց սրտում ու կոկորդում: Այդպիսի վկ-
ճակ նա միշտ ունենում եր ընկնելուց մի քիչ առաջ:
«Միայն թե հանկարծ չընկնեմ»: Խորապես ցնցվում
եր նա ականջ դնելով Սամոխինի դանդաղ ճառին:

— Շըջանային կոմիտեյի և վերահսկիչ հանձնաժողովի հանձնարարությամբ յես հետաքննեցի այդ գործը։ Հարցաքննելով հենց իրեն՝ Նազուլնովին, նրա արարքներից տուժած Գրեմյաչի Լոդի կոլտնտեսականներին ու մենատնտեսներին, ինչպես և վկաների ցուցմունքների համաձայն յես պարզել եմ հետեւյալը։ Ընկեր Նազուլնովն, անկասկած, չարդարացրեց կուսակցության վստահությունը և իր արարքներով՝ վիթխարի վնաս հասցրեց նրան։ Այսպես, կոլեկտիվացման ժամանակ, փետրվար ամսին, նա շրջել ե տները և նազանով սպառնալով՝ հարկադրել կոլտնտեսություն մտնել։ Այդ ձեռվ նա, ինչպես առամ են, կոլտնտեսություն և «գրավել» յոթ միջակ գյուղացի։ Այդ ինքը՝ Նազուլնովն ել չի ժխտում։

— Նրանք մինչև ուղ ու ծուծը սպիտակներ են, — աթոռից վեր բարձրանալով՝ խոպոտ ձայնով ասաց Նազուլնովը։

— Յես քեզ խոսք չեմ տվել։ Կարդի յեմ հրավիրում, — խստությամբ ընդհատեց նրան քարտուղարը։

— Այնուհետև, սերմֆոնդի գանձման ժամանակ նա նազանով ուշաթափ լինելու աստիճանի ծեծել ե ժեկ միջակ մենատնտեսի և այդ ներկա յեղող կոլտնտեսականների ու գյուղխորհրդի հերթապահների առաջ։ Ծեծել ե նրա համար, վոր այդ գյուղացին հրաժարվել ե անմիջապես ներկայացնել սերմֆոնդը…

— Խայտառակություն, — բարձր ձայնով ասաց դատախաղը։

Նազուլնովն իր թաթով կոկորդը տրորեց, գունատվեց, բայց լռեց։

— Այդ նույն դիշերը, ընկերներ, նա նախկինք էցիստավի նման ցուրտ սենյակում կալանավորել և յերեք կոլտնտեսականի և այդտեղ պահել ամբողջ դիշերը, միաժամանակ նաղանով սպառնացել և, յեթե հրաժարվեն անմիջապես տանել, հանձնել սերմացուն:

— Յես նրանց չեմ սպառնացել...

— Յես այդ նրանց խոսքն եմ ասում, ընկեր Նազուլնով, և խնդրում եմ ինձ չընդհատել: Նրա պնդումով կուլակաթափ և արվել և արտաքսվել միջակ գյուղացի Գաեվը, վորն ամենեին կուլակության յենթակա չե, վորովհետեւ իր գույքային դրությամբ նա վոչ մի դեպքում կուլակների շարքը դասվել չի կարող: Ահա, ընկերներ, այն հերոսական արարքների համառոտ ցուցակը (այստեղ Սամոխինը կծու կերպով ժպտաց), վոր կարճ ժամանակամիջոցում կարողացել և կատարել բջջի պատուհաս քարտուղար Նագուլնովը նա, որինակ, վոչ միայն միջակին կուլակաթափ անելու և նաղանի սպառնալիքով կոլտնտեսություն քշելու հնարն ե գտել, այլ և վորոշում ե անցկացըել՝ համայնացնել ընտանի թուզունները և բոլոր մանր ու կաթնատու անասունները:

— Թուզունների ու անասունների վերաբերյալ քըզկոմից դիբեկտիվ չի յեղել, — կամացուկ ասաց Նազուլնովը:

Նա արդեն կանդնել, ձգվել եր հասակովը մեկ, ձախ ձեռքը զղայնուեն սեղմելով կըծքին:

— Վո՛չ, այդ արդեն ներիր, — բոնկեց քարտուղարը. — շըզկոմը ցուցում տվել ե: Մեղքը հիվանդ դիմից առողջի վրա դցելու կարեք չկա: Արտելի կա-

նոնադրություն կա և դու ծծկեր յերեխա չես, վեր
չկարողանայիր հասկանալ այն:

—Գրեմյաչիի կոլտնտեսությունում ինքնաքննադա-
տության ճնշումն ե թագավորում, — շարունակեց
Սամոխինը: — Նազուլնովը ահարեկել ե բոլորին, վոչ
վոքի չի թողնում մի խոսք ասել: Բացատրական աշ-
խատանք կատարելու փոխարեն նա գոռում ե գյու-
ղացիների վրա, նազանն ե թիվթիվացնում, զենքով
և սպառնում: Դրա համար ել Գրեմյաչի ընկեր Ստա-
լինի անվան կոլտնտեսությունում մեծ իրարանցում
կա: Այնտեղ հիմա մասսայորեն դուրս են կալիս կոլ-
տնտեսությունից, ցանքը նոր են միայն սկսել և վորո-
շակի կերպով գլուխ բերել չեն կարողանում: Շրջա-
նային վերստուգիչ հանձնաժողովը, վորի կոչումն ե
մաքրել կուսակցությանը ամեն տեսակի քայքայված
տարրերից, բոլոր դույնի ոպորտունիստներից, վո-
րոնք խանդարում են մեք մեծ շինարարությանը, ան-
կասկած իր յեղրակացությունները կանի նազուլնովի
մասին:

— Վերջացրի՞ր, — հարցրեց քարտուղարը:

— Այո՛:

— Խոսք տանք նազուլնովին: Թող պատմի թե
ինչպես հասակ այդ աստիճանին: Խոսի՛ր, նազուլ-
նով:

Սոսկալի զայրույթը, վոր Սամոխինի ճառի վեր-
ջում համակել եր նազուլնովին, հանկարծ անհայ-
տացակ, նրան փոխարինեց անվստահությունն ու յեր-
կյուղը: «Ես ինչպե՞ս են վարվում ինձ հետ: Ինչպե՞ս
կարելի յե: Թաղե՞լ են ուղում ինձ», մի վայրկան

ցրված մտածեց նա՝ մոտենալով սեղանին։ Սամո-
թինի յելույթի ժամանակ իր պատրաստած կծու հա-
կածառություններից վոչինչ չմնաց։ Նրա դլուխը
դատարկությամբ լցվեց և նույնիսկ վոչ մի համապա-
տասխան բառ չմնաց նրա մտքում։ Մակարի հետ մի
ինչ վոր արտասովոր բան եր տեղի ունենամ։

— Յես, ընկերներ, հեղափոփության որերից կու-
սակցության մեջ եմ... Կարմիր բանակումն եմ յե-
զել...

— Այդ ամենը մեզ հայտնի յէ։ Գործին մոտե-
ցիր, — անհամբերությամբ ընդհատեց նրան քարտու-
ղարը։

— Յես բոլոր ճակատներում կռվել եմ սպիտակ-
ների դեմ... Յեվ Առաջին հեծյալ բանակում... ինձ
շքանշան տվին...»

— Դու դործի մասին խոսի՛ր։

— Իսկ ես դործ չե՞։

— Դու խոսքը կտուրը մի՛ գցի, Նազուլով։ Հի-
մա անցյալի ծառայությունների մասին խոսելու
կարիք չկա, — ընդհատեց շրջանային դործադիր կո-
միտեյի նախադահը։

— Թողե՛ք, վերջապես, ընկերը խոսի։ Ի՞նչ եք
լեղվակոխ անում նրան, — հուղված գուշեց Բալաբինը
և նրա կլոր, ճաղատավուն դիմի դադաթը վայրկյա-
նապես ծածկվեց մորեգույն փայլով։

— Թող կոնկրե՛տ խոսի։

Նազուլովը շարունակ կանգնած եր նույն դիր-
քով, ճախ ձեռքն առանց հեռացնելու կրծքից, իսկ
աջը՝ դանդաղորեն մեկնեց դեպի կոկորդը, վոր կար-

ծես չորացնել եր տապից : Նա գունատվեց և դժվարությամբ շաբունակեց .

— Թույլ տվեք խոսել : Յես հո թշնամի չեմ , ինչո՞ւ յեք եղաքես վարվում ինձ հետ : Յես բանակում վիրավորվել եմ . . . Կաստորնոյի տակ կանտուղիա յեմ ստացել . . . ծանր հրանոթից . . . և լռեց , նրա սկացած շրթունքները չչոցով եյին ողը ներս ծծում :

Բալարինն արագորեն ջուր լցրեց ջրամանից , բաժակը մեկնեց Մակարին , առանց նրան նայելու :

Կորչինսկին նայեց Նազուլնովին և անմիջապես հայացքը հեռացրեց նրանից . Նազուլնովին ձեռքը , չոր սեղմել եր բաժակի կողերը , դողում եր անդուսով : Լոռության մեջ պարզ լսվում եր , թե ինչպես չխել-չխկում ե ապակին՝ ղարկվելով Մակարի ատամ-ներին :

— Դե , դու մի՛ հուզվիր , խոսիր , — տրտմությամբ տաց Բալարինը :

Կորչինսկին մռայլվեց : Խղճահարությունը դադասագողի նրա սերտը սողոսկեց , սակայն նա իրեն հավաքեց : Նա հաստատ համոզված եր , թե Նազուլնովը պատուհաս ե կուսակցության համար և վոր նրան վոչ պիտի աշխատանքից հանել , այլ և կուսակչիայն պիտի աշխատանքից հանել : Յեվ նրան համամիտ եյին բռւրը , բացի Բալարինից :

Մակարը միանդամից կուլ տվեց բաժակի ջուրը , շբունչ առավ ու սկսեց խոսել .

— Յես ընդունում եմ այն ամենը , վոր ասաց Սամոխինը : Ճիշտ ե , եղ բոլորը յես արել եմ : Բայց վոչ նրա համար , վոր ցանկացել եմ դեմ զնալ կու-

սակցությանը։ Եղ արդեն հնարում ե Սամոխինը։ Բայց այդ ամենը յես արել եմ... Յես հեղափոխության ոգուտն եյի ուղում։ Գուցե յես սխալվել եմ... Զգիտեմ... Դուք ինձանից ավելի ուսումնական եք։ Դուք կուրսեր եք անցել, ավելի լավ եք հասկանում։ Յես իմ մեղքը չեմ փոքրացնում։ Դատեցեք, ինչպես ուղում եք։ Միայն մի բան խնդրում եմ հասկանալ...— Նրա շունչը նորից կտրվեց, բառը կիսատմաց և մի կես բոպե լուռ մնաց։ Հասկացեք, յեղքայրներ, վոր եղ բոլորն արել եմ առանց կուսակցության դեմ չար մտքեր ունենալու։ Յես Բաննիկին նրա համար եմ ծեծել, վոր նա ծաղրում եր կուսակցությանը և ուղում եր սերմացուն խողերի առաջցնել...

— Ասա՞—, ծաղրով վրա բերեց Սամոխինը։

— Ասում եմ են, ինչ վոր յեղել ե։ Մինչև հիմա ել ափսոսում եմ, վոր յես եղ Բաննիկին չեմ սպանել։ Ել ասելու բան չունեմ։

Կորչինսկին ուղղվեց, բաղկաթողը ճոճուաց նրատակին։ Նա ուղում եր շուտ վերջացնել այդ ծանր գործը։ Յեվ շտապ խոսեց։

— Դե, ել ի՞նչ, ընկերներ, ամեն ինչ սպարդ ե։ Ինքը՝ Նադունովը խոստովանեց։ Թեև լմանը-մունը բաների մասին նա արդարանալու ճիգեր ե անում, սակայն նրա արդարացումներն անհամոզեցուցիչ են հնչում։ Յուրաքանչյուր վոք, ով ստիպված ե լինում արդարանալ, ճգնում ե իր մեղքի մի մասից աղատվել, կամ սպատասխանատվությունն ուրիշների վրա դցել։ Յես գտնում եմ, վոր Նադունովին, վոր—

պես կոլտնտեսային շարժման մեջ կուսակցության գիծը չարամտորեն խախտողի, պետք եւ վտարել կուսակցության շարքերից։ Ո՞վ եւ կողմնակից, վոր Նազունովը կուսակցությունից վտարվի։ Հասկանալի յեւ, քվեարկում են միայն բյուրոյի անդամները։ Այդպես, ուրեմն չո՞րս հոգի։ Դու դեմ ես, ընկեր Բալաբին։

Բալաբինը թաթը զարկեց սեղանին։ Նրա քունքերին ուռավ յերակների խճճված ցանցը։

— Յես վոչ միայն դեմ եմ, այլ և կտրականապես առարկում եմ։ Այդ հիմնովին սխալ վորոշում ե։

— Դու կարող ես քո առանձին կարծիքին մնալ, — առն կերպով ասաց Կորչինսկին։

— Վոչ, դու թույլ տուր ինձ խոսել։

— Խոսելն ուշ ե, Բալաբին։ Նազուլնովին վտաքելու վորոշումն ընդունված ե ձայների մեծամասնությամբ։

— Այդ չինովնիկական մոտեցում և մարդուն։ Ներեցեք, յես այդ այդպես չեմ թողնի։ Յես ոկրուքային կոմիտեյին կդրեմ։ Վտարել կուսակցության հին անդամին, կարմրադրոշին… Յնդել եք դուք, ընկերներ։ Մի՞թե պատժի ուրիշ միջոցներ չկան։

— Այդ մասին դիսկուսիա սարքելու կարիք չկա։ Քմեարկեցինք հո։

Այդ ժամանակ Կորչինսկին իր ուռած կոպերի առակից զայրույթով լի մի հայացք դցեց Մակարի վրա և արդեն ակնհայտ թշնամանքով ասաց։

— Հաբցը փակված ե, Նազուլնովի։ Բյուրոյի վորոշամբ դու վտարված ես մեր շարքերից։ Զեզ նման-

ները կուսակցությանը հարկավոր չեն։ Դի՛ք այստեղ
կուստոմսը, — և շեկ մազերով ծածկված իր թաթով
բաղխեց սեղանը։

Նադուլնովը մեռելի դույն ստացավ։ Ուժդին դողը
ցնցեց նրան, իսկ ձայնը համարյա չեր լսվում, յերբ
նա սկսեց խոսել.

— Կուստոմսը յես չե՛մ տա։

— Կհարկադրենք տալ։

— Գնա ոկրուգային կոմիտե, Նադուլնով, — ան-
կյունից դոչեց Բալաբինը և շրջդործկոմի նախագա-
հի հետ սկսած իր զրույցը կիսատ թողնելով՝ դուրս
յեկավ, ամուր շրմիկացնելով դուռը։

— Կուստոմսը յես քեզ չե՛մ տա, — ասաց Մա-
կարը։ Նրա ձայնն ուժեղացավ, ճակատից ու վոսկ-
րոտ այտերից դանդաղորեն չքացավ կապտավոյն
դունատությունը։ — Յեվ կուսակցությանը յես դեռ
պետք կդամ... Յեվ յես առանց կուսակցության ապ-
րել չեմ կարող։ Իսկ քեզ չեմ յենթարկվում... Այ,
եստեղ ե տոմսը, ծոցագրպանումս... վորձիր մի
վերցնել։ Կոկորդդ կպատռեմ։

— Վողբերգական գործողությունն սկսվում ե, —
ուսերը թոթվեց դատախաղը։ — Դու ավելի լավ ե՝
առանց հիստերիկայի... .

Առանց նրա խոսքին ուշագրությունն դարձնելու
Մակարը նայում եր Կարչինսկուն, խոսում եր դան-
դաղ, կարծես ինքն իրեն.

— Ախր յես ո՞ւր գնամ առանց կուսակցության։
Յեվ ինչո՞ւ։ Զե՛, կուստոմսը յես չեմ տա։ Յես իմ
ամբողջ կյանքն եմ դրել.. ամբողջ կյանքը... — և

հանկարծ ինչպես մի անզոր ծերումի, անհասկանալի արագությամբ ձեռքը քսեց սեղանին ու բառերը խառնելով շտասլ ու անհասկանալի մըմնջաց — Են ժամանակ ավելի լավ ե դու ինձ... հրամայիր աղերանցը... Են ժամանակ ինձ պետք ե փշբել: Վոչինչ չեմնում... Այժմ ինձ կյանք ել պետք չե, կյանքից ել զրկեցեք...

Դաստիարակություն

Մակարի դեմքն անշարժ եր դիպախ դիմակի պես, միայն շրթունքներն եյին դողդողում ու շարժվում, սակայն վերջին խոսքերն ասելիս նրա սառած աչքերից իր յերկարամյա կյանքում առաջին անգամ հոսեցին արցունքի շիթերը: Նրանք հոսեցին առատորեն թրջելով այտերը և կանդ առնելով խիտ բուած ու վաղուց չսափրված մորուքի վրա, ու պօտերով նախշելով վերնաշապկի կուրծքը:

— Բավական ե: Դրանով հործին չես ոգնի, ընկեր, — ցալակցելով մոայլվեց քարտուղարը:

— Յես իմ արդարությունը կհաստատեմ, կենտկոմ կղնամ:

— Այ, այ, զնա՛: Այնտեղ ամեն ինչ մի բռակեյում կլուծեն: Քեզ վաղուց են սպասում այնտեղ... — Ժակտալով վրա բերեց Խոմուտովը:

Մակարը դանդաղ մոտեցավ դռանը, ճակատը խփեց դռան շրջանակին, տնքաց:

Զայրույթի վերջին պոռթկումը նրան վերջնականապես ուժասպառ եր արել: Անզգա, առանց վորեերան մտածելու նա մոտեցավ դարբասին, արձակեց ցանկալատին կապրված իր ձին, չգիտես ինչու՝ սկսեց քաշել իր հետեւից: Գյուղից դուրս գտվու ուղեց հեծքաշել.

նել, բայց չկարողացավ. չորս անգամ վոտը դցեց
ասպանդակին, բայց հարբածի պես որորվելով՝ պոկ-
վեց թամբից :

Ամենածայրի խրճիթի մոտ հողաթմբի վրա նըս-
տած եր մի կայտառ ծերունի : Իր կազմակային գլխաբ-
կի պոկված հովհարի տակից նա ուշի ուշավ դիտում
եր, թե ինչպես Մակարը ճիղ ե անում հեծնել ձին,
տպա խրախուսական ժպիտով խոսեց .

— Լա՛վ պտուղ ես : Արել գեռ նոր ե բարձրացել,
իսկ նա արդեն վոտքերը բարձրացնել չի կարողանում :
Եղ ի՞նչ պատճառով ես վաղ առավոտից եղքան խմել :
Տոն հո չի՞ եսոր :

—Տոն ե, Թյողոր պապի, ձայն տվեց նրա հարեա-
նը, վոր նայում եր ցանկապատի հետեւից :— Եսոր
անբան-Սիմոնի տոնն ե, դինետները շրջելու որ ե :

— Ախր տեսնում եմ յես ել . . . — Ժպտաց ծերու-
նին :— Նշանակում ե դինուց ավելի կտրիճը չկա : Տե՛ս
մի թե դինին վոնց ե նրան ցած դլորում թամբից :
Պինդ կաց, կաղա՛կ :

Մակարն ատամները կրծտացրեց և կոչիկի ծայրը
հաղիվ ասպանդակին դնելով՝ թռչունի պես թամբի
վրա թռավ :

ԳԼՈՒԽ ՀՀԻԿ

Այդ որն առավոտյան Յարսկից զյուղից կոլտնտեսային քսանյերեք ձիասայլ յեկան Գրեմյաչի Լոգ։ Հողմաղացի մոտ նրանց հանդիպեց Բաննիկը։ Պարաննուսը դցած՝ նա գնում եր տափաստան, իր ձին փրնուրելու։ Առաջին ձիասայլը հավասարվեց նրան։

— Բարի որ, քաղաքացի կաղակներ, վո՞նց եք։

— Փառք աստծու, — պատասխանեց սեամորուք կազակը, վար վարում եր կարճապոչ ձիերը։

— Ես վորտեղի՞ սայլերն են։

— Յարսկիից։

— Ես ի՞նչ ե, ձեր ձիերը պո՞չ չունեն։ Ինչի յեք գուք՝ նրանց այլանդակել։

— Հը՞-ո՞-ո՞-ո՞, կա՛ց։ Լա՛մն ե սատանան. պոչն ել կտրեցինք, իսկ նա ելի ցատկրտում ե . . . ինչու պոչ չունե՞ն, ասում ես։ Կորել ենք պետությանը տալու համար։ Քաղաքի կանայք պոչերով ճանճ պիտի քշեն . . . Ծխելու բան չե՞ս ունենա, լավ մարդ։ Հյուրասիրիր մեղ, թե չե մենք ծխախոտի կողմից շատ աղքատ ենք։

Կազակը ցած ցատկեց սայլակից։ Հետեւ սայլերն ել կանդ առան։ Բաննիկը խիստ ափսոսաց, վոր խոս-

քի բռնվեց : Նա դժկամությամբ հանեց քիսան , յերբ տեսալ , թե ինչպես հինգ հոգի սայլերից դեպի իրեն են մոտենում , ճանապարհին լրագրի թուղթը կտրատելով ծխախոտ փաթաթելու համար :

— Հիմի քիսան կդարդակեք . . . — դոչեց առանց այն ել ժլատ Բաննիկը :

— Հիմի կոլեկտիվ ե գիտե՞ս : Ամեն բան ընդհանուր պիտի լինի , — խստությամբ ասաց մորուքավորն ու վոնց վոր իր քիսայից՝ դուրս քաշեց Աքը պըտղումց ծխախոտ :

— Եղ ո՞ւր եք գնում դուք :

— Գրեմյաչի :

— Մեղ մոտ ուրեմն : Իսկ ի՞նչ դործով :

— Սերմացույի :

— Եղ . . . այսինքն ինչպե՞ս :

— Շրջանից հրամայել են ձեզանից սերմացու վերցնել , չորս հարյուր յերեսուն վութ : Նո՞ւ-ո՞ւ , հայդա՞ . . .

— Ասոր յես եղակես ել գիտեյի՞ . . . — բացականչեց Բաննիկը : Պարանը թափահարելով նա վազեց դեպի գյուղ :

Յարսկիի սայլերը դեռ կոլտնտեսության վարչության գրասենյակը չեյին հասել , բայց արդեն դյուզի կեսը գիտեր , վոր յարսկեցիք յեկել են սերմացուն տանելու : Բաննիկը չեր ինայել իր վոտքերը տնից տուն վազելիս :

Սկզբում կանայք հավաքվեցին փողոցներում , ճվճվացին , աղմկեցին վախեցած կաքավի խմբերի պես :

- Տանում են մեր հացը, ձե՛ղ մատա՛ղ . . .
— Ել մենք ի՞նչ պիտի ցանենք:
— Վա՛յ իմ խեղճ գլուխ . . .
— Ասում եյին ալսր խեղը դիմին մարդիկ, թէ
հարկավոր չե սերմացուն հավաքել համայնական ամ-
բարում . . .
— Թե վոր կազակները մեղ լսելի՞ն . . .
— Գնանք, ասենք կազակներին, վոր հացը չը-
տան:

— Հենց մենք ինքներս ել չենք տա: Գնանք, կնա-
նիք, գնանք ամբարները: Յեղանները վերցնենք ու
շմողնենք, վոր կողպէքներին մոտենան:

Հետո յերեացին կազակները: Նրանց միջև եռ
նույնողիսի խոսակցություններ յեղան: Փողոցից փո-
ղոց անցնելով՝ մի ահազին բաղմություն հավաքվեց
ու շարժվեց դեպի շտեմարանները:

Մինչ այդ Դավիթովը կարդաց յարսկեցիների բե-
րած պաշտոնական թուղթը, վոր դրել եր շրջանային
դաշտավարական միության նախագահը:

«Ընկեր Դավիթով, — դրում եր լուղետովը, — քեզ
մոտ հացամթերումից մնացած կա 73 փութ ցորեն:
Առաջարկում եմ այդ ցորենը (ամբողջ 73 ցենաները)
Հանձնել Յարսկիի կուտասությանը: Նրանց սերմա-
ցուն պակասում ե: Սոյուզիկերի դրասենյակի հետ յետ
ինդիրը համաձայնեցրել եմ»:

Դավիթովը դրությունը կարդաց և կարդադրեց
ցորենը հանձնել: Յարսկեցիները վարչության բակից
դնացին դեպի շտեմարանները, սակայն շտեմարան-
ների մոտ փողոցում ահազին բաղմություն եր հավաք-

վել: Մոտ յերկու հարյուր կին ու կաղակներ շրջապատեցին սայլերը:

— Ո՞ւր եք գնում:

— Մեր հացը տանելու, դժուք վորտեղից բուռաք:

— Հետ դարձե՞ք:

— Զե՞նք տա:

Դյումիա Ռւշակովը նետվեց դեպի Դավիթովը, վորը վազում եր դեպի շտեմարանները:

— Ի՞նչ ե պատահել, քաղաքացիներ, ինչո՞ւ յեք հավաքվել:

— Դու մեր հացն ինչո՞ւ յես տալիս յարակեցիներին: Մենք նրանց համա՞ր ենք հավաքել:

— Քեզ ո՞վ ե եղ իրավունքը տվել, Դավիդով:

— Իսկ մենք ի՞նչ պիտի ցանենք:

Դավիթովը բարձրացավ մոտակա շտեմարանի սանդուխքին և հանդիսա բացատրեց, վոր շրջանային դաշտավարական միության կարգադրությամբ ինքը հանձնում է վոչ թե սերմացուն, այլ հացամթերումից մնացած ցորենը:

— Դուք, քաղաքացիներ, մի՞ք անհանդատանա, մեր հացն անշարժ կմնա: Իսկ դուք, վիսխանակ անգործ նստելու և արեածաղկի սեղմ չըթելու, ավելի լավ ե դաշտ գնաք: Նկատի ունեցեք, վոր բրիդադիրները հաշիվ են պահում, թե ով չի դաշտ դուրս յեկել: Ով չգնա՝ կտուզանվի:

Կաղակների մի մասը միողոցը թողեց: Շատերը, Դավիթովի հայտարարությունից հանդստացած՝ դաշտ

դնացին : Պահեստապետն սկսեց ցորենը բաց թողնել
յարակեցիներին , Դավիդովը գնաց վարչություն : Սա-
կայն կես ժամ հետո դեռևս շտեմարանների մոտ հա-
վաքված կանանց տրամադրության մեջ ուժեղ փոփո-
խություն յեղալ : Յակով Լուկիչը նալաստեց դրան մի
քանի կազակի ականջին փափառլով .

— Փչում և Դավիդովը , սերմացուն են տանում :
Կոլտնտեսությունը կցանի , իսկ ի՞նչ վոր մենատնտես-
ներն են տվել , ուղարկում են Յարսկիի կոլտնտեսու-
թյանը :

Կանայք ալեկոծվեցին : Բաննիկը , Դեմիդ Մուչու-
նը , Դոնեցկով պապը և ելի մի յերեսուն կազակ իրար
հետ խորհուրդ անելով մոտեցան կշեռքին :

— Զենք տալիս հացը , — բալոֆի անունից հայտա-
բարեց Դոնեցկովը :

— Քեզ հարցնող չկա , — բարկացավ Դյոմկա Ռւ-
շակովը :

Նրանց միջև վեճ սկսվեց : Յարսկեցիք Դյոմկայի
կողմն անցան : Նույն այն սևամորուք կազակը , վորին
ճանապարհին Բաննիկը ծխախոտ տվեց , կանդնել եր
սայլի վրա հասակովը մեկ և մի հինգ քոռեկ կատաղի
հայհոյանքներ եր թափում , իսկ հետո ել սկսեց դո-
ռալ :

— Դուք եղ ի՞նչ ե , իշխանությա՞նն եք հակա-
ռակում : Ի՞նչ եք մեր գլուխը տանում : Մենք աշխա-
տանքի ես յեռուն շրջանում քառասուն վերստ ճանա-
պարհ ենք յեկել , իսկ դուք պետական հա՞ցն եք պա-
հում : Աիստ եք կարոտել Պետքաղվարչությանը . ձեզ
հարկավոր ե Սոլովէիում նստեցնել : Շան պես նստել

Եք խոտի դեղի վրա ու վոչ ինքներդ եք ուտում, վոչ
ուրիշներին եք մոտ թողնում: Ինչի՞ չեք դաշտ գնում:
Տո՞ն և ձեղ համար, ի՞նչ և:

— Իսկ քո ի՞նչ գործն ե: Մորուքդ քո՞ր և զալիս,
ի՞նչ ե: Կըորենք, — գոռում եր Բեսխլեբնով Ակլոմ
Կրտսերը թեվերը քշտելով ու մոտենալով սայլին:

Յարսկեցի մորուքավոր կազակը սայլակից ցած
ցատկեց: Նա իր դարչնագույն գունաթափակած վերնա-
շապկի թեւերը քշտեց, սակայն Ակիմ Կրտսերին հան-
դիպեց այնպիսի մի ուժեղ ու ճարպիկ ապտակով, վոր
Ակիմը մի յերկու սաժեն հետ-հետ ընկալ, հողմաղացի
թեւերի պես իր թեւերը թափահարելով ընկալ բազմու-
թյան մեջ:

Սկսվեց մի այնպիսի տուր ու դմիւց, վորպիսին
վաղուց ի վեր Գրեմյաչի Լոգը չեր տեսել: Յարսկե-
ցիներին մի լավ դնքսեցին և նրանք արյունաշղախ՝
թողին ցորենով լի պարկերը, լցվեցին սայլերի մեջ,
ժարակեցին ձիերին, ճեղքեցին ճղճղացող կանանց
բազմությունն ու փախան:

Հենց այդ բոպեյից ել հուղմունքի ալիքը տարած-
վեց ամբողջ Գրեմյաչի Լոգում: Ուղում եյին Դյոմկո
Ռւշակովից խլել հացի շտեմարանների բանալին, սա-
կայն շրջահայաց Դյոմկան հենց կուլի ժամանակ
ծլիվել եր բազմության միջից ու վազել կոլլարչու-
թյան դրասենյակը:

— Վորտե՞ղ պահեմ բանալիները, ընկեր Դավի-
դովը, մերոնք յարակեցիներին ծեծում: Ին և ինչպես
յերեւում ե, հենց հիմի մեղ ել կհասնեն:

— Տուր ինձ բանալիները, — հանդիսաւ առաջ Դաւ-
իլիդովը:

Նա բանալիները վերցրեց, գրպանը դրեց ու գնաց
շտեմարանների մատ: Իսկ այդ ժամանակ կանայք ար-
դեն Անդրեյ Ռազմյոտնովին դուրս ելին քաշել դյուդ-
խորհրդից ու կատաղած դոռում ելին.

— Բա՛ց արա միտինդը:

— Տատիկնե՛ր, մորաքուրնե՛ր, մայրիկնե՛ր, իմ
անուշիկնե՛ր, հիմա միտինդներ չկա՞ն, ցանել ե հար-
կավոր, վոչ թե միտինդախաղ անել, — փորձեց կա-
նանց բան հասկացնել Ռազմյոտնովը:

Սակայն նրանք նրան չելին լսում. անդրավար-
տիկից, թևքերից, փեշերից բռնած քաշքշելով դպրոց
տարան մոայլված Անդրեյին՝ գոռալով.

— Բաց արա միտինդը, թե չե մենք ինքներս կը-
բանանք:

— Փչում ես, թե չի կարելի. դունախաղահ ես,
քեզ կարելի յե:

Անդրեյը հետ եր հրում կանանց, ականջները վիա-
կում և աշխատում եր նրանցից ավելի բարձր դո-
ռալ.

— Լոեցե՛ք, դեե՛ր, հետ քաշվեցեք մի քիչ, ձեր
ինչի՞ն ե պետք միտինդը:

— Հացի՛, հացի մասին սկսուի խոսենք ձեղ հետ:
Վերջի վերջո Ռազմյոտնովը ստիպված յեղալ ա-
սել.

— Ժողովը հայտարարում եմ բացված:

— Մի խոսք տուր ինձ, — պահանջեց այրի Յեկա-
տերինա Գուլյաշչայան:

— Դե խոսիր, սատանա՞ :

— Դու, նախաղահ, ուրիշին սատանա մի անվանի, թե չե յես ել քեզ կհայհոյեմ... Դուք ի՞նչ իրավունքով եք թույլ տվել մեր հացը ցրիվ տալ: Եղ ո՞վ ե կարդադրել հացը յարսկեցիներին տալ և ինչի՞ համար :

Գույշաշայան ձեռները կողին դրած մի քիչ առաջ կուացավ՝ սպասելով պատասխանի :

Անդրեյը ձեռքը թափ տվեց նրա վրա, վոնց վոր ձանձրացնող ճանձի վրա :

— Ընկեր Դավիթովը հեղինակալոր կերպով բացատրել ե ձեզ: Յեզ յես ժողովն եղ հիմարությունների համար չեմ բաց արել, այլ նրա համար...— Անդրեյը հառաչեց, — վոր, սիրելի քաղաքացիներ, հարկավոր ե մեր բոլոր ուժերով դուրս գալ դաշտամկների դեմ:

Անդրեյի մանյովը չհաջողվեց:

— Ի՞նչ մուկ:

— Մկների ժամանակը չի:

— Հացը հետ տվեք:

— Խորամանկ, դրողի տարած, խոսքը մկան վրա յես շուռ տալիս, իսկ հացի մասին ով սկսուի խոսի:

— Դրա մասին խոսելու բան չկա:

— Հա՛-ա՛, չկա, հա՞: Հետ տվեք հացը:

Կանայք Գույշաշայայի դլխավորությամբ սկսեցին մոտենալ բեմին: Անդրեյը կանգնած եր հուշարդի թիթեղյա բուղկայի մատ: Նա ժպիտով եր նայում կանանց, սակայն հոգու խորքում վորոշ տաղնապ

եր զգում. խիստ խոժոռ տեսք ունեյին կազակները, վարոնք հավաքվել եյին սպիտակ լաշակավոր կանանց բաղմության հետեւ:

— Դու ամառ—ձմեռ սապոդմերով ես ման գալիս, իսկ մենք տրեխի փող ել չունենք:

— Կոմիսար ես դարձել:

— Տողե՞լ ես...

— Տլլորացրեք դրան, կնանի՛ք...

Դղրդացին բացականչություններն անկանոն համաղարկի պես: Մի քանի տասնյակ կին հավաքվեցին ուղիղ բեմի մոտ: Ի զուր եր Անդրեյը փորձում լոեցնել. նրա ձայնը չեր լսվում աղմուկի մեջ:

— Քաշեցե՞ք նրա սապոդը, կնանի՛ք, ապա մեանդամի՛ց:

Վայրկենապես բազմաթիվ ձեռքեր մեկնվեցին դեպի բեմը: Բոնեցին Անդրեյի ձախ վոտքը: Նա կպավ բուդկայից, դունատվեց զայրույթից, սակայն սապոդն արդեն հանել եյին վոտքից ու դցել հետեւ, ինչ վոր մի տեղ: Բազմաթիվ ձեռքեր խլեցին այդ սապոդը, նետեցին հեռու, տարածվեց մի չարախինդ ծիծաղ: Հեռվից, հետեւ շարքերից տղամարդկանց խրախուսական ձայն եյին լսվում:

— Մերկացրեք նրան:

— Թող առանց դալիֆի մնա:

— Մյուսն ել քաշեցե՞ք:

— Գոքի անցեք, կնանիք, գլորեցեք դրան:

Անդրեյի մյուս սապոդն ել հանեցին: Նա վոտքերի փաթաթանները թափ տվեց ու դռչեց.

— Փաթաթաններն ե՞լ են հարկավոր։ Գուցե մեկը ջնջոց կշինի։

Շտապով բեմին մոտեցան մի քանի յերիտասարդ։ Նրանցից մեկը— մենատնտես Յեֆիմ Տուբաչովը, հաստալուշ մի տղա, ինքն ատամանի վորդի, մոտ մի սաժեն հաստկով— կանանց դես ու դեն հըելով բեմ բարձրացավ։

— Մեզ քո փաթաթանները պետք չեն,— խոսեց նա ժպտալով ու ծանր շնչելով,— բայց այ, նախագահ, քո շալվարը մենք կհանենք։

— Շալվարը մեզ չափաղանց հարկավոր ե։ Զքավորությունն անշալվար ե շրջում, իսկ կուլակներինը չքավականացավ, — կցկտուր խոսեց մի ուրիշը, ավելի յերիտասարդ ու փոքրահասակ, ավելի սպառնալից ու հաղթ տեսքով մի տղա, Դիմոկ անունով։

— Շալվարը տո՞ւր . . . — Դիմոկն ուժգին հառաչեց . . . Ապա՛, հանի՛ր։

Բեմը լցվեց կանանցով։ Բաղմակուու ամբոխը կըս-կին շրջապատեց Անդրեյին, տաք շնչելով նրա դեմքին, ծոծրակին, շրջափակելով նրան ամուր ողակով։

— Յես նախաղահ եմ, — գոչեց Ռազմյոտնովը, — ինձ ծաղրել, նշանակում ե խորհրդային իշխանությանը ծաղրել։ Հեռացե՛ք։ Յես ձեմ թողնի հացը վերցնել։ Ժողովը հայտարարում եմ փա՛-ա՛կ-վա՛ծ։

— Ինքներս կվերցնենք։

— Հա՛, հա՛, հա՛ . . . Փակե՛ց . . .

— Կըացեն՛ք։

— Գնանք Դավիդովի մոտ, նրան ել թափ
առանք:

- Ապա, դեպի վարչություն...
- Ռազմյոտնովին պետք է բռնել:
- Եփեք նրան, տղե՛րք...
- Ել ի՞նչ եք սպասում:
- Նստեցնե՛լ նրան:

Կանանցից մեկը նախաղահության սեղանից քառակեց կարմիր սատինե ծածկոցը, հետևի կողմից մոտեցավ Ռազմյոտնովին ու վաթաթեց նրա գլխին: Յեզմինչդեռ Ռազմյոտնովը ճգնում եր պոկել իր գլխի թանաքի ու վորշու հոտ բուրող ծածկոցը, Դիմոկն առանց ձեռքը հետ տանելու մի հարված իջեցրեց նրա արտին:

Դավիդովը, լսելով շտեմարանների մոտից յեկող միահամուռ ու ահոելի վոռնոցը, ակամա դանդաղեցրեց իր քայլերը: «Ա' -ա' -յ -ա' -յ» բարձր հնչում եր կանացի մի սուր ճիչ, տղամարդկանց բամբ ճայնի ընդհանուր աղմուկի մեջ:

«Հարկավոր ե մարդ ուղարկել յերկրորդ բրիդագրի հետեւից, թե չե ցրիվ կտան հացը», մտածեց Դավիդովը: Նա վորշեց վերադառնալ վարչություն, վարպեսզի վորեւե տեղ թաղցնի շտեմարանների բանավիները:

Շտապով նրան մոտեցավ Մայդաննիկովը: Դեռ հեռվից նա ճոճում եր մտրակն ու գոռում.

— Ժողովուրդն Անդրեյ Ռազմյոտնովին ձերբակալեց: Նստեցրել են նրան ներքնատանը ու հիմի գրնում են դեպի շտեմարանները: Չու թաղնվիր, ընկեր

Դավիթով, թե չե վաս բան դուրս կղա... Ժողովուր-
դըն ուղղակի դազազել ե:

— Յես չեմ թագնվի, դժվե՞լ ես, ինչ ե: Առ բա-
նալիներն ու վազիր բրիգադի մոտ: Լյուբիշկինին ա-
սա, վոր մի տասնհինգ մարդ ձի նստեցնի ու անմի-
ջապես այստեղ հասնի: Տեսնո՞ւմ ես, եստեղ, մեզ
մոտ... զալմազալ ե սկսվում: Մի ձի արձակիր, նըս-
տիր ու հասի՛ր:

— Եդ հենց իսկույն կանեմ:— Մայդաննիկովը
բանալին դրապանը կոխեց ու նեղ փողոցով վազեց:

Դավիթովն առանց շտապելու մոտեցավ շոեմա-
րաններին: Ամբոխը մի քիչ հանդարտովեց, սպասելով
նրան: «Գալիս ե դեռ», բարձր ճշաց մի ինչ վոր կին,
ցույց տալով Դավիթովին: Սակայն նա չեր շտապում-
բոլորի աչքի առաջ կանդ առավ ծխախոտ վառելու,
մեջքը շուռ տվեց քամու կողմը, լուցկին վառեց:

— Արի, արի՛, ծխելու ժամանակ կղտնես:

— Են մյուս աշխարհում կծխես:

— Բանալիները բերում ե՞ս թե չե:

— Բերում ե յերեկի: Կատուն իմանում ե, թե ում
միսն ե կերել:

Ծուխը փստացնելով ու ձեռքերը գրապանը կոխե-
լով Դավիթովը մոտեցավ առաջին շարքերին: Տեղացինե-
րացականչությունները, ինչպես թիթեղյա տանիքին
թափվող կարկուտ.

— Տո՞ւր բանալիները:

— Ցըիր կոլտնտեսությունը:

— Զքիլիր եստեղից ո՞վ ե քեղ կանչել...

— Հետ տուր սերմացուն:

— Ինչո՞ւ մեղ չես թողնում ցանել:

— Դուք, ես ի՞նչ ե, քաղաքացիներ, — հանդարտ ակսեց Դավիդովը, — դադարե՞լ եք խորհրդային իշխանության կարգադրություններին յենթարկվել: Եղ ինչո՞ւ յարակեցիներին չեք թողել հացը տաճեն: Իսկ դուք չեք մտածում, վոր դրա համար դուք դատական պատասխանատվության կենթարկվեք, վորպես դարձանացանի կամպանիան տապալողներ: Փաստ ե, վոր կենթարկվեք: Խորհրդային իշխանությունը ձեզ չի ների այդ բանը:

— Քո խորհրդային իշխանությունը հիմի բանտարկված ե մեզ մոտ: Նստա՛ծ ե անուշիկը նկուղում, — պատասխանեց մենատնտես Միքոն Դոբրոցեկը, մի ցածրահասակ, կաղ կազակ, ակնարկելով մազմյոտնովի ձերբակալությունը:

Ինչ վոր մեկը ծիծաղեց, իսկ Բաննիկն առաջ յեկալ ու ցասումով դռչեց.

— Խորհրդային իշխանությունն ենակես չի անում, ինչպես դուք եք անում եստեղ: Մենք չենք յենթարկվում ենպիսի խորհրդային իշխանությանը, վոր դուք ու Մակար Նազունովն եք հնարել: Եղ որե՞նք ե, վոր կյուղացիներին չեք թողնում ցանք անել: Եղ ինչի՞նման ե: Եղ կուսակցության աղավաղում ե:

— Քե՞զ չենք թողնում ցանք անել:

— Ապա ի՞նչ, թողնո՞ւմ եք:

— Դու սերմացու հանձնե՞լ ես համայնական շտեմարանին:

— Հանձնե՞լ եմ:

— Հետ ստացե՞լ ես:

— Ստացել եմ, հետո ի՞նչ:

— Ապա ել ո՞վ չի թողնում քեզ ցանք անել: Ել ինչո՞ւ յես շտեմարանների մոտ պտույտ դալիս:

Խոսքի այս անսպասելի ընթացքից Բաննիկը մի քիչ շփոթվեց, սակայն խակույն և յիթ փորձեց դուրս պրծնել.

— Իմ սիրուն ինձ համար չի ցավում, այլ ժողովրդի համար, վորոնք դուրս են յեկել կոլտնտեսությունից ու դուք սերմացուն ու դույքը հետ չեք տալիս: Այ թե ինչ: Յեվ հենց ինձ ել ի՞նչ հող եք տվել: Ինչո՞ւ յեք հեռու հողերից տվել:

— Հեռացիր այստեղից, — չհամբերեց Դավիդովը: — Քեզ հետ մենք հետո կխոսենք, փաստ ե: Իսկ կոլտնտեսության գործերի մեջ քիթդ մի՛ կոխիր, թե չե մենք կտրուենք քո քիթը: Դու ժողովրդին գրդռե՞ր ես փորձում: Հեռացի՛ր, ասում են քեզ:

Բաննիկը սպառնալիքներ մըթմբթալով հետ քաշվեց, բայց կանայք միահամուռ կերպով առաջ յեկան նրան փոխարինելու: Նըանք բոլորը միաձայն աղաղակեցին, Դավիդովին թույլ չտալով գեթ մի խոսք ասել: Նա աշխատում եր ժամանակ շահել, վլորակեազիր լյուրիշկինն իր բրիգադով վրա հասնի, սակայն կանայք շրջապատեցին նրան և կազակների լոռությունից քաջալերված խլացուցիչ կերպով գոռացին.

— Տո՛ւր բանալիները: Խաթրով ենք ասում, Առողջում ես:

Կանանցից մեկը կախվեց Դավիդովի մեջքին, ձեռքը կոխեց նրա անդրավարտիկի դրականը:

Դավիդովն ուժեղ հրեց նրան: Կինը հետ-հետ

դնաց, մեջքի վրա ընկավ և ձեւացնելով՝ աղաղակ կեց.

— Ո՛, սպանեց, սպանեց, ձեզ մատա՛ղ, աղատեցեք ի՞նձ:

— Ե՛ս ինչ ե, — դողացող ձայնով գոչեց մեկը ամբոխի հետեւի շաբքերից: — Տուր ու դմկո՞ց ե սկսում ուրեմն: Ապա մի ենակես հասցըեք դրան, վորաբյունը շռուա դրա քթից:

Դավիդովն ուղեց մի քայլ անի, վոր վայր ընկած կնոջը բարձրացնի, սակայն կեսին դցեցին նրա դլիսից և ձեռքերը բռնելով՝ մի քանի հարված հասցըին նրա դեմքին ու մեջքին: Նա թափ տվեց իր դլիսին հավաքպած կանանց, սակայն նրանք կրկին աղաղակով վրա թափեցին, սպատոեցին վերնաշապկի ոճիքը և մի քանի վայրկյանում խուզարկելով՝ շուռ տվին նրա դրպանները:

— Բանալիները չկա՞ն:

— Վարտե՞ղ են բանալիները:

— Տո՞ւր, մեկ ե, կողպեքները կջարդենք:

— Շտեմարանների բանալիներն ինձ մոտ չեն, քաղաքացիներ: Բանալիները պահվում են... — 'Դավիդովը լոեց. նա ուղուժ եր ատել, վոր բանալիներն ինդու չի պահում, բայց անմիջապես մտածեց, վոր յեթե ինքը հրաժարվի, ամբոխը կվաղի Դյումկա Ռւշակովին վնտրելու, հավանորեն կդանի և այն ժամանակ բանը վատ կլինի, կսպանեն նրան: Նա լոեց, չանգուած դեմքի արյունը թեքով սրբելով ասաց.

— Բանալիներն իմ տանն են պահվում, բայց յես չեմ տա ձեզ, իսկ կողպեքները կոտրելու համար դուք

իսկաւ պատասխանառության կենթարկվեք։ Այդպես
եւ իմացեք, փա՛ստ եւ։

— Դու առաջ ընկի՛ր։ Մենք ինքներս կվերցնենք
բանալիները, — վրա տվեց Միշկա Իգնատենկոյի մայ-
լը։

Հուզմունքից դողում եյին նրա կնճռոտ այտերն
ու քթի ծայրի խոշոր դորտնուկը։ Նրա կնճռոտ յերե-
սով քրտինք եր հոսում։ Նա առաջինը հրեց Դավիդո-
վին և վերջինս հոժարությամբ, բայց դանդաղ քայլել
սկսեց դեպի իր բնակարանը։

— Բայց ենտե՞ղ են բանալիները։ Գուցե թե դու
մոռացե՞լ ես, — հարցրեց Ավղոտիան։ Բաննիկի կե-
նը։

— Այստեղ ե, այստեղ ե, մորքուր, — հավատաց-
նում եր Դավիդովը, գլուխը կախելով և ժպիտը
թաղցնելով։

Չորս կին բռնել եյին նրա ձեռքերը, հինգերորդը
մի մեծ մահակ ձեռքին դնում եր հետեւից, աջ կողմից
ամբողջ մարմնով ցնցվելով, խոշոր, տղամարդու քայ-
լերով դնում եր պառավ Իգնատենկովան, իսկ ձախ
կողմից խմբերի բաժանված քայլում եյին ուրիշ կա-
նայք։ Կազակները մնացին շտեմարանների մոտ՝ ըս-
պասելով բանալիներին։

— Ձեռքերս թողեք, մորաքուրներ։ Յես չեմ
փախչի, — խնդրեց Դավիդովը։

— Ով գիտի քեզ, ապա թե հանկարծ փախ-
չես։

— Դե չե, ասում եմ։

— Արի մեղ հետ . եսպես ավելի ապահով կլինենք :

Հասան Դավիթովի տուն , ճյուղերից գործած դռնակը ցած գցելով բակը լցվեցին :

Դավիթովի մտավ իր սենյակը և իմանալով , վոր իրեն ուշադիր հետեւում են , ձևացրեց , թե խնամքով վորոնում ե : Նա պայուսակի մեջ ու սեղանի վրա ամեն ինչ տակն ու վրա արեց , թափ տվեց բոլոր թըղթերը , մտավ թախտի ու ծուռ վոտքերով սեղանի տակ ...

— Զկան բանալիները , — Հայտարարեց նա սահդուխքների գլուխը դուրս դալով :

— Հապա վորտեղ են :

— Յերեկի Նազուլնովի մոտ են :

— Բայց նա դնացել ե ախր ...

— Ինչ անենք դնացել ե : Ինքը դնացել ե , իսկ բանալիները կարող ե թողած լինել : Յեվ Հավանաբար թողել ե : Եսոր մենք հաց պիտի բաց թողնեյինք յերկրորդ բրիդադին :

Նրան տարան Նազուլնովի բնակարանը : Ճանապարհին սկսեցին ծեծել : Սկզբում միայն կամաց հըրմը ըշտում ու հայնոյում եյին , իսկ հետո կատաղելով , վոր նա շարունակ ծիծաղում ու կատակում ե , սկսեցին արդեն ծեծել ինչպես պետք ե :

Անխնա հարվածում եյին նրա կռացրած լայն ու վողորկ մեջքին , սակայն նա միայն քրքջում եր , ուսերը թոթվում և չնայած ցավին՝ ելի փորձում եր կատակի տալ .

— Տատիկ , քո մեսնելու ժամանակը հասել ե ար-

դեմ, իսկ դու դեռ կովում ես : Արի յես քեզ դոնեւ մի
անդամ խփեմ, հա՞ :

— Անդամ կուռք, քարի կտոր, — Համարյա ար-
շունքն աչքերին դոչեց ջահել Նաստենկա Դոնեցկովան,
զոր իր փոքրիկ, բայց ամուր բունցքներով թիթըս-
կացնում եր Դավիդովի մեջքին :—Զեռքերս փշովեցին
նրան խփելով, իսկ նա, կարծես վոչինչ :

— Փայտերով չխփել, — միայն մեկ անդամ սեղ-
մած ատամների միջից խստորեն մրմնջաց Դավիդովը
և կանանցից մեկի ձեռքից մի չոր փայտ խլելով՝ դեմ
տվեց ծնկին ու կոտրեց :

Արյունոտվելու չափ քաշքչեցին նրա ականջները .
ոլատուեցին շրթունքներն ու քիթը, սակայն նա դեռևս
ժպտում եր իր ուռած շրթունքներով, ցույց տալով
իր առջեսի ատամներից մեկի պակասը, անշտապ ու
թույլ կերպով հետ եր հրում առանձնապես կատաղո-
րեն հարձակվող կանանց :

Լյուբիշկինն իր ձիավորներով դեռևս չեք յերե-
վում : Մոտեցան Նազուլնովի բնակարանին : Այս ան-
դամ Դավիդովի հետ միասին կանայք ել սենյակ մը-
տան : Նրանք ամբողջապես փորսիրեցին, դես ու դեն
զցեցին թղթերը, գրքերը, սպիտակեղենը, նույնիսկ
տանտիրոջ մոտ վորոնեցին բանալին : Սակայն, ի հար-
կե, չդտան և Դավիդովին հրեցին դուրս, սանդուխք-
ների գլուխը :

— Ո՞ւր են բանալիները, կսպանենք :

— Ա՛խ, քաղաքացուհիներ, — Դավիդովը մատ-
նեքով շոշափեց իր խիստ ուռած քիթը, մեղմ ժըպ-
տաց — Քաղաքացուհիներ, բոլորովին ի զուր եք դուք

ինձ ծեծել... բանալիները վարչությունումն են, իմ սեղանի դարակում, փաստ ե: Հիմա յես լով եմ հիշում:

— Դու ի՞նչ ե, ձեռ ես առել մեղ,— ծղրտաց շտեմարանների մոտից հենց նոր այդտեղ հասած Յեկատերինա Գուլյաշչայան:

— Տարեք ինձ ենտեղ, ի՞նչ ձեռ առնել: Միայն, խնդրում եմ, առանց տուր ու դմիոցի:

Դավիթովը սանդուխքներից ցած իջավ: Ծարավը տանջում եր նրան, հուսահատ կատաղությունը համակռում: Նա քիչ չեր ծեծվել, սակայն առաջին անգամն եր, վոր ծեծում եյին կանայք և այդ նրան շատ ծանր եր դալիս: «Միայն թե չգլորվեմ, թե չե կզաղազեն և— լավ բան չի դուրս դա,— մահու չափ կկտցահուրեն ինձ: Այ թե հիմար մահ կլինի հա, փաստ ե», մտածում եր նա հույսով լի աչքերը հառելով բլուրներին:

Բլուրների վրա մաքդ չեր յերեսում. հեռու հորիզոնում յերեսում եր միայն կուրդանը: Դատարկ եյին նաև փողոցները: Բալորը հավաքվել եյին շտեմարանների մոտ, վորտեղից բազում ձայների խուլ աղաղակ եր լսվում:

Մինչև վարչություն հասնելը Դավիթովին այնքան ծեծեցին, վոր վոտքի վրա հազիվ եր կանգնում: Նա արդեն չեր կատակում, այլ ավելի ու ավելի հաճախ եր սայթաքում նույնիսկ հարթ տեղում, ավելի հաճախ եր գլուխը բռնում և գունատված խնդրում խուլ ձայնով.

— Բավական ե, կսպանեք ախր... Գլխին չի կա-

Եելի... ինձ մոտ չեն բանալիները: Մինչեւ գիշեր
կպտտեցնեմ, բայց բանալիները չկան... Զե՞մ տա...

Ուղղակի կոլտնտեսության վարչության բակի
մոտ Դավիթովը նստեց ճանապարհի մեջ տեղը:

— Ախր ձեղ, շան վորդիներիդ. համար—անսպա-
սելի դիլ ձայնով խոսեց նա և արտասովոր փայլով
աչքերը դարձրեց չորս կողմը,— ձեղ համար ենք ա-
նում ախր: Յեկ դուք ինձ սպանում եք... Ա՛խ, շան
վորդիք: Զե՞մ տա բանալին, հասկանալի՞ յե: Փա՛ստ
ե, չե՞մ տա:

— Թողե՞ք դրան, — մոտ վաղելով ճշաց մի աղ-
ջիկ, — կաղակներն արդեն կողպեքները կոտրել են ու
հացը բաժանում են:

Կանայք Դավիթովին թողին վարչության դարբասի
մոտ ու վաղեցին դեպի շտեմարանները:

Նա մեծ ջանքով վեր կացավ, մտավ բակը, մի ա-
ման դոլացած ջուր տարավ սանդուխքների գլուխը,
կուշտ խմեց, խոկ հետո սկսեց ջուրը դմխին լցնել:
Ընքալով ու հառաջելով լվաց դեմքի ու պարանոցի
արյունը, սրբվեց ճաղին դցած լաթով ու նստեց շեմ-
քին:

Զիու սմբակի խուլ դոփյուն լսելով՝ Դավիթովը
գլուխը բարձրացրեց: Սրարշավ բակը մտավ թամբած,
կախ հետույքով շեկ ձին: Նա շուռ յեկավ, հետևի
վոտքերավ դետինը փորեց, վրնջոցով պտույտ դործեց
բակում՝ ազդրերից տաքացած դետնին թափելով քըր-
տինքի սպիտակ փրփուրը: Գոմի դռանը կանդ առավ,
սկսեց տախտակները հոտոտել:

Նրա շքեղ, արծաթազոծ սանձը կտրտված եր,

ծայրերը ծափ եյին տալիս, թամբն ընկել եր ուղղակի բաշխն, իսկ կրծկալի կտրտված փոկերը կախվել եյին մինչև դետին և կպչում եյին սև սմբակներին։ Նա չնչում եր ծանր, վարդագույն ոռւնդերը չոելով։ Նրա ճակատի վռակեցույն գնչք ու միարժամ բաշի մաղերին կպած եյին անցյալ տարվա խոտի դորշ կոծիծներ։

Դավիթովը զարմանքով նայեց ձիուն։ Այդ ժամանակ յերկար ճռուաց մարադի դուռը և այնտեղից դուրս սողաց Շչուկար պապի գլուխը։ Քիչ անց նորինքն ել դուրս յեկալ՝ մեծ զգուշությամբ դուռը բանալով և վախեցած չորս կողմը նայելով։

Խոտի փոշին խիտ ծածկել եր Շչուկարի քրտինքից թրջված վերնաշապիկը, գզզզված մորուքը լցվել եր փշախոտի կոծիծներով, չոր խոտի փշուրներով ու տերեկներով, կորնկանի դեղին, չոր ծաղկի փշուրներով։ Շչուկար պապի դեմքը բարի արես կարմիր դույնուներ, անսահման յերկյուղի կնիք եր կրում, իսկ գունքերից դեպի այտերն ու մորուքն եյին ծորում քրտինքի շիթերը…

— Ընկեր Դավիթով, — աղաչական շշուկով խոսեց նա, մատների ծայրերով մոտենալով սանդուխքներին։ — Թաղնվեցեք դուք, ի սեր աստծու։ Քանի փոք սկսել են մեղ ջարդել, նշանակում ե վորտեղ փոք և գործը մահվան կհասնի։ Ինչքա՞ն են ջարդել ձեղ—ուղղակի ճանաչել չի լինի։ Յես խոտի մեջ թագնվելով փրկվեցի… Շոգ ե այնտեղ, դիմանալ չի լինի, յես ամբողջովին քրտինք եմ կտրել, բայց և այնպես՝ հոգիս փրկվել ե, աստված վկա։ Յեկեք մի կերպ անց կացնենք ես խառնակությունը, միասին թագնվենք,

Հը՞ : Մենակ, ինչ վոր ծանր ե թվում... Դե, ախր
ինչ ոգուտ կա մեռնելուց, ինչի՞ համար— հայտնի
չե : Մի լսեցեք, թե կնանիքը վոնց են վոռնում, վոնց
են ճշճվում չաչանակի պես : Այ, վոնց վոր յերեկում
ե, Նադուլնովին ել են տրորել : Այսր եղ նրա ձին ո՛,
վոր յեկել ե...

— Ուրեմն նա արդեն կարող է տուն յեկա՞ծ լի-
նել,— անվճռականորեն հարցրեց Դավիդովը :

— Տո՞ւ-ո՞ւն : Իսկ ինչո՞ւ յե ձին մենակ յեկել ու
խոխոացնում ե, վոնց վոր մեռելի հոտ առած : Ես
որինակներն ինձ շատ լավ հայտնի յեն : Պարզ բան
ե . նա հետ ե յեկել շրջանից, տեսել ե, վոր ամբարի
մոտ հալաջված հացը թալանում են, թե, հակառակ
խոսք ե ասել, չի համբերել նրա տաք սիրտը, գե, և
սպանել են մարդուն...

Դավիդովը լուռ եր : Շտեմարանների մոտ առաջ-
պա պես աղմուկ եր բաղմաձայն աղաղակներից, լըս-
վում եր սայլերի ճոնչոցը և սայլակների անիմների
թխթխկոցը :

«Հացը կտանեն...» մտածեց Դավիդովը : «Բայց,
իսկապես ի՞նչ ե պատահել Մակարին : Զլինի սպանել
են : Գնամ մի» : Նա վեր բարձրացավ :

Շչուկար պապը, կարծելով, թե Դավիդովը վորո-
շեց իր հետ միասին մարագում թաղնվել, աշխատա-
ցավ .

— Գնանք, աղատվենք փորձանքից : Թե չե մի
սպանի մեկը կդա, ինձ ու քեզ կտեսնի եստեղ ու
մեր դիակը կփոխի : Եղ նրանք մի վայրկյանում կա-
նեն : Իսկ մարագում չատ հիանալի կմնանք : Խոտի

Հատը նուրբ ե, դուրեկան. յես ենտեղ մի ամիս ել
կիմնայի, թե վոր ուստելիք լինեց: Միայն թե, այ, այ-
ծըն ինձ տեղահան արեց... Մարդ հենց սատկացնի
ուղ վնասարարին: Լսեցի, վոր կնանիքը կոլտնտեսու-
թյան վրա յեն հարձակվել և ձեզ գզզզում են հացի
համար: «Դե, ասում եմ ինքս ինձ, կորա՞ր դու, Շըու-
կար, վոնց վոր մի պաղունց բռնոթի»: Ախր չե՞ բոլոր
կնանիք ել գիտեն, վոր միայն յես, ընկեր Դավիդով,
մեկ ել դու յենք հեղափոխության որից պլատֆորմի
վրա կանգնած և մենք ենք Գրեմյաչիում կոլտնտեսու-
թյուն ստեղծել ու Տիտոկին կուլակաթափ արել: Ել
ո՞ւմ պիտք ե ամենից առաջ սպանեն, պարզ բան ե—
ինձ ու ձեզ: «Վատ են մեր բաները,— մտածում եմ,—
հարկավոր ե թագնվել, թե չե Դավիդովին կսպանեն
ու ինձ ել կհասնեն, իսկ են ժամանակ քննիչին ո՞վ
տեղեկություններ կտա Դավիդովի սպանության մա-
սին»: Մի վայրկյանում խրվեցի խոտի մեջ, գլուխա
ծածկեցի, պառկել եմ և ուժեղ շունչ ել չեմ քաշում,
եղ ել ե վտանդավոր... Բայց դուք եղ ո՞ւր եք գնում,
ընկեր Դավիդով:

Դավիդովն առանց պատասխանելու անցավ մա-
րագի մոտով և ուղղվեց դեսի դարբասը:
— Եղ ո՞ւր, — վախեցած շշնջաց Շըուկար պա-
պը:

Կիսարաց դռնակով նայելով՝ նա տեսավ, թե
ինչպես Դավիդովը քայլում ե դեսի համայնական
շտեմարանները, անհաստատ, բայց արագ քայլերով,
ինչպես քամին լինի հրելիս նրա հետեւից:

ԳԼՈՒԽ XXX

Ճանապարհի յեղբին ընկած ե մի շիրխմաթումր։ Երա հողմնահարված դագաթին աղիողոքմ սվավում են անցյալ տարրվա բարձմենակի ու իշառվույտի մերկ ճյուղերը, փշաբույսի առատ փնջերը տխուր ու տըրտում խոնարհվել են դետին ու փուլել են դեղին փետրախոտի փնջերը։

Չոր քամիները քերում են շիրխմաթումրը, միջուրեցի արևն այրում ե նրան, հեղեղները վողողում, ճաքձաքեցնում են դեկտեմբերյան ուսոնամանիքները, սակայն հողաթումրը դեռ շարունակում ե անխախտ տիրապետել տափաստանին, ինչպես հինգ հարյուր տարի առաջ, յերբ ստեղծվեց այդ թումրը սպանված ու զինվորկան հարդանքով թաղված պոլովեցյան իշխանի աճյունի վրա։

Նագուլնովն ատանիցայից քսան վերստ միանգամից քշեց իր դեղնավուն ձին և կանգ առավ միայն մահվան շիրխմի մոտ։ Նա ցած իջավ, իր թաթով քերեց ձիու պարանոցի փրփրակալած քրտինքը։

Գարնան սկզբի համար արտասովոր կերպով այրում եր տաքությունը։ Արեգակը շիկացնում եր հոգը, ինչպես մայիսին։ Հորիզոնի ալեծումի շրջապա-

տում ծխի նման գալարվում եր տոթը։ Տափաստանը հեռավոր լճակից քամին բերում եր սագերի կղկղոցը, բաղերի բաղմաճայն կանչը, կտցարի յերկար ու զիշիչը։

Մակարը սանձը ձիու բերանից հանեց, փոկը կապեց նրա առջևի վոտքից ու փորկապները թուլացրեց։ Զին աղահաբար վրա պրծավ նորաբույս խոտին, միաժամանակ պոկոտելով անցյալ տարվա սեղախոտի չորացած ցողունները։

Շիրիմաթմբի վրայով, բութ ու կցկտուր կռինչավ անցավ թուչունների մի յերամ։ Նրանք իջան լճակի վրա։ Մակարն անտարբեր հետեւում եր նրանց թռիչքին, տեսավ, թե ինչպես թուչունները քարի պես նետվեցին լճակը, ինչպես նրանց ճեղքած ջուրը բլորլուաց յեղեղնածածկ կղզյակի մոտ։ Լճակի ափից անմիջապես վեր բարձրացավ զույդ սագերի անհանդստացած յերամը։

Տափաստանը լուռ եր ու անմարդ։ Յերկար պառկեց Մակարը շիրիմաթմբի ստորոտին։ Սկզբում նա լսում եր, թե ինչպես վոչ հեռու փնչացնելով քայլում ե իր ձին ու զնդացնում սանձի յերկաթամասերը, իսկ հետո ձին մտավ ձորակը, վարտեղ ափելի առատ եր խոտը և շրջակայքում տիրեց այնպիսի մի լոռվթյուն, ինչպիսին լինում ե միայն ուշ աշնանը, բերքը հավաքած հեռավոր դաշտերում։

«Կհասնեմ տուն, մնաս բարեվ կասեմ Անդրեյին ու Դավիթովին, կհագնեմ այն շինելը, վորով վերադարձա լեհական ռաղմաճակատից ու ինքնասպանություն կդորձեմ։ Յես այլես վոչ մի կապ չունեմ կյան-

Քի հետ : Իսկ հեղափռխությունը չի տուժի դրանից : Քի՞չ մարդ ե զնում նրա հետեւից . մեկով ավել , մեկով պակաս . . .» , միանդամայն անտարբեր , կարծես բոլորովին կողմնակի մարդու մասին մտածում եր Մակարը , յերեսնիվայր սլառկած , աչքերը հառած փետրախոտի խճճված ճյուղերին : Յեվ արտասովոր պարզությամբ Մակարը սլատկերացնում եր , թե ինչպիսի ինքնագոհ ժպիտով պիտի շրջի Բաննիկը բաղմության մեջ և իր սպիտակավուն բեխերը սղալելով՝ ասի . «Մեկը վոտքերը ձգեց . դե , փառք աստծու , շունը շան մահով ել կմեռնի» :

—Ո՛ , չե , իժի ծնունդ , չեմ սպանի ինձ : Քեզ պես-ներին կհասցնեմ եղ կետին , — ատամները կրնտացնելով բարձրածայն գոչեց Մակարը և վոտքի թռավ խայթվածի պես : Բաննիկի մասին մտածածը շուռ տվեց նրա վորոշումը և աչք ածելով իր ձիուն , մտածեց . «Վոչ մի դեպքո՞ւմ : Նախ ձեզ բոլորիդ կդլորեմ , իսկ հետո արդեն յես ել կմսխվեմ : Դուք իմ մահով խրախճանալ չեք կարող : Իսկ Կորչժինսկին , ինչ , նրա խոսքն որե՞նք ե , ի՞նչ ե : Կավարտենք ցանքը , կքշեմ ոկրուդային կոմիտե : Կվերականդնե՞ն : Յերկիային կոմիտե կդնամ , Մոսկվա : Իսկ թե չեղավ՝ վորպես անկուսակցական կպայքարեմ եղ իժերի դեմ» :

Պայծառացած աչքերով նա դիտեց իր շուրջը փըռ-պած աշխարհը : Նրան արդեն թվում եր , վոր իր դը-րությունն ամենեվին այնքան անուղղելի ու հուսահատական չե , ինչպես թվում եր մի քանի ժամ առաջ : Հաղիվ եր Մակարը մոտեցել ձիուն , յերբ նա

ու ժեղական գուշեց դլուխը, վոտքին. կապած սանձի փոկը կտրվեց:

— Հըռ՝ ո՛ ո՛ ո՛, Վասկա, Վասկա, հը՛ ո՛ ո՛ ո՛, կա՛ց, — կիսաձայն համոզել սկսեց Մակարը, պորձելով հետեւի կողմից մոտենալ թռչկոտող ձիուն ու բռնել նրա բաշից կամ ասպանդակից:

Մակայն չեկվիկը դլուխը թափահարելով ու խեթ-խեթ նայելով հեծվորին՝ արագացնում եր իր քայլերը: Մակարն սկսեց վաղել, սակայն ձին նրան մոտ չթողեց, փնչացրեց ու սլացավ դեպի գյուղ:

Մակարը հայույեց ու սկսեց քայլել նրա հետեւից: Յերեք վերստի չափ ճանապարհից դուրս քայլելով՝ ուղղվեց դեպի գյուղի մոտ յերկացող աշնանավարը:

Հոյակապ, բեղուն աշխատանք եր կատարվում. պարթամորեն աճում եր խոտը, վխտում եյին թըռչուններն ու գաղանները, միայն մարդկանցից մոռաց-ված հերկած հողերն եյին, վոր համրորեն դեպի յերկինք եյին տարածում գոլորշին՝ իրենց չցանված կրծքից...

Մակարը քայլում եր չորացած, ամրացած աշնանավարի միջով, զայրույթն ու ցասումը սրտում: Նա արագ կռացավ, հողը վերցրեց ու փշրեց բռի մեջ: Սևահողի փոշին չորացած խոտերի փխրուն արմատների մեջ չոր եր ու տաք: Աշնանավարը չափից ավելի անողտագործելի յեր մնացել: Անհրաժեշտ եր ժամ սնադամ չկորցնելով՝ յերեք չորս յերես ցաքանել, յերկաթե ժանիքներով փորփորել պառկած հողը, իսկ հետո պարզեն փիրուն ակոսներով քշել շարքացանները, վոր-

ալեսղի ավելի խորն ընկնեն ցոքենի վոսկե հատիւնները:

«Ուշացել ենք. փախցնում ենք հողը», մտածեց Մակարը, սրտամորմոք ափսոսանքով նայելով սև, լրենց մերկությամբ սոսկալի, անմշակ ցելերին: «Յերկու որ ել մնա՝ կորած ե աշնանավարը: Բայց, ահա, չեն դալիս ցանելու, վշրովհետեւ սեփականությունն արմատներ ե դցել նրանց մեջ... Անիծվածներ: Տեղ կհասնեմ ու բոլորին դաշտ կքշեմ, բոլորին մինչև վերջին մարդը»:

Նա շարունակ արագացնում եր քայլերը, յերբեմն ել՝ ուղղակի վազում: Նրա դլխարկի տակից ծորում եր քրտինքը, թիկունքին վերնաշապիկը մուտ դույն եր ստացել, շրթունքները ցամաքել եյին, իսկ այտերին ավելի ու ավելի պարզ եյին յերեռում կարմրին տվոք անառողջ բծերը:

Նա գյուղի մտավ սերմացուն բաժանելու ամենատաք ժամանակ։ Լյուբիշկինն իր բրիգադով դեռևս դաշտումն եր։ Շտեմարանների մոտ մեծ հրմշտոց եր։ Յորենով լի ջվալներն շտապ-շտապ կշեռքի վրա եյին գցում, սայլերն անընդհատ մոտենում եյին, կազմակներն ու կանայք հացը տանում եյին պարկերով, ջվալներով, շտեմարանների մուտքի մոտ, կշեռչի շուրջը, ամենուրեք փոսկել եր թափակած ցորենը։

Նազուլնովն անմիջապես հասկացավ, թե ինչ ե պատահել։ Գյուղացիներին դես ու դեն հրելով մոտեցավ կշեռքին։

Հացը կշռում ու բաց եր թողնում նախկին կոլտնտեսական իվան բատալչչիկովը, նրան ողնում եր վիտիտ Ապոլլոն Պեսկավատսկովը։ Վոչ Դավիդովը, վոչ Ռազմյոտնովը և վոչ բրիգադիրներից վորեւե մեկը չկար շտեմարանների մոտ։ Մի վայրկյան միայն բազմության մեջ յերեվաց տնտեսվար Յակով Լուկիչի չի շիոթված դեմքը, բայց նա ել խսկույն ծածկվեց խիտ հակաքված սայլերի հետեւ։

— Ո՞վ ե թույլ տվել հացը բաժանել, — դոչեց Մակարը, հետ հրելով Բատալչչիկովին ու կանգնեցով կշեռքի վրա։

Ամբոխը լուռ եր:

— Քեզ ո՞վ և լիազորել հացը կշռել, — առանց
ձայնն իջեցնելու հարցքեց Մակարը Բատալչիկովին:

— Հասարակությունը...

— Վորտե՞ղ և Դավիդովը:

— Յես նրա հետեւից չեմ ման դալի:

— Վորտե՞ղ և վարչությունը: Վարչությունը
թույլ տվե՞լ ե:

Դեմիդ Մոլչունը, վոր կանգնած եր կշռոքի մոտ,
ժպտաց, թեքով սրբեց քրտինքը և նրա ուժեղ բամբ
ձայնը հնչեց վստահ ու միամտաբար.

— Մենք ինքներս ենք առանց վարչության թույլ
տվել: Ինքներս ենք վերցնում:

— Ինքներդ... ԱՇ թե ինչ: — Նազուլնովը յեր-
կու վոստույնով հասավ շտեմարանին, բռունցքի մին
հարվածով դեն շպրտեց շեմքում կանգնած յերիտա-
սարդին, դուռն ամուր շրթկացրեց ու մեջքը դեմ աը-
վեց նրան:

— Ցրվեցե՞ք: Զե՞մ տալիս հացը: Բոլորին, ով
կմոտենա շտեմարանին հայտարարում եմ խորհրդա-
րին իշխանության թշնամի...

— Ոհո՞,— ծիծաղով ասաց Դիմոկը, վեր հարե-
վաններից մեկին ոդնում եր ջվալները բարձել սայլա-
կին:

Նազուլնովի յերեվալը մեծ մասի համար անսպա-
սելի բան եր: Մինչև նրա շրջան դնալը Գրեմյաչում
համառ լուրեր եյին սրտում, թե Նազուլնովին պի-
տի դատեն Բանկիկին ծեծելու համար, թե նրան կը-
հանեն պաշտոնից և հավանորեն բանտ կնսաեցնեն:

Բաննիկը, վոր դեռ առավոտավանից լսել եր, թե Մակարը դնացել ե, հայտարարել եր.

— Նազուլնովն այլես չի վերադառնա: Ինքը՝ դատախաղն ինձ ասաց, վոր նրան կդատեն ամենայն խստությամբ: Թող հիմի համն առնի Մակարուշկան: Դուքս կշարտեն նրան կուսակցությունից, են ժամանակ կիմանա, թե ինչ ե նշանակում դյուղացուն ծեծել: Հիմի հին որենքը չե:

Դրա համար ել կշեռքի մոտ Մակարի լույս ընկնելը դիմավորվեց այդպիսի զարմանքով ու անճարակ լուսությամբ: Սակայն յերբ արդեն նա կշեռքի մոտից նետվեց շտեմարանի մոտ և դուռը փակելով կանդնեց նրա դեմ, մեծ մասի տրամադրությունը միանգամելից վրախվեց: Դիմոկի բացականչությունից հետո լսվեցին աղաղակներ.

— Մեզ մոտ հիմի մե՞ր իշխանությունն ե:

— Ժողովրդակա՞ն:

— Զարդեցեք նրան, տղե՞ք:

— Կորիր այստեղ, վորտեղից յեկել ես:

Առաջինը շտեմարանին մոտենալ փորձեց Դիմոկը, ինքնավստահ ուսերը շարժելով ու ժպտալով հետ-հետ նայելով: Նրա հետեւից համարձակորեն շարժվեցին ելի մի քանի կաղակ: Նրանցից մեկը հենց ճանապարհին մի քար վերցրեց:

Նազուլնովը դանդաղովեն դուրս քաշեց նազաններ գրանից ու հրահանը քաշեց:

— Յոթ գարշելի կսպանեմ, հետո միայն շտեմարան կմտնեք: Ապա՛, ո՞վ ե առաջինը: Մո՛տ արի:

Ցանկացողներ կարծես թե չդտնվեցին... Մի

վայրկյան ընդհանուր չփոթություն ընկալ : Դիմոկը
կարծես թե տատանվեց ու չհամարձակվեց մոտենալ
շտեմարանին : Նագուլնովը նազանի փողը ցած կա-
խելով, դոչեց .

— Ցրվեցե՛ք : Ցրվեցեք խոկույն, թե չե կըակել
կսկսեմ . . .

Այդ բոպեյին անկյունից յերեաց Դավիդովը :
Սոսկալի ծեծված, ամբողջապես սպիների չանդըռ-
վածքների ու արյունի մեջ նա քայլում եր անհաս-
տատ, սայթաքուն քայլերով : Նագուլնովը նայեց նը-
րան ու առաջ նետվեց խոպոտ ճիչով . «Ա՛-ա՛, — ա՛,
գարշելի, խարե՞լ եք ուղում . խփե՞լ եք ուղում մեղ» :

Բատալչիկովն ու Ատամանչուկովը փախան : Նա-
գուլնովը յերկու անգամ կրակեց նրանց հետեւից,
սակայն վրիսկեց : Դիմոկը, մի կողմը քաշված՝ ցան-
կապատից մի ցից եր դուրս քաշում, մյուսներն ան-
նահանջ խուլ մռնչում եյին :

— Զեմ թողնի . . . տրորել . . . խորհրդային իշխա-
նությունը . . . — ատամների արանքից ճչաց Մակարը
վազելով դեսի ամբոխը :

— Զարդեցե՛ք նրան :

— Գոնե մի վորեե հրացան լինե՞ր . . . — մատները
տրորելով հառաչեց Յակով Լուկիչը հետեւի շարքե-
րում, անիծելով այդքան անժամանակ անհետացած
Պոլովցեկին :

Ցեվ հանկարծ ամբոխը ճեղքվեց, նետվեց յերկու-
կողմերի վրա ու առանձին-առանձին դեմ յեկավ Մա-
կարին . . .

— Միլիցիա՞՞ . . . — վայրենի սարսափով ճչաց

Նաստենկա Դրոնեցկովան։ Բլուրի վրայից լավայն նման դեպի գյուղն եյին արշավում մոտ յերեսուն ձիավոր։ Նրանց ձիերի սմբակների տակից ծխի փոքրիկ քուլաների պես բարձրանում եր գարնանային փոշին...

Հինդ ըոսկե հետո շտեմարանների մոտ դատարկված հրապարակում մնացին միայն Դավիթովն ու Մակարը։ Զիերի դուրստնն ավելի ու ավելի յեր մոտենում։ Գյուղի մոտի արոտատեղում յերեացին ձիուվորները։ Ամենից առաջ Լապչինովի չարորում ձիուվրա նստած արշավում եր Պավլո Լյուբիշինը։ Նրա աջ կողմում, մահակով զինված՝ արշավում եր ծաղկատար դեմքով, իր վճռականությամբ սոսկալի Ագաֆոն Դուրցովը, իսկ նրանց հետեւ խառն ի խուռն, բաղմադույն ձիերը հեծած՝ արշավում եյին յերկըորդ ու յերրորդ բրիգադների կոլտնտեսականները...

Յերեկոյան դեմ շրջանային կենտրոնից յեկավ նաև մի միլիոններ, վորին կանչել եր Դավիթովը։ Իվան Բատալչիկովին, Ալբոն Պեսկովատսկուն, Յեֆիմ Տրուբաչեին և ելի մի քանի «ակտիվիստների» նա ձերբակալեց դաշտում։ Պառավ Իգնատենկովային ձերբակալեցին տանը։ Նրանց բոլորին հատուկ հսկողությամբ ուղարկեցին շրջանային կենտրոն։

Մակար Նադուլնովը Մջեց այն գյուղացիների տները, ովքեր նախորդ որը հաց եյին վերցրել շտեմարանից, առանց բարեկելու և առանց յերեսներին նայելու հարցնում եր.

— Հաց վերցրե՞լ ես։

— Վերցրել եմ...

— Հետ կտանե՞ս :

— Ինչպես յերեռում ե , պիտի տանեմ...

— Տա՛ր , — և առանց հրաժեշտի խոսք ասելու դուրս եր գալիս տանից :

Կոլտնտեսությունից դուրս յեկածներից շատերն ավելի շատ հաց եյին վերցրել , քան թե հանձնել ե-յին : Բաշխումը կատարվել եր հարց ու փորձի հի-ման վրա : «Ինչքա՞ն ցորեն ես հանձնել » , հարցնում եր անհամբեր Բատալչիկովը : «Յերկու վոտք , ամեն անդամ յոթ փուլթ» : — «Տար պարկերը կչուիր» :

Մինչդեռ իրականում այդ ցորեն ստացողը սերմ-ֆոնդ հավաքելիս ավելի պակաս եր հանձնել :

Բացի այդ , մոտ հարյուր փուլթ ել առանց կշռե-լու կանայք փախցրին իրենց գոզնոցներով ու տոպ-րակներով :

Յերեկոյան դեմ ամբողջ ցորենը հավաքվել եր , բացի մի քանի փթից : Նույն յերեկոյան մենատնտես-ներին պատկանող սերմացուն ամբողջապես իրենց վերադարձրին :

Մութն ընկնելուն պես Գրեմյաչիում սկսվեց դյուղական ժողովը : Դավիթով դիմելով դպրոցում հավաքված չտեսնված բազմությանն՝ ասաց .

— Մի քանի որ առաջվա կոլտնտեսականների ու-մենատնտեսների մի մասի յերեկվա յելույթն ի՞նչ ե նշանակում , քաղաքացիներ : Այդ նշանակում ե , վոր նրանք հակվել են կուլակային տարրերի կողմը : Այդ փաստ ե , վոր նրանք թեքվել են մեր թշնամիների կողմը : Յեվ այդ խայտառակ , ամոթալի փաստ ե ձեզ համար , քաղաքացիներ , ովքեր վոր յերեկ թալան ե-

յին տալիս շտեմարանների հացը, վոտի տակ եյին տալիս, հողին եյին խառնում այնքան թանկադին ցորենը: Զեր միջից, քաղաքացիներ, անդիտակից բացականչություններ եյին լսվում, վորուեսդի կանայք ինձ ծեծեն: Յել նրանք ծեծում եյին ինձ ամեն բանով, ինչ վոր ճանկներն եր ընկնում, իսկ կանանցից մեկը նույնիսկ լաց եր լինում նրա համար, վոր յեռ թուլության նշան անգամ չեյի ցույց տալիս: Յես քո ժաման եմ ասում, քաղաքացուհի, —և Դավիդովը մատը մեկնեց Նաստենկա Դոնեցկովան, վոր կանգնած եր սլատի մոտ և հենց վոր Դավիդովն սկսեց խոսել, ըշտապ իր դեմքը փաթաթեց գլխաշորի մեջ: — Այն դու եյիր, վոր բոռունցքներով թակում եյիր իմ մեջքը և հենց ինքը ել լաց եյիր լինում ու ասում: «խմբում եմ, խփում, իսկ նա վոնց վոր քարի կուռք լինի»:

Նաստենկայի փաթաթված դեմքն այրվում եր սաստիկ ամոթից: Ամբողջ ժողովը նրան եր նայում, իսկ նա շփոթմունքից ու անհարմար վիճակից բթացած՝ միայն ուսերն եր թոթվում, իր մեջքով սրբելով պատի կավիճը:

— Կծկվել ե դարշելին, վոնց վոր ոճը յեղանի տակ, — չհամբերեց Դյոմկա Ռւշակովը:

— Ամբողջ պատը սրբեց մեջքով, — ձայնակցեց նրան ծաղկատար Աղաֆոն Դուքսովը:

— Մի՛ ճմբառվիր, չոված աչքեր, վոր ծեծել կարողանում եյիր, չիմի ել կարողացիր ժողովի աչքին նայել, — մոնչաց Լյուբիշկինը:

Դավիդովն անողոքաբար շարունակեց, սակայն նրա ուռած շրթունքին արդեն ժպիտ խաղաց, յերբ ասում եր.

— Նա ուղում եր յես ծունկ չոքեմ, փրկություն
հայցեմ, շտեմարանի բանալին իրեն հանձնեմ: Սա-
կայն, քաղաքացիներ, մենք բոլշևիկներս այնպիսի
խմորից չենք, վոր վորեւ մեկը մեղ ձև տալ կարողա-
նա: Քաղաքացիական կռվում ինձ յունկեցները ծե-
ծեցին, բայց նրանք ել վոչինչ գուրս քաշել չկարողա-
ցան: Բոլշևիկները վոչ վոքի առաջ ծունկի չեն յեկել
ու չեն գա, իմաստ ե:

— Ճիշտ ե, — սրտի խորքից հնչեց Մակար Նա-
դուլնովի խոպոտ ու հուղված ձայնը:

— Մենք, քաղաքացիներ, ինքներս ենք վարժվել
ալբատրարիատի թշնամիներին ծունկի բերել: Յեկ
մենք ծունկի կրերենք նրանց:

— Յեկ ծունկի կրերենք համաշխարհային մաս-
շտարով, — նորից մեջ ընկալ Նադուլնովը:

— Յեկ համաշխարհային մասշտարով կանենք
այդ: Իսկ դուք յերեկ թեքվել եյիք դեպի այդ թըշ-
նամին ու ողնություն եյիք ցույց տալիս նրան: Ինչ-
պես անվանել, քաղաքացիներ, այնպիսի. յելույթը,
յերբ շտեմարանների կողպեքները կոտրեցիք, ինձ ծե-
ծեցիք, իսկ Ռազմյոտնովին նախ կաղկպեցիք, կա-
րանավորեցիք նկուղում, իսկ հետո տարաք դյուղիոր-
հուրդ ու ճանապարհին ուղում եյիք խաչ դնել նրա
վրա: Այդ ուղղակի հակահեղափոխական յելույթ ե:
Նրանք, ովքեր այդ յելույթի նախաձեռնողներն եյին
և ովքեր ակտիվորեն մասնակցում եյին, ձերբակալ-
ված են, սակայն մյուսներն ել, վորոնք կոշակի թա-
կարզն եյին ընկել, պետք ե ուշքի դան ու հասկա-
նան, վոր իրենք մոլորության մեջ են յեղել: Յես այդ

փաստորեն եմ ասում... Մի անհայտ քաղաքացի մէ
գրություն ե զցել այստեղ, նախադահությանը, վո-
րով հայտնում ե. «Ճիշտ ե արդյոք, վոր բոլոր հաց-
վերցնողները պետք ե ձերբակալվեն, նրանց դույքը
սկիտի բռնադրավիլի, իսկ իրենք՝ աքսորվեն»: Վո՛չ,
այդ ճիշտ չե՞ն, քաղաքացիներ: Բոլշևիկները վրեժ չեն
առնում, այլ անողոքաբար պատժում են միայն թը-
նամիներին, իսկ ձեղ, թեև դուք յենթարկվելով կու-
լակների քարոզներին, դուրս եք յեկել կոլտնաեսու-
թյունից, թեև դուք թալան եք տվել հացն ու մեղ-
ծեծել, բայց մենք ձեղ թշնամիներ չենք համարում:
Դուք՝ տատանվող միջակներ եք, ժամանակավորապես
մոլորված և մենք ձեր նկատմամբ վարչական միջոց-
ներ չենք դործադրի, այլ փաստորեն ձեր աչքերը կը-
րանանք:

Դալիճովը մեկ ծավալվեց ձայների դասված ալի-
քը: Դավիդովը շարունակեց.

— Յեվ դու, քաղաքացուհի, մի վախենա, բաց ա-
րա յերեսդ, վոչ վոք քեղ ձեռք չե տա, թեև յերեկ
դու ինձ լավ ծեծեցիր: Բայց, այ, յեթե վաղը ցանքի
դուրս կանք և դու վեստ աշխատես, այն ժամանակ
յես դրողի փայ կանեմ քեղ, այդ լավ իմացիր: Մի-
այն թե յես կծեծեմ վոչ թե քո մեջքը, այլ ավելի
ցածը, վորպեսզի դու վոչ նստել կարողանաս, վոչ
ոլառկել:

Սկիզբ առավ մի անհամարձակ ծիծաղ, վորը սա-
կայն, մինչեւ վերջին շարքերը հասնելն աճեց ու դար-
ձավ թեթևացնող մի քրքիջ:

— Ինչքան կամայականություն, արիք, քաղաքա-

ցիներ, բավական ե: Աշնանավարը փչանում ե. ժամանակն ննցնում ե, հարկավոր ե աշխատել և վոչ թե հիմարություններ անել: Փա՛ստ ե: Յես հարցը կըտրուկ եմ զնում. ով խորհրդային իշխանության կողմն ե, նա հենց վաղը դաշտ դուրս կդա, ով դեմ ե, թողմնա ու արևածաղկի սերմ չըթի: Բայց ով դաշտ չըդնա, մենք, այսինքն կոլտնտեսությունը, նրա հողը կվերցնի ու ինքը կցանի իր համար:

Դավիթովը հետ քաշվեց բեմի յեղրից, նորից նախագահության սեղանի մոտ և յերբ ձեռքը մեկնեց ջրամանին, հետեւ շարքերից, լամպի որանժաղույն լույսով թույլ լուսավորված կիսախավարի միջից հնչեց ինչ վոր մեկի ջերմ և ուրախ բամբ ձայնը.

— Դավիթով, բերանդ մեղրածոր ե: Քանի վարսրտիդ մեջ չարություն չունեա... չարիքը չես հիշում... Եստեղ ժողովուրդը հուղվում ե... և չեն իմանում վորտեղ թաղցնեն իրենց հայացքը, ամոթից մեռնում են... Կնանիք ել են շփոթության մեջ ընկել... Ախը չե՞ մենք ելի միասին պիտի ապրենք... Յեկ, Դավիթով, պայման անենք՝ ով անցածը միտքը բերի, նրա աչքը դուրս դա: Հը՞:

Կոլտնտեսությունից դուրս յեկածներից հիսունյոթ հոգի առավոտյան դիմում ներկայացրին, խընդրելով իրենց կրկին կոլտնտեսություն ընդունել: Դեռ լուսածեղին մենատնտեսներն ու կոլտնտեսության բոլոր յերեք բրիդադն ել դուրս յեկան դաշտ՝ աշխատանքի:

Չորս որվա ընթացքում կոլտնտեսությունն իր աշնանավարի համարյա կեսը ցանեց: Ապրիլի 2-ից յերկ-

բոլոր բրիգադը գալնանավարի անցավ : Այդ ամբողջ
ժամանակամիջոցում Դավիթովը միայն մեկ անգամ
յեղավ վարչությունում : Նա աշխատանքի ուղարկեց
բոլոր աշխատունակներին, և նույնիսկ Շչուկար պա-
պին ժամանակավորապես հանեց ձիապանի աշխատան-
քից և ուղարկեց յերկրորդ բրիգադը, իսկ ինքը լու-
սաբացից շրջում եր բրիգադների հողամասերում և
դյուզ եր վերադառնում կես դիշերից անց, յերբ
խրճիթներից արդեն լսվում եր աքաղաղների կանչը :

ԴԱՍԻՆ ՀՀՀՀ

Կոլտնտեսության վարչության խոտակալած բակում այնպես խաղաղ եր , ինչպես դյուդի մոտի արոտավայրում : Միջորեյի արևի տակ շիկացած աղոտ փայլում եյին շտեմարանի տանիքի ժանդադայն կըզմինդըները , բայց սրահների ստվերում , տրորված խոտերից դեռևս կախված եյին ցողի ամպամանիշակագույն հատիկները :

Լյուբիշկինը բակը մտավ փոքրիկ , ծծմայր զամբիկը հեծած : Մոայլ ու զայրացած եր Լյուբիշկինը : Դյոմկա Ուշակովը , վոր նայում եր նրան սանդուխքների գլխից , ուրախ կանչեց .

— Կարծես եշով Յերուսաղեմ մտած Հիսուս Քըրիստոսը լինես : Զարմանալի նման ես նրան :

— Դու ինքդ ես եշավորը , — բարկացած պատասխանեց Լյուբիշկինը , ձին մոտ քաշելով սանդուխքներին :

— Վոտքերդ վեր քաշի , թե չե դու նրանցով հողն ես փորում :

Լյուբիշկինը Դյոմկային պատասխանի չարժանացնելով՝ ցած իջավ ձիուց , սանձը կապեց սանդուխքի ճաղին ու խիստ տոնով հարցըեց .

— Դավիթովն եստե՞ղ ե:

— Եստեղ ե: Նստել ե տիրուր ու քո կարուն է քաշում: Յերեք որ ե, վոչ ուստում, վոչ խմում, մի գլուխ ասում ե: «Ո՞ւր ե իմ անմոռանալի Պավլու Լյուրիշկինը: Առանց նրան յես չեմ ապրի ու պայծառ որը խավար ե թվում ինձ»:

— Մի քիչ ել եղակես շարունակես լեզուակ քոքահան կանեմ:

Դյումկան իւեթ-իւեթ նայեց Լյուբիշկինի մտրակին ու լրեց, իսկ Լյուբիշկինը մտավ խրճիթ:

Դավիթովն ու Ռազմյոտնովը կանանց ժողովի ներկայացուցիչների հետ հենց նոր եյին վերջացրել մանկական մսուրներ կազմակերպելու հարցի քննացրկումը: Լյուբիշկինն սպասեց, մինչև վոր կանայք դժուրս յեկան, ապա մհատեցավ սեղանին: Նրա չթէ վերնաշապկից, վոր հագել եր առանց դոտին կապելու և վորի մեջքը փոշոտվել եր, քրտինքի, արևի և փոշու հոտ եր բուրում:

— Բրիգադիցն իմ յեկել...

— Ինչո՞ւ յես յեկել.— Դավիթովը հոնքերը շարժեց:

— Բան չի դուրս դալիս: Ինձ մոտ մնացել է քսանութ հոգի աշխատունակ մարդ, նրանք ել չեն ուղում աշխատել, լոդրություն են անում... Վոչ մի կերպ նրանց խելքի բերել չի լինում: Հիմի ինձ մոտ տասներկու դութան ե աշխատում: Մաճկալներին հազիվ եմ հավաքել: Միայն Կոնդրատ Մայդաննիկովն ե, վոր յեղան պես աշխատում ե, իսկ Ակիմ Բեսխլեբնովը, Կրուժենկովը, Սամոխը, կամ են խոպոտ կռվա-

բարը՝ Ատամանչուկովը և մյուսները, ուղղակի պատռհաստ են, վոչ թե մաճկալ: Կարծես թե իրենց որում մաճ բռնած չլինեն: Վո՞նց են վարում. մի վոտք քշում են, նստում, սկսում ծխել և տեղից շարժել չես կարող նրանց:

— Որական վորքա՞ն եք վարում:

— Յես ու Մայդաննիկովն ամեն մեկս յերեք քառորդի յենք հասցնում, իսկ նրանք... ընդամենը կես հեկտար: Թե վոր եսպես վարենք, յեգիպտացորենն աստվածածնի տոնին հաղիվ ցանենք:

Դավիթովը լուռ, մատերի ծայրով թխթիկացրեց սեղանը, ապա ծաղրական հարցրեց.

— Իսկ զու ինչո՞ւ յես յեկել, վորակեսդի մենք քո արցունքնե՞օքը սրբենք, — և չարությամբ աչքերը վալորեց:

Լյուբիշկինը բորբոքվեց:

— Յես արցունքներով չե՞մ յեկել: Դու ինձ մարդիկ տուր ու գութաններն ավելացրու, իսկ կատակներ անել՝ յես առանց քեզ ել կարող եմ:

— Կատակ անել՝ զու կարող ես փաստ ե, բայց, ա՛յ, աշխատանքը կարդավորելու համար քո զսպանակը թույլ ե: Բըիդադիրի՛ս նայեցե՞ք: Լուբերի: զեկավարել չե՛ կարողանում: Փաստ ե, վոր չես կարող, յեթե քեզ մոտ դիսցիպլինա չկա և սկսել ես մեղմություն անել:

— Արի մի դո՛ւ դտիր եղ դիսցիպլինան, — ձայնը բարձրացրեց վրդովմունքից քրտնած: Լյուբիշկինը: Ենտեղ դիմավորն Ատամանչուկովն ե, նա յե խառնակություն դցում, մարդկանց հերդորում ե զուր:

կալ կոլտնտեսությունից, իսկ վոր նրան դուրս գցես: Նա ուրիշներին ել կքաշի իր հետեւից: Ախր ի՞նչ ես ասում, Սեմեոն Դավիդով, իսկապես, ծաղրում ես ինձ, ինչ ե: Կաղ ու թոփալները վզիս ես գցել ու դո՞րծ ես պահանջում ինձանից: Հենց Շչուկար պապին, ի՞նչ անեմ յես: Մենք յերեկ արդեն նրան ճաշ յեփող նշանակեցինք, բայց նա ենտեղ ել բանի պետք չեղավ: Յես նրան ճարպ տիլի, վոր ճաշի մեջ գցի, իսկ նա լափել եր ճարպը, ճաշն ել աղի յեր արել ու ինչ վոր փրփրակալած: Դե ասա, ի՞նչ անեմ յես նըրան: — Լյուբիշկինի սև բեխերի տակ դողացին շըրթունքները: Նա մտրակը բարձրացրեց ու հուսահատ ասաց: — Հանեցեք ինձ բրիգադիրությունից. յես համբերություն չունեմ եղ տեսակների հետեւից քաշ դալու: Նրանք իմ վոտքերն ել են կապել եղ տեսակ աշխատանքով...:

— Դու եստեղ անճար մի ձևանա, միանու ե: Մենք գիտենք, թե քեզ յերբ պիտի հանել, իսկ այժմ դաշտ դնա և, վորպեսզի յերեկոյան արդեն տասներկու հեկտար հերկված լինի: Իսկ թե չհերկես՝ ել չընեղանա՞ս: Յերկու ժամից հետո յես կդամ, կսոսուզեմ: Գնա՞:

Լյուբիշկինն իր հետեւից դուռը շրիկացնելով դուքս յեկավ, ցած վաղեց սանդուխքներից և դրոհի զնացողի պես սրարշավ դուրս թռավ դարրասից ու քշեց ձին դեպի տափառտան: Դեռևս քուռակի վզին կախած զանգակի ձայնը չեր լոել, յերբ սանդուխքի դլուխը դուքս յեկավ Դավիդովը և շտապ ասաց Դյոմեկային.

— Յես մի քանի որով յերկրորդ բրիգադն եմ պնում, քեզ թողնում եմ տեղակալ: Հետեւիր մսուրներ կազմակերպելուն, ողնիր նրանց, յերրորդ բրիգադին վարսակ չտաս: Խո՞ւմ ես: Վորեւ դժվարություն լինելու դեպքում շտապիր ինձ մոտ: Հասկացա՞ր: Հեմա լծիր ձին ու Ռազմյոտնովին ասա, վոր քշի ինձ մոտ: յես իմ տանը կլինեմ:

Ռազմյոտնովը Դավիդովի տանը մոտեցավ վարչության հովատակներից մեկով, վոր լծված եր սայլակին: Դավիդովն արդեն դարբասի մոտ կանգնած, թևի տակ մի փոքրիկ կապոց սեղմած՝ սպասում եր նրան: Ռազմյոտնովը մտրակով հարվածեց հավատակին: Հանկարծակի ցնցումից Դավիդովը հետընկալ և արմունկն ուժեղ զարկվեց մեջքափայտին, անիվները փափուկ թկթկոցով դլորվեցին դեսլի տափաստան:

Մինչև բլուրին հասնելը նրանք դնում եյին լուռ: Տափաստանի վրա, զենիթում, արեգակը ծածկել եր մուգ մանիշակաղույն կարկտարեր մի ամպ: Նրա յեղբերի սպիտակ քուլաները շողշողում եյին ձյունի պես, սակայն սեագույն կատարն ահավոր եր իր ծանր անշարժությամբ: Ամպի ճեղքվածքից, արեի շողերով նարնջագույն ներկված նրա յեղբերից լայն հովհարի պես փալուած եյին արեգակի շեղ ճառադայիմները: Սնծայրածիր յերկնքից բարակ նիզակների պես հորդում եյին նրանք դեսլի ցած, ցրվում և մոտենալով յերկրին ու փովելով տափաստանի հեռու, անծայր հորիզոնի վրա, ներկում եյին նրան հիաւքանչ յերփներանդությամբ:

Ամպի ստովերով պարուրված տափաստանը լուռ ու խոնարհ՝ անձրև եր տենչում։ Քամին ճանապարհի վրա փոշու դուրը սյունն եր պտտեցնում։ Քամին արդեն անձրևային տաք խոնավություն եր չնչում։ Իսկ մի բողե անց՝ սկսեց տեղալ մանրահատ, բարակ անձրևվը։ Սրընթաց, սառը կաթիները խրվում եյին ճանապարհի փոշու մեջ, կծկվում ու կազմում ցեխի մանրիկ գնդիկներ։ Տագնապահար սվավում եյին դաշտամկները, պարզ ու վորոշակի հնչում եր լորերի կվկվոցը, լուել եր տենչավառ արոսի հրապարէիչ կահնչը։ Կորեկի արտի վրայով հորդեց գետնահուալ քամին և ծղոտները փշաքաղելով՝ սվավացին։ Տափաստանը լցվեց անցյալ տարվա փշախոտերի չոր խշխոցավ։

Բլրակի վրա յերեաց յերկրորդ բրիգադի դաշտակայանը, յերբ Ռազմյատնովը նկատեց զառիվայրով դեպի իրենց յեկող մի մարդ։ Նա քայլում եր առանց ճանապարհի նայելու, փոսերի վրայով ցատկելով, յերբեմն անցնելով ծերունու ժանրաքայլ վաղքի։ Ռազմյոտնովը հովատակը քչեց նրա կողմը և ուսումնակայուց ճանաչեց Շչուկար պապին։ Բոլոր նշանները ցույց եյին տալիս, վոր Շչուկար պապի հետ մի ինչ վոր անհաճո բան եր տեղի ունեցել։ Նա մոտեցավ սայլակին։ Նրա բաց գլխին մազերը բոլորովին թրջված եյին անձրևից, թաց մորուքին, հոնքերին, ամենուրեք յեփիված ձավար եր քսված։ Շչուկարն ամբողջապես սփրթնած եր, սարսափած և Պավիդովը որոնեղությամբ դուշակեց։ «Բրիգադում դրությունը վատ ե... կոիդ ե յեղել»։

— Ի՞նչ և պատահել, — հարցրեց նա: — Հաղիսլ ազատվեցի մահից, — հառաջեց Շչուկարը, — սպանել եյին ուզում...
— Ո՞վ:
— Լյուբիշկինը և մյուսները:
— Ինչի՞ համար:
— Իրենց հակառակության համար... Կերակուրի պատճառով սկսվեց... Յես խոսքի տակ մնացող մարդ չէմ, չհամբերեցի... Նու, իսկ Լյուբիշկինը դանակն առավ ու իմ հետեւից... Թե վոր իմ ճարպիկությունը չլիներ, չիմի դանակը սիրտս խրած կլիներ: Եղաղես եւ կլիներ:

— Գնա զյուղ, հետո կքննենք, — հրամայեց Դավիդովը թեթևացած շունչ առնելով:

Իսկ դաշտակայանում կես ժամ գրանից առաջ տեղի յեր ունեցել հետեյալը. Շչուկար պապը, վորը նախորդ որը ճաշը շատ աղի յեր արել, այժմ վորոշել եր հաճոյանալ բրիգագին և յերեկոյան գյուղ գընալով դիշերել եր այնտեղ, իսկ առավոտյան տանից մի պարկ վերցրեց և բրիգադ դնալիս ճանապարհը թեքեց գեպի կրասնոկուտովի կալը, վոր գտնվում եր գյուղի ծայրին: Շչուկար պապը չափարի վրայով անցավ և գաղտապողի թւողնվեց դարմանի կույտի մոտ: Շչուկար պապի ծրագիրը չափազանց պարզ եր. աչքով պահել հավերին, զգուշությամբ ճանդել նրանցից մեկը, գլուխը թուցնել և հավի շիլա յեփել. ուրիշութում հարդ ու պատիկ ձեռք բերել: Նա չունչն իրեն քաշած մի կես ժամ պառկեց, բայց հակառակի պես հավերը քջուջ եյին անում հեռու, ցանկապատի

մատ և կարծես չեյին ել մտածում մոտենալ դարմանի
կույտին։ Այն ժամանակ Շչուկար պապն սկսեց կա-
մացուկ կանչել. «Ճո՛ւ, Ճո՛ւ, Ճո՛ւ, Ճո՛ւ, վառեկնե՛ր,
կո՛ւտ, կո՛ւտ, կո՛ւտ», կանչում եր նա շշուկով, իսկ
ինքը վորսի յելած դաղանի պես դարան եր մտել դար-
մանի կույտի հետեւ. Վերջապես հավերը մոտեցան,
Շչուկարը վիթխարի ժանտաքիսի պես վրա թռագ
խեղդեց նրանցից մեկը, բռնեց յերկրորդն ել և ցատ-
կեց ցանկապատի վրայով։ Յերկու ժամում նա դաշ-
տակայան հասավ, իսկ յերբ Լյուբիշկինը դյուղից վե-
րադարձավ, յերեք դույլանոց կաթսայի մեջ արդեն
յեռում եր ջուրը, քլթքլթում եր յեփած ճավարը և
հայի կտրտած միսը քափուտ յուղ եր արձակում։ Փա-
ռավոր շիշա յեր դուրս դալիս։ Միակ բանը, վորից
յերկյուղ եր կրում Շչուկար պապը, այդ այն եր, վոր
վախենում եր, թե շիլայից ճահճաջրի հատ կդա, վո-
րովհետեւ ջուրը վերցրել եր մոտակա ծանծաղ լճա-
կից, իսկ այդ անհօսանք ջուրն արդեն ծածկվել եր
հազիվ նկատելի կանաչով։ Աակայն նրա յերկյուղը
չարդարացավ բոլորն ուստում ու հիացմունքով դո-
վում եյին, իսկ ինքը՝ բրիգադիր Լյուբիշկինը նույ-
շիսկ ասաց. «Իմ որում ես տեսակ շիլա չեյի կերել։
Ամբողջ բրիգադի կողմից շնորհակալություն եմ
հայտնու՞ քեզ, պապի»։

Կաթսան արագությամբ դատարկում եյին։ Ամե-
նից յեռանդուններն արդեն սկսել եյին կաթսայի տա-
կի թանձր մասն ու մսի կտորները հանել։ Ահա հենց
այդ ժամանակ ել կատարվեց այն, ինչ վոր ընդմիշտ

խոքտակեց Շչուկարի հաջողությունը խոհարարության մեջ։ Լյուբիշկինը մի կտոր միս հանեց, ուզեց մոտեցնել բերանին, բայց հանկարծ ցնցվեց ու գունատվեց։

— Ե՞ս ինչ բան ե, — չարագուշակ կերպով հարցրեց նա Շչուկարին, մատների ծայրերով վեր բարձրացնելով մի կտոր սպիտակ, քրքրված միս։

— Յերեկի թևն ե, — հանդիստ պատասխանեց Շչուկար պապը։

Լյուբիշկինի դեմքը գանդաղորեն ծածկվում եր զայրույթի կապտա-կարմիր գույնով։

— Թե՛-վը, ապա մի եստեղ՝ նայի՛ր խոհարապը, — մռնչաց նա։

— Ո՛, ձեզ մատաղ, — գոչեց կանանցից մեկը — ախր նրա վրա չանչեր կան…

Շչուկարը գդալը նետեց գետնին վուած քաթանի վրա, ուշադիր նայեց։ Լյուբիշկինի դողացող ձեռքին ճոճվում եր մի փիսրուն վոսկոր, վշրի ծայրին կպած եյին լողաթաղանթ ու մանրիկ ճանկեր։

— Տղե՛րք, — գոչեց շշմած Ակիմ Բեսխլեբնովը, — ախր մենք գորտ ենք կերել։

Ահա հենց այստեղ եր, վոր սկսվեց խառնաշխոթությունը։ Զղվացող կանանցից մեկը հեծկլտալով վեր ցատկեց տեղից, յերկու թաթով բերանը փակելով թաղնվեց դաշտակայանի տնակի հետեւ։

Սոսկալի աղմուկ սկսվեց։ Կանայք միահամուռ ձեռքերը մեկնեցին դեպի Շչուկարի մորուքը, ուշադիրություն չդարձնելով, թե ինչպես իրեն կորցրած ու սարսափած Շչուկարը համառորեն դոռում ե.

— Ապասեցեք մէ քեչ, եղ գորտ չի՛, քրիստոսը
վկա, գորտ չի՛...

— Ապա ի՞նչ ե, — գոռաց սոսկալի զայրացած
նաստենկա Դոնեցկովան:

— Ախր վո՞րտեղից կարող եր գորտը կաթսայի
մեջ ընկնել, — հարցրեց Լյուբիշկինը:

— Դե նա ջուրը լճակից ե վերցրել, նշանակում է
չի նայել...

— Եղ ձեղ թվում ե, ձեր աչքին ե յերեսում, —
վրարձեց խորամանկություն բանեցնել Շչուկարը:

Սակայն ինքն ել կտրականապես հրաժարվեց
կըծել «թվացող» վոսկորը, վոր առաջարկեց նրան
լյուբիշկինը: Գուցե հենց սրանով ել դործը վերջա-
նար, յեթե վերջում կանանց վրա դաղաղած Շչու-
կարը չդոչեր:

— Թաց պոչավորնե՛ր, յուբկավոր սատանաներ,
հնքան չեք հասկանում, վոր սա հասարակ գորտ չե,
այլ վոստրե յե:

— Ի՞-ի՞-ի՞-նչ — զարմացան կանայք:

— Վոստրե՛, պարզ եմ ասում ձեղ: Գորտը պիղծ
ե, իսկ վոստրեն ազնվարյուն կենդանի յե: Իմ հարա-
զատ քավորս հին ռեժիմի ժամանակ գեներալ Ֆելի-
քոնովի մոտ եր ծառայում և պատմում եր, վոր գե-
ներալը հարյուրներով եր կուլ տալի: Ուսում եր ուղ-
ղակի վողջ-վողջ: Վոստրեն դեռ խեցիից դուրս չե-
կած՝ նա արդեն պատառաքաղով դուրս եր քաշում,
ծակում մեջ տեղից ու՝ գնաց. Վոստրեն Փշչում եր
գողբագին, իսկ նա՝ արդեն կոկորդն եր կոխում: Իսկ
դուք ի՞նչ գիտեք, դուցե ես անիծյալն ե՞լ վոստրեյի

ցեղից և : Գեներալները գովում եյին ու յես ել դուցե
դիտմամբ, համեղ լինելու համար շիլայի մեջ գցե-
ցի . . .

Այստեղ արդեն Լյուբիչկինը չհամբերեց. վերց-
նելով պղնձյա քամիչը, նա վեր թռավ ու կոկորդովը
մեկ գոռաց.

— Գեներալները, համեղ լինելու համար . . Յես
կարմիր պարտիզան եմ, իսկ դու ինձ, վոնց վար մի
գեներալի, գորառվ ես կերակրում:

Շուկարին թվաց, թե Լյուբիչկինի ձեռքին դա-
նակ եւ և շուրջը նայելով ամբողջ ուժով սկսեց փախ-
չել:

Դավիթովն այս ամենն իմացավ դաշտակայան
դաշտոց հետո, իսկ մինչ այդ, Շուկարին ճանապարհ
գցելով, Ռազմյոտնովին խնդրեց քշել և շուտով հասավ
բրիգադի դաշտակայանը: Անձրեւ դեռևս զրնդում եր
տափաստանում: Գրեմյաչի Լոգից մինչեւ հեռավոր
լճակը յերկինքը կիսել եր գույնզգույն ծխածանը:
Դաշտակայանում մարդ չկար: Ռազմյոտնովին հրա-
ժեշտ տալով՝ Դավիթովը գնաց դեպի մոտակա վարե-
լահողը: Նա նայեց շտեմարանի այն կողմն ընկած
հաղամասին և տեսավ, վոր այնտեղ կովի նման ինչ
փոք մի բան ե տեղի ունենում: Մայդաննիկովը թրի
նման պտտեցնում եւ յերկաթի սամին, իսկ բարձրա-
հասակ Ատամանչուկովը մի ձեռքով հեռու յե հրում,
նրան լծից, իսկ մյուսը բռունցք արած՝ բռնել ե իր
թիկունքում: Զայները չեր լսվում: Շտապ այն կողմը
դնալով՝ Դավիթովը դեռ հեռվից դոչեց:

— Ելի ի՞նչ ե պատահել:

— Ախր վո՞նց կլինի, Դավիդով, անձրեւ և դալիս, իսկ նա վարում եւ: Ախր եղախով նա յեզների վեղը կտրորի: Յես առում եմ. «Արձակիր, քանի անձրեւ չեւ կտրվել», իսկ նա ինձ մեր և հայհոյում. «Քո գործը չի»: Ապա ո՞ւմ դործն եւ, ո՞ւմ, խոպոտ սատանա, — գոռաց Մայդաննիկովը, արդեն դառնալով դեպի Ատամանչուկովը և սամին թափահարելով նրա վրա:

Բատ յերեսույթին նրանք արդեն կպել եյին իրար՝ կայդաննիկովի աչքի վերը կապտել եր սև սալորի նման, իսկ Ատամանչուկովի շապիկի ոճիքը պատոված եր շեղակի և մաքուր սափրված, ուռած շրթունքի վրա արյան հետքեր եյին յերեսում:

— Չեմ թողնի կոլտնտեսությանը վնաս հասցնել, — Դավիդովի յերեալով քաջալերված գոռաց Մայդաննիկովը: — Նա ասում է «իմ յեզները հո՞ չեն, կոլտնտեսությանն են»: Իսկ յեթե կոլտնտեսությանն են, ուրեմն նրանց կաշին պիտի քերթե՞լ: Հեռացներ յեզներից, դե՞:

— Կարելի՞ յե անձրեւ ժամանակ վարել, — Հարցուեց Դավիդովը Ատամանչուկովին, կոնդրատի ձեռքից սամին առնելով ու վշտքի տակ դցելով:

Ատամանչուկովի աչքերը փայլատակեցին: Իր բարակ վիզը պտտացնելով նա դաղաղած մոնչաց.

— Մարդ իր տնտեսությունում չի վարի, իսկ կոլտնտեսությունում հարկավոր եւ:

— Ի՞նչպես թե «հարկավոր ե»:

— Շատ պարզ. պլան պիտի կատարել: Անձրեւ եթե չե՞ պիտի վարես: Իսկ թե չվարես՝ Լյուբիշինը մի ամբողջ որ՝ մարդու կմաշի, վոնց վոր ժանդը յերկաթին...

— Դու եղ խռաքերը... իսկ յերեկ, հաջողակ յիշամակին, քո պլանը կատարեցի՞ր :

— Վարեցի, ինչքան վոր կարողացա :

Մայդաննիկովը մռնչաց :

— Քառորդ գեսյատին եւ վարել : Մի տես, ինչ յեղներ ունի. ձեռքդ պողերին չի հասնի, իսկ ի՞նչ եւ վարել : Գնանք, Դավիդով, ինքդ տես :— Նա բռնեց Դավիդովի վերարկույթի թաց թերը, տարավ նրան ակոսով և հուղմունքից խռաքերն ավարտել չկարողանալով մըթմըթաց :— Վորոշել ենք յերեք ու կես վերջուկից պակաս խորությամբ չվարել, իսկ սա ի՞նչ և, ինքդ լափիր :

— Դու ես ի՞նչ ես արել... եսպե՞ս են վարում, — Փշրված ատամով բերանը կիսաբաց անելով՝ կամաց հարցը Դավիդովը :

— Ապա վո՞նց կուզեյիք : Ութ վերջո՞կ քշել :— Հարությամբ աչքերը կկոցեց Ստամանչուկովը և մաքուր խուզված գլխից գլխարկը վերցնելով՝ խոնարհվեց :— շատ չնորհակալ եմ : Ինքներդ փորձեցեք ավելի խոր վարել : Խռաքի ժամանակ մենք բոլորս մեծ-մեծ ենք բրդում, իսկ դործի ժամանակ՝ մարդ չի յերեռում :

— Մենք ինչպե՞ս կուզեյինք քեզ նման սրիկայինք քշել կոլտնտեսությունից, — շարունակելով գոչեց Դավիդովը :— և կվոնդե՞նք :

— Ենդը ե՞մ : Ինքս կզնամ : Յես նղովված չեմ, գոյք եստեղ կյանքս փշացնեմ ձեղ համար... Հալից ընկնեմ, ինչի՞ համար — չգիտեմ :— և սուլելով դնաց դեպի դաշտակայան :

Յերեկոյան, յերբ ամբողջ բրիդագը հավաքվեց
հաշտակայանում, Դավիդովն ասաց.

— Բրիդագի առաջ եմ դնում. ինչպե՞ս վար-
վել այն կեղծ կոլտնտեսականի հետ, վորը խարում
և կոլտնտեսությանն ու խորհրդային իշխանությանը,
յերեք ու կես վերշոկ խորությամբ վար անելու փոխա-
րեն փշացնում ե հողը, վարում ե մեկ ու կես վերշոկ։
Ինչպե՞ս վարվել նրա հետ, ով վոր դիտավորյալ կեր-
պով փշացնել ե ուղում յեղներին, անձրեկ տակ վար
անելով, իսկ պայծառ յեղանակին իր նորմայի միայն
կեսն ե կատարում։

— Դուրս քչե՛լ, — ասաց Այուբիշկինը։

Կանայք հատուկ յեռանդով ձայնակցեցին նրան։

— Այդպիսի վնասարար-կոլտնտեսական կա ձեզ
մեջ։ Ահա նա։ — Դավիդովը ցույց տվեց Ատաման-
չուկովին, վոր նստած եր սայլի գլխին։ — Բրիդագը
լրիվ ներկա յե; Քվեարկության եմ դնում։ Թվի
կողմնակից, վոր վնասարար ու լողի Ատամանչուկո-
վին հեռացնենք։

Քսանյոթ հողուց «կողմ» քվեարկեցին քսաներե-
քը։ Դավիդովը ձայները հաշվելով՝ սառն կերպով
ասաց Ատամանչուկովին։

— Հեռացի՛ր։ Դու հիմա կոլտնտեսական չես,
իհաստ ե։ Իսկ մի տարի հետո՝ ինայենք. յեթե ուղղու-
թես՝ նորից կընդունենք։ Այժմ, ընկերներ, լսեցե՛ք
իմ կարծ ու խիստ կարեոր խոսքը։ Դուք, համարյա-
բուրդ վատ եք աշխատում։ Շատ վատ։ Վոչ վոք,
բացի Մայդաննիկովից, նորման չի կատարում։ Սա-
խայտառակ փաստ ե, ընկերներ, յերկրորդ բրի-

գա՞ղ : Այսպիսի աշխատանքով անմիջապես սև տախտակին կբարձրանանք և նրա վրա ել կչորանանք : Ստալինի անվան կոլտնտեսությունում այդպիսի դրություն... ամոթ, խայտառակություն և այդ : Արմատից սկսած և չուռ տալ այս դրությունը :

— Յերեսի նորման ուժից վեր ե: Յեղները չենքաշում, — ասաց Ակիմ Բեսխլեբնովը :

— Ուժից վե՞ր ե: Յեղների՞ : Դատարկ բան ես ասում : Իսկ ինչո՞ւ Մայդաննիկովի յեղների ուժը պատում ե: Յես մնում եմ ձեր բրիդադում, վերցնում եմ Ատամանչուկովի յեղները և կենդանի որինակով ձեզ ցույց կտամ, վոր որական կարելի յե վարել մեկ հեկտար, նույնիսկ մեկ ու մի քառորդ :

— Ե՛, Դավիդով, շատ խորամանկն ես, դու լավ դիտես, թե ինչ ես ասում, — ծիծաղեց Կուժենկովը : Ճեղքի մեջ տրորելով իր ալեհեր, կարճ մորուքը : — Ատամանչուկովի յեղներով սատանայի պոչը կարենի յե վոլորել : Նրանցով մի հեկտար յես ե՛լ կվարեմ...

— Իսկ քո՞յ յեղներով, չե՞ս վարի:

— Ամենելին :

— Դե, յեկ փոխենք : Դու Ատամանչուկովի յեղներով, իսկ յես քո : Լա՞վ :

— Յեկ փորձենք, — լուրջ ու զդույշ մտածելով սկսածասխանեց Կուժենկովը :

Լուսաբացին Դավիդովին արթնացրեց կոնդրատ Մայդաննիկովը : Նա արդեն ամբողջ բրիդադը վորքի յեր հանել : Դավիդովը դուրս թռավ տնակից : Յերկնքի արևմտյան կողմը աղոտ փայլում ելին աստղերը, աղեղնաձև նորալուսինը շողշողում եր յերկնքի պողպա-

առադույն։ Վահանի վրա։ Դավիթովը վացվում եր ուղղակի լճակի ջրով, իսկ Կոնդրատը նրա մոտ կանգնած, մտմտանքով կծելով իր շեկ բեխի ծայրը առաց։

— Որական մի դեսյատին ու դեռ մի բան ել ավելի... Եղ շատ մեծ բան ե... Յերեկ դու մի քիչ չափն անց կացրիր, ընկեր Դավիթով։ Հանկարծ յես ու դու չխայտառակվե՞նք։

— Ամեն ինչ մեղանից և կախված, մեղանից։ Ի՞նչ ես վախենում, իսկ' ոթ, — քաջալերեց նրան Դավիթովը, իսկ իր մասին մտածեց։ «Կմեռնեմ վարատեղում. բայց կկատարեմ։ Գիշերով, լազտերի լույսով կվարեմ, բայց կվարեմ մեկ ու մի քառորդ հեկտար, ուրիշ կերպ չի կարելի. խայտառակություն կլինի ամբողջ բանվոր գասակարդի համար»։

Մինչդեռ Դավիթովը քաթանի վերնաշապիկի միեցով յերեսն եր սրբում, Կոնդրատը լծեց և իր և նրա յեղներն ու կանչեց։

— Գնա՞նք։

Կոնդրատը սարքի դցեց Դավիթովի գութանը, կեռ բարձրացնող բարձիկի վրա տեղափոխեց, կանգնեցրեց յերեք ու կես վերշոկ խորության վրա և իր խոսակցությունն աննկատելիորեն «գու»-յի շուռ տալով՝ ճանապարհին բացատրեց։

— Կսկսենք վարը և դռւ կնայես. յեթե յեղներո դժվարանան, դռւ մեկ ու կես անդամ պտտեցրու ես զատը։ Մենք սրան տակառիկ ենք ասում։ Տեսնում ես, հիմի նա անջատող շլթայի վրա յե։

Դավիթովի հոտաղը — մի ջահել աղա — մտքակը շրիկացրեց և դռւթանի դլիսի յեղները միահամուռ

ուժով ձիգ տվին։ Դավիդովը վորոշ հուզմունքով
ձեռքերը դրեց մաճին ու քայլեց դութանի հետեւից,
դիտելով, թէ ինչպես ձերչով ձեղքված հողը դուրս
է տողում խոփի տակից սև, փայլուն շերտերով ու
թմբած ձկան պես շուռ գալիս կողքի վրա։

Ծիրը վոր վերջացավ, Մայդաննիկովը վազեց Դա-
վիդովի մոտ ու բացատրեց։

— Գութանը ձախ շուռ տուր, վոր սահելով գնա,
իսկ վորպեսզի դու խոփը մաքրես, այ, եսպես արա,
աե՛ս — նա ընկալ մաճի աջ կոթի վրա, դութանը
թեքեց և հողի շերտը շեղակի ու ամուր քավելով խո-
փին, կարծես լիզում եր խոփին կսած ցեխը — Ա՛յ
թէ ինչպես պիտի անել: — Կոնդրատը դութանը շուռ
տվեց ու ժպտաց — եստեղ ել և տեխնիկա։ Իսկ յեթե
դութանը չքերես, մինչև յեղները դիմացի ծերը հաս-
նելը դու պետք ե խոփի ցեխը մաքրես մաքրիչով։
Իսկ հիմի, տես, քո դութանը կարծես լվացված լինի
և դու կարող ես դնալիս քո քեֆին ծխախոտ ել փա-
թաթել։ Դե, ա՛ռ։

Նա Դավիդովին մեկնեց թութունի քիսան, մէ
ծխախոտ փաթաթեց և գլխով ցույց տալով իր յեղնե-
րը՝ ասաց։

— Մի տես, վո՞նց ե շուռ տալիս իմ կնիկը։ Գու-
թանը շատ սարքին ե, քիչ ե պատահում, վոր դուրս
ընկնի։ Նրանով մենակ մարդն ել կարող ե վարել։

— Եղ քո կի՞նն ե հոտաղդ, — հարցրեց Դավի-
դովը։

— Կինս ե։ Նրա հետ լավ յոլա կդնանք։ Թէ վոր-
մեկմեկ կծու խոսք ել ասեմ՝ չի նեղանա։

Կոնդրատը ժաղաց և լայն ու յերերուն քայլերով
էնաց դեպի իր դութանը:

Մինչև նախաճաշ Դավիդովը մոտ քառորդ դեսյա-
տին վարեց: Նա շիլան խաշտեց և յերբ յեզները կը-
սացան, աչքով արեց Կոնդրատին.

— Սկսե՞նք:

— Յես պատրաստ եմ: Անյուտկա, քշիր յեզները:

Յեվ նորից, ակոս ակոսի հետևից շուռ և դալիս
ձեւիչներով ու խոփով ճեղքված հողը, վոր ամրացել ե
հարյուրամյակների ընթացքում, դեպի վեր են ցցվում
խոտերի մերկացած արմատները, հողի խոտածածկ,
փշրված յերեսը ծածկվում և սև փոսերի մեջ: Հողը
խոփի մոտ ալեկոծվում, շուռ և դալիս, կարծես լո-
ղալիս լինի: Սևահողի անուշ բուրմունքը կենսարար և
ու հաճելի: Արեւ դեռ բարձրումն և, բայց հոտաղի
յեղան մեջքն արդեն մուգ գույն և ստանում քրտին-
քից: Յերեկոյան Դավիդովի տրորված վոտքերը տըն-
քելով նա չափեց իր հողամասը ու ժամանակակից վրա.
Նրա չորացած, փոշուց սևացած շրթունքների վրա.
մի որում վարել եր մեկ դեսյատին:

— Ե՛, ինչքան շուռ տվիր, — հաղիկ նկատելի
նենդ ժաղիտով հարցրեց Կուժենկովը, յերբ նա վոտ-
քերը քարշ տալով մոտեցավ դաշտակայանին:

— Իսկ դու ինչքա՞ն ես կարծում:

— Կես դեսյատին վարեցի՞՞ր:

— Զե, դրողը քեզ տանի, մի դեսյատին ու մի առ:
Կուժենկովը, վոր ճարպ եր քսում իր ճաքճքած
վոտքերին, տնքաց, գնաց Դավիդովի հողամասը չա-

փելու: Կես ժամ հետո, յերբ արդեն պատել եր թանձը
աղջամուղջը, նա վերադարձավ ու նստեց կրակից հեռու:

— Հը, ինչ ես լոել, կուժենկով, — հարցրեց
Դավիդովը:

— Վոտքս ե ցավում... Դե, ի՞նչ ասեմ, վարել
ես — վարել ես... Գործ ե ելի՛, — ակամայից պա-
տասխանեց նա ու պառկելով կրակի մոտ, սերթուկը
դլիսին քաշեց:

— Ծեփե՞ց բերանդ: Հիմի ել չես կռկոս, —
քրքջաց կոնդրատը, սակայն կուժենկովը չլսելը դնե-
լով՝ լոեց:

Դավիդովը պառկեց տնակի մոտ, աչքերը փակեց:
Կրակից փայտի մոխրի հոտ եր բուրում: Յերկար
քայլելուց հոգնած վոտքերի ներբաններն այրվում
եյին, սրաւնքներում ծանր մղմղոց եր զգում և ինչ-
պես ել մեկնում եր վոտքերը, ելի անհարմար եր թւ-
վում և շարունակ դիրքը փոխել եր ուղում... Յեկ
պառկելուն պես նրա աչքի առաջով սկսեց լողալ ալե-
կոծվող սեահողը. խոփի փայլուն բերանը սահում
եր անլսելի, իսկ նրա մոտ կուպրի նման յեռալով սո-
ղում եր սեահողը: Թեթևակի դլխապտույտ ու սրտի
խառնոց զգալով՝ Դավիդովն աչքերը բացեց ու ձայն
տվեց կոնդրատին:

— Քունդ չի՞ տանում, — հարցրեց կոնդրատը:

— Հա, ինչ վոր գլուխս պտտվում ե, աչքիս առաջ
գութանի տակի հողն ե շարունակ...

— Միշտ եղակես ե լինում, — կոնդրատի ձայնի
մեջ զգացվեց կարեկից ժպիտը: — Ամբողջ որը վոտ-

քերիդ տակն ես նայում, դրա համար ել գլուխող
պտտվում ե:

Հետեւալ որը մինչև յերեկո Դավիդովը վարեց մի.
դեսյատին ու յերկու ծիր, Լյուբիշկինը՝ ուղիղ մի
դեսյատին, Բուժենկովը՝ մի դեսյատինից մի քիչ պա-
կաս, և միանդամայն անսպասելի կերպով առաջին
տեղը բռնեց Անտիալ Գրաչը, վոր մինչ այդ հետ
մնացողների շարքումն եր, վորոնց Դավիդովը կա-
տակով «թույլերի խումբ» անունն եր կպցրել: Նա
աշխատում եր Տիտոկի նիհարած յեղներով: Կեսորվա
հանդստի ժամին նա լոեց, չասաց, թե ինչքան ե վա-
րել, ճաշից հետո նրա կինը, վոր իր հետ հոտաղու-
թյուն եր անում, յեղներին հասնող խտացրած կերն
իր փեշը լցրեց ու այդպես ել կերակրեց նրանց, իսկ
Անտիալը նույնիսկ ճաշից մնացած հացի փշրանքները
հավաքեց և կնոջ փեշը լցրեց, վոր յեղներն ուտեն:
Լյուբիշկինը նկատեց այդ ու ծիծաղեց.

— Նեղ ես լծվել, Անտիպ:

— Յեվ կլծվե՞մ: Մեր ցեղն աշխատանքի մեջ
հետիններից չի, — սառն պատասխանեց դարնան արե-
վից ե՛լ ավելի սևացած Գրաչը: Յեվ նա այդպես ել
արալ. յերեկոյան նա արդեն մեկ ու մի քառորդ դես-
յատին եր վարել:

Բայց յերբ մութն ընկել եր արդեն, Կոնդրատ
Մայդաննիկովը յեղները քշեց դաշտակայան, Դավի-
դովը հարցրեց.

— Ի՞նչքան վարեցիր:

— Մեկ ու կես դեսյատինից մի ծիր պակաս, —
խռպոտ ճայնով պատասխանեց նա — մի պապիրոսի

թութուն տվեք... ճաշից դեսը չեմ ծխել... — և նայեց Դավիդովին թափանցող ու ինքնազոհ հայացքով։
Ընթրիքից հետո Դավիդովն արդյունքներն ի մի ամփոփեց։

— Սոցիալիստական մրցությունը, յերկրորդ բրիգադի ընկերներ, ծավալվել և մեղ մոտ հիանալի։
Շատ պատվարեր տեմպեր են վերցրած։ Վարի համար կոլտնտեսության վարչության կողմից բոլցեիկյան չնորհակալություն եմ հայտնում բրիգադին։ Մենք, թանկագին ընկերներ, դուրս ենք դալիս ճեղքվածքից, վիա'ստ ե։ Յեվ ինչո՞ւ չպիտի դուրս դանք, յերբ դորձնականում ապացուցված ե, վոր կարելի յե կատարել նորման։ Հիմա պետք ե ցաքանին զոռ տալ։ Այնպէս վոր անպայման յերեք յերես ցաքանիի։ Հատուկ չնորհակալություն Մայդաննիկովին, վորով հետև փաստորեն նա ամենահարվածայինն ե։

Կանայք ամանները լվացին, գութանավորները պառկեցին քնելու, յեզներին քշեցին արոտ։ Կոնդրատն արդեն ննջում եր, յերբ կինը նրա կողքին բրթեց ու հարցրեց։

— Կոնդրաչա՛, Դավիդովը կարծես թե քեզ դուզեց... Բայց ի՞նչ ե նշանակում եղ խոսքը — հարվածայինը։

Կոնդրատը շատ անդամ եր լսել այդ բառը, բայց բացատրել չկարողացավ։ «Հարկավոր ե Դավիդովից իմանալ», մտածեց նա։ Սակայն նա չեր կարող կնոջը չբացատրել ու նրա առաջ իր հեղինակությունը դցել, դրա համար ել բացատրեց ինչպես կարող եր։

— Հարվածայի՞նը։ Եղ... այ դու հիմար կնիկ...»

Հարվածայի՞նը։ Հըմ... եղ... Դե վո՞նց ասեմ, վոր
դու հասկանաս։ Այ, որինակ հրացանն ունի մի զար-
կան, վոքը հարվածում ե պատիճին ու կրակում։
Հրացանի մեջ եղ մասը ամենագլխավորն ե, առանց
նրան կարել չի լինի... Եղակես ել կոլտնտեսությու-
նում։ Հարվածայինը ամենագլխավոր դեմքն ե։ Հա-
րցացա՞ր։ Դե՛, հիմի քնի՛ր։

ԳԼՈՒԽ XXXIII

Յերկու շաբաթ Նադուլնովը մնաց վտրպես անկուսակցական, բայց այդ ժամանակամիջոցում շրջանային կոմիտեյում ղեկավարության փոփոխություն տեղի ունեցավ. Կորչժինսկուն և Խոմանտովին հանեցին աշխատանքից :

Շրջանային կոմիտեյի նոր քարտուղարը Ռիբուդային վերահսկիչ հանձնաժողովից ստանալով Նադուլնովի բողոքադիրը՝ բյուրոյի անդամներից մեկին սւղարկեց Գրեմյաչի Լոդ, նորից քննություն կատարելու, վորից հետո բյուրոյն վորոշեց փոխել իր նախկին վորոշումը՝ Նադուլնովին կուսակցությունից վտարելու մասին։ Մակարին նկատողություն դրեցին և դրանով ել գործը վերջացավ։

Աքսորից Գրեմյաչի Լոդ վերադարձավ կուլակաթափ արված Գաեկը։ Յերկրային ընտրական հանձնաժողովը վերականգնել եր նրա քաղաքացիական իրավունքները։ Յեկ հենց վոր բաղմանդամ ընտանիքի տեր Գաեկը գյուղ յեկավ, Դավիդովը կանչեց նրան կոլտնտեսության դրասենյակ։

— Ինչպես ես մտածում ազրել, քաղաքացի Գաեկ։ Մենատնտես ես մնալու, թե կոլտնտեսություն ես մտնելու։

— Վոնց վոր պատահի, — պատասխանեց Գաել,
վոր դեռ չեր մոռացել ապորինի կուլակաթափման վի-
րավորանքը:

— Բայց, ելի՛:

— Յերեւում ե՝ առանց կոլտնտեսության չի՛ լինի՛:

— Դիմում ներկայացրու:

— Իսկ իմ ունեցվածքը:

— Անասուններդ կոլեկտիվումն են, գյուղատնտե-
սական գործիքները՝ նույնպես: Բայց, այ, քո խա-
ռախուռան բաժանել ենք, մի քիչ դժվար ե: Վորոշ
բան դու հետ կստանաս, իսկ մնացածի դիմաց փող
կստանաս:

— Իսկ հացս... տարել եք ամբողջը...

— Դե, դա հաբարակ բան ե: Գնա տնտեսվարի
մոտ նա, պահեստապետին կասի, վոր քեզ առայժմ
մի տասը փութ ալյուր տան:

— Սկսել եք սարից ու ձորից մարդ հավաքնէ
կոլտնտեսության մեջ, — տրտնջաց Մակարը, յերբ
իմացավ, վոր Դավիդովը մտադիր ե Գաելին կոլտնտե-
սություն ընդունել: — Են ժամանակ, թող Դավիդովը
«Մոլոտ»-ում մի հայտարարություն տա, վոր բոլոր
աքտուականներին, ովքեր վերադառնան, կոլտնտե-
սություն կընդունի... — ասում եր նա Անդրեյ Ռազ-
յոտնովին:

Ցանքից հետո Գրեմյաչիի բջիջը կրկնապատկվեց.
Լուսակցության թեկնածու ընդունվեցին Պավլո Լյու-
ռիշկինը, վոր յերեք տարի բատրակ եր յեղել Տիտո-
վի մոտ, Նեստոր Լոշչինը՝ յերրորդ բժիգադի
կոլտնտեսական և Դյոմկա Ուշակովը:

Բջջի ժողովի որը, յերբ Լյուբիշկինին ու մյուս-
ներին կուսակցության շարքերն եյին ընդունում,
Նագունովը կոնդրատ Մայդաննիկովին առաջարկեց

— Մտիր կուսակցության մեջ, կոնդրատ, քեզ
մեծ սիրով կերաշխավորեմ յես: Դու ծառայել ես
իմ եսկաղըռոնում և ինչպես են ժամանակ հերոս բա-
նակային եյիր, ենակես ել հիմի առաջնակարդ կու-
տնտեսական ես:

Կոնդրատը հառաջեց ու սրտի գաղտնիքը հայտ-
նեց:

— Զե՞ւ, ընկեր Նագունով, խիղճս ինձ թույլ չե-
տալիս հիմա կուսակցություն մտնել... խորհրդային
իշխանության համար յես հիմա ել կդնամ կովերու,
կոլտնտեսությունումն ել բարեխիղճ կաշխատեմ, իսկ
կուսակցության մեջ մտնել չեմ կարող...

— Եդ ինչո՞ւ վոր, — մոայլվեց Մակարը:

— Նրա համար, վոր, ա՛յ, յես հիմա կոլտնտե-
սության մեջ եմ, բայց իմ տան ու տեղի մասին
եմ մտածում: — Կոնդրատի շրթունքները դողացին,
նա շարունակեց արագ շշուկով: — Սիրտս իմ յեզների
համար ե ցալում և ափսոսում եմ: Նրանց ենակես
չեն խնամում, վոնց վոր պետք ե: Յաքանի ժամանակ
Ակիմ Բեսխլեբնովը խամուտով տրորեց իմ ձիու վիզը,
յես տեսա ու դրա համար մի ամբողջ որ բերանս հաց
չդրի: Փոքրիկ ձիուն կարելի՞ յե եղախիսի մեծ խամուտ
հաղցնել: Այ, դրա համար ել չեմ կարող: Քանի դժու
յես սեփականությունից չեմ կտրվել, նշանակում ե
իսկամ ել չի թողնի, վոր կուսակցության մեջ մտնեմ:
Եես եղախ եմ հասկանում:

Մակարը մտածեց և ասաց .

— Դու եղ ճիշտ ես ասում : Մի քիչ սպասիր , մե
մտիր : Կոլտնտեսության մեջ յեղած բոլոր անկարգու-
թյունների դեմ մենք անողոքաբար կպայքարենք , բո-
լոր խամուտներն ել կարգի կրերենք : Բայց յեթե
դու քնում ես և յերազումդ քո յեղներն ես տեսնում ,
են ժամանակ քեզ չի կարելի կուսակցության մեջ
մտնել :

Գրեմյաչի Լոգում լայնոգեն տարածվեց այն լու-
րը , վոր Լյուրիշկինը , Բւշակովն ու Լոչչիլինը կու-
սակցության մեջ են մտել : Կազակներից ինչ վոր մեկը
կառակով ասաց Շչուկար պապին .

— Ե՞ , իսկ դո՞ւ ինչու կուսակցության մեջ չե՞ն
մտնում : Ախր դու ակտիվներից ես : Դիմում տուր :
Քեզ պաշտոն կտան , կաշվի պորտֆել կառնես , թևելո-
տակ կղնես ու կշրջես :

**Շչուկարի խելքում մտավ և յերեկոյան , հենց
վոր մթնեց , դնաց Նազուլովի տուն :**

— Բարե , Մակարուշկա :

— Բարե : Ի՞նչ կա , ինչի՞ յես յեկել :

— Մարդիկ կուսակցության մեջ են մտնում . . .

— Ե՞

— Խոսքս մի՛ կտրիր , սպասիր :

— Հետո՞ :

— Հետո են , վոր գուցե յես ել եմ ուզում մտնել :
Յես , ախաղերս , ամրող կյանքս հո ձիերի հետ չեմ
քարշ տալու : Յես հո նրանց հետ պսակված չե՞մ :

— Լավ , բայց դու ի՞նչ ես ուզում :

— Ասացի հասկանալի լեզվով . ուզում եմ կուսակ-

յության մեջ մտնել։ Հետո, յեկել իմ իմանամ, Առ
է բայց պահանջ չըստի ո նորդի բանիք։ Ենք ինք
ևս տեսակ մի որինակ տուր, թե ինչ դրեմ և վոնց
դրեմ։

— Ուրեմն ի՞նչ... Դու կարծում ես, թե պաշտոնի
համար են կուսակցության մեջ մտնում։

— Մեղ մոտ բոլոր կուսակցականները պաշտոն
ունեն։

Մակարն իրեն զսպեց և խոսքը շուռ տվեց։

— Զատկին տերտերը յեկա՞լ քո տուն։

— Բա վո՞նց։

— Բան տվի՞ր նրան։

— Դե, ի հարկե։ Յեզկու ձու և մի կտոր խոզի
ճարպ, մոտ կես ֆունտ։

— Նշանակում ե մինչև հիմա դու հավատում ես
աստծուն։

— Դե, ի հարկե, ենքան ել սլինդ չեմ բռնած,
բայց վոր հիվանդանում եմ, կամ վորեւե վատ բան և
սղատահում, կամ, որինակ՝ յեթե կայծակն ուժեղ և
խփում, են ժամանակ, հասկանալի յե, աստծու ու-
նությունն եմ ինդրում։

Մակարն ուղարմ եր քաղցր խոսել Շչուկար պա-
տի հետ, ուղում եր միայն հասկացնել նրան, թե ին-
չու նրան չեն կարող կուսակցության մեջ ընդունել,
սակայն Շչուկարին խոսեցնելով՝ համբերությունը
չտարագ, դրա համար ել հանկարծ գոռաց։

— Կորիք գրողի ծոցը, քայլթառ կաշաղակ։ Տեր-
տերներին ձվեր ես նվիրում, ինչ վոր պաշտոնների
մասին ես յերադում, իսկ ինքդ ձիերի տակը մաքրել

ել չես կարողանում! կուսակցություն է ուշա-
քաշ նման չափաբար; Դա չէ չի կա գոյն են առաջ, եւր-
ծում ես ամեն տեսակ զիրիլ կուսակցության մեջ են
ընդունում: Թո դործը միայն լեզվիդ զու տալն եւ ու
հիմարություններ պատմելը: Կորիր, մի կատաղեց-
նիր ինձ, թե չե յես ջղային մարդ եմ: Իմ առողջու-
թյունը թույլ չի տալիս ինձ հանդիսատ խոսել քեզ
հետ: Գնա ասում են քեզ: Դե՛:

« Բարի ժամի չհասա: Հարկավոր եր ճաշից հետո
գնալ», ափսոսեց Շշուկար պաղը, շտապ փակելով
ցանկապատի դռնակը:

ԳԼՈՒԽ ՀՀՀԻՎ

1930 թվին առաջին անգամ չքացավ «խուլ ժամանակը»^{*)} : Նախորդ տարիներին, յերբ ապրում եյին հին ձեռվ, այդ յերկու ամիսն ի զուր չեր կոչվում «խուլ ժամանակ» : Ցանքն ավարտելուց հետո դրաշացիներն առանց շտապելու խոտհնձին եյին պատրաստվում : Արոտներում շրջում և ուժ եյին հավաքում յեղներն ու ձիերը, իսկ կաղակները փոցիներն եյին արում, սայլերն ու հնձիչները նորոգում : Քիչ եր պատահում, վոր վորեւե մեկը գնար մայիսյան ցել անելու : Մանր լուռթյան մեջ հանդստանում եյին դյուռերը : Կես որին մեռած փողոցով անցնելիս վոչ մի մարդ չեր հանդիպի : Կաղակները կամ վորեւե տեղ գնացած եյին լինում, կամ հանդստանում եյին խըրճիթներում, նկուղներում, կամ թե ծուլորեն կացինն եյին թրիկացնում : Թմրած կանայք վորեւե զով տեղ պատսպարված՝ քութութ եյին անում : Ամայությունն ու նիրհող հանդստությունն եր թագավորում դյուռերում :

Սակայն կուտնտեսային կյանքի առաջին իսկ տա-

^{*)} Կաղակներն այդպես են կոչում գարնանացանի և խոտհնձի միջև ընկած ժամանակամիջոցը :

ըին Գրեմյաչի Լոդում խախտեց «խուլ ժամանակը»: Դեռ արտերը նոր եյին բարձրացել, վոր սկսվեց քաղ-
հանը:

— Յերեք անդամ պիտի քաղհանենք, վորպեսդի
կոլտնտեսության դաշտերում վոչ մի մոլախոտ չի-
նի, — ժողովում հայտարարեց Դավիթովը:

Այն բանից հետո, յերբ գրեմյաչեցիները կոլ-
տնտեսության շտեմարանից խլխեցին սերմացուն,
Դավիթովին ուղում եր Ռոտրովնովին հեռացնել տնտես-
վարի պաշտոնից: Ծանր կասկած եր տողոսկել Դա-
վիթովի սիրտը: Նա հիշում եք, յերբ շտեմարանների
մոտ, ամբոխի մեջ ինքը տեսավ Ռոտրովնովին, ծե-
րունու դեմքով ստվերի պես անցավ վոչ միայն չփոթ-
մունք, այլև չարամիտ ժպիտով սպասողականություն:
Համենայն դեպս, այդպես թվաց Դավիթովին:

Հենց հետեւյալ որը նա Յակով Լուկիչին իր մատ
կանչեց, կողմնակի մարդկանց դուրս հանեց և նրանց
մեջ հետեւյալ խոսակցությունը տեղի ունեցավ կե-
սաձայն.

— Յերեկ դու ի՞նչ եյիր անում շտեմարանների
մոտ:

— Ժողովրդին եյի համոզում, ընկեր Դավիթով:
Հասկացնում եյի թշնամիներին, վոր ուշքի դան, ինք-
նագլուխ չվերցնեն կոլտնտեսության հացը, — վրա
տվեց Յակով Լուկիչը:

— Իսկ կանանց... Դու կանանց ինչո՞ւ եյիր ա-
սել, վոր շտեմարանների բանալիներն ինձ մոտ պիտի
լինեն:

— Ի՞նչ եք ասում, տեր ընդ ձեզ... Ո՞ւմ եմ եղ-

ալես բան ասել։ Յես վոչ վոքի եղակես բան չեմ ասել։

— Իրենք՝ կանայք եյին ասում այդ, յերբ տանում եյին ինձ...

— Փչել են... Յերդում կուտեմ։ Բամբասում են... նախանձից են անում։

Յակով Լուկիչի կյանքը նորից վորոշ հավասարակություն ձեռք բերեց։ Նա հասկանում եր, վոր քոլոր այն ուժերը, վորոնք կանգնած եյին Պոլովցեի թիկունքում ու ղեկավարում եյին ապստամբության նախապատրաստությունը, այս անգամ տանուլ են տվել։ Նա հաստատ համոզված եր, վոր այժմ արդեն ապստամբություն չի լինելու, վորովհետեւ հարմար առիթը փախցրել են արդեն և նույնիսկ խորհրդային իշխանության դեմ թշնամական վերաբերմունք ունեցող կազակների տրամադրության մեջ վորոշ բեկում է տեղի ունեցել։ «Ինչու յերեսում ե, Պոլովցեն ու Լայտեսկին անցել են սահմանը», մտածում եր Յակով Լուկիչը և այն խիստ ափսոսանքին, վոր չհաջողվեց խորհրդային իշխանությունը թոթափել, խառնվում եր այն հանգստացուցիչ բավականությունը, վոր այսուհետեւ այլևս վոչինչ չի սպառնում Յակով Լուկիչի բարեհաջող գոյությանը։ Այժմ արդեն Գրեմյացի Լոդ յեկած շրջանային միլիցիոներին նայելիս նրա սիրտը չեր ճմլվում սարսափից, իսկ առաջ հենց միայն միլիցիոների սև զգեստի յերեվալը չտեսնված ահ ու դողի մեջ եր դցում նրան։

Սակայն, շատ շուտ ու անսպասելի վրա հասավ Յակով Լուկիչի խաղաղ կյանքի վերջը։

ԳԼՈՒԽ ՀՀՀՎ

Գրեմյաչի Լոգում՝ հորդառատ անձրև գալու հետեւյալ որը Յակով Լուկիչը ձիով դնաց Կարմիր կաղնուսութ։ Նա ուզում եր անձամբ նշանակել այն կաղնիները, վոր պետք ե կտրվելին, վորովհետեւ հետեւյալ որը համարյա ամբողջ յերրորդ բրիդադը պետք ե դնալ կաղնուս՝ ամբարտակի համար ծառեր կտրելու։

Յակով Լուկիչը դուրս յեկավ առավոտը վաղ։ Նրա ձին իր կանոնավոր կշկուած պոչը խաղացնելով քայլում եր դանդաղ։ Նրա առջեկի վոտքերը, վորոնց պայտերն ընկած եյին, սայթաքում եյին լպրծուն ցեխի մեջ, բայց Յակով Լուկիչը վոչ մի անդամ մտրակը չբարձրացրեց։ Նա շտապելու կարիք չուներ։ Սանձը թամրի գլուխը գցելով նա ծխեց, դիտեց Գրեմյաչի Լոգի շուրջը փոված տափաստանը, վորի յուրաքանչյուր փոսը, յուրաքանչյուր հեղեղատը մանկությունից ծանոթ եր նրան ու սրտին այնքան մոտ։ Նա հիանում եր հերկերի փխրուն, ուռճացած խոնավությամբ, վողողված ու հորդ անձրևից պարարտացած արտերով և մեծ ցավով ու վշտով մտածում։ «Կաճի

կուրանկան : Կարծես թե բոլորը, և աստվածն ել եա
անիծյալ իշխանության կողմն են : Առաջ շարունակ յե-
րաշտ ու անբերբիություն եր լինում, իսկ քսան մեկ
թվից դեսը ուղղակի ծով ե լինում հացը : Կարծես ամ-
բողջ բնությունն ե խորհրդային իշխանության կողմը
կանգնել, ել ի՞նչպես սպասես նրա քայքայումը : Զե՞,
յեթե դաշնակիցները չողնեն կըմունիստներին քշել,
մենք ինքներս վոչինչ անել չենք կարող : Վոչ մի Պո-
լովցե չի դիմանա, ինչ խելքի տեր ել լինի նա : Ես
իշխանությունը մեծ ուժի տեր ե . ի՞նչ կարող ես անել
եսպես ուժի դեմ : Իսկ անիծված ժողովուրդն ել փչա-
ցել ե ուղղակի . մեկը մյուսի վոտքի տակն ե մատնա-
փորում, ամեն տեսակ մատնություններ անում»...

Արեւ տակ թեերը փոած խոտերի ցողուններին,
հասկակալող հացաբույսերի վրա ապակու նման շող-
շողում եյին ցողի հատիկները : Հարավային քամին
ցնցում եր նրանց և ցողի կաթիլները յերփներանդ
փայլով ընկնում եյին անձրեսի դուրեկան ու նուրբ
բուրմունք արձակող հողի վրա :

Ճանապարհի վրայի անիլների հետքերի մեջ դեռևս
կանգնած եր հողի մեջ չծծված անձրեաջուրը, իսկ
Գրեմյաչի Լողի վրա արդեն բարդիներից ել վեր եր
բարձրանում վաղորդյան վարդադույն մշուշը և
յերկնքի կիսաթափանց կապույտի վրա, վոր կարծես
մաքուր լվացվել եր հորդ անձրեսից, առավոտյան
լույսից նսեմանում եր արձաթափայլ նորալուսինը :

Լուսինը նուրբ յերիզված եր աւ շեղ, վոր հոր-
դառաստ անձրեներ եր խոստանում և Յակով Լուկիչը

նըա վրա նույելով՝ վերջնականապես համոզվեց. «Ե՞նձ
բիրը և լինելու»:

Նա կաղնուտ հասավ կեսորվա մոտ: Զին վու-
քակցեց ու բաց թողեց, վոր արածի, իսկ ինքը, դո-
ւիկից դուրս քաշելով փոքրիկ կացինը՝ գնաց ծառերի
վրա նշաններ անելու այն անտառամասում, վոր ան-
տառապետը հատկացրել եր Գրեմյաչի կոլտնտեսու-
թյանը:

Բոլոր վաթսուն յոթ կաղնիներն ել սրտի մորմու-
քով նշան արեց Յակով Լուկիչը, ձին հեծավ ու քշեց
սպարթախիտ անտառով:

— Յակով Լուկիչ, սպասիր մի քեչ, — լովեց մի
ծանոթ ձայն:

Իսկ հետո տերեւթխիտ թիկ հետեւց յերեաց մի
մարդ, ոև մորթի վասիախով, շինելի մահուղից կար-
ված տաք սերթուկով, վորի կոճակներն արձակված
էին: Նրա գեմքը ոև եր ու քամահար, նէհարությու-
նից մորթը ձգվել եր այտոսկըների վրա, աչքերը
խորն եյին ընկել, իսկ չորացած փայլուն շթունքների
վրա պարզ կերպով, ածուխով նկարածի նման սեին
եյին տալիս առատորեն աճած աղվամաղ բեխերը:

— ԶՃանաչեցի՞ր, ի՞նչ ե:

Նա գլխարկը հանեց, դգուշությամբ շուրջը նա-
յելով դուրս յեկավ բացատը և միայն այդտեղ Յակով
Լուկիչը ճանաչեց Տիմոֆեյ Ռվանուն:

— Դու եղ վո՞րտեղից, — անսպասելի հանդիպու-
մից շմած հարցրեց Յակով Լուկիչը սոսկալի նիհա-
րած, անճանաչելիորեն փոխված Տիմոֆեյին:

— Վորտեղից վոր չեն վերադառնում . . . աքսութից . . . կոտլասից :

— Մի՞թե փախել ես :

— Փախել եմ :

— Հապա ի՞նչ ես մտածում, ի՞նչպես պիտի ապրես :

Յեղ Տիմոֆեյը կատաղի արտահայտությամբ պատասխանեց :

— Զգիտե՞ս ինչպես : Յես հիմա դայլի դրության մեջ եմ : Այ, մի քիչ կհանդստանամ, դիշերը կզամ զյուղ, կհանեմ հրացանս, թաղված ե մեր կալում . . . Հետո՝ կսկսեմ զործել : Ինձ ուրիշ ճանապարհ չունեմ : Քանի վոր ինձ սպանում են, յես ել կսկսեմ սպանել : Մի քանիսին կթրիկացնեմ . . . Մի քանիսը խելքի կը գան : Ե՛ս, ամառը կմնամ անտառում, մինչեւ աշուն, իսկ զերբ ցրտերը կսկսվեն, կանցնեմ կուրբան, կամ մի ուրիշ տեղ : Աշխարհը մեծ ե և ինձակեսները հարյուրներով կան :

Յակով Լուկիչը Տիմոֆեյին նախազգուշացրեց, վոր վաղն անտառում սկսելու յեն ծառ կտրել, առող դուրս յեկավ անտառից և ուղղվեց դեսպի յերկրորդ բրիգադի դաշտը, վոր տեսնի ինչ դրության մեջ է կուրբանի ցորենի ցանքը : Բնդամենը մի քանի որ առաջ ածուխի պես սեվին տվաղ ցելում արդեն նրբորեն կանաչին եյին տալիս վերջապես ծլած արտերը :

Յակով Լուկիչը դժուդ վերադարձավ միայն, գեշերը : Կոլտնտեսության գոմից նա տուն դնաց այն ժամը տպավորության տակ, վոր թողել եր իր վրա Տիմոֆեյ Ռվանու հանդիպումը և վորից նա չեք

ազատվել ամբողջ որվա լնթացքում։ Իսկ տանը նրան
սպասում եր մի նոր և անհամեմատ ավելի ծանր անս-
խորժաւթյուն։

Դեռ նախասենյակումն եր, վոր խոհանոցից նրա
առաջը վազեց հարսը և շուկով նախազգուշացրեց։

— Հայրիկ, մեղ մոտ հյուրեր՝ կան...

— Ո՞վքեր են։


— Պոլովցեն ու են... Ադիկը... Յեկան հենց վոր
մութն ընկավ... Մենք մայրիկի հետ կովերն եյինք
կթում... Նստած են վոքրիկ սենյակում... Պոլովցեն
առսկալի խմած ե, իսկ մյուսին՝ հասկանալ չի միտում։

Անցյալը նորից սկսվեց։



Արմագեղէ Ե. Շահբագյան

Գլավլիսի լիսողոր կ—4622 Պատովեր 995
Հրամ. 3816 Տիրած 5000
Թուղթ 72×110. Տպագր. մարմ. 10 $\frac{3}{4}$. մի մամուլում
51200 գիշ. 13 $\frac{3}{4}$ հեղ. մարմ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043636

A II
st 7143